

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ
/ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ/

ԵՐԵՎԱՆ

Չ Ե Վ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Տրված բառերն ու բառաձևերը առանձնացրե՛ք ըստ իրենց արտահայտած ընդհանուր (նյութական, քերականական, վերաբերմունքային) իմաստի՝ նշելով խոսքիմասային պատկանելությունը:

Ա. Մարդկություն, երբեք, մինչև, թե, այդ, ճակատագրական, ժամ, բաց, և, աշխարհ, որպիսի, մեծաքանակ, հոգևոր, արժեք, ժամանակ, ավա՛ղ, հարկավ, երանի՛, քանակական, բացի, այգուց, ութերորդ, վերստին, որևէ, ժամվա, թեև, այնպես, ինձնից, այն քաշել, վշվշոց, հե՛յ, կարդալ, փոխարեն, պես:

Բ. Կոչում, երդում օտար, քառորդ, զրո, մթամած, չնայած, ընտրող, փոխանակ, անգամ, հեռու, առաջ, իսկույն, բազմիցս, որոշ, երբ, համայն, հեռացած, կարծեմ, մանավանդ, ա՛խ, ձեռքով, քաջության, համեմատ, սկսած, հակառակ, այսինքն, այն, ոմանց, ուրեմն, այնքան, ուստի:

Գ. Արագ, իհարկե, արագացում, հազարավոր, արևմուտք, կես, տասնյակ, համատարած, գրված, հարավային լրագրող, քիչ, երբևէ, այս, քաջություն, թերևս, երկաթյա, հիացնող, գոնե, գրեթե, գեթ, միասին, համար, Հայկարամ, իրար, ԱՊՀ, ինքը, բայց, մայրական, եռակի, անշուշտ:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ և ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ

2. Որոշե՛ք ընդգծված բառերի խոսքիմասային պատկանելությունը և այդ օրինակների հիման վրա սահմանե՛ք, թե ժամանակակից հայերենում խոսքիմաստային ինչպիսի՞ փոխանցումներ և հարաբերակցություններ են նկատվում: Բերե՛ք նույնատիպ այլ օրինակներ:

Ա. Թշվառ, օտար, շարքային, զինվորական, մութ, հոգևորական, նախորդ, թափառական, կրտսեր, խենթ, շիկահեր, կապուտաչյա, հարուստ, կաթնասուն, դեռահաս, գիշատիչ, խոտակեր:

Օրինակ՝

Այսպես անձայրածիր հորիզոնն է գունավորվում արևի թափառական մի շողից:

Որբանոցից փախած պատանի թափառականները գիշերում էին լքված, կիսախարխուլ նկուղներում:

Եվ Մեսրոպի սուրբ հանճարով դարձել է գիր ու մագաղաթ,

Դարձել է հույս, դարձել դրոշ, պահել երթը մեր անաղարտ /ՄԿ/:

Նա երկակի կյանք էր վարում. դրսում սատանա էր, տանը՝ սուրբ:

Լեռան լանջով հոսում էր մի կարկաչուն, խենթ առվակ:

...անխուսափ մահվան կարմիր սգերթում,-

անհայտ-անվանի սրբազա՛ն խենթեր...

...Կատարում էին և... անկարելին.

այսքանից հետո չէի՛ն մահանում... /ՊՄ/:

Ավագ քույրերը սիրով և խանդաղատանքով էին վերաբերվում իրենց կրտսեր եղբորը:

...Կրտսերը դատվե՛ց...

և (ողջ աշխարհն է վերստին գոչում),
դեռ պիտի դատվի այսօր ու վաղը.
սպանությանը վաղեմիության ժամկետ չի կպչում,
ինչպես չի կպչում ներկը կրակին:

Կրտսերը դատվե՛ց

ու դեռ կդատվի՛,-

մինչդեռ սվագը՝... քայլում է հպարտ... /ՊՄ/:

Հարագաստ եղբորը չէր տեսել տասներկու տարի: Մյուս հարագաստներից էլ վաղուց լուր չուներ:

Նա մի շիկահեր, կապուտայա դուստր ուներ: Ասում են՝ շիկահերները սովորաբար նաև կապուտայա են լինում, բայց բոլոր կապուտայաները չէ, որ շիկահեր են:

Գիշատիչ կենդանիները հիմնականում սնվում են խոտակեր կենդանիներով: Ի տարբերություն գիշատիչների՝ խոտակերները այլ կենդանիների համար վտանգավոր չեն:

Զինվորական համազգեստը ավելի առնական տեսք էր հաղորդել նրան: Բազմաթուրծ զինվորականը մի պահ ասես մոռացել էր պատերազմ ու արհավիրք և հափշտակված նայում էր շառագունող հորիզոնին:

Հանձնաժողովի անդամները զարմանքով և հիացմունքով էին հետևում դեռահաս աղջիկների նրբագեղ պարերին: Մանկավարժներից շատերը չեն տիրապետում դեռահասների հետ տարվող աշխատանքների առանձնահատկություններին:

Երկրի բարեկցության երաշխիքը այդ երկրի շարքային քաղաքացիների բարեկեցությունն է: Մպաները վերջին հրահանգներ էին տալիս շքերթին մասնակցող շարքայիններին:

Նախորդ շաբաթվա համեմատ հաջորդ օրերն ավելի զովասում էին: Ծանրամարտիկներից յուրաքանչյուր հաջորդը գերազանցում էր նախորդների ցուցանիշները:

Մուք, անթափանց գիշեր էր, և մթան մեջ դժվար էր նկատել ու հաղթահարել ճանապարհի խորդուբորդ արգելքները:

Բ. Ուժեղ, թույլ, հետաքրքիր, ձանձրալի, բարձր, մեղմ, անսպասելի, շեշտակի, հաճախակի, դաժան, համառոտ, գրավոր, բանավոր:

Օրինակ՝

Ուժեղ անհատականությունը պետք է չարհամարի, այլ օգնի իրենից թույլ մերձավորին: Փորձառու բոնցքամարտիկը հակառակորդի զգոնությունը շեղելու համար սկզբում բավականին թույլ էր դիմագրավում սկսնակի ակտիվ գրոհներին, իսկ երբ նկատեց, որ վերջինս ոգևորությունից մոռացել է պաշտպանության մասին ուժեղ հարվածեց նրա ծնոտին ու տապալեց գետնին:

Բարձր սարի գագաթից տեսանելի էին հեռավոր հովիտներն ու անտառները: Ընտանի թռչունները չեն կարող բարձր թռչել:

Նա մեղմ բնավորություն ունի: Արտեզրին մեղմ կարկաչում էր ականակիտ առվակը:

Զինվորի անսպասելի վերադարձը բերկրանքով էր լցրել հարազարների հոգին: Անսպասելի ներս մտավ լրաբերը և ավետեց, որ հայ զինվորներն ազատագրել են հերթական բնակավայրը:

Կենտրոնական հարձակվողը շեշտակի հարվածով բացեց խաղի հաշիվը: Քննիչը շեշտակի նայում էր կասկածյալի աչքերին:

Հաճախակի հանդիպումները օրեցօր մտերմացնում էին երկու արվեստագետներին: Ուսանողները հաճախակի էին կազմակերպում հետքրքիր միջոցառումներ:

Դաժան ճակատագիրը կործանել էր նրա հավատը: Կենդանիների հետ դաժան վարվողները չեն կարող մարդկանց հանդեպ բարեգութ լինել:

Հաջորդ օրը ստացավ համառոտ մի բացիկ. «Ների՛ր, բայց ես որիշին եմ սիրում»:

Ուսուցիչը համառոտ ամփոփեց հին դասը և անցավ նոր դասի բացատրությանը: Գրավոր աշխատանքից ցածր գնահատական էր ստացել, բայց դասախոսը գոհ մնաց նրա բանավոր պատասխանից: Լավագույն ուսանողը պետք է կարողանա առաջադրվող հարցերին նույն հաջողությամբ պատասխանել և՛ գրավոր, և՛ բանավոր:

Գ. Պարող, խորոված, փորագրող, գրող, հարձակվող, պաշտպանվող:

Օրինակ՝

Պարող զույգերից լավագույնն արժանացավ հատուկ մրցանակի: Ասմունքի մրցույթից հետո բեմահարթակը տրամադրվեց երգիչներին ու պարողներին:

Երեխան չգիտեր՝ խորոված սունկը հետը վերցնի, թե թողնի օջախի քարի վրա (Ա. Բ.):

Խնջույքի մասնակիցները հաճույքով ճաշակում էին թոնրից հանվող խորովածի տակավին տաք խորտիկները:

Դեռևս վաղ միջնադարում գյուտարարներից շատերը երազել են ստեղծել փորագրող, գրող և նկարող սարքեր: Տաղանդավոր գրողի հանդիսությանը մասնակցելու էին եկել նաև օտարազգի նշանավոր արվեստագետներ: Վարդանը փորագրողի մասնագիտությունը սովորել էր իր հորից՝ վարպետ Գևորգից:

Հարձակվող և պաշտպանվող զորախմբերը անցան ձեռնամարտի, որի ընթացքում դժվար էր զանազանել՝ ովքեր են հարձակվողները, ովքեր՝ պաշտպանվողները:

Դ. Ժամանակ, միջոցով, հետևանքով:

Օրինակ՝

Ե՛վ գյուղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ. տարիներն այստեղ նույն ծառի միանման տերևներն են /ԱԲ/:

Հնձի ժամանակ պատահմամբ վնասել էր աջ ոտքը:

Հավատարիմ մարդկանց միջոցով Տիգրանուհին եղբորը տեղեկացնում է Աժդահակի դավադիր մտադրությունների մասին: Տարբեր միջոցներով վերադասի սիրտը շահելու փորձերն ապարդյուն անցան:

Երկրաշարժի հետևանքով ավերված բնակավայրերից մի քանիսը տակավին կիսավեր են, աղետի հետևանքները վերացնելու համար դեռ որոշ ժամանակ կպահանջվի:

Ե. Առաջ, հետո, ներքև:

Օրինակ՝

Ամանորից **առաջ** մթերքի գները սովորաբար թանկանում են: **Առաջ** մտածի՛ր, հետո խոսի՛ր: Ձին բնագործ զգում էր մոտեցող վտանգը և այլևս **առաջ** չէր գնում:

Արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց **հետո** տնօրենը մեծ բարեփոխումներ կատարեց իր ղեկավարած հաստատությունում: Մի պահ լռեց, **հետո** շարունակեց իր պատմությունը:

Անտառապահի տնակից **ներքև** մի փոքրիկ ձորակ կար: **Ներքևը՝** ձորում՝ Բասուդա գետի մյուս ափին՝ քարաժայռերի վրա, թառել են մի քանի տներ:

2. Նախքան, մինչև, չնայած:

Օրինակ՝

Նախքան խաղի սկսվելը մարզադաշտն արդեն լեփ-լեցուն էր հանդիսատեսներով:

Նախքան խաղը կսկսվեր, մարզադաշտն արդեն լեփ-լեցուն էր հանդիսատեսներով:

Մինչև ինքնաթիռ նստելը երեք անգամ ստուգեցին նրանց փաստաթղթերը: **Մինչև** ինքնաթիռ կնստեին, երեք անգամ ստուգեցին նրանց փաստաթղթերը:

Չնայած անձրևին՝ փողոցները մարդաշատ էին: **Չնայած** անձրևում էր, փողոցները մարդաշատ էին:

3. Դո՛ւրս գրեք փոխանվանաբար գործածված ածականները, դերբայները, թվականները և այդ օրինակների հիման վրա բնութագրել փոխանունների իմաստային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները:

Մեկն ասում է՝ հին է,

մեկն ասում է՝ նոր է....

....Իսկ ինձ համար մեկ է,

Եթե մեջը վերք է

Եվ քո ապրած օրն է,

Երգն իսկապես երգ է,

Հին ու նորս ո՞րն է /ՀՄ/:

Կախաղանի փայտերն ահա կանգնել են լուռ....

....և սպասում են կախվողի /ԵԶ/:

Դարեր գալիս, չարեր գալիս,

Տենչում էին ալեկոծ,

Իմ Սևանա ծովը խլել,

Որպես արյունն իմ հայոց /ՀՇ/:

Չարն էլ է միշտ ապրում անվերջ,

Անե՛ծք նրա չար գործին /ՀԹ/:

....Իսկ եթե դա էլ քիչ են համարում,

Եվ սպանվածի դիակը դիտմամբ

Տնկում են թշվառ մոր աչքի առջև....

....Մեր հայրենասեր թագավորներին ու հերոսներին,
Այպես պարսկական դահիճներն էին մորթազերծ անում....

.....Ու բռնի դնում,

Մորթազերծվողին պաշտողի առաջ.../ՊՄ/:

....Երրորդը վարդ էր մի բոսորաթերթ,

Ծանոթ էր վաղուց արևի ուժին,

Ինձ գերեց, տարավ, խաղաց սրտիս հետ,

Փշերն ինձ թողեց,

Բուրմունքն՝ ուրիշին /ՀՄ/:

Առաջին ձիավորը հնագետ էր, երկրորդը՝ նկարիչ /ԱԲ/:

Առաջինն էիր ու վերջին էիր,

Իմ անքուն, անքեն տարերքի մեջ:

Դու իմ գրկի մեջ ուրիշին էիր,

Իմն էիր միայն իմ վերքի մեջ /ՀՄ/:

Քո որոնածն աննյութեղեն էր,

Իսկ ես՝ հողեղեն, հողոտ, հողածին /ՀՄ/:

Մովորեցի չգործած մեղքիս համար տառապել,

Մտացածով գոհանալ, իմ տվածից ամաչել /ՀՄ/:

- Թող արքան ապրի,- շնջաց ծերը,

- Թող փառքերն ընկնեն նրա ոտքերը,

Այս գազաների արքայի նման /ՀՇ/:

Բայց մայր առյուծը այնպես մռնչաց,

Որ քաջերն ասես մանուկներ դարձան,

Եվ դարձան ահից ու թաքնվեցին /ՀՇ/:

Ո՞վ է արդար, ո՞վ մեղավոր,

Մենք չդատենք...

...Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր /թարգմ./:

Մոնային լաջվարդ շապիկով թաղեցին. արդեն վաղուց փտել են՝ լաջվարդն էլ, ոսկե
մամուռի պես մարմինն էլ /ԱԲ/:

Քանզի ոտիս է փտածը թարմին

Եվ հասարակը՝ ազնվամարմին...

...Արտակարգի դեմ գրոհ էր տալիս

Նույն ինքը... Նորին Միջակությունը /ՊՄ/:

Եվ հաջողություն կոչվածը մարդու

կամ բախտ ասվածը մի ամբողջ ազգի

կախված չէ՞ արդյոք

այդ խոյի գույնի՞ց, գույնի՞ց միմիայն՝

սև կամ ճերմակից /ՊՄ/:

Ասում են՝ իբր կապույտի վրա ճանճեր չեն նստում:

Լսու՞մ ես, Մարիա՛մ, ինձ ներս ու դրսից կապույտ հագցրու /ՊՄ/:

4. Հետևյալ ածականները փոխանվանաբար գործածել նախադասությունների մեջ և դիտարկել, թե ձևաբանական ու շարահյուսական կիրառությունների տարբերություններ նկատվու՞մ են արդյոք փոխանուն ածականների և գոյականների միջև:

Համեստ, ճկուն, չար, մարմնեղ, վտիտ, ճերմակ, բանուկ, ծարավ, բարակ, մանր, նոր, հին, հավաքական, լավ, վատ, ծեր, մեծ, անգործ, զվարթ, ազգային, սեփական, ազահ, ժուժկալ, գործունյա:

5. Հետևյալ հարակատար դերբայները փոխանվանաբար գործածե՛ք նախադասությունների մեջ:

Քնած, պատրաստած, եփած, ուղարկած, նկարած, վերադարձած, հնձած, հաղթանակած, թաքնված, նահանջած, խոնջացած, քաղցած, քվեարկած, ընտրված, ծեծված, հալածված, հուսալքված, տեսած, բերած, կրթված:

6. Հետևյալ ենթակայական դերբայները փոխանվանաբար գործածե՛ք նախադասությունների մեջ:

Եկող, գնացող, փախչող, հետապնդող, հանդիպող, այցելող, հավանող, ուշացող, ուրացող, աշխատող, ծուլացող, մշակող, վերանորոգող, զվարճացնող, պատմող, տեսնող գտնող, խաղացող, զբոսնող, բարևող:

7. Դուրս գրե՛ք ինքնանվանողաբար կիրառված լեզվական միավորները և օրինակներից ելնելով սահմանել, թե դրանք ի՞նչ են ցույց տալիս:

Միրել-ը, հարգել-ը և քայել-ը ցույց են տալիս գործողություն, տուն-ը, ծառ-ը, կով-ը, եզիպտացորեն-ը՝ առարկա, գեղեցիկ-ը, հպարտ-ը, դաժան-ը, ճարպիկ-ը՝ առարկայի հատկանիշ, արագ-ը, մեղմորեն-ը, հերոսաբար-ը, վերջնականապես-ը՝ գործողության հատկանիշ:

Ից-ը, ուց-ը բացառական հոլովի վերջավորություններ են, ով-ը՝ գործիականի, իսկ ը-ն և ն-ն որոշյալ հոդեր են:

«Գեղեցիկ աղջիկ»-ը անվանական բառակապակցություն է, «Բարձր լեռներից հորդածուփ գահավիժող»-ը ենթակայական դերբայով կազմված դարձված է:

8. Ներքոհիշյալ լեզվական միավորները գործածել ինքնանվանողաբար:

Ամրոց, գեղատեսիլ, կապույտ, սիրել, սիրած, սիրող, կսիրի, դաշտում, առաստաղից, իսկ, առ, ընդ, և, քանզի, թերևս, ա՛խ, ջա՛ն, տակ, վրա մասին:

9. Տեքստի բառերը բաժանել ձևային:

Իսկ հրապարակն այդ ժամանակ ծփում էր մի արտասովոր տեսարանից:

Մի կապտավուն ձի՝ երկար բաշով, բոլորովին մերկ, կատաղած վագում էր հրապարակով: Նա սնվել էր լեռներում, ոչ մի անգամ հեծվոր չէր նստել մեջքին, սանձ չէր կրել, սմբակները պայտ չէին տեսել: Այդ ձին էին ուզում բռնել զինվորները, որոնք, երկար

պարանները թերին, նետում էին գերության օղակը, հենց որ ձին մոտենում էր: Բայց ձին ամեհի ուստյուն էր անում, թռչում օձի նման գալարվող օղակի վրայով և փախուստի ելք փնտրում: Զինվորների մյուս խմբերը գազանային ոռնոցով կտրում էին նրա ճանապարհը և ետ փախցնում դեպի նրանք, որոնք ոլորում էին նոր օղակ:

Գյուղացիները շունչները պահած, անսահման լարված դիտում էին կապտավուն նժույզի վազքը: Նրանք չէին թաքցնում իրենց ուրախությունը, երբ ձին թռչում էր օղակի վրայով: Նրանց բոլորի ցանկությունն էր, որ ձին ճեղքեր զինվորների շղթան և հրեղեն հրաշքի պես աներևութանար, թռչեր դեպի հայրենի լեռները և այնտեղից պղնձաձայն վրնջար հատուցման և անսահման ազատության երգը:

(Ըստ Ա. Բակունցի)

10. Տեքստի բառերից առանձնացնել քերականական ձևայինները և նշել տեսակները:

Հայրենիքն այն է, որ չեն որոնում:

Հայրենիքն այն է, որ գտնված է

ի սկզբանե, ի ծնե և միշտ,

ուրեմն նաև նա չի էլ կորչում:

Իսկ մերը... կորա՞վ...

Եվ ընդմիջտ:

Օ, ո՞չ:

Հայրենիքն այն է, որ ոչ թե կորչում,

այլ ընդամենը հափշտակվում է,

Մեր... հայրենի՞քը մեզնից դատարկվեց:

Բայց... ո՞չ մի վայրկյան, ո՞չ մի ակնթարթ

մենք չենք դատարկվել մեր հայրենիքից:

Մե՞նք սպանվեցինք մեր հայրենիքում,

բայց հայրենիքը մեր մեջ չսպանվե՞ց,

ո՞չ, ապրում է նա կրկնակի՞ կյանքով:

Եվ արժի՞ այսօր, որ ես ինքրս ինձ մանրեմ՝ հարդի պես:

Թո՞ղ եք ես մնամ ինչպես կամ՝ ցողուն:

... և անբողջ սրտով ցանկանամ տեսնել,

որ դուք էլ՝ ինձ պես նորադաձվելով...

պաշտում եք արդեն մի ծա՛ն՝

թթենին,

որ գլխատումից ո՞չ թե չորանում,

այլ նորանում է ...

-Կոչեմ ապրողաց՝

նորադարձներիս:

(Ըստ Պ. Սևակի)

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐՈ

11. Առանձին սյունակներով դուրս գրե՛ք հասարակ և հատուկ գոյականները՝ նշելով նրանց քերականական տարբերությունները:

Քաղաք, մարդ, Անի, ձուկ, շուն, Արաքս, բժիշկ, ուսուցիչ, թոռ, աթոռ, կորյուն, թագուհի, վերջալույս, Գևորգ, Գուրգեն, Սպիտակ ծով, մոշուտ, ավան, Հասմիկ, Մանուշակ, Ավետիք, ջրվեժ, շուշան, նարգիզ, Արարատ, հարություն, գետափ, Հրածին, Անգին, Գոհար, Ռազմիկ, Մարտիկ, գիրք, Նոր Արեշ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Եվրոպական Միություն, Հայկական Պար, Բերենիկեի Վարսեր, Վայոց ձոր, Ցաղաց քար:

12. Դուրս գրե՛ք հատուկ անունները և բացատրե՛ք դրանց կազմությունը:

Ա. Գիտության զարգացման «ադամանդյա դարը» դեռ առջևում է: Դա կլինի անշուշտ այն ժամանակ, երբ գիտության կազմակերպումը կդառնա համընդհանուր գործ: Հիշենք թեկուզ Պերիկլեսին և նրա ստեղծած Աթենական հանրապետությունը մ.թ.ա. 5-րդ դարում: Հին Հունաստանի բարձրագույն ծագումը, նրա «ոսկեդարը» համընկնում է հենց Պերիկլեսի դարաշրջանին: Այդ ժամանակ են աշխատել ու ստեղծագործել փիլիսոփաներ Անաքսագորասը և Դեմոկրիտը, մաթեմատիկոս-աստղագետներ Էնոպիդը և Մետոն, բժշկության մայր Հիպոկրատը, քարտեզագետ Հեկատեյ Միլետացին, կենսաբան Էմոդոկլեսը, պոետ-կոմեդիոգրաֆ Արիստոֆանեսը, Պարթենոնը ստեղծող ճարտարապետները՝ Կալիկրատը և Իրտիկինը՝ էրեխտեյնի ստեղծողը, նկարիչներ Պոլիգնոտը և Ապոլլոդորը, քանդակագործներ Միրոնը, Պոլիկետը, Հելլադայի առաջին քանդակագործի տիտղոսը կրող Ֆիդիասը և շատ ուրիշներ: Հիշենք նաև Ալեքսանդր Մակեդոնացուն, որը բախտ է ունեցել աշակերտելու Արիստոտելին: Նրա հախուռն տարերքն ուանսպառ երևակայությունն ապշեցնում էին նույնիսկ այն դեպքում, երբ շատ ու շատ բաներ՝ Արաբիայի ափերի հետազոտումը, Եփրատի ջրային ուղիների ու հիդրոտեխնիկական կառուցվածքների ընդարձակումը, Կասպից ծովը օվկիանոսին միացնելու նախագիծը, վիթխարի տաճարների կառուցումը Բաբելոնում, Դելոսում, Դելֆում և այլն, վաղաժամ մահվան պատճառով անկատար մնացին: Հիշենք Պետրոս Առաջինին, որն ստեղծեց Ռուսաստանի առաջին գիտությունների ակադեմիան...

Ավելի մոտ ժամանակներից հիշենք թեկուզ Նապոլեոնին, որը Եգիպտոսի դեմ ուղղված զավթողական պատերազմում հնարավոր համարեց զորքերի կազմում ունենալ գիտնականներից, ճարտարապետներից, նկարիչներից բաղկացած մի ամբողջ գումարտակ՝ այնտեղ հնագիտական պեղումներ կատարելու համար: Հենց այդ նյութերն էին, դրանց թվում նաև հայտնի Ռոզետտե քարը՝ ծածկված արձանագրություններով, որ հիմք դարձան Շամպոլյոնի համար՝ անելու իր դարազուլխ կազմող հայտնագործությունը՝ եգիպտական հիերոգլիֆների վերծանումը: Ավելի ուշ, ծանոթանալով Լապլասի «Երկնային մեխանիկայի» առաջին 3 հատորներին, Նապոլեոնը կգրի. «Ինձ թվում է, որ «Երկնային մեխանիկան» վսեմացնում է մեր դարը»:

(Գ.Գուրգադյան)

Բ. 1. «Միտքը անպատկառ և աներկյուղ դատավոր է, - գրում է Գրիգոր Տաթևացին, - նա աստժուց չի վախենում» : **2.** Դավիթ Անհաղթը գիտությունների առաջացման պատճառը համարում է մարդկանց այս կամ այն կենսական կարիքը: **3.** 7-րդ դարի աստղաբաշխ, մաթեմատիկոս է Անանիա Շիրակացին: **4.** Միջնադարյան առակագիր Մխիթար Գոշի փիլիսոփայական շատ մտքեր հաստատել է նաև Գրիգոր Տաթևացին: **5.** Մոնոլիները գրավել են Որոտան բերդը, և Հովնան Որոտնեցին ստիպված էր փախչել: **6.** Հայաստանն այլևս Հռոմից կախված մի տերություն էր, երբ գահ բարձրացավ Տիգրան Մեծի որդին՝ Արտավազդ Երկրորդը: **7.** Բարձրահասակ են եղել և՛ Տրդատ Մեծ թագավորը, և նրա կինը՝ Աշխենը: Ի տարբերություն ծնողների՝ նրանց որդին կարճահասակ էր. ժողովուրդն էլ նրան անվանեց Խոսրով Կոտակ: **8.** Հայոց Արշակ Երկրորդ թագավորին ուղեկցում էին նախարարները: **9.** Ռուսա Երկրորդի հաջորդների օրոք՝ Սարգուր Երրորդ, Սարգուր Չորրորդ, Ռուսա Երրորդ, Ռուսա Չորրորդ, Վանի թագավորությունը պահպանեց իր քաղաքական ազդեցությունը Հայքի հարավարևելյան նահանգներից մինչև Արաքսի ափերը: **10.** Գրիգոր Պարթևը նոր հավատի լույսն անխոնջ տարածելու համար կոչվեց Գրիգոր Լուսավորիչ:

13. Արտագրե՛ք՝ գրելով մեծատառերը:

շվեդիայի թագավորություն, մեծ բրիտանիայի միացյալ թագավորություն, դեղին ծով, հյուսիսային սառուցյալ օվկիանոս, արևելյան տավրոս, նոր նորք, վանա լիճ, սուրբ գևորգ եկեղեցի, բարձր հայք, հաղթանակի պողոտա, քաղաքամայր Երևան, կասպից ծով, պարսից ծոց, հնդկական օվկիանոս, կուժամանիչի իջվածք, ուրալյան լեռներ, հայկի համաստեղություն, երվանդ սակավակյաց, երզնկայի դաշտ, փառքի առաջին աստիճանի շքանշան, երկրորդ համաշխարհային պատերազմ, մագելանի նեղուց, հրո երկիր կղզի, ասեղի հրվանդան, գևորգյան ձեմարան, կենտրոնական բանկ, գի դը մոպասան, իսպանիայի թագավորություն, աշոտ ողորմած, վերին արտաշատ, ձենով օհան, «օրինաց երկիր» կուսակցություն:

14. Առանձնացրե՛ք բուն հավաքական գոյականները և նշե՛ք դրանց քերականական առանձնահատկությունները:

Ազգ, ժողովուրդ, նավատորմիղ, բանակ, ցեղ, հասարակություն, երամակ, դեղորայք, ավագանի, ջոկատ, գունդ, սպայակույտ, վտառ, ոհմակ, տոհմ, գյուղացիություն, ոսկեղեն, կաթնեղեն, ընտրանի, նամականի, ազնվականություն:

15.. –Ություն, -եղեն, -որայք, -ոտիք ածանցներով կազմե՛ք հավաքական նշանակություն ունեցող բառեր: Բացի հավաքանակության իմաստից ուրիշ ի՞նչ իմաստներ կարող են դրսևորել:

16. Առանձնացրե՛ք թանձրացական և վերացական գոյականները:

Ծառ, հոգի, մանկություն, հետաքննություն, արվեստ, մարդ, աշակերտ, ջուր, օդ, աղջիկ, դերասան, քաղաք, երկարություն, ծագում, երկիր, շարժում, հոգեբանություն, պարտեզ, ոգևորություն, սեր (զգաց.), բարեկամություն, գրիչ, ատելություն, արհամարհանք, բացասում, ծաղիկ, հոգի, սարսուռ, ուսանողուհի, թագավոր, երկրագունդ, դող, ջերմություն, ոսկի, ցասում, արջ, հայացք, եղջերու, հրավեր:

17. Գրե՛ք այնպիսի հասարակ գոյականների օրինակներ, որոնք միաժամանակ հանդես են գալիս որպես հատուկ գոյականներ /Օր.՝ ծաղիկ, աղավնի, նարգիզ.../:

ԳՈՅԱԿԱՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

ա) *Գոյականի թիվը*

18. Կազմե՛ք հետևյալ գոյականների հոգնակի թիվը:

Գիշեր, հնչյուն, տառ, բառ, բժիշկ, արկղ, պատուհան, գյուղացի, հոգի, վերնատուն, մեծատուն, բանասեր, ածխաջուր, մսակեր, դասագիրք, գեղագիր, լուսաբեր, քաղաքագետ, անձրևաջուր, թռչնաբույժ, լրագիր, խմբագիր, անտառ, սյուն, բանաձև, ոտնաձայն, բաղաձայն, լուսանցք:

19. Տրված բառերից առանձնացրե՛ք այն գոյականները, որոնց հոգնակի կազմությունը շեղվում է ընդհանուր կանոնից, կամ որոնք ունեն կանոնից շեղվող զուգաձևեր:

Անձնագիր, ապարանք, բաղաձայն, ծորաբերան, ապար, արձակագիր, ռուս, անձ, աքլորականչ, բաղադրատարր, բակ, բախտակ, բնավարձ, դահձապետ, կայսր, շքածառ, քաղաքապետ, ոտնաձայն, տեսակետ, համարանիշ, լուսանցք, խաղաթուղթ, անգղ, արկղ, հարս, նուռ, անգղ, ուսադիր, աշխարհամաս, ծովահեն, վերջակետ, ստորակետ, ջրանցք, ուրվագիծ, հանքատեր, խոտաբույս, միջանցք:

20. Տրված բառերից առանձնացնել այն գոյականները, որոնք ունեն.

ա. Ե՛վ եզակի, և՛ հոգնակի թիվ.

բ. Միայն եզակի թվի ձև (անհոգնական բառեր).

գ. Միայն հոգնակի թվի ձև (անեզակական բառեր):

Ա. Արկղ, բանասեր, ուսանողություն, սպիտակեղեն, նախահայր, Կարպատներ, ֆիլիպիններ, գինի, վիպասաք, Երվանդունի, անձրև, աստղ, հերոսություն, ռոմանտիզմ, Ապալաչներ, ամպեր, ուսում, ազնվայր, ակրատ, աղանդ, ծագում, բանջարեղեն, աչք, միտք, բեռ, Աշոտենք, սկյութ, վրացի, ֆիզիկոս, կանաչեղեն, ոսկեղեն, տանջանք, Հայք, գերություն, քրիստոնեություն, ֆեոդալիզմ, մածուն, երկաթ, մեղր, օդ, օղի, Վիրք, Ալպեր, կայսր, այգի, ոսկի, սեղան, մարդ, գոյական, բայ, Արդեններ, հաջողություն, լրագիր, ֆաշիզմ, իդեալ, Պամպասներ, հեռավորություն, ձիրք, արյուն, Հիմալայներ:

Բ. Գարուն, ձոր, խելագարություն, բողբոջ, նռնենի, անպ, արտասուք, քար, գեղեցկություն, երազանք, երգեցողություն, երկաթեղեն, շարժում, երիտասարդություն, մարդ, հուզում, զգացմունք, ոսկեղեն, մեղր, Արմենենք, մանկություն, մաթեմատիկա, Կարպատներ, շախմատ, քրիստոնեություն, կաթ, ֆիզիկա, մածուն, խնդիր, սար, վիպագիր, Վարդանանք, ֆուտբոլ, պլատոնականություն, տիեզերք, աշխարհայացք, մետաֆիզիկա, բառ:

21. Գտե՛ք այն գոյականները, որոնց հոգնակին կազմվում է *-եր*-ով:

Ստրուկ, սպի, արկղ, գինետուն, ատամնաշար, լրագիր, ֆիդայի, շնածուկ, աշխատավարձ, վիպասք, ժանր, ոտնաձայն, գիրք, փառատոն, քարայծ, չվերթ, սրճեփ, տեսակետ, սպունգ, ջերմաչափ, սեղմագիր, արձակագիր, հարսնաքույր, հանքահոր:

22. Պտե՛ք այն գոյականները, որոնց հոգնակին կազմվում է –ներ-ով:

Մակբայ, հանքահոր, օրհներգ, սիրամարգ, հորաքույր, հորեղբայր, ծոռ, տոհմածառ, նրբանցք, որթատունկ, շտաբ, օրինագիծ, պատճեն, օրացույց, կարմրախայտ, ժամապահ, խաչքար, բառացանկ, նստարան:

23. Առանձին շարքերով գրե՛ք հոգնակի թիվը - եր-ով կամ –ներ-ով կազմող գոյականները:

Ոտնաչափ, ծխամորձ, հարսնաքույր, հարթաչափ, մեծատառ, քղանցք, կայսր, ձեռնակապ, խոտհարք, տանուտեր, դասագիրք, լողափ, փոստատար, համհարգ, ճառախոս, ժամկետ, վարքագիր, նավթամուղ, բուժկետ, ճամփեզր, ընչացք, վերջնագիր, ծուկ, անկյուն:

24. Գրե՛ք 3-ական անհոգնական գոյականներ, որոնք՝

- ա. Չափվող ու կշռվող նյութերի անուններ են,
- բ. հատուկ անուններ են,
- գ. գիտությունների, ուսմունքների, հասարակական կառույցների անուններ են,
- դ. զանազան խաղերի ու զբաղմունքների անուններ են,
- ե. հավաքական նշանակություն ունեն,
- զ. վերացական նշանակություն ունեն:

25. Տրված անհոգնական գոյականները խմբավորե՛ք ըստ իմաստաքերականական հատկանիշների:

Արձիճ, երկաթեղեն, զայրույթ, ծագում, Սատուրն, արև, լուսին, ամպրոպ, անձրև, յուղ, մեզ, մեղր, պլատոնականություն, Կարմիր ծով, արծաթեղեն, առածանի, արևմուտք, կիրակի, անագ, ուսանողություն, Դավթյան, բանջարեղեն, աղքատություն, ազոտ, զեփյուռ, ոստիկանություն, շաքարավազ, կարկուտ, երկինք, հյուսիս, ամանեղեն, ստրկություն, Կարեն, ծագում, այգեգործություն, մոռքացկոտություն, Վեդունք, ֆաշիզմ, քրիստոնեություն, սեպտեմբեր, ուրբաթ, դարվինիզմ, գորով, քնքշանք, երկիր:

Հավաքական գոյականներ	
Վերացական գոյականներ	
Ուսմունք, ուղղություն, հասարակական կառուցվածքի ձև ցույց տվող բառեր	
Հատուկ անուններ	
Սոսկ մեկ առարկա, երևույթ նշանակող հասարակ անուններ	
Նյութերի անուններ	

26. Կազմե՛ք տրված բառերի հոգնակի թիվը՝ լրացնելով աղյուսակը:

Կենսագիր, սյունաշար, ձայնալար, վիպագիր, հարկահան, իրավապահ, թիկնապահ, ձեռագիր, հեռագիր, իջևանատուն, ժամկետ, դեղատուն, գաղթավայր, ժամացույց, ստեղնաշար, ուղեցույց, հրացան, բուժքույր, խորագիր, իրիկնապահ, հայասեր, փայտահատ, հանքաշերտ, հորաքույր, մեղալակիր, նորածին, ստուգայց, եսասեր,

համայն, հեծալագոր, թոնրատուն, միջակետ, բարեկամ, գեղագետ, ծայրակետ, շատախոս, ստորակետ, անվադող, աղբակույտ:

Միավանկ գոյական վերջնաբաղադրիչով բարդ բառ	Միավանկ բայարմատ վերջնաբաղադրիչով բարդ բառ

27. Առանձնացրե՛ք հոգնակի թվի սխալ կազմությունները և ուղղե՛ք:

Տոհմածառեր, ուսապարկեր, տեսակետեր, ուսադիրներ, ստորակետեր, բաղաձայններ, կողմնացույցներ, նստացույցներ, կաշեգործներ, օրենսգրեր, օրհներգեր, գարեհատներ, մանկագրեր, վառելանյութեր, փոստարկղներ, արծակագիրներ, խորագիրներ, հորաքույրեր, լուսանցքեր, ուղենիշեր:

28. -Ություն ածանց ունեցող հավաքական գոյականների շարքում առանձնացրե՛ք հոգնակի թվով գործածվողները:

Քաղաքակրթություն, մագնիսականություն, գիտություն, ոստիկանություն, հիմարություն, ցանկություն, փոփոխություն, ծերություն, հպարտություն, հիշողություն, մարդկություն, հայտնագործություն, նմանություն, կանոնավորություն, իրադարձություն, մտածողություն, փիլիսոփայություն, ճշմարտություն, դատողություն, հարաբերականություն, հետևություն:

բ) *Գոյականի հոլովի և հոլովման քերականական կարգը*

29. Դուրս գրե՛ք գոյականները, բացատրե՛ք հոլովման ժամանակ կատարված ձևաիմաստային փոփոխությունները:

Մի մարդ երազ տեսավ. նա քայլում էր ամայի ավազուտներով, իսկ կողքին՝ Աստված: Ավազի վրա նա նկատեց ոտնահետքերի երկու շղթա. մեկն իրենը, մյուսը՝ Աստծունը: Մարդը երկրից երկինք էր նայում, ուր կինոժապավենի վրա պատվում էին իր կյանքի պատկերները՝ տխուր և ուրախ: Երբ անհետացավ վերջին պատկերը, մարդը նորից նայեց ավազի վրայի ոտնահետքերին: Հանկարծ սարսափով նկատեց, որ հաճախ իր անցած ճանապարհին ձգվում էր ոտնահետքերի մի շղթա: Նա նկատեց նաև, որ դրանք համընկնում են իր կյանքի ամենադժվար և ծանր օրերին:

Մարդը չափազանց տխրեց և հարցրեց Աստծուն.

- Տե՛ր Աստված, դու չէ՞իր ասում, որ եթե ես քո ճանապարհով գնամ, ինձ մենակ չես թողնի: Սակայն ես նկատեցի, որ իմ կյանքի ամենադժվար պահերին ավազուտներին միայն իմ ոտնահետքերն էին: Ինչու՞ ինձ մենակ թողեցիր հենց այն պահերին, երբ քո կարիքը զգում էի:

Աստված պատասխանեց.

- Իմ թանկագին զավակ, ես քեզ շատ եմ սիրում և երբեք չեմ լքել քեզ: Երբ քո կյանքում լինում էին դժբախտություններ և փորձություններ, ավազների վրա, իրոք, ձգվում էր ոտնահետքերի մեկ շղթա: Սակայն քեզ համար դժվար օրերին ես ոչ միայն չեմ լքել քեզ, այլև քեզ իմ ձեռքերի վրա եմ տարել: Իսկ ոտնահետքերն իմն էին...

(Գ.Գյուլամիրյանի «Խոսքի զարգացումից»)

30. Որոշե՛ք ընդգծված բառաձևերի հոլովներն ըստ յոթ, վեց և հինգ հոլովական համակարգերի և բացատրե՛ք, թե ըստ համապատասխան համակարգերի ի՞նչ սկզբունքներով են նույն բառաձևերը մեկ կամ տարբեր հոլովներ համարվում: Համապատասխան օրինակներով բացատրե՛ք՝ տվյալ հոլովները համանուն՞ն, թե՞ բազմիմաստ բառաձևեր են:

Ա. *Օրեր*, բրուտանոցում նույնպես զգացվող կարճատև օրեր: Արևը չի թափանցում այստեղ, բայց ոչ խոր *ծորի* վրա բացվող *պատուհանների* պղտոր ապակիների միջից կարելի է տեսնել *արևի* լույսով լցված ձորը, որի միջով ոլորվում է հանդարտ մի *գետակ*: Այստեղից մենք՝ ես և *Մամոն*, թիթեղե դուլլերով ջուր ենք կրում *բրուտանոցի* կարիքների համար: Ինձ համար մեծ վայելք է *տարվա* այս *եղանակին*, այսինքն՝ *մայիսի* երկրորդ կեսից մինչև *հունիսի* առաջին *կեսը*, *կավը* պատրաստելուց հետո վերցնել իմ *ոտնամաններն* ու *գուլպաները*, բոբիկ ոտքերով իջնել *ծորը*, նստել *գետակին* *կանաչների* վրա և լվալ *ոտքերս*:

Բրուտանոց, ի՞մ բրուտանոց, ես քեզ դեռ երկար պիտի հիշեմ...

Ես հիշում եմ՝ երբ *աշունն* իր գորշ *թևերը* փռում էր գործարար բակի ու, թվում էր, ամբողջ աշխարհի վրա, երբ անձրևը ծեծում էր քո *պատուհանների* կեղտոտ *ապակիները*, դու բուրում էիր, ի՞նչ էիր բուրում, *հող* ու *կավ* էիր բուրում, և այդ հողն արդար էր նրա վրա աշխատող մարդու նման, ու կավը իմ և Մամոյի բոբիկ ոտքերի տակ չարչարված էր ու հունցված, որպեսզի *Աշոտ դային* նրանից *ամաններ* պատրաստի ու տա հազարավոր *կալանավորներին*...

Ընդարձակ *բրուտանոցի* մի անկյունում վառվում էր *վառարանն* ու ճարճատում: Եթե ազատ ժամանակ ունենաս, ապա *վառարանը* կերգի քո բոլոր ուզած *եղանակները*: Նա գիտի անգամ ամենածիծաղելի երգերը. բավական է, որ դու հիշես *եղանակը*...

(ըստ Գ.Մահարու)

Բ. Աիդայի հետ շարունակում էինք հաճախել թատերական *դպրոցը*, բայց հետզհետե նվազող եռանդով:

Մեր *ծնողները* կարծում էին, թե ամբողջ *օրը* դպրոցում էինք անցկացնում, այնինչ իրականում *նախաձաշի* փողը տալիս էինք, մտնում կինո ու մնում բոլոր *սեանսներին*, մինչև *դասերի* վերջը: Հորեղբորս *տղան* մի իսկական հայ տղա, *դերձակ* մորաքրոջ տղա ուներ, որն ինձ համար երկգույն, շատ գեղեցիկ մի տաբատ կարեց...

Մայրս, հայրս, Աիդան ու ես *պատուհանների ապակիները* կապույտ ներկեցինք: Հեռավոր պայթյուններից ապակիների *ամրությունը* ապահովելու համար խաչածն *թերթեր* կացրինք: Ուսուցողական *ահագանգերը* լսելուն պես ներխուժում էինք նկուղները, ու սկսվում էր մի հետաքրքիր կոլեկտիվ *կյանք*:

Աստիճանաբար ընտելացանք կանադացիների *առողջանությանը* ու սկսեցինք կատարելապես հասկանալ *Կեբեկի* ժողովրդական լեզուն ու նրա գունեղ *արտահայտությունները*: Այո՛, Մոնրեալում մեզ զգում էինք ոնց որ *տանը*: Չէինք ուզում նույնիսկ պատկերացնել, թե *կանադացիների* մեջ կարող էր վատ *մարդ* լինել:

Երեկոյան *Էդմոնի* մոտ ձաշի էինք հրավիրված: *Տան* նկուղում *բար* ու *թղթախաղի* սրահ էր հարմարեցրել: Մեր պատվին նույնիսկ *դաշնամուր* էր գնել: Շամպայնի օգնությամբ շատ շուտ մտերմացանք Էդմոնի հետ: Նա մեզ պատմեց իր *կյանքը*: Պատմության ողջ ընթացքում զգում էինք, թե ինչպես նրան հանգիստ չի տալիս հայրենի

երկրի` Ֆրանսիայի թախիժը: Նրա բարեկամներն ու գործընկերները նույնանման կյանք էին ունեցել: Ուղղամիտ, կիրթ մարդիկ էին նրանք:

(Ազնավուրը Ազնավուրի մասին)

Գ. Կանցնեն շատ տարիներ, և *զնդապետ* Աուրելիանո Բուենդիան, *զնդակահարության* պատի տակ կանգնած, կմտաբերի հեռավոր այն *իրիկունը*, երբ հայրն իրեն *սառույց* տեսնելու տարավ: Բամբուկից ու կավից շինված մի երկու տասնյակ խրճիթներով փոքրիկ *ավան* էր այդ *տարիների* Մակոնդոն, որ ծվարել էր ճերմակ, հղկված, նախապատմական *ծվերի* չափ հսկայական քարերով *հուն* և թափանցիկ ջրեր ունեցող գետակի *ափին*:

... Խոսե Արկադիո Բուենդիան բացարձակապես չգիտեր շրջակայքի *աշխարհագրությունը*: Նրան հայտնի էր միայն, որ արևելքում վեր է խոյանում անանցանելի մի լեռնաշղթա, իսկ դրանից էլ դենը հինավուրց Ռիոաչա *քաղաքն* է, որտեղ *ժամանակին* իր պապն էր գվարձանում...

Ծովի մոտիկությունը վկայող *գայիոնի* հայտնաբերումը բզկտեց *Խոսե Արկադիո Բուենդիայի* մարտական ոգին:

(Ըստ Գ. Մարկեսի)

Դ. Հինավուրց բերդից դեպի հյուսիս-արևելք` *բլրի* գառիթափ *լանջին*, կանգնած է Առաքելոց *եկեղեցին*` որպես քարից կառուցված մոխրագույն մի *թռչուն*: Եկեղեցին թռչունի է նման միան վերևից նայելիս, իսկ դիմացից նա թողնում է նստած վարդապետի *տպավորություն*: Քարե մի ծեղ ապաշխարող *վարդապետ* է կարծես, որը նստել է բլրի *լանջին*, մնացել նստած ու մեկընդմիջտ կմնա այդպես, քանի դեռ կա աշխարհը: Վերևում` կորնթարդ գմբեթի ծայրին, *խաչն* է` պարզ, անգարդ, հասարակ: Խաչից սկսվելով` կանգուն հողի պես իջնում է գմբեթը քարապատ մի առեղի անդունդի վրա: Գմբեթի վրա նաիրցի *վարպետ* փորագրիչը դրսից քանդակել է տասներկու առաքյալներին:

(Ըստ Ե. Չարենցի)

31. Բացատրե՛ք հոլովված բառերի քերականական կապերը (ա/ առարկա-առարկա հարաբերություն, բ/ գործողություն-առարկա հարաբերություն, գ/ հատկանիշ առարկա հարաբերություն դ/ բացարձակ ինքնուրույն):

Ա. Ասում են` փրփրահույզ ծովն էլ մարդու պես հոգի ու ճակատագիր ունի: Մարդու պես թախծում է ու ցնծում, պոռթկում, փոթորվում է ու հանդարտվում, տառապում սառցե շղթաների ներքո և զարնան արևի առաջին ոսկեզօծ շողերի հետ մոլեգնում ու կարեվեր խոցված գազանի նման փշրում է կապանքները:

Վանա ծովը... Կարծես լաջվարդ երկնքի մի կտոր է, որն իր հայելանման մակերեսին արտացոլում է երկնի կապույտն ու ակնախտիչ լույսի` հոգիդ թրթռացնող հրճվանքը: Իսկ շատ հեռվից ակնդետ նայողին թվում է` ծովը երեքնուկի թերթերի մեջ դրված մարգարտե ցող է, որ փայլում է անընդմեջ կայծկլտացող ելևէջումներով:

(Ըստ Զ.Ղարյանի)

Բ. Ես ու եղբայրս չէինք էլ պատկերացնում, որ աշխարհի ամենահամեղ ճաշերը հենց մեր տանն էինք ուտում: Ընդ որում, խոսքը միայն ամենօրյա ճաշատեսակների մասին է, իսկ տոնական օրերին մեր սեղանին լինում էին այնպիսի անուշաբույր ու ախորժագրգիռ

կերակուրներ, որ դժվար է նկարագրել: Բայց, այսուհանդերձ, մենք ցանկանում էինք մեր սնունդն էլ ավելի բազմազան դարձնել:

Երբևէ չեմ մոռանա՝ ինչպես առաջին անգամ ներս մտանք և սեղանի մոտ շարված աթոռների շարքում երկու ազատ տեղ գտնելով՝ նստեցինք: Մինչև եղբայրս ապարդյուն փնտրում է ճաշացուցակը, մատուցողը վազեվազ մեր առջև դրեց երկու ափսե ապուր՝ քուլա-քուլա թանձր գոլորշի արձակող: Հետո բերեցին շոգեխաշած ինչ-որ միս, հավանաբար օձի:

Ռեստորանային մեր չորրորդ երեկոյից հետո ես ասացի եղբորս.

- Սամվել, այլևս չգնանք այնտեղ, այլ տանն ինքներս մի բան պատրաստենք:

Հիմա ինձ համար ամենահամեղ ուտելիքներն են սովորական հացը, սպիտակ պանիրը, կանաչ պղպեղը, լոլիկը, ոսկեողկույզ խաղողը և սառնորակ ջուրը:

(Ըստ «Թելադրության նյութերի ժողովածուի»)

32. Տարրոշե՛ք համապատասխան հոլովների ընդհանրական քերականական իմաստները (բառիմաստն ամբողջ ծավալով, վերաբերություն, ստացականություն, գործողության հանգում (ուղղվածություն դեպի առարկան) բայիմաստով արտահայտված գործողությունը տեղի ունենալու համար անհրաժեշտ առարկա):

Ա. Մուբն ընկավ: Մռայլվեց Ավարայրի դաշտավայրն իր շրջափակ լեռներով, իր սևազանգված զորաբանակներով: Աստղերի նվաղուն լույսը հազիվ տարտամորեն գծագրեց Տղմուտի շամբուտներն ու ափերը երկու բանակների միջև: Գետի այն կողմից շարունակական մի խուլ հեղեղի ձայն էր հասնում՝ մերթ ուժգնացող, մերթ նվազող: Դա թշնամու զորաբանակն էր, որ հարափոփոխ, դավադրորեն դասավորում էր իր զորագնդերը: Եվ քանի գնում զանգված առ զանգված մթնում էր նա, լցվում, թանձրանում, տարածվում:

Ծավալվում և տեղավորվում էր նաև հայոց զորաբանակը, որ Տղմուտի մատույցներից առաջացավ և գետափի երկայնքով գնաց, տարածվեց ու կանգնեց թշնամու դիմաց:

(Ըստ Դ. Դեմիրճյանի)

Բ. Հաջորդ օրը՝ ճրագալույցին, Ջաքարիային հասան գոռոմ-գոչյուններ և ուրախության ձայներ: Դրանք առաջապահ ջոկատի զինվորների ոգևորությամբ լի ձայներն էին: Նրանք տեսել էին ամրոցի պարիսպները և ուրախացել, որ վերջապես ավարտվեց իրենց տաղտկալի ու միօրինակ երթը: Ջյունամրոհիկը դադարել էր: Հարավ-արևմտյան քամին մաքրել էր երկինքը, և Ջաքարիան էլ տեսավ պարսպի ուղղաձիգ աշտարակները՝ լուսավորված մայր մտնող արևի բոսորագույն ճառագայթներով: Ջինվորների լուռ շարքերը հիմա ամենուր բզզում էին մեղվի փեթակների պես, և նայելով նրանց աշխուժացած դեմքերին՝ դժվար էր հավատալ, թե այդ նույն զինվորներն էին, որ փոքր-ինչ առաջ կծկվել էին ձիերի վրա՝ անընդհատ սրթսրթալով ցրտից: Հեծյալների զվարթությունը փոխանցվեց ձիերին, ու նրանք էլ կարծես զգացին տաք ու հարմարավետ ախոռների մոտիկությունը:

(Ըստ «Թելադրության նյութերի ժողովածուի»)

33. Հայերենի հոլովական ձևերը կազմվում են՝ ա) վերջավորություններ ավելացնելով (Օր.՝ օր-օրվա), բ) բառի վերջնահնչյուն ձայնավորի կամ բաղաձայնի փոփոխությամբ

(Օր.՝ գինի-գինու, Արամենք-Արամենց), գ) բառամիջի ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությամբ՝ հերթագայությամբ (Օր.՝ տուն-տան): Դուրս գրեք գոյականները և բացատրե՛ք, թե ինչպես են կազմվել կամ կկազմվեն նրանց հոլովական ձևերը:

Աշխարհի շատ երկրների գիտնականներ՝ ֆիզիկոսներ, աստղագետներ ու տիեզերական ճառագայթների մասնագետներ, որոնք անժանոթ են Հայաստանին ու նրա աշխարհագրությանը, շատ լավ գիտեն Արագածի լանջերին գտնվող Բյուրական գյուղի ու Ամբերդ ամրոցի անունները, որտեղից նրանց են հասնում գալակտիկաների ծագման ամենից հանդուգն ու հետաքրքրական գիտական վարկածները, և որտեղ այդ գիտնականները հավաքվում են կարևոր գիտաժողովների:

Հենց Արագածի լանջերին էր, որ Ալիխանյան եղբայրները սանձեցին տիեզերական ճառագայթների կապույտը, և այնտեղ էր, որ մեր՝ աստղերի պես ցրված ժողովրդի զավակ Վիկտոր Համբարձումյանը հավաստեց, թե աստղերն ու մոլորակները մեկընդմիջտ չեն ստեղծվել, այլ ստեղծվում և ձևավորվում են անընդհատ...

Կան մարդիկ, որոնք իրենց կյանքով ու գործով դառնում են մի ամբողջ ժողովրդի «ազնվագարմության վկայականը», նրա խորհրդանիշն ու հարատևման խթանը: Այդպիսիներից է գիտնական-աստղագետ Վիկտոր Համբարձումյանը:

Հեռավոր Ավստրալիայի գիտնական Հաբսլին բացականչել է. «Վիկտոր Համբարձումյանը փայլում է գիտության երկնականարում որպես կարմիր գերիսկա աստղ...»: Այդ նրա՝ Վիկտոր Համբարձումյանի շնորհիվ է, որ համաշխարհային գիտության ոլորտներում քաղաքացիություն է ստացել հայերեն «աստղասփյուռ» բառը, իսկ հայոց լեռներում կորած անհայտ Բյուրական գյուղի անունը այստեղ կառուցված աստղադիտարանի շնորհիվ հայտնի դարձել ամբողջ աշխարհում..

... Պատահական չէ թերթերից մեկի խմբագրությունում ստացված նամակը, որի պատանի հեղինակները խնդրել են պատմել, թե որ դարում է ապրել ու ստեղծագործել աստղագետ Վիկտոր Համբարձումյանը... Չէ՞ որ առասպելը տարիք չի ճանաչում, և նրա հերոսը հավասար իրավունքով կարող է գոյություն ունենալ և 5-րդ դարում, և՛ 15-րդ դարում, և՛ նաև այսօր ու վաղը...

(Ըստ Գևորգ Էմինի)

34. Ըստ տրված օրինակների՝ սահմանե՛ք ժամանակակից հայերենի հոլովական ձևերի կազմության կերպերը:

ա) Սեղան-սեղանի, դաս-դասի, տեր-տիրոջ, սկեսուր-սկեսրոջ, ժամ-ժամվա, ցերեկ-ցերեկվա:

բ) Գինի-գինու, այգի-այգու, ուսանողուհի-ուսանողուհու, ձերոնք-ձերոնց, Աշոտենք-Աշոտենց:

գ) Շուն-շան, անկյուն-անկյան, քաջություն-քաջության, հայր-հոր, մայր-մոր, եղբայր-եղբոր:

35. Գտե՛ք ուղղական հոլովով դրված գոյականները և որոշե՛ նրանց պաշտոնը:

Ա. ... Մեղադրել, որ նրանք եռյակների և զանազան արտակարգ հանձնաժողովների միջոցով արագ և առանց օրինական քաջքուքի վճռում են մարդկանց ճակատագիրը գունավոր մատիտների օգնությամբ, անարդարացի կլիներ: Որովհետև եթե այդ ահագին կալանավորական բանակներին օրինական կարգով և արարողություններով դատեին և դատապարտեին, ապա գլուխ բերելու համար այդ գործը հարկավոր կլիներ:

տասնամյակներ: Իսկ մեր տասնամյակն արդեն ինքնըստինքյան պատմություն է: Իսկ այն ժամանակ պատմություն ստեղծողները պատմության հետ գլուխ դնելու նախասիրություն չունեին: Երբ «Կապիտալի» առաջին թարգմանչին՝ ազնիվ սովետական դասախոսին, քննիչները ծեծի են քաշել, դասախոսը փորձել է ուշքի բերել իր նախկին ուսանողներին՝ դիմելով նրանց զգաստացնող խոսքերով. «Ի՞նչ եք անում, տղաներ, ինչու՞ հեռու չեք նայում, ախր, պատմություն կա, պատասխանատվություն կա»... Քննիչներից մեկը ծխախոտը հանգցրել է իր պրոֆեսորի ճակատին և ասել. «Քանի մենք կանք, պատմությունը չի լինի, իսկ երբ պատմությունը լինի, մենք չենք լինի»:

(Ըստ Գ.Մահարու)

Բ. Մռայլ երիտասարդի աչքերը փայլեցին ուրախությամբ, և նա համբույրներով ծածկեց օրիորդի նիհար, քնքուշ, սպիտակ ձեռքերը:

- Անգին Նունե, գիտե՞ս, թե ինչպիսի երջանկություն է կրկին քեզ տեսնելը:

- Այո՛, Գրիգոր, գիտե՞ս, ես շատ տանջվեցի այս մի տարվա մեջ, քո բացակայության ժամանակ, - սկսեց օրիորդը՝ խոր հոգոց հանելով: - Բավական չէր, որ քեզ այն սուկալի դժբախտությունը պատահեց, իմ անգութ հայրն էլ քեզ այնպիսի անարգանքով վռնդեց մեր տնից: Քո սերը, քեզ կրկին տեսնելու հույսս քաջություն էին ներշնչել ինձ:

(Ըստ Նար-Ռոսի)

Գ. Կարկաչուն գետի ափին հինավուրց ընկուզենին է, որի արմատների միջից բխում է մի սառնորակ աղբյուր, իսկ քիչ հեռու՝ հարթության վրա, մի անանուն գերեզման է:

Շատ տարիներ առաջ, երբ գյուղի վրա հարձակվել է թշնամին, մարդիկ բարձրացել են գյուղամերձ երկնակարկառ ժայռը ու թաքնվել նրա անթիվ-անհամար քարանձավներում: Անագորույն ոսոխը տեր և տնօրեն է դարձել թափուր տներին, գեղջուկների ունեցվածքին, բայց նրան արյուն էր հարկավոր...

(«Թելադրության նյութերի ժողովածուից»)

36. Ղուրս գրե՛ք / ի հոլովման պատկանող բառերը և բացատրե՛ք, թե ինչու է այդ հոլովումը կոչվում ընդհանրական կամ հասարակ:

Ամբոխի մեջ շշուկ տարածվեց, որ արքան է գալիս: Նա երևաց առանց թիկնապահների, միայն սենակապետ Ղրաստամատի ուղեկցությամբ, երևաց իր ամբողջ շքեղությամբ ու փայլով: Նա երկար, առատ մազեր ուներ, որոնք բոլորակ հատմամբ իջնում էին մինչև ծոծրակի կեսը: Դեմքը ծածկված էր խիտ մորուքով: Մարգարտյա երկտակ վարսակալի վրա դրել էր խորշավոր օձիքով և գոհարներով եզերված պատմուճանը, որի լայնությունը արքայական ճոխություն էր խորհրդանշում, իջնում էր մինչև ծունկը, թեզանիքն ավարտվում էր ուսերի մոտ՝ ի տես դնելով ներքնակ պարեգոտը, որ ծածկում էր նրա ձախ բազուկը՝ աջն ազատ թողնելով:

Ամբոխն ինքնամոռաց հրճվանքով ու ցնծությամբ ողջունեց իր արքային, ապա կիսվեց, ճանապարհ բացեց, և մարդկանցից գոյացած միջանցքով արքան անցավ ու մոտեցավ եկեղեցու մուտքին:

(Ըստ Պ. Ջեյթունցյանի)

37. Առանձին շարքերով դուրս գրե՛ք սեռական-տրականը *ի/ու* և *օ/ու* հերթագայություններով կազմվող բառերը:

Ա. Հին երկինքների, արևների, որոտմունքների ու ակնթարթային կայծակների տակ բուրում է լորենիների այս մութ ծմակների մեջ խնամքով փնջված սպիտակ լույսը: Թռթռացող լուսավոր խրճերը գիշերները նետվում են երկինք՝ իրենց մեջ առնելու կայծկլտացող աստղերի մեղրածոր աչքերի վերջին շշուկները: Հինավուրց կաղնիների մեջ կայծակնահար տապալվում՝ վերջին շառաչումների երկյուղները պարզելով անտառների խորքերին...

Մարցագետը աղբյուր-աղբյուր, առու-առու հավաքած իր ջրերին կոտրած արևների բեկբեկուն շողեր և լորենիների համ ու բույր է խառնում: Հետո երփներանգ ծաղիկներից գույն է առնում, գնում է վարարում ու ծալքերում փորձում է թաքցնել ծերունի Աբելի լուռ տառապանքի տաշեղները...

Բ. Հիշողությունների անթելված մորմոքից միանագամից կրակ բռնկվեց, ճարճատեց եռանդով, գնաց առաջ՝ խանձելու երկաթուղու կայարանի ցցին տնկված երկգլխանի արծվի խաչը: Իր որդու՝ իր միակի անունն էլ Լևոնն էր: Բարձրահասակ, թիկնեղ, հաղթանդամ պատանի էր:

Գ. Սևանի կղզու բնակիչները միշտ էլ խաղաղ մարդիկ են եղել: Թե՛ անցյալի, թե՛ ներկայի բնակիչները զենք չեն գործածել, և դրանից էր, որ վայրի աղավնիների մի երամ աներկյուղ թառում էր հինավուրց եկեղեցու կորթարդ գմբեթին: Այդ երամը քամիների ու մրրիկների ժամանակ պատսպարվում էր ուղղածիզ ժայռերի զանազան ձեղքերում:

Ամեն առավոտ ես բարձրանում էի կանաչագարդ բլրիգագաթը՝ ոսկեվառ արևածագը տեսնելու:

(«Թելադրության նյութերի ժողովածու»-ից)

38. Տրված բառերից առանձնացրե՛ք *վա* և *ան* հոլովման պատկանող գոյականները:

Օր, հատուցում, դուռ, շիշ, կաթ, այգի, շեղանկյուն, անիվ, արյուն, եգ, ժամ, սեղան, երեկ, ծունկ, գինի, աշուն, ձուկ, աթոռ ցերեկ, մարդ, աշակերտ, մատիտ, Արամենք, ամուսին, ձի, ժամանակ, թոռ, անուն, մանուկ, շարժում, տուն, որդի, ամառ, երգ, ծոռ:

39. Տրված բառերից առանձնացրե՛ք *ոջ* և *ց* հոլովման պատկանող գոյականները:

Երկինք, աստղ, մերոնք, կին, Աստված, երկաթ, լրագիր, տեգր, Գրիգորենք, թուղթ, ատյան, տալ. լրաբեր, սկեսուր, հենասյուն, աղջիկ, խաչեղբայր, գորգ, բանալի, գինի, մատյան, քանոն, տեր, սկեսրայր, Արամենք, շարժում, բաժին, Վարդանանք:

40. Հետևյալ նախադասություններից դո՛ւրս գրե՛ք *ոջ* և *ան* հոլովման գոյականները:

1. Սովորելով համալսարանում՝ նա գրեթե ընկերներ չուներ: 2. Հանկարծ խուլ ճռռոցով բացվեց դռան փեղկը և ներս մտավ մի մարդ: 3. Ամռանը չարաճճի երեխաները իրենց աշխույժ գոռում-գոչյուններով կենդանացնում էին կեսօրվա միապաղաղ անդորրը: 4. Դասընկերներով մասնակցեցինք դպրոցական օլիմպիադային: 5. Տիկինը նստել էր պատշգամբում և ընկել էր մտորումների մեջ: 6. Նա վերադարձավ հայրենի քաղաք ուշ աշնանը: 7. Կինը մի ակնթարթ հապաղեց, ապա արագ-արագ սկսեց ճաշի պատրաստություն տեսնել: 8. Ծիրինկատար լեռան լանջին կա մի ականակիտ աղբյուր: 9. Նա ծանր վիրավորվել էր ծնկից: 10. Նրա տալը և սկեսուրը մեկնել են արտասիման:

11. Տանտիկինը հյուրերի առջև հյուրասիրության ճոխ սեղան բացեց: 12. Գարնան մի պայծառ առավոտ նա շտապ տանից դուրս եկավ: 13. Երկու եղբայրներն էլ շարժման ակտիվ մասնակիցներից էին:

41. Դուրս գրեք ու/ա ներքին հոլովման պատկանող բառերը:

1. Ավարտելով իր խորին հավատով ու լավատեսությամբ տոգորված խոսքը՝ ծերունին շնորհակալության արտահայտությամբ մեղմ ժպտաց: 2. Մի օր՝ ճրագալույցին, երբ աղջամուղջն արդեն թանձրացել էր, հայրս մտավ տուն և ասաց, որ գետը վարարել է: 3. Կալանավորների երկարաձիգ շարասյունները անընդմեջ քայլքով լռելյայն անցնում էին օձագալար լեռնանցքը: 4. Մեր վեհաշուք տունը գտնվում էր կանաչազարդ բլրի լանջին: 5. Շները՝ երկու հզոր գանփռերը, հսկում էին հոտի անդորրը: 6. Մարդկության մեծամասնությունը խիստ հազվադեպ է խորհում ժամանակի կարևորության մասին: 7. Տոն օրերին փողոցից լսվում էին գոռում-գոչյուններ և ուրախության ձայներ: 8. Տեսնելով մոտեցող անծանոթին՝ շունը սկսեց անհամբերության նշաններ ցույց տալ: 9. Արամը մեծ հաճույքով էր մասնակցում գրականության դասերին: 10. Նրա ծեր հայրը վախճանվել էր թոքերի հիվանդությունից:

42. Դուրս գրեք այ/ո ներքին հոլովման պատկանող բառերը: Հիշե՛ք այդ հոլովմամբ հոլովվող արմատական բառերը:

1. Հիվանդությունից հետո մայրս տակավին շատ թույլ էր: 2. Եղբայրս շատ է սիրում ֆուտբոլ խաղալ: 3. Նրա հայրը աշխատում է քարամշակման գործարանում: 4. Մայրս միշտ համեղ ճաշեր է պատրաստում: 5. Հորեղբայրս հմուտ դարբին է: 6. Մեր նախահայրերը դարեր շարունակ պայքարել են արնախում թշնամիների դեմ: 7. Նա հպարտությամբ նայեց հորեղբորը: 8. Տարեց հայրը երբեք այդքան հոգնած չէր եղել: 9. Մոր հոգնած աչքերը ժպտում էին մեղմ թախիծով: 10. Ավագ եղբայրս՝ Արամը, ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանը:

43. Տեքստից դուրս գրե՛ք ներքին հոլովման պատկանող գոյականները:

Ա. Նրա հայրենիքը եղել է քարոտ Սասունը, այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը: Նրա մանկությունը անցել է այդ քարափների վրա: Թվում էր, թե մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, բայց պայթեց պատերազմը, եղավ զորածողով, բռնություններ: Հազրոն առավ իր կնոջն ու աղջկան և եկավ հասավ Չյանբերդ...

Փողոցում խաղաղություն է: Ես գցում եմ ուղևորության իմ տետրը, նրա մեջ սուսամբարի երկու տերև: Լեռների վրա վրնջում է իմ ծին, ինչպես սանձարձակ ուրախությունը...

Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի և նոր խնդությամբ հնչեցնում է մեր արդար երգերը:

(Ըստ Ակսել Բակունցի)

Բ. Մեր տանը միշտ էլ թխել են հայկական հացեր՝ բազմազան ու տարածև, և բոլորն էլ համեղ էին: Հիշում եմ՝ մայրս թխում էր գրտնակով հարթեցված լավաշ: Հաց թխելու օրը մայրս արթնանում էր վաղորոյանին: Մի քանի ժամ ողջ տունը լցված էր լինում նոր թխված հացի՝ ախորժակ գրգռող բուրմունքով ու հաճելի ջերմությամբ:

(«Թելադրության նյութերի ժողովածուից»)

Գ. Նստելով գույնզգույն ներկված նստարանին՝ նա իսկույն ևեթ նայեց շուրջքլորը: Իր առջև՝ տասնինը-քսան քայլ հեռու, նկատեց մի դեռատի աղջկա, որին սկզբում ոչ մի ուշադրություն չդարձրեց, ինչպես ուշադրություն չէր դարձրել շրջապատի առարկաներից որևէ մեկին: Վերջերս ինչ-որ ցրվածություն ու անփորձություն էր տիրել հոգուն, և նույնիսկ պատահում էր՝ տուն էր գնում և ամենևին չէր հիշում անցած ճանապարհը: Բայց առջևից քայլող աղջկա շարժումներում տարօրինակ, առաջին հայացքից աչքի ընկնող մի բան կար, ու երիտասարդը իր ուշադրությունը գամեց նրա վրա՝ սկզբում սրտնեղած, դժկամորեն, ապա հետաքրքրությամբ:

(«Թելադրության նյութերի ժողովածուից»)

44. Հետևյալ բառերն ըստ սեռական-տրական հոլովի կազմության ձևերի տեղաբաշխե՛ք աղյուսակում՝ յուրաքանչյուր շարքում լրացնելով նոր բառեր:

Ա. Բազմություն, հայր, շարժում, ոսկի, գրել, աշակերտ, ծագում, խաղաղություն, սյուն, ցասում, այգի, մանկություն, ճաշակել, քույր, գետափ, Վարդանանք, Բեդունք, քամի, գիրք, տետր, գրադարան, օր, գառ, ուսուցչուհի, գիշեր, Աստված, ընկեր, ծյուն, տեր, տալ, թույլ, դար, մայր:

Բ. Հայ, թռ, սեղան, գիրք, վայրկյան, հաճախել, կատու, երջանկություն, անկյուն, ձի, ամուսին, մուկ, գինի, լուսամփոփ, կաղին, ընկեր, եղբայր, կաղնի, լեռ, Մանուկ, գայլածուկ, հայրանուն, հավասարում, կարկաչուն, վայրկյան, սկեսրայր, Արամենք, տանուտեր, որսաշուն, մարդ, երգել, պապ, հենասյուն, նռնաքար, Րաֆֆի, հարսնաքույր, Գրիգորենք, կատու, նախամարդ, թագուհի, գործընկեր, սառցալեռ, խաչեղբայր:

ԱՐՏԱՔԻՆ ԹԵՔՈՄ					ՆԵՐՔԻՆ ԹԵՔՈՄ		

45. Տրված բառացանկից առանձին շարքերով դո՛ւրս գրեք *ան* արտաքին և *ա* ներքին հոլովման պատկանող գոյականները:

Որմնասյուն, հարություն, դուռ, մանուկ, գարուն, շնածուկ, ազգանուն, շարժում, մանկություն, սուրանկյուն, խաղատուն, մրրկածյուն, ջրշուն, ծագում, ծոռ, շարասյուն, նուռ, դերանուն, աշուն, ժամանում, մարդկություն, վարանում, գայլաշուն, բուժում, մականուն, անկյուն, թոնրատուն, հերոսություն, զարգացում:

46. Դո՛ւրս գրեք սեռական-տրականի ձևերը՝ որոշելով նրանց քերականական իմաստները բառակապակցություններում և կապային կառույցներում:

Ա. Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամա է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը: Հեռվից ավերակներ չեն երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, զոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին:

Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ծորերում հալվում են ամպի ծվեմները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարիված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները...

Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հղկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները:

(Ըստ Ակսել Բակունցի)

Բ. Հիզաբթի առավոտյան, երբ բրուտանոցի դուռը մռմռալով կիսաբացվեց ու ներս սահեց հանգած աչքերով գերմանուհին, անիվները, չգիտես ինչու, լռեցին, իսկ ես, մինչև ծնկներս խրված կավահողում, անշարժացա: Իմ ողնաշարի երկարությամբ օձի նման մի սառնություն գալարվեց: Կավը սառն էր երևի, պետք եղածից ավելի սառը: Գերմանուհին նետեց իրեն ամենամոտ նստարանին, իսկ նրա առջև ծնկաչոք ընկավ Մամոն...

Ճաշի ընդմիջումից հետո նորից պտտվում էին անիվները, ու բրուտանոցում հաստատված էր աշխատանքային առօրյան: Գերմանուհին վերցրեց մի մեծ կտոր կավ և դողացող մատներով երկար ու խնամքով մշակելուց հետո հաստատեց քառակուսի տախտակին, ապա սկսեց շնչավորել անշունչ կավը: Ավա՛ղ, այս անգամ կավը չչնչեց, որովհետև այդ էր պահանջում արձանագործուհու նոր և վերջին ներշնչումը: Գորշ կավի խորդուբորդ ֆոնին հանգչում էր անշունչ մանկական մի գլուխ:

(Ըստ Գուրգեն Մահարու)

47. Տրված տեքստից դուրս գրեք հոլովված բառերը՝ նշելով դրանց հոլովումը և խոսքիմասային պատկանելությունը:

Ա. Տոթ, խավարչտին գիշեր էր: Իգդիրից Կաղզվան տանող ճանապարհով շարժվում էր մի կառք: Ուղևորները երեքն էին՝ երիտասարդ ամուսինը, նրա դեռատի կինը և հագիվ երկու տարեկան տղան: Դա մի նորաստեղծ ընտանիք էր, որին վիճակվել էր հենց առաջին օրերից ճաշակել իրենց երջանկության ճանապարհին ընկած դառնությունները: Տղամարդը մի քանի տարի ուսուցիչ էր աշխատել Նոր Բայազետի, Երևանի և Իգդիրի վարժարաններում:

Մի քանի օր Սարուխանյանը շրջեց, ծանոթացավ Կաղզվանին: Հայ բնակչության շրջանում տարածվեց նոր ուսուցչի ժամանելու լուրը: Նա դասավանդելու էր ուսումնարանում:

(Ըստ Սաղաթեյանի, Մարտիկյանի)

Բ. Պիզա հինավուրց քաղաքը գտնվում է Տոսկանայում՝ Իտալիայի պատմական մարզերից մեկում: Քաղաքը փռված է փրփրաբաշ Առնո գետի գեղատեսիլ ափերին: Այն իր միջնադարյան ճարտարապետական նախշազարդ կոթողներով, սալահատակ հարթ փողոցներով ու անբասիր մաքրությամբ, ինչպես նաև անդորրությամբ մի առանձին գրավչություն ունի զբոսաշրջիկների համար: Պիզայում հիացմունք պարգևող, առինքնող ու իրենց չնաշխարհիկ գեղեցկությամբ հոգիդ թրթռացնող տեսարժան վայրեր շատ կան, որոնցից ամեն մեկը գրավիչ է յուրովի, բայց նրանց մեջ ակնբախ լուսապսակ է թեք

աշտարակը: Երկնակարկառ աշտարակը բարձրանում է բոլորածն՝ կազմված լինելով իրար վրա բարձրացող սյունազարդ սրահներից...

Տաճարի կառուցման ժամանակ՝ տասներկուերորդ դարում, Պիզան վերելք էր ապրում, և կառուցման համար ակնհայտորեն ոչինչ չի խնայվել: Երուսաղեմի մոտից՝ Գողգոթա սարից, հազար հինգ հարյուր տակառ հող հինգ հարյուր նավով տեղափոխվել է և փռվել տաճարի բակում՝ այն սրբագործելու համար:

(«Թելադրության նյութերի ժողովածուից»)

48. Դուրս գրեք բացառական հոլովով բառաձևերը և որոշե՛ք դրանց քերականական իմաստները և շարահյուսական պաշտոնները:

Ա. Քամին սարերից

Առաջին ձյունի

փոշի է բերում

Եվ շաղ է տալիս

Բոբիկ ոտներիս

Ու փշաքաղված

Մազերիս վրա:

Շապիկիս փեշքից

Ու թևքից կախված

Մաշված, գույնզգույն

Խաշամանման

Կարկատանները

Պոկում է քամին,

Խառնում ծառերից

Թափվող խաշամին...

Ես լուռ նստել եմ

Կապույտ մի քարի,

Կապտել եմ ես էլ

Եվ կապույտ քարից

Տարբերվում եմ ես...

(Համո Սահյան)

Բ. Հոգիս արթնացավ հարավի բույրից,

Ինձ է դուրս կանչում գեփյուռը նրա,

Ձյունն էլ արևի ջահել համբույրից

Ուրախ լալիս է դաշտերի վրա:

Ելնեմ, ծաղկունն է ձնծաղիկների,

Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,

Գնամ հետևից ծիծեռնակների,

Նրան հետ ետ գամ, գարունը բերեմ...

(Հովհ. Շիրազ)

Գ. ... Եվ մութ այրերից մամռոտ ժայռերի

Թավուտ ծըմակի լըռին խորքերից,

Մանուկ հասակից հընչուն ծիծաղի

Արձագանքն ահա լըսում եմ նորից:

Թընդում է զըվարթ աղմուկը բինի,

Բարձրանում է ծուխն իմ ծանոթ ուրթից,

Ու բոլորն ահա նորից կենդանի

Ելնում են աշխույժ վաղորդյան մութից...

(Հովհ. Թումանյան)

Դ. 1. Մի քանի ակնթարթից քարը հանկարծ դուրս պրծավ ու լեռան կորնթարդ կրծքով սահեց ներքև: **2.** Լեռան երկնակարկառ բարձունքից սկսեցինք դիտել չնաշխարհիկ

արևածագը: **3.** Նա գերծ էր ամեն տեսակ ձևականություններից ու քաղքենիական նիստուկացից: **4.** Շոգից նեղվելով՝ թռչունները թաքնվել էին հսկա ծառերի սաղարթներում: **5.** Վերջապես երկարատև հիվանդությունից հետո նա վերադարձավ իր աշխատանքին: **6.** Ես արթնացա թռչունների աշխույժ ճռվողյունից: **7.** Երեխան երկար լացելուց հետո քնեց մանկական անուշ քնով: **8.** Դեղնած տերևները պոկվում էին ծառից և օրորվելով ընկնում էին ներքև: **9.** Տեսնելով զայրացած ուսուցչուհուն՝ երեխան վախից թաքնվեց նստարանի տակ: **10.** Համալսարանում բոլորը խոսում էին աշխարհի նորընծա չեմպիոնից:

49. Կազմե՛ք հետևյալ բառերի բացառական հոլովը և նշե՛ք, թե ո՞ր դեպքերում է բացառականը կազմվում ուղղականի և ո՞ր դեպքերում՝ սեռական-տրականի ձևից՝ հաշվի առնելով հնարավոր զուգաձևությունները:

Ա. Աշակերտ, ուսուցիչ, բանվոր, սեղան, աթոռ, հուզում, մրցում, հեռացում, մոտեցում, լեռ, թռչ, զվարթություն, բարձրություն, կարմրություն, տխրություն, սյուն, ձյուն, արյուն, անկյուն, քույր, տեր, հայր, գոտի, աղավնի, մորթի, ապակի, հայելի, գյուղացի, քաղաքացի, տանջել, մայր, բարձրանալ, տեսնել, հոգի:

Բ. Ջենք, պարտեզ, ձեռք, բուրմունք, ջուր, մարում, նվաճում, շարժում, մեղմություն, նորություն, փրկություն, հասնել, ծիծաղել, բարկանալ, մեծանալ, պատանի, բանվորուհի, ուռենի, ընկեր, կին, քույր, եղբայր, օր, գիշեր, ցերեկ, ամառ:

50. Դու՛րս գրեք գործիական հոլովով բառաձևերը և որոշե՛ք դրանց քերականական իմաստները և շարահյուսական պաշտոնները:

Ա. Միջահասակ, պնդակազմ, շատ ժիր տղամարդ էր՝ միշտ լավ հագնված, մոխրագույն գլխարկը մի քիչ ծուռ դրած, մատները լի մատանիներով, որոնցից մեկն առանձնապես հուրհրատին էր տալիս իր խոշոր ադամանդով: Ման էր գալիս արագ, հաստատուն քայլերով: Դեմքը կարծես բրոնզից էր ձուլված իր դեղնավուն գույնով և ծանր կնճիռներով: Իր այդ բրոնզյա դեմքով և մանավանդ աչքերի շատ սուր ու լուրջ հայացքով կորովի կամքի և համառ բնավորության տեր մարդու տպավորություն էր թողնում:...

Այդ տունը, ուր ապրում էր Դավիթ Ֆոմիչը, բաղկացած էր երկու հարկից և գտնվում էր քաղաքի ամենաբանուկ փողոցում: Ամբողջ վերին հարկը՝ ծառաների սենյակներով, խոհանոցով, բաղնիքով, պահեստներով գտնվում էր տանտիրոջ ձեռքին:

Դավիթ Ֆոմիչի ընտանիքը մեծ չէր. ինքն էր, կինը, մի հատիկ տղան և աղջիկը: Աղջիկը բավական տգեղ արարած էր: Ծնողների առանձին հոգացողության տակ էր նրա երաժշտական լսելիքը. եթե պատահում էր, որ փողոցային որևէ թափառականի երաժիշտ իր արգանով կամ հարմոնով, ջութակով կամ շվիով մտնում էր տան բակը մի քանի կոպեկ հավաքելու համար, իսկույն ծառաների միջոցով դուրս էին քշում նրան, որ աղջկա երաժշտական լսելիքը չփչանա:

(Ըստ Նար -Դոսի)

- Բ. 1.** Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով,
Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...
2. Սարի հետևում շողերը մեռան,
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ,

Տխուր երեկոն զարկել է վրան,
- Սիրտըս կարոտով կանչում է քեզ՝ եկ:

3. Խորհրդավոր է երկինքն երազուն.

Վարսաթափ ուռի, դողդոջուն եղեգ,
Արծաթ խոսքերով աթյուրն է խոսում,
- Սիրտըս կարոտով կանչում է քեզ եկ:

4. Աշնան մշուշում շշուկ ու շրշուն,

Բարդիներն են բաց պատուհանիս տակ,-
Դու ես, որ դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:
Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում,
Եվ շշնջում ես և՛ անուշ շրջում,
Պայծառ տրտմությամբ ինձ ես անրջում
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում...

(Վ.Տերյան)

5. Դու քո պատմության դասերով բոլոր,

Քո հին անունով, կյանքով դժվարին,
Ծանր կանգնած ես այն մեծ նժույզին,
Որ ծանր էր կշռում ոչ թե արկերով,
Ոչ թե վառողի, զենքի հակերով,
Ոչ թե ավերված կրքով կատաղի,
Ոչ թե մայրենի արցունքով աղի,
Այլ երջանկության մշտավառ հրով,
Խաղաղ ծերությամբ, շիկնանքով սիրո,
Հպարտ մայրությամբ, ծիծաղով մանկան,
Ձեռքի սեղմումով բարեկամական...
Այն մեծ նժարին, որտեղ ապագան
Ու պատմությունն են դարձել կշռաքար...

(Պ.Սևակ)

Գ. 1. Տղան բարձրացնելով սուրճով լի պարկը, դրեց ուսին, տարավ մոտ հիսուն-վաթսուն մետր և իջեցրեց, բայց ոչ նախկին թեթևությամբ: **2.** Նայեց շուրջբոլորը և ծուռումուռ նոսր սաղարթով ծառն էլ նրան գեղեցիկ թվաց: **3.** Ողջ օրն աշխատեց բանջարանոցում՝ շնչելով սամիթի ու ռեհանի, ուրցի ու դաղձի բույրով օդը: **4.** Երբ նայում ես այդ կետից, թվում է՝ տեսնում ես սպարապետի կիսադեմը՝ կորնթարդ քթով, մորուքով ու ընչացքով, նշանավոր սաղավարտով: **5.** Նա իր սիրաբորբոք խոսքերով վերջնականապես դյութեց գեղեցկուհուն: **6.** Հազիվ մի քանի րոպեներ էին անցել, երբ մինչ այդ հանդարտ մակերևույթով ծովն ավելոժվեց: **7.** Առաջին անգամ էր, որ նա ճամփորդում էր անեզր օվկիանոսով: **8.** Շուտով երևաց հինավուրց բերդը՝ իր հաստաբետ սպարիսպներով և բարձր աշտարակներով: **9.** Նրա սիրտը շատ ուրախ էր և բարևում էր նույնիսկ փողոցով անցնող անծանոթ մարդկանց: **10.** Կեսօրին մենք վայելեցինք տատիս պատրաստած թանով ապուրը:

51. Կազմե՞ք հետևյալ բառերի գործիական հոլովը և նշե՞ք գործիականի ով և բ թեքությունների գործածության ոլորտները և հնարավոր զուգաձևությունները:

Անձրև, ամա, գիրք, հող, լսարան, պատերազմ, այգի, ոսկի, սպասել, կազմել, դիմել, գիշեր, ցերեկ, տեր, քույր, հայր, ազահություն, ծագում, մուկ, ծիծաղել, հուզում, մեծամասնություն, շարժում, ձուկ, խափանում, բարդի, ժխտում:

52. Կազմե՞ք հետևյալ բառերի գործիական հոլովը և օրինակներից ելնելով՝ որոշե՞ք, թե որ հոլովումների դեպքում գործիականը կազմվում է ուղղականի և որ հոլովումների դեպքում՝ սեռական-տրականի ձևից: Հաշվի՛ առե՞ք նաև հնարավոր զուգաձևությունները:

Ամրոց, բլուր, ջուր, սուր, դպրոց, տանիք, լսարան, հոգի, որդի, ապակի, պարել, վառել, օր, ընտրել կատարում, ընկեր, մայր, եղբայր, անկյուն, պաշտպանություն, զննություն, բաժանում, գինի, մարդ:

53. Տեքստից դուրս գրե՞ք ներգոյական հոլովով բառաձևերը և ներգոյականի իմաստ արտահայտող սեռական-տրական հոլով + մեջ կապական կառույցները:

Ա. Փոքր, աննշան գյուղ է Կաղնուտը, այնպես, որ երբ պետական որևէ պաշտոնյա ելնում է շրջանը պտտելու, նա բնավ Կաղնուտ չի մտնում: Գյուղը թաքնվել է մի նեղ ձորակում... Այսպես՝ մի նեղ ձորակի մեջ, սարի արևադեմ լանջին կաած՝ Կաղնուտընայում է երկնքին...

Կաղնուտը ... այստեղ ամեն ինչ նույնն է, ինչ որ մեր բոլոր գյուղերում... Կաղնուտում գրեթե բոլորն ազգական ու բարեկամ էին իրար...

Դավիթը կամացուկ ու դանդաղ դուրս եկավ փողոց և քայլերն ուղղեց դեպի դիմացի արտը: Վարի օր էր, փողոցում մարդ չկար: Գյուղում զինվոր հազվադեպ էր լինում... «Վարդիշաղը մարդի է գնացել», - կրկնում է Դավիթը մտքում: Դաշտից վերադառնալիս գյուղամիջում հանդիպեց երկու զգիրներին: Քիչ անց նրան կանչեցին գյուղի գրասենյակ: Երբ Դավիթը եկավ, տանուտերը անցուդարձ էր անում գրասենյակի բակում:

(Ըստ Ստ.Զորյանի)

Բ. Թախտի վրա՝ անկողնու մեջ, պառկած է Սաքուլը՝ գլուխը կապած սպիտակ փաթաթանով: Երկու օր է, որ կողերի մեջ այլևս ծակծկոցներ չի զգում... Ծանր ու չարագուշակ լռություն է տիրում սենյակում և դուրսը: Մահվան ուրվականը նորից եկել է՝ իր փսփուքը տարածելու մեռնողի սենյակում առաջվանից ավելի ծանր ու չարագուշակ լռության մեջ: Սաքուլի կինը՝ Նատոն, զգում է, թե ինչպես ամուր մի բան բռնում է իր բուկը: Գլուխը թեքում է օրորոցի վրա, դեմքը ծածկում կռների մեջ և ամեն կերպ աշխատում է զսպել խեղդող հեծկլտանքը:

(Ըստ Նար-Ղոսի)

Գ. Դիլան Դային միայն գիշերը տուն գնաց: Ամբողջ օրը թափառել էր ձորում, եղել էր հարևանի այգու շրջակայքում, աղբյուրն էր գնացել, փողոցի անկյունում կանգնել էր, բայց ոչ մի տեղ Սոնային չէր տեսել:

Լուսնյակ գիշեր էր, երկինքն անամալ: Դիլան Դային պառկեց դեզին գլխին՝ նոր հարած խոտերի վրա, բայց քունը չտարավ:

Հազարավոր չորացած ծաղիկներ բուրում էին խոտի խրձերի միջից և լուսնյակ գիշերով նրան այնպես էր թվում, ասես այդ նույն դեզի վրա պառկել է Սոնան և խրձերի մեջ թողել լաջվարդի բույրը:

Լուսաբացին հալվեցին աստղերը, արևի առաջին շողերի հետ դեղնած արտերում զարթնեց կաքավը...

Քայլում էր Դիլան դային շաղոտ խոտերի միջով, հնձած արտերն էր կոխ տալիս և գլուխը կախ բարձրանում դեպի անտառը՝ արահետի կեռմաններով և թփերի միջով...

Դիլան Դային զգույշ քայլերով մոտեցավ թփերին: Հնձած արտում կաքավները հավաքում էին ընկած հատիկները: Քամին խշշացրեց թփերը... Ու խշշոցը կաքավներին հասավ թե չէ, իսկույն փռռալով մի քանի հանգույց արին օդում, իջան արև առած արտերի վրա...

(Ըստ Ակսել Բակունցի)

54. Ընտրե՛ք այն գոյականները, որոնք ունեն ներգոյական հոլովածև: Ո՞ր գոյականները չունեն այդ հոլովածևը:

Գիշեր, ուսումնարան, եղբայր, ինքնաթիռ, ջրհոր, լսարան, փողոց, դաշտ, տետր, օր, ամիս, լավություն, ձեռնարկություն, հանրապետություն, գարուն, շաբաթ, անտառ, գյուղ, աչք, հոգի, տարի, ամիս, փոս, տեր, շուն, աղոթք, ճարտարապետ, այգի, հունվար, օդանավակայան, սենյակ, քաղաք, մեխ, դրոշ, թշնամություն, կարմրություն, տնօրեն, շարժում, տարի, զարգացում, սլաք, հայրենիք, հայր, քույր, միտք:

55. Կազմե՛ք տրված բառերի սեռական-տրական հոլովը և որոշե՛ք հոլովման տիպը (ընդհանրական կամ հասարակ, ձևային, իմաստային, ձևաիմաստային և պատմական):

Ա. Ջորք, կենդանի, գրել, ճանապարհ, քույր, մարդ, զվարթություն, կատարում, բառարան, ծերունի, բժշկուհի, Աստված, ծնունդ, ամիս, հանգիստ, հայր, դիմում, հանք, հապավում, հառաչանք, օր, ուսանողուհի, ամուսին, տարի, դուստր, կայսր, Արամենք, դուռ, սեղան, գառ, անկողին. շուն, տուն, թերթ, սյուն, հեռացում, հուսախաբություն, մոտենալ, զգալ, ձիավոր, պատմություն, հոգի, ցերեկ, արև, հույս, սուգ:

Բ. Հորեղբայր, քաղաք, տեգր, երդում, կնքահայր, Սահակենք, երգել, զեկուցում, վանահայր, ուրախություն, անկյուն, հույս, Գյումրի, ձյուն, բուռ, հասկացություն, հեռագրասյուն, գետածի, դաշտամուկ, խաղընկեր, մարդ, տետր, քաղաք, հայելի:

Գ. Այգի, որոշում, քաջություն, աղջիկ, ժամ, առու, ձի, տարի, դուստր, լսել, դիմում, շարժում, օր, ամառ, մանուկ, մուկ, հանգիստ, զգացմունք, արքա, անպատվություն, կամք, գալուստ, աշակերտուհի:

56. Տեքստից դ՛րս գրեք գոյականներն ու գոյականաբար գործածված բառերը և որոշե՛ք դրանց հոլովման տիպը (ընդհանրական, ձևային, իմաստային, ձևաիմաստային և պատմական):

Ա. Արքան դանդաղ ու աննպատակ քայլերով պտտվում էր սենյակում, ցրված ու մշուշոտ հայացքով դիտում չորս կողմը, հենց այնպես ձեռք տալիս ինչ-որ առարկաների. կարծես ուզում էր ստուգել դրանց պնդությունը: Ապա, ասես իմիջայլոց, նկատեց Օլիմպիային, որն աշխատում էր թաքուն սրբել արցունքները և կարգի բերել իրեն:

Այսպես մտամոլոր նա ման էր եկել ամբողջ պալատում, մեն-մենակ իջել, բարձրացել բոլոր երեք հարկերը, ետ ու առաջ քայլել դատարկ միջանցքներով և Օլիմպիայի սենյակն էր մտել միայն նրա համար, որ լույս էր նկատել դռան արանքից: ... Օլիմպիան չհավատաց ականջներին: Երկու մենակ մարդ հիմա կսփոփեն, կմխիթարեն իրար, գուցե և անխոս կհասկալան միմյանց ու լուռ դաշինք կկնքեն մեկը մյուսի հետ: Իսկ երկու հոգին այնքան էլ քիչ չեն: Եթե մանավանդ մեկը կին է, մյուսը՝ տղամարդ: Եվ առավել ևս, եթե այդ կինն ու տղամարդը ամուսիններ են:

(Ըստ Պերձ Չեյթունցյանի)

Բ. Այդ օրը գործարար բակի պետ Իվան Բիչկոն բրուտանոց մտավ՝ անբաժան կարճ մտրակը ձեռքին հետ ու առաջ շարժելով, մի կնոջ ուղեկցությամբ: Մեծ փորձառություն ունենալու կարիք չկար գուշակելու, որ կինը կալանավորուհի էր և պատկանում էր Չիտայից եկած նոր էտապին: Այդ էին վկայում նրա չարչարված, տնային մոխրագույն թեթև վերարկուն, նաև ծոված կրունկներով կանացի կիսակոշիկները:

Եթե փորձենք որոշել կնոջ դեմքի գույնը, ապա անվերապահորեն պիտի ասենք, որ կարմիր էր, սակայն այդ կարմրությունը ոչ մի կապ չուներ ոչ բանաստեղծների երգած կարմիր վարդի, ո՛չ զատիկի կարմիր հավկիթի, ո՛չ արևի, ո՛չ էլ ուրիշ կարմրությունների հետ: Դա մի գունատ, բծավոր, խաթարված պուտերով կարմրություն էր, որը նրան տալիս էր հիվանդագին տեսք: Նիհար էր նա կալանավորական նիհարությամբ և եթե չլինեին բարակ հոնքերի տակից նայող աշխույժ ու քննող աչքերը, ապա կարելի էր նրան շարժուն ու թարմ դիակ համարել:

(Ըստ Գուրգեն Մահարու)

Գ. Մենք ճամփա ելանք առավոտ ծեղին՝

Կապույտ երկնքի խորությամբ արբած:
Թարմ, թեթև էր մեր ճամփորդի հոգին,
Ուրախ էինք մենք, և մեր սիրտը-բաց:
Կանչում էր, կանչում ճամփան անմեկին
Ոլորապտույտ մեր առաջ փռված:
Եվ վերջին անգամ նայեցինք մենք ետ,
Ուր ոչինչ չկար մեզ համար դյուրիչ,
Անցյալը կորել, ցնդել է անհետ
Որպես երագում արծակած մի ճիչ:
Ոչ մի տխրություն չէր ճախրում մեզ հետ,
Կախարդել էր մեզ առավոտը ջինջ:
Պար էին խաղում ու երգեր ասում,
Ջենքերի փայլով հրճվում էինք մենք:
Կարծես մանկական կապույտ երագում
Ամեն ինչ այնպես ժպտում էր աննենգ:
Ո՛չ հրաժեշտի անորոշ հուզում,
Ո՛չ էլ մեռնելու կասկածանք կար նենգ:
Անսահման դաշտն էր փռված մեր առաջ:
Ոսկի հասկերով ողջունում է մեզ

Աշխարհի հեռուն՝ բա՛ց, լայնատարա՛ծ,
 Արևի շնչով լվացված կարծես,
 Իսկ ճամփան անծայր իրանը փռած,
 Թավալվում էր մի հսկա օձի պես... (Եղիշե Չարենց)

Դ. Իջնում է գիշերն անգութ ու մթին,
 Եվ այգը բացվում դառն ու մահահոտ,
 Բայց հրկեզ հոգիս մորմոքում այս տոթ
 Հավատում է դեռ քո առավոտին...
 Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ
 Մի հեզ նաիրցի՝ գնում եմ անկարգ,
 Թող գուժկան գիշերն անհաստատ դավե
 Որքան մութը՝ սև, այնքան ես՝ համառ,
 Երկնիր, իմ երկիր, հավատով
 Սուրբ է քո ուղին անմար, և պսակըդ վեհ...

(Վ.Տերյան)

57. Հոլովե՛ք տրված բառերը՝ նշելով զուգաձևությունների գոյությունը:

Ծագում	ցասում	ամիս	Աստված
անկյուն	ծնունդ	լեռ	մատանի
տարի	հույս	կայսր	առավոտ
դար	սյուն	անուն	Գյումրի
լույս	Ռաֆֆի	սուգ	բեռ
տալ	աներ	պատիվ	այրի
տեգր	մահ	մամուլ	Լոռի
ամառ	հանգիստ	գիշեր	օր
շարժում	կորուստ	գալուստ	թաքուստ

58. Դու՛րս գրե՛ք այն գոյականները, որոնք ունեն այլաձև հոլովում:

Հույս, փառաքշանք, ուրվական, լույս, փաթիլ, ընկեր, ծյուն, աղջիկ, սեր, սուգ, կայսր, նախահայր, զեփյուռ, խնդրագիրք, կորուստ, դուստր, մատյան, զինի, այգի, գալուստ, ծնունդ, արևածագ, սառույց, Աստված, պատիվ, աղբյուր, հոտ, փորձ, մահ, աչք, աստղ, հարսնաքույր, բանալի, Վեդի, տնտեսուհի, մամուլ, ձմեռ, անուն, տանտեր, տատ, օր, հանգիստ:

գ) Անձի և իրի քերականական կարգը

59. Դու՛րս գրե՛ իրանիշ և անձնանիշ գոյականները:

Ա. Իտալացու օգնության կանչերը, թագավորական սենյակներում հնչող զենքերի շայունը իրարանցում առաջացրին ամբողջ ամրոցում: Մերկացրած թերով իրենց ննջարաններից դուրս են թռչում թագուհու հավատարիմ ծառաները, բայց դավադիրները այդ էլ էին կանխատեսել. Հոլիրուդը չորս կողմից շրջապատել են նրանց զինված ծառաները, որպեսզի ոչ ոք օգնության չհասնի թագուհուն...

(Ըստ Ստ.Ցվայգի)

Բ. Ծովանը տերերից բացի մյուս մարդկանց համարում էր թշնամի: Տերերը պաշտպանում էին իրեն, քույրերին, մորը, մորաքույրերին, խոտ են տալիս, ձմեռը ջրում են, սրբում են գոմը, իսկ թշնամիները չեն թողնում դուռը մեկնես դեզի, անցնես արտերի, բանջարանոցների միջով կամ կողքով, եթե անցար՝ քարով, փայտով կխփեն, կծեծեն, տուն կտանեն...

(Ըստ Ստ.Զորյանի)

Գ. ... Իսկ հիմա նորից ձմեռ է. մեղրամսի գիշերների նման կարճ ամառն անցավ: Գործարար բակի ու գրասենյակի աշխատողներն անցան իրենց անմիջական պարտականությունների կատարմանը: Ծանոթ մոմռոցով բացվում է բրուտանոցի դուռը, և մենք ներս ենք մտնում, ինչպես ամառանոցներից վերադարձողներն են մտնում իրենց տները: Ամեն ինչ թվում է խունացած, փոշոտ, բայց հարազատ: Առաջին օրն աշխատանքը չի կաչում կարծես: Տաշտը դատարկ է, ցեխը նախապատրաստված չէ հունցելու համար: Բացի դրանից, հարկավոր է զբաղվել ընդհանուր մաքրությամբ, կարգավորումով: Գերմանուհին մեկ-մեկ իջեցնում է իր քանդակներն ու մաքրում փոշին: Բայց ահա անցնում են օրեր, շաբաթներ, և ամեն բան գտնում է իր տեղը, ուրիշ խոսքերով կյանքը մտնում է իր սովորական հունը:

(Ըստ Գ.Մահարու)

Դ. «Բնությունը միակ գիրքն է, որի յուրաքանչյուր էջը լի է խոր իմաստով», - Գյոթեի այս խոսքերն ենք հիշում, երբ ծանոթանում ենք եղանակը, երկրաչարժը, հրաբուխը և բնության մյուս արհավիրքները գուշակող կենդանիների ու բույսերի զարմանալի հատկություններին: Ջարմանալ կարելի է, թե ինչպես է մեղուզան զգում երկրաչարժը, գորտը «կռահում» եղանակի փոփոխությունը, կամ թագավորական զարմանածաղիկն ավետում մոտալուտ հրաբխի ժայթքումը: Մ. Լոմոնոսովը գրել է. «Մարդուն հարկ չէր լինի Աստծուց որևէ բան պահանջել, եթե նա սովորեր ճիշտ կանխագուշակել եղանակը»... Հիանալի եղանակագետներ են թռչունները. փայտփորիկը եղանակը զգում է և դա ազդարարում է թմբկային հարվածներով: Ծիծեռնակը վատ եղանակին ցածր է թռչում, իսկ արևոտ, չոր եղանակին՝ բարձր: Իսկական «ծանրաչափ» է արտույտը. նրա երգը պարզ եղանակ է գուշակում: Մթնոլորտային ճնշման, օդի խոնավության, ջերմաստիճանի փոփոխությունների նկատմամբ շատ զգայուն է անտառի գեղեցկուհին՝ անտառահավը: Մթնոլորտային փոփոխությունների նկատմամբ շատ զգայուն են նաև ձկները: Ուշագրավ եղանակագետ են գորտերը, անձրևաորդերը:

Գերագանց «խոնավաչափեր» են ոչխարները: Պատմում են նաև, որ մի անգամ պարզ, արևոտ եղանակին Ի.Նյուտոնը դուրս է եկել զբոսանքի և հանդիպել է հովվի: Վերջինս նրան խորհուրդ է տվել տուն գնալ, եթե չի ուզում անձրևի տակ ընկնել: Նյուտոնը չի լսել, սակայն կես ժամ հետո հորդ անձրևը թրջել է նրան մինչև ոսկորները: Հովվի գուշակությանը օգնել էին ոչխարները:

Իսկ 1794 թ. աշնանը սարդերն «օգնեցին» Նապոլեոնին:

(Ըստ Պ.Ծատուրյանի)

60. Կազմե՛ք 2-ական նախադասություն՝ հետևյալ բառերը տարբեր հոլովներով գործածելով ուղիղ խնդրի պաշտոնով:

Գայլ, աղվես, հարևան, բանվորուհի, աշակերտ, ձի, մարդ, երեխա, թռչուն, զինվոր, պատմագիր, թշնամի, գյուղացի, ուսանող, առյուծ, թագավոր, վարորդ, նապաստակ:

61. Տեքստից դուրս գրեք բայերն ու բաիմաստով պահանջվող խնդիրները միասին և համապատասխան հարցերով որոշե՛ք հոլովը, անձի՞, թե՞ իրի՞ առումով գործածված լինելը:

Ա. Կեցությունը ոչ միայն որոշում է գիտակցությունը, այլ մարդկանց վարքն ու բարքը: Այնուհետև Աշոտ դային պատրաստեց իմ տոպրակը: Տոպրակում տեղավորեց երեք բաժին հաց, որից մեկն իմ օրաբաժինն էր... Երեխաներին խնամում էին տարիքավոր կալանավոր կանայք: Եթե մայրերից մեկն ու մեկը երկու-երեք ամիս հետո վերադառնար և տեսներ իր որդուն, ոչ մի ուժ չէր կարող որոշել, թե որն է նրա հարազատը:

(Ըստ Գ.Մահարու)

Բ. Բայց ոչ միայն մուսաները, այլ աստվածներն էլ են օրհնել նրա օրորոցը: Մինչև երկինքը բարձրացնելով Մարի Ստյուարտի նրբաճաշակ շարժուձևերը, փայլուն դաստիարակությունը, աշխարհիկ վարվելակերպը՝ բոլորն էլ նրան բնութագրում էին սոսկ որպես առաջին աշակերտուհու:

(Ըստ Ստ.Ցվայգի)

Գ. Հիշողության մյուս նկարը խավար էր, որովհետև պատկերում էր ծաղկած ծիրանենիներով փողոցը, իսկ իրենք այդ փողոցը գալիս էին միայն մուրն ընկնելուց հետո: Փողոցի բնակիչները երեկոյան փակում էին տների ու պարտեզների դռները, և փողոցը մնում էր իրենց ու իրենց նման զույգերին: Պատի տակ առում էր, միայն նա էր բաց երեսով նայում լուսնկային:

(Ըստ Ակսել Բակունցի)

Դ. Գիշերվա նիրհից արթնացավ վաղորդյան մեղմօրոր գեփյուռը և հազարաթույր ծաղիկների զգլխիչ բույրով տոգորվեց ողջ մթնոլորտը: Դեռատի արփին գլուխը բարձրացրեց լեռան գագաթը զարդարող ձյունաթույր բարձից՝ իր սրտաբուխ ողջույնը հղելով աշխարհին: Հնուց ի վեր մարդիկ զգացել են, որ օձերն իրենց անքթիթ հայացքներով կարող են հիպնոսացնել կենդանիներին ու մարդկանց:

Դա մի քնած սև հովազ էր, որը հանկարծ զարթնեց, բարձրացրեց գլուխը, խորագնին նայեց Թրեյսիին, գիրթ ելավ գիրգ թաթերի վրա, գոմռաց, ինչպես միայն սև հովազներն են գոմռում՝ արտաբերելով ինչ-որ հնչյուններ: Այնուհետև նորից փռվեց խոնավ հարթակին և երազկոտ հայացքն ուղղեց անսահման հեռուները:

Ճանապարհի ավերին հազարաթույր ու հազարաթույր ծաղիկները բյուր-բյուր ձևերով պճնազարդել էին բուրաստանները: Պուրակներում բանաններն ու անանասները բոլորել էին ականակիտ լճակները:

(«Թելադրության նյութերի ժողովածուից»)

Ե. 1. Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,

Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:
...Եվ այդ քարեղեն երկնքի միջից
Մասրի մի թուփ է գլխիվայր բուսել,
Որ դալարել է երկնքի շնչից,
Բայց ոչ մի անգամ երկինքը չի տեսել:

2. Անտառում ամպի ծվեններ կային
Կապույտ մշուշներ կային անտառում,
Օրոր էր ասում աշունն անտառին
Բայց դեռ անտառի քունը չէր տանում:
Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սղոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:
Անտառապահի տնակի առաջ
Խարույկն իր խաղաղ ծուխն էր ծածանում
Եվ խարույկի մոտ եղևնին կանաչ
Սոճու հետ սիրով զրույց էր անում: (Համո Սահյան)

դ) Առկայացման քերականական կարգը

62. Հետևյալ զույգ նախադասություններում ընդգծվածների միջոցով բացատրե՛ք որոշ-
յալության-անորոշության քերականական կարգի իմաստն ու արտահայտության
միջոցները:

1. ա/ *Մի ուսանող* ալ կարմիր *վարդ* էր փնտրում, որ նվիրեր սիրած աղջկան:
բ/ Կաղ առավոտյան *ուսանողը* բացեց պատուհանը և տեսավ հրաշք *վարդը*:
2. ա/ *Քամին* թռցնում էր առաջին պատահած մարդու *գլխարկը* : բ/ *Մի* մոռացկոտ
քամի ծուլորեն թափառում էր փողոցից փողոց:
3. ա/ *Մի* բարակ-քաղաքավարի *անձրև* է եկել ժամերով, եկել է առանց դադարի.../ՊՍ/:
բ/ Կատաղած *անձրևը* թափում էր դուռ ու պատուհան:
4. ա/ Եվ հենց դա՞ չէ արոյոք, որ կոչվում է *կարոտ* :
5. բ/ Ես մթի՛ն-մթի՛ն *կարոտն* այնպես գիտեմ, ինչպես կույրը գիտի բնակարանն իր
հին... (ՊՍ):

63. Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ավելացնելով *ը* կամ *և* հոդը. հիմնավորել
ընտրությունը:

Ա. Կաքաբերդի գլխի. տարի. բուրբ ամպ է նստում, բերդի ատամնածև պարիսպներ.
կորչում էին ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգեր.: Հեռվից ավերակներ
չէին երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխի. հսկում կա, գոց են ապարանքի երկաթե
դռներ. աշտարակի գլխից մեկ. ահա ձայն է տալիս քարափ բարձրացողի.:

Կաքավաբերդի միակ ծաղիկ. ալպիական մանուշակն է՝ ցողուն. կաքավի ոտքի պես
կարմիր, ծաղիկ. ծիրանի գույն: Քարի մոտ է բսնում ալպիական մանուշակ., պարիսպների

տակ: Արևից քարեր. տաքանում են, և երբ անպեր. ծածկում են քար ու պարիսպ, մանուշակ. թեքվում, գլուխ, հենում է քարին: Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզի. մանուշակ. ճոճք է թվում, աշխարհ` . ծիրանագույն բուրաստան:

(Ըստ Ա.Բակունցի)

Բ. Մարտին ապեր., իսկապես արդար լինենք, շահով, առևտրով քիչ էր է հետաքրքրվում. նրան շահագրգռում, ապրեցնում էր միայն իր այգու կյանք., նրա բազմազան կյանք.՝ վաղ գարնանից մինչև ուշ աշուն: Մարտին ապոր. հետաքրքրում ու ապրեցնում էր յուրաքանչյուր ծառ և թուփ, նրանց բողբոջում.ու ծաղկում., ապա առաջին պտղավորում. քորոցի գլխի չափ պտուղներ., որ կամաց-կամաց դառնում էին բռունցքի չափ: Նա գիտեր այգու յուրաքանչյուր ծառի կենսագրություն., ինչպես հայր. իր զավակների նրանց պատահած դժբախտություն., ծառի առաջին ծաղկում. նրան պատճառում էր զարմանալի հրճվանք, ինչպես զավակի հարսանիք. ծնողների.: Նրանց հիվանդություն. նրան տխրեցնում էր և ստիպում էր հոգածություն. կենտրոնացնել հիվանդ ծառի վրա: Կոտրված ճյուղ., կարկտահար ծառ. նրա սիրտը լցնում էր դառ. վշտով, իսկ նոր պատրուսների առաջին կանաչ. ու ընծյուղում.՝ անասելի բավականությամբ ու հրճվանքով, մի այնպիսի հրճվանքով, որ նա չէր կարողանում իրեն զսպել մինչև իր ուրախության, մասնակից չաներ և մի ուրիշի:

(Ըստ Ստ. Զորյանի)

64. Ընդգծե՛ք հոդ ունեցող գոյականները, բացատրե՛ք հոդերի արտահայտած իմաստները՝ որոշյալություն, ստացականություն, դիմորոշություն, ցուցականություն:

1. Անց կացա՛ն, Օրերս թռան, անց կացան /ՀԹ/:
2. Ես՝ հողախախտով տառապողս ողջ կյանքում, խոնավության բանտարկյալս ու գերիս, Տալիս եմ ձեզ ցավազգա ոտքերիս խորհուրդը խոր և հրամանն ահարկու /ՊՍ/:
3. Ո՞նց է ժպտում իմ հոգին Չարին, բարուն՝ ամենքին, Լույս է տալիս ողջ կյանքիս Ու էն ճամփիս անմեկին /ՀԹ/:
4. Ծիածանների լարերը վրա ինձ քնար տվեց երկինքը մի օր, որ երգեմ գովքը իմ մայր բնության Ու մեկ էլ երկրիս կյանքը լուսավոր: Բայց ես երգեցի հոնքերդ միայն, Մեկ էլ՝ հոնքերիդ կամարները վեհ, բայց ես երգեցի մարմինդ միայն, Մեկ էլ քո մարմնի մարմարները հրե, բայց ես երգեցի ոտքերդ միայն, Մեկ էլ՝ ոտքերիդ հետքերն իմ սրտին. Ա՛խ, ես երգեցի քո սերը միայն, Սերդ, որ կամուրջ քանդեց իմ ճամփին... /ՀՇ/:
5. Լուսամուտդ փակես՝ մրրիկ կլինեմ, Հողմ կլինեմ ու կփշրեմ ապակիդ, Ու սենյակդ, ու աշխարհդ կխուժեմ, Ու կխառնեմ թղթերդ, կյանքդ, հոգի՛դ ... /ՍԿ/:
6. Մեղավոր շուրթով մրմնջում եմ ես, - Ամենի համար, ինչ տվել ես դու՝ Այս դժվար սիրուս, այս խռովքներիս, այս վերքիս համար, Վերացումներիս, վեհացումներիս, ու փառքիս համար, Քեզ բյուր օրհնություն.... (Գ.Նարեկացի) :
7. Էլ ո՞վ է այս աշխարհում
Քեզ կարմիր մի որդան տալու,
Կորած յոթ դրախտի տեղ
Քեզ ո՞վ է Գողթան տալու: /ՀՍ/:

8. Ինձ խաբեցին ամենուր, Խաբեությամբ խաչեցին: Ձեռքիս խաչբուռը առան՝ Ու վրաս խաչ քաշեցին: - Քոնն է աշխարհն ասացին, Տանս քարերը տարան... Տուն ունեցար՝ տանդ մեջ բույն կղնի սատանան: /ՀՄ/:

65. Տրված ասույթներից դուրս գրե՛ք հող ունեցող գոյականները՝ նշելով հողի տեսակը:

- Աշխարհս ծագման օրից ընթանում է իր ճամփով: Դու չես կարող նոր բան կերտել աստվածատուր քո խելքով:
- Աշխարհս ուն է մնացել, որ ինձ ու քեզ մնա:
- Պայքարը ապրելու ձև է դարձել հայերիս համար:
- Եթե ցանկանում ես կյանքդ երկարացնել, կրճատի՛ր խնջույքներիդ:
- Իմաստունն ինքն է արարում իր բախտը:
- Եթե նկատես, որ հակառակորդդ տաքանում է, վեճը վերջացրո՛ւ որևէ կատակով:
- Թույլ մի՛ տուր, որ լեզուդ մտքիցդ առաջ ընկնի:
- Մարդս ստեղծված է հասարակության մեջ ապրելու համար:
- Ձեռք քաշիր, եղբայրս, այն ընկերոջից, որը բարեկամություն է անում թշնամիներիդ հետ:
- Գավաթս մեծ չէ, բայց ես նախընտրում եմ իմ գավաթից խմել:
- Հիշե՛ք, որ ձեր երեխաները ձեզ հետ կվարվեն այնպես, ինչպես դուք եք վարվում ծնողներիդ հետ:
- Ու թախծում եմ, ինչ է մարդս, երբ մայր հողի գիրկն է մտնում, աստղ լինի, թե արեգակ, վերջը մի բուռ հող է մնում:
- Ինչքան որ գիտուն լինես, չիմացածդ մի անգետից հարցրո՛ւ:

67. Դուրս գրե՛ք ածանցավոր գոյականները:

1. Իշխանուհին մոտ երեսուն տարեկան մի կին էր՝ գեղեցիկ ու գրավիչ: 2. Նստելով գույնզգույն ներկված նստարանին՝ նա իսկույն կեթ նայեց շուրջբոլորը: 3. Նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն Չինաստան գնալիս և վերադառնալիս երկու անգամ անցել է Հայաստանով և իր թողած ընդհանուր տպավորությունների մեջ ժլատ տեղեկություններ է հաղորդում նաև մեր երկրի մասին: 4. Դատապարտյալների մեր տանջալիլուկ խմբերին, շրջապատած սպառազեն զինվորներով, դուրս էին տանում քաղաքից: 5. Ծնողների սարսափազդու խոսքերից երիտասարդները սարսռացին և զղջացին իրենց ապերախտության համար, բայց այլևս անհնար էր մեղմել նրանց զայրույթը: 6. Ես լռելյայն ունկնդրում էի հրձվախառն հիացմունքով և զգում, որ գյուղական այդ խղճուկ եկեղեցում բոլորը դարձել են կատարյալ քրիստոնյա՝ նման այն բարեպաշտներին, որոնք ապրում էին այդ սրբազան կրոնի հալածանքների դարերում: 7. Կալանավորների երկարածիզ շարասյուները անընդհատ քայլքով անցնում էին օձագալար լեռնանցքը: 8. Ինչ-որ մեկը նարնջի կեղևը նետել էր մայթի վրա՝ չմտածելով անցորդների մասին, և նրա անշնորքության հետևանքով զոհ դարձավ բոլորովին անմեղ դարոցականը: 9. Ես գտնվում եմ մի թաքստոցում և ամենևին չէի երկյուղում, որ խավարչտին անտառների այդ թավուտներում որևէ մեկը ինձ կգտնի: 10. Նա կարծես անտարբեր էր դարձել շրջապատողների արհամարհանքի նկատմամբ և ժամերով մնում էր անտառի խոր թավուտում իր ստեղծած թաքստարանում:

68. Տրված բայերից տարբեր ածանցներով գոյականներ կազմե՛ք:

Պահել, պատվիրել, հնչել, պտտել, երազել, արհամարհել, արարել, շվշվալ, վարել, հարցնել, աղոթել, գնալ, գովել, շարժել, սրբել, կցել, բամբասել, զրկել, հարգել, հաճախել, գրել, կերտել, ելնել, հանել, հմայել, պատմել, սուլել, քամել, վազել, քննել, կչկչալ, ճանապարհել, հյուսել, մտնել, նզովել, մարզել, դռդռալ, բաժանել, մանել, նստել, սլանալ, վաճառել, վայելել, փրկել:

69. Առանձնացրե՛ք գոյականները`

ա) - ան վերջածանցն ունեցող բառերի շարքում.

Տզզան, փական, ածան, կաչան, փչան, թռվռան, խլվլան, ծծան, խցան, գլան, ծլվլան, ճռճռան, իշխան, խթան, ձգան, փաթաթան, ճարտասան:

բ) -/հչ վերջածանցն ունեցող բառերի շարքում.

Արարիչ, բնակիչ, համոզիչ, քայքայիչ, թարգմանիչ, սպառիչ, հմայիչ, նկարիչ, բուժիչ, պատմիչ, դյուբիչ, փրկիչ, սրբագրիչ, խորտակիչ, քննիչ, հաշվիչ, կիզիչ, կախարդիչ, ջախջախիչ, տպավորիչ:

գ) -(ա)վոր վերջածանցն ունեցող բառերի շարքում.

Թագավոր, ակնոցավոր, սևավոր, զինվոր, ձիավոր, թևավոր, ձգնավոր, վիրավոր, աշխատավոր, գիսավոր, կեղծավոր, ձևավոր, գլխավոր:

70. Տեքստից դո՛ւրս գրեք գոյականները, բնութագրե՛ք ըստ քերականական կարգերի և որոշել կազմությունը /Օր.՝ Մարդուն - գոյ., թանձր., առարկայանիշ, եզ. թիվ, տր. հ, ու հոլովում, պարզ/:

Ա. Տաղանդի ամենաէական հատկանիշներից մեկը ամոթխածությունն է: Տաղանդավոր մարդուն գովելիս նա շիկնում է ոչ այնքան հավանություն չտվող խոսքից, որքան անկեղծ դրվատանքից ու գովեստից:

Որտեղ ապրում են ամբարտավանությունն ու հիվանդագին նեղացկոտությունը, այնտեղ անբասիր տաղանդը չի կարող նույնիսկ գիշերել: Տաղանդի բնավորությունը համեստությունն է, բայց համեստություն ասելով` ես չեմ հասկանում ինքնաժխտման հասնող այն խեղճությունն ու խոնարհությունը, որը փաստորեն նշանակում է սեփական կարծիքի ու սկզբունքի մերժում:

(Ըստ Պ.Սևակի)

Բ. Հաջորդ օրն իսկ արհեստավորները հրաման են ստանում տաճարը մաքրել նախկին կրոնի նշաններից. զոհասեղանները դուրս են բերվում, ծեփվում-ծածկվում են խճանկարով բարեպաշտական պատկերները, և Սուրբ Սոֆիայի գմբեթի բարձրաբերձ խաչը, որ հազարամյակներ շարունակ թևերը կարկառել էր այս աշխարհի բովանդակ տառապանքն ընդգրկելու համար, խլաձայն գետին է տապալվում:

Այդ ձայնը ուժգին արձագանք է տալիս տաճարում և նրա պատերից շատ հեռու, քանի որ խաչի անկումից ամբողջ Արևմուտքն է ցնցվում: Ղառնագին բոթը, երկյուղ հարուցելով, հնչում է Հռոմում, Ջենովայում, Վենետիկում, իբրև նախազգուշացնող որոտ` թավալվող հասնում է Ֆրանսիա, Գերմանիա, ու Եվրոպան արդեն սարսուռով է գիտակցում, որ իր բուրբ անտարբերության հետևանքով մոռացության մատնված դռնով ներխուժեց մի

ավերիչ գորություն, որ դարեր շարունակ պետք է կապի ու կաշկանդի Եվրոպայի ուժերը: Սակայն ժողովուրդների պատմության մեջ, ինչպես առանձին մարդու կյանքում, անդարձ կորսված բոլորն ափսոսանքներով ետ չես դարձնի, և հազարամյակն անգոր է ետ դարձնել մի ժամում կորցրածը:

(Ըստ Ա.Ցվայգի)

Գ. Այդ օրերին կարծես թե անագորույն ճակատագիրը որոշեց կալանավորներին գրկել վերջին հույսից ու ևս մեկ անգամ հիշեցնել, որ նրանք մշտնջենական բանտարկության են դատապարտված: Բանտի դժնահայաց վերակացուի կարգադրությամբ արտաքին ձեմագավիթը, որը վաղուց խարխված էր, վերաշինվեց, և նորոգեցին նաև ուղղաձիգ միջնորմի՝ Ղանտեսի փորած հիմքը և վիթխարի քարերով խցեցին այն անցքը, որ նա վաղօրոք կիսով չափ լքել էր:

Եթե դիմած չլինեիր այդ կանխագուշակությանը, նրանց ավելի մեծ դժբախտություն կպատահեր. խորամանկ վերակացուները իսկույն ևեթ կբռնեին, որ փախչելու պատրաստություն են տեսել, և այն ժամանակ նրանք անպայման կենթարկվեին դաժանության, կտտանքի, լլկանքի:

(«Թելադրության նյութերի ժողովածուից»)

Դ. Երևանի ու շրջակայքի գարունը կարճատև է: Չնայած մայիսը դեռ վախճանին չէր հասել. բայց արևի ճառագայթներն արդեն բոցկլտուն նետերի նման այրում էին շրջապատը:

Արարատյան դաշտում հասունացող բույրերը հևում էին շնչահեղձի նման: Պապակում էին և՛ բույսերը, և՛ միջատները, և այգիների ծառերին թառած թռչունները, ու եթե այդ պահին նրանք մարդկային լեզու առնեին, նրանց առաջին խոսքը պետք է լիներ «ջուր»:

Հեռուներում նիրհում էին բարձրաբերձ լեռները. նրանց շարքում միայն Մասիսի վերամբարձ կատարն էր, որ անհաղորդակից էր տապին, նրա սպիտակ գագաթը պեծպեծին էր տալիս արևի ճառագայթների ներքո:

Ցերեկվա այն պահին էր, երբ դաշտի բոլոր աշխատողները քաշվել էին նոր քաղած խոտերի դեզերի ստվերների տակ՝ միջօրեին հանգիստը վայելելու: Միայն մոծակներն էին, որոնք խմբերով ղժվժում էին այս ու այն կողմը և իրենց սուր խայթոցներով անհանգստացնում վաստակած աշխատավորներին:

(Ըստ Հ. Սիրասի)

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

71. Գտե՛ք ածականները և բացատրե՛ք դրանց իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները:

Ա. Տոթակեզ Ջամբխայի հարավային սահմանի մոտ՝ Ջամբեզի հորդառատ գետի վրա, գտնվում է բնության հիսաքանչ կերտվածքներից մեկը՝ Վիկտորիա շառաչուն ջրվեժը, որը հայտնաբերել է աշխարհահռչակ ճանապարհորդ Ղավիթ Լիվինգստոնը: Նա մանրագնին ուսումնասիրել է Ջամբեզի ջրառատ գետը, որի երկարությունը 2660 կիլոմետր է, և հայտնաբերել է մի հոյակապ ջրվեժ, որը կոչվեց Վիկտորիա՝ ի պատիվ Անգլիայի թագուհու: Ջրվեժը բնության վեհասքանչ մի ստեղծագործություն է:

Բ. Պիզա հինավուրց քաղաքը գտնվում է Տոսկանիայում՝ Իտալիայի պատմական մարզերից մեկում: Քաղաքը փռված է փրփրաբաշ Առնո գետի գեղատեսիլ ափերին: Այն իր միջնադարյան ճարտարապետական նախշազարդ կոթողներով, սալահատակ հարթ փողոցներով ու անբասիր մաքրությամբ, ինչպես նաև անդորրությամբ մի առանձին գրավչություն ունի զբոսաշրջիկների համար:

Պիզայում հիացմունք պարգևող, առինքնող ու իրենց չնաշխարհիկ գեղեցկությամբ հոգիդ թրթռացնող տեսարժան վայրեր շատ կան, որոնցից ամեն մեկը գրավիչ է յուրովի, բայց նրանց մեջ ակնբախ լուսապսակ է թեք աշտարակը:

Գ. Գիշերային անդորր լռության մեջ լսվում էր երիտասարդ կնոջ առողջ ու կանոնավոր շնչառությունը: Նա քնած էր խոր քնով, և գեղեցիկ գլուխը՝ դեղձան վարսերի ալիքավոր հյուսքերով շրջանակված, խաղաղ հանգչում էր բարձի վրա: Ժպիտը նրա դեմքին ինչ-որ մեղամաղձոտ արտահայտություն էր հաղորդել: Փայտե նախշազարդ սեղանի վրա վառվում էր այն գեղեցիկ լամպը՝ վարդագույն լուսամփոփով, որիլույսով նա շատ անգամ էր սքանչացել կնոջ մարմնի փթթուն գեղեցկությամբ:

(Ըստ «Թելադրության նյութերի ժողովածուի»)

72. Գտե՛ք և առանձին շարքերով գրե՛ք որակական ու հարաբերական ածականները:

Ա. Ահա օձագալար գետը, որը ոլոր-մոլոր անցնում է ձորով՝ իր միօրինակ խշշոցով լցնելով շուրջբոլորը: Փրփուրի միջից ցցվել են շողշողուն որձաքարերը՝ հղկված հորձանուտ ջրի անընդհատ հոսքից, և այդ քարերի վրայով անցնում են ինքը և չնաշխարհիկ Լուսինեն: Հանկարծ Լուսինեն սայթաքում է և կրնկներ գետը, եթե ինքը գիրթ շարժումով չգրկեր մեջքը, և միասին իսկույն ևեթ չցատկեին ափ: Ափին ցախ հավաքեցին, ու շուտով բոցկլտում էր խարույկը: Աղջիկը բոբիկ ոտքերը հենել էր ճարձատող կրակի կողքին ընկած մի խորդուբորդ քարի, և թրթռացող բոցը խաղում էր մերկ սրունքների աղոտ հայելու մեջ:

(«Թելադրության նյութերի ժողովածուից»)

Բ. Ճամփորդը մոտեցավ լուսամուտին և նեղիկ փեղկի փոշեծածկ ապակու միջով ներս նայեց: Ներսում մի ընդարձակ սրահ էր, որը լուսավորված էր լամպերով և բուխարու մեջ բոցկլտացող կրակով: Մի քանի մարդիկ այնտեղ փրփրուն գինի էին ըմպում, իսկ գինեվաճառը տաքանում էր ճարձատող կրակի մոտ: Դրսից չէին լսվում խմողների

գոռում-գոչունները, բայց շարժումներից երևում էր, որ տաք-տաք խոսում են ինչ-որ հարցի մասին:

(«Թելադրության նյութերի ժողովածուից»)

Գ. Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:
Բորբ արևին՝ իմ բոց սրտում, ասում եմ ես՝ մնաս բարով:
Մնաք բարով՝ ասում եմ ես բոլոր մարդկանց՝ չար ու բարի,
Տանջվող ու որբ Ադամորդուն ասում եմ ես՝ մնաս բարով:
Մնաք բարով՝ ասում եմ ես ընկերներիս՝ մոտ ու հեռու,
Ոսոխներիս՝ չար ու արթուն, ասում եմ ես՝ մնաք բարով...

(Վ.Տեղյան)

Դ. Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի.
Մա՞հն է արդյոք, թե մի՞նջը քեզ
Պատել, պայծա՞ռ Նաիրի:

Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսեղ, քեզ եմ երազում,

Եվ հնչում է, որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:

Հնչում է միշտխորու պայծառ,
Ե՛վ խոցում է, և՛ այրում,
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ,
Թե՞ վերքերն իմ հրահրըրուն...

(Վ.Տեղյան)

Ե. Թողած Կարսում, գետի ափին,
տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին
Ու հայրենի երկինքըմով

Եվ Կարինե Քոթանձյանին
անգամ չասած մնաս բարով՝
Անց եմ կենում հիմա օտար
քաղաքների ճանապարհով:

(Ե.Չարենց)

Զ. ... Լուռ հեռացանք ու քայլեցինք անդադրում՝
Երազելով հավերժական հեռուներ:
Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում՝
Մութ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր:
Ըւ օրերում բազմագույն ու բազմազան
Վառվեց, վառվեց ողջակիզվող սիրտը մեր,
Բայց աչքերը մեր արևներ չտեսան,
Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
Ու մուշոտ մեր աչքերը հավիտյան
Որոնեցին պատահական աչքերում
Հարդագողի ուղիները ոսկեման,
Նրա անձիր, անձայրածիր այն հեռուն...

(Ե.Չարենց)

Է. Վիրավոր սնձի բացված երակից
Տաք արյան տեղակ պաղ կաթ է ծորում:
Դեղձենիների անբոց կրակից

Կայծեր են թռչում դիմացի ձորում:

Իսկ մամռակալած վիմափոր գուռին
Մի հին փչակված-բնաքանդ ուռի
Ծեր մուրացկանի ձեռքերի նման
Իր կոշտուկապար ճյուղերն է մեկնել...

(Պ.Սևակ)

73. Տրված որակական ածականները խմբավորե՛ք ըստ ներքոհիշյալ աղյուսակի:

Հնայիչ, վատ, բարձր, թթու, կծու, կիրթ, մավի, վախկոտ, բոսոր, դաժան, գունավոր, ուժեղ, չար, լավ, կարճ, փոշոտ, գիտուն, թեք, համեստ, կապույտ, բրդոտ, ահարկու, համեղ, երկար, նեղ, դեղձան, լուսավոր, սառը, կիսատ, թույլ, քաջ, ծուռ, շեղ:

Առարկայի ընդհանուր որակային հատկանիշ	Տարածական, կառուցվածքային, ծավալային հատկանիշ	Զգայական օրգանների կողմից ընկալվող հատկանիշ	Մարդկանց և կենդանիների ֆիզիկական հատկանիշ	Բնավորության, մտավոր կարողության հատկանիշ	Գունային հատկանիշ	Մի բան չունենալու հատկանիշ	Մի բան անողի, կատարողի հատկանիշ

74. Կազմե՛ք տրված ածականների բաղադատական և գերադրական աստիճանները:

Հին, նոր, դժվար, նվազ, բարձր, ցածր, խոշոր, էական, կարևոր, վատ, հիմար, տխմար, փոքր, մեծ, վախկոտ:

75. Գտե՛ք համեմատության աստիճան չունեցող ածականները:

Մեղմ, արու, էգ, դժվար, կորիզավոր, անտուն, մանր, ճաղատ, ձրի, հղի, փոքրիկ, դարչնագույն, ոռոգելի, արնանման, երկար, բոբիկ, կույր, որձ, մերկ, ուժեղ, թանձր, հղի, ամուլ, բամբ, անոթի, ամուլ, բազում, օժանդակ, գիլ, թանձր, բծավոր, մոլորյալ, առյուծածև, վճարովի, միաբջիջ, աղքատ, հիվանդ:

76. Գտե՛ք հարաբերական ածականները, և որտեղ հնարավոր է, փոխարինե՛ք գոյականի թեքված ձևերով (կապերի հետ կամ առանց կապերի):

Օրեր, բրուտանոցում նույնպես զգացվող կարճատև գարնանային օրեր: Այստեղից մենք թիթեղե դուլերով ջուր ենք կրում բրուտանոցի կարիքների համար: Մի ամսից ավելի չէր տևում երանական այս շրջանը, որովհետև հունիսի երկրորդ կեսից գործարար բակը փակվում էր, և բոլոր արհեստավորներին քշում էին դաշտային աշխատանքներին մինչ ուշ աշուն, որից հետո փչում էին ձմեռային ձյունախառն հողմերը: Մենք բարձրանում ենք դեպի այնտեղ, ուր սերն է սավառնում ու մարդկային ստեղծագործական մտքի վսեմ թռիչքը դեպի բրուտանոց: Հեռվում` ճամբար բերող ճանապարհի վրա, փոշի էր կանգնել, փոշին սողում էր առաջ, և փոշու մշուշում երևում էին մարդկային զանգվածներ: Այս է պատմությունը կանանց էտապի ժամանակ, որը հետագայում նոր էջ բացեց

կալանավորական կյանքի դեռ գրի չառնված տարեգրության մեջ: Նրանց մեղրամոմե դեմքերը լուսավորված էին ինչ-որ աղոտ, ամեն դեպքում խաղաղ ու, կարելի է ասել, գործնական լույսով:

/Ըստ Գուրգեն Մահարու/

77. Տրված հարաբերական ածականները խմբավորե՛ք ըստ աղյուսակի:

Տնային, արդիական, գավառական, դաշտային, բամբուկե, ակնոցավոր, ուսանողական, բոժոժավոր, նախապատերազմյան, գիշերային, հնադարյան, անխելք, քարակերտ, ծովափնյա, նորօրյա, քառամյա, հնամյա, հյուսիսային, մայրական, եղեգնյա, անտառային, անգլուխ, անհոգի, անսիրտ, իտալական, ադամանդե, հրացանավոր, ամուսնական, քաղաքային, մորուքավոր, ցերեկային, ոսկյա, հայկական:

Տեղային-տարածական	Ժամանակային	Ծագման, պատկանելության ու հատկացման	Կազմության	Ունենալու կամ չունենալու

78. Հարաբերական ածականների արտահայտած հատկանշային իմաստները հիմք ընդունելով՝ շարունակե՛ք գրել 5-ական բառ:

- ա. Տեղային-տարածական հատկանիշ (լեռնային, գետափնյա)
- բ. Ժամանակային հատկանիշ (ծմեռային, հնամյա)
- գ. Կազմության կամ ինչից լինելը ցույց տվող հատկանիշ (արծաթյա, կայծակեղեն)
- դ. Ունենալու կամ չունենալու հատկանիշ (թևավոր, անուղեղ)
- ե. Ծագման, պատկանելության և հատկացման հատկանիշ (հայրական, մարդկային)
- զ. Նմանության հատկանիշ (կապկանման, արծվակերպ):

79. Առանձնացրե՛ք այն բառերը, որոնք կարող են գործածվել և՛ ածականի և՛ գոյականի նշանակությամբ:

Հանցագործ, ցամաքային, էական, դավաճան, թանձր, զինվորական, իտալական, ազնվական, բանակային, պոչավոր, ապստամբ, ահավոր, հրշեջ, մութ, գծուծ, հով, հեղինակավոր, բարբարոս, հանցագործ, դպրոցական, հեղափոխական:

80. Հեռու, զուգահեռ, հակառակ բառերով կազմե՛ք նախադասություններ՝ գործածելով դրանք որպես ածական, մակբայ, կապ:

81. Գտե՛ք գոյականաբար գործածված ածականները ու ածականաբար գործածված գոյականները:

Ա. 1. Ե՛վ մոռացված, և՛ անմոռաց հեքիաթներ, Լույս հնչյուններ, որ դողում են աշխարհում /ԿՏ/: 2. Այսօր նորից պարտեզում Շրջում էի և հիշում Մեզ արթմնի երազում Ոսկի, ոսկի մշուշում /Ն/: 3. Ես Ռուսա՛, ես որդի Արգիշտի՛, Տիրակալ և ստի, և ճշտի, Գերեցի՛, խլեցի՛, տիրեցի՛... /ԳԷ/: 4. Եվ ինչպե՞ս եմ ապրում ու գրում, - Որ ինձ սիրում է Ազնի՛վը, Խելացի՛ն, Անձնվերը... Բայց և Ձե՛ռքս է սեղմում, Ժպտո՛ւմ ու ինձ հետ խոսում Խարդա՛խը, Տգե՛տն ու Մորթապա՛շտը... /Ն/:

Բ. 1. Ամենագլխավորը, իր գեղեցկությամբ ամենայուրօրինակը հանրապետության հրապարակն է՝ շրջապատված մի ամբողջ շարք ճարտարապետական գլուխգործոցներով: **2.** Օդը շաղախված էր նարնջագույնով: Համերգային լեփ-լեցուն դահլիճում փայլփլում էին ոսկեգույնը և արծաթագույնը:

Գ. 1. Լուսինը որդուս օրոցքն է ոսկի, Ու ես եմ կախել աստղերը վրան՝ Հանց թալիսմաններ փրկարար խոսքի... **2.** Ծիածանների լարերը վրան՝ Ինձ քնար տվեց երկինքը մի օր, Որ երգեմ գովքը իմ մայր բնության Ու մեկ էլ երկրիս կյանքը լուսավոր:
(Հ. Շիրազ)

82. Տրված ասույթներից դ՛րս գրեք փոխանվանաբար գործածված ածականները:

- Քաջության մասին ամենից շատ խոսում են վախկոտները, իսկ ազնվության մասին՝ խարդախները:
- Խաղաղությունը և ազատությունը բարիքներից մեծագույններն են:
- Բացահայտ թշնամին ավելի լավ է, քան շողոքորթնու կեղծավորը:
- Ժլատ հարուստը կատարյալ աղքատ է:
- Հարուստները դեղորայք ունեն, աղքատները՝ առողջություն:
- Անհաջողակը ուրիշ անհաջողակի չի կարեկցում:
- Աղքատին խրատ տվողները շատ են, հաց տվողները՝ քիչ:
- Մեծին ամենից մոտ կանգնած է ազնվությունը:
- Հարբածի համար լուսավոր փողոցն էլ խավար է:
- Հեզանքը թույլերի խիզախությունն է:
- Միակ ոլորտը, որտեղ նկատվում է աստվածայինը, արվեստն է, ինչպիսի անուն էլ որայն ունենա:
- Ֆիզիկականու բարոյական ցավերից ամենատանջալին խանդի զգացումն է:

83. Հետևյալ ածականները փոխանվանաբար գործածե՛ք նախադասությունների մեջ և դիտարկե՛ք, թե ձևաբանական ու շարահյուսական կիրառությունների տարբերություններ նկատվու՞մ են արդյոք փոխանուն ածականների և գոյականների միջև:

Համեստ, ճկուն, չար, մարմնեղ, վտիտ, ձերմակ, բանուկ, ծարավ, բարակ, մանր, նոր, հին, հավաքական, լավ, վատ, ծեր մեծ, անգործ, զվարթ, ազգային, սեփական, ազահ, ժուժկալ, գործունյա:

84. *Գաղթական, գիվորական, առևտական, հոգևորական, օգնական, թափառական, դպրոցական* բառերով կազմե՛ք 2-ական նախադասություն՝ մեկ գոյականական իմաստով, մեկ ածականական:

85. Գտե՛ք փոխանվանաբար կիրառված ածականները. նշե՛ք նրանց ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:

1. Ինչքան չարը գորանում է, Այնքան խեղճ է դառնում բարին /ՀՀ/: 2. Ու ես հիմա չեմ զարմանում, որքո մի թաս ջրի դիմաց այնքան անկեղծ թույն ես խառնում իմ մաքուրին ու պայծառին /ն/: 3. Տե՛ր, հանի՛ր այսօր ունկերդ խցող ամպերն սպիտակ, Կապույտի փառքը ինձանից փակող մռայլը վանիր /ՎԴ/: 4. Իմ հեռավորս, Կորածս, Հինս, Դուռդ բաց /ն/: 5.

Ու հասկացած չարն ու բարին աշխարհքի՝ Մայր, տխրում է սիրող սիրտս քեզ համար /ՍԿ/: **6.** Օ՛ր, դու կարող եմ ինձ դարձնել Ամենից լավը այս լուսնի տակ, Եվ գեղեցիկը՝ ամենքի մեջ, Եվ բախտավորը՝ ամենքից շատ /Ն/: **7.** Թող կապույտը մանուշակին Ու կարմիրը վարդին մնա /Ն/: **8.** Մարդը,- Ամենից հզորն է աշխարհում, բայց և ամենից անզորն աշխարհում /ԳԷ/:

86. Դո՛ւրս գրեք այն ածականները, որոնք կարող են դառնալ բայահինք: Այդ բառերով կազմե՛ք նախադասություններ:

Հարց, կույր, թալան, բազում, մրոտ, ցավ, հարմար, ճանկ, խարտոց, ուժեղ, շքեղ, պար, յուղոտ, բարև, հույս, հաջորդ, գունավոր, սղոց, գլխավոր, ծարավ, օտար, նիհար, փորձ, ամբար, գիրթ, կիրթ:

87. Առանձին սյունակներով դո՛ւրս գրեք պարզ և ածանցավոր ածականները:

Ա. 1. Աքսորի տաղտկալի օրերից մեկն էր: Վաղ առավոտյան՝ ժամը վեցին, նա գնաց գետափ՝ աշխատելու այնտեղ գտնվող ատաղձագործական արհեստանոցում: **2.** Նա նստեց ափին և սկսեց անթարթ հայացքով դիտել շառաչուն գետի հարատև վազքը: **3.** Վանդակում անհանգիստ թռչկոտում էր թութակը՝ արևադարձային չնաշխարհիկ անտառների խոսուն բնակիչը: **4.** Այդ օրը տիկինը մի հուզիչ ու անկեղծ նամակ ստացավ իր երկրպագուից: **5.** Փողոցներում սուրում էին շքեղ ու փայլուն մեքենաներ: **5.** Հեռվից լսվում էր արձակի մեղմահնչյուն կարկաչը: **6.** Ջմրուխտե դաշտավայրը վաղորդյան արևի առաջին շողերից կերպարանափոխվեց, ասես կենդանացավ, լցվեց թռչունների դյուրիչ դայլայլով:

Բ. Թեև շատ էր ծերացել Սաադին, սակայն նրա հոգին երազի աչքերով և ականջով երազի տեսնում էր ու լսում աշխարհի չքնաղ իրերն ու ձևերը, երգն ու լռությունը անհայտ ոլորտների, որովհետև տակավին զրույց էր անում նրա հետ բանաստեղծության կախարդական ոգին: Ջմրուխտե թռչունն իր հավերժական բույնն էր կերտել լեռան գագաթին...

Երգում էին բլբուլները՝ գորշ զգեստ հագած և լուսեղեն աչուկներով, երգում էին իրենց դյուրեական ռուբայաթները...

Քնքուշ հովը վարդերի ականջներին կուսական շնչով բարևագրեր էր շնչում, որ բերել էր հեռավոր սիրահար վարդերից...

Եվ տեսավ Մսրա աշխարհի հնագեղ հրաշքները, և՛ կապույտ ծովերի ծփուն բյուրեղը, և՛ Դամասկոսի թավիշ աղջիկներին՝ լուսնկա մարմնով, որոնց երկար ու քնքուշ ձեռքերը, մանյակի պես փաթաթվել էին երիտասարդ Սաադիի պարանոցով...

Սաադին նայեց շուրջը խորունկ ու հետաքրքիր հայացքով, նայեց երկնքի կապույտ վրանին՝ արշալույսի մեջ թաթախուն, ոսկու մեջ ճախրող թռչուններով:

Նայեց այնպես զարմացած և սքանչացած.

- Այո՛, հրաշք է աշխարհը, հեքիաթ է՝ գեղեցիկ, անհուն, զարմանալի...

(Ըստ Ավ. Իսահակյանի)

Գ. ... Եվ վերջին անգամ նայեցինք մենք ետ,

Ուր ոչինչ չկար մեզ համար դյուրիչ,
Անցյալը կորել, ցնդել էր անհետ
Որպես երազում արձակած ճիչ:
Ոչ մի տխրություն չէր ճախրում մեզ հետ,
Կախարդել էր մեզ առավոտը ջինջ:
Պար էինք խաղում ու երգեր ասում,
Ջենքերի փայլով հրճվում էինք մենք:
Կարծես մանկական կապույտ երազում
Ամեն ինչ այնպես ժպտում էր աննենգ:
Ո՛չ հրաժեշտի անորոշ հուզում,
Ո՛չ էլ մեռնելու կասկածանք կար նենգ:

(Ե.Չարենց)

Դ. Սարսափելի գույներով էր նկարագրում Ջինգոն անտառային աշխատանքները: Սղոցվող և շառաչյունով տապալվող հսկայական կաղնիների տակ մնալն ուշունչը փչելը սովորական երևույթ էր: Գրեթե ամեն օր անտառային բրիգադներն աշխատանքի վայրում թողնում էին մեկ-երկու կալանավորների ջախջախված անձանաչելի դիակները...

Անտառահատների ճամբարը գտնվում է խորին տայգայում... Կալանավորների ծանր աշխատանքն ավելի ծանրացնում են մժեղների ամպերը: Նրանք, զգալով երևի մարդկային կենդանի շնչի ներկայությունը, հարձակվում են միլիոններով, լցվում աչք ու ականջ, գուլպաներից ներս....

(Ըստ Գ.Մահարու)

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

88. Գտե՛ք թվականները և բնութագրե՛ք իմաստաբանորեն, ձևաբանորեն, շարահյուսորեն:

Չին կայսրը վճռեց ամրախարհիսխ, երկարաձիգ պարիսպ քաշել Դեղին ծովից սկսած մինչև Գոբի անապատի դեղնածավալ ավազների մեջ... Եվ հրամայեց տասը տարվա մեջ կառուցել իր երևակայած անծայրածիր պարիսպը, իսկ արու չինացիներից տասից մեկը բանվոր գնար: Երեք միլիոն բանվոր հավաքվեցին սահմանագլխի երկայնքին, և երեք միլիոն բանվոր տասը տարի անընդհատ լծվեցին տաժանելի ու հյուծիչ աշխատանքի: Դաժան կայսրը հրամայեց, որ պատերի քարերն այնպես պիտի ագուցվեն իրար, որ անհնարին լինի երկու քարի միջև նույնիսկ մի ասեղ խրել:

Հինգ հարյուր հազար թշվառներ թաղվել են հիմքերի և որմերի մեջ, և Շանգ Շենգը իրավամբ կոչվել է «Աշխարհի ամենաերկար գերեզմանոցը»: Երեք միլիոն աշխատավորներ անհնարին տանջանքներով, իրենց արյունով, մկաններով և ոսկորներով շինեցին տիտանական Շանգ Շենգը՝ հաստախարհիսխ հիմներով և ամեհի վիմերով, խուլական Շանգ Շենգը, որի երկարությունը հասնում է 5 հազար կիլոմետրի, բարձրությունը շուրջ 6,6 մետր է, ստորին մասի լայնությունը 6,5 մետր է, վերին մասինը՝ 5,5 մետր: Այնքան քար ու աղյուս կա կիրարկված Շանգ Շենգը կառուցելու համար, որով կարելի է երկու անգամ քարահյուս գոտի կապել Երկրագնդի շուրջը: Քար ու աղյուսի հետ հազար-հազար, միլիոն-միլիոն չինացու միս ու արյուն կա...

Շանգ Շենգը հազար գլուխ ունեցող վիշապի նման տասը տարի շարունակ /տառապանքների և տանջանքների մի ամբողջ հավիտենականություն/ քամեց չին ժողովրդի հոգեկան ու մարմնական ուժն ու զորությունը: Չին մեծ երկրի մեծ ժողովրդի սիրտը մղկտաց..., և նրանց անհուն վիշտն ու ցասումը մարմնավորվեց պարիսպների երգի մեջ:

«Գարնան առաջին ամիսն է մեղմ ու թարմաշունչ, շատերի ամուսինները տուն դարձան, բայց իմ ամուսինը դեռ աշխատում է Շանգ Շենգի վրա: Երկրորդ ամիսն է, շողշողում են դեղձի ծաղիկները... Երրորդ, չորրորդ և հինգերորդ ամիսներն են... Ավա՛ղ, իմ դաշտերը խոպան մնացին: Լացով ու վշտով անցան վեցերորդ և յոթերորդ ամիսները. եկավ ութերորդը: Ծաղկեցին լոտոսները, և աղավնիները հարյուր և հազար նամակներ բերեցին հեռավոր սիրելիներից: Բայց մենավոր կնոջ համար մեկ նամակ անգամ չկար խեղճ ամուսնուց... Իններորդ ամսում ճամփա են ընկել հարյուրավոր ուխտավորներ... Տասը և տասնմեկերորդ ամիսներին թախծությամբ իջնում է ձյունը, ծածկում բոլոր ճանապարհները:

Տասներկուերորդ ամիսն է. բոլորը Նոր տարվա տոների համար են պատրաստվում, իսկ մենավոր կինը... լաց է լինում դառնագին. մեծ պարիսպները լսում են նրան ու մեկ-մեկ խորտակվում...»:

Այս դառն օրերից անցել է քսան և երեք դար, և չին աշխատավորը քսան և երեք դար երգում է հառաջանքով մեծ պարիսպների այս անգարդ երգը:

/Ըստ Ավ. Իսահակյանի/

89. Ընդգծե՛ք թվականները և բացատրե՛ք նրանց իմաստային, ձևակազմական տարբերությունները քանակային իմաստ ունեցող մնացած բառերից:

ա) Տասը, հարյուրավոր, շատ, այդչափ, բյուր, երրորդ, այսքան, տասնօրյակ, քանիցս, երեքական, եռադողանջ, մեկ քառորդ, հնգապատիկ, քիչ, քսանհինգերորդ, քառատել, հինգ յոթերորդ, ութ-ութ, մեկ տասնորդական, եռամատնյա, վեցական, ութտնուկ, երկրորդել, բյուրհազար, չորս հարյուր քսանութ, երեքծալ, միլիոն, հազարմոմյա, եռազմբեթ, յոթնաստեղյան, յոթներորդել, երկու ամբողջ հիսունինը հարյուրերորդական:

բ) Երկիցս, միակ, երկակի, հարյուրանոց, երրորդություն, իննամյա, երկսայրի, որքան, միլիարդ, քառաթերթ, ինը հարյուր իննսունինը, միլիոնատեր, եռափեղկ, քառուղի, միաձույլ, հինգ վեցերորդ, բազում, եռահյուս, տասնավարտ, մեկ-մեկ, հազար-հազար, միլիոնավոր, ինը-տասը, յոթանասունինը, առաջնահերթ, առաջնորդ, երրորդաբար, չորրորդվել, մի քիչ, բազում, անթիվ-անհամար, բոլոր, ամեն մի, ինչքան, քանիերորդ :

90. Բացատրե՛ք թվականի բառակազմական արժեքը՝ հետևյալ բառակապակցություններով կազմելով՝

ա) **ածականներ** /չորս սյուն ունեցող, երեք օրվա, երկու դեմք ունեցող, ութ տարեկան, երկու ժամվա, երկու կենսակերպ ունեցող, մի աչք ունեցող, յոթ գլուխ ունեցող, հազար ակունք ունեցող, հազար տարվա, «ութ»-ի ձև ունեցող, առաջին կարգի /:

բ) **գոյականներ** /տասն օր, չորս անկյուն ունեցող, ութ ոտք ունեցող, հարյուր տարի, ութ հոգուց բաղկացած, երեք ամիս, չորս հոգուց բաղկացած, երեք ոտք ունեցող, հազար միավորի արժողությամբ թղթադրամ, միլոններ ունեցող, երեք ձայնավորի միացությունը /:

գ) **մակբայներ** /երկու անգամ, երեք անգամ /կատարվելով/, յոթ անգամ յոթ, չորս անգամ չորս, երկրորդը լինելով/:

դ) **բայեր** /հարյուր անգամ կրկնվել, երկու դառնալ, երկրորդին հաջորդել, յոթերորդ անգամ լինել /կրկնվել/, չորս մասի բաժանել, երկու հավասար մասերի բաժանվել, աչքերը չորս անել, ձեղքելով երկու մասի բաժանել, երկու անգամ նույն բանը ասել/:

91. Համեմատե՛ք գծապատկերները և կազմե՛ք կապակցված խոսք «Թվականների դասակարգման խնդիրը հայ լեզվաբանության մեջ» վերնագրով:

1. Ըստ «Հայոց լեզու 7» դասագրքի /Հովհ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան/.

Ք Ա Ն Ա Կ Ա Կ Ա Ն			Դ Ա Ս Ա Կ Ա Ն
բւճարձակ	կոճորակային	բւճեւակ	

2. Ըստ «Հայոց լեզու» դասագրքի /5-րդ դասարան/ /Ֆ. Խլղաթյան/

Ք Ա Ն Ա Կ Ա Կ Ա Ն				Դ Ա Ս Ա Կ Ա Ն
բացարձակ	կոտորակային	բաշխական	նոտավորական	

3. Ըստ «Հայոց լեզու» ուսումնական ձեռնարկի /Մարգուշ Սիրումյան/

Ք Ա Ն Ա Կ Ա Կ Ա Ն		Բ Ա Շ Խ Ա Կ Ա Ն	Դ Ա Ս Ա Կ Ա Ն
բացարձակ	կոտորակային		

4. Ըստ բուհական դասագրքերի /1. «Ժամանակակից հայոց լեզու» , հատոր 2 /Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան/, 2. «Ժամանակակից հայոց լեզու» /Մ. Ասատրյան/, 3. «Հայոց լեզվի քերականություն» /Ալեքսանդր Մարգարյան/

Ք Ա Ն Ա Կ Ա Կ Ա Ն	Դ Ա Ս Ա Կ Ա Ն	Բ Ա Շ Խ Ա Կ Ա Ն	Կ Ո Տ Ո Ր Ա Կ Ա Ց Ի Ն
-------------------	---------------	-----------------	-----------------------

92. Ընդգծե՛ք քանակական թվականները, անհրաժեշտության դեպքում արտահայտե՛ք բառերով և դասակարգե՛ք ըստ գծապատկերի՝ տարբերակելով բուն, փոխանվանական և անվանողական արժեքով գործածությունները:

Պ Ա Ր Զ	Ա Ծ Ա Ն Ց Ա Վ Ո Ր	Բ Ա Ր Դ	
		Կ ց ա կ ա ն	հ ա թ ա դ թ ա կ ա ն
հինգ	հիսուն	տասնմեկ	հարյուր մեկ

Ա. Մեկ-ը բնական թվերից առաջինն է. մոտ 10000 տարի առաջ մարդ-վայրենին ձեռքն է վերցրել մեկ առարկա՝ դրանով «միավորն» անջատելով «շատից»՝ բազմությունից: Նույն ձևով առանձնացվել են «երկուս»-ը, «երեք»-ը, «Չորս»-ը... Տարբեր ժամանակներում անորոշ բազմության դերում տարբեր թվեր են հանդես եկել՝ 7-ը, 10-ը, 100-ը...

Հաշվի զարգացման առաջին աստիճանում մարդը բառեր չի ունեցել թվերն անվանելու համար. քանակական հարաբերություններն արտահայտել է մարմնի մասերի իմաստավորված շարժումներով, հաշվելի առարկաների տեղաշարժումներով՝ առավելապես նկարագրական եղանակով: Այսպես՝ «երկու առարկա արտահայտող» թվի փոխարեն օգտագործվել է «այնքան, որքան ձեռք ունեն» բառակապակցությունը: Ավելի ուշ թվերի անվանումների զարգացումը կախման մեջ է դրվել մատային հաշվից. ձեռքերի, ապա ոտքերի մատների օգտագործումը հնարավորություն է տվել անցնել 4-ից մեծ թվերին: Օրինակ՝ ավստրալիացիների համար 6-ը համարժեք է «մյուս ձեռքի մեկ մատ», 10-ը՝ «2 ձեռք», 11-ը՝ «երկու ձեռք և մեկ մատ» բառակապակցություններին, իսկ 20-ը՝ «մարդ» բառին: Հնդեվրոպական մայր լեզվում «տասը» նշանակել է «երկու ձեռք»:

Չափման առաջին միավորների համար նմուշներ են ծառայել մարդու քայլքի երկարությունը, մատի հաստությունը, հողի երկարությունը, փիի լայնությունը, նրա գրկի, բռի տարողությունները և այլն: Օրինակ՝ «կանգուն»-ը տղամարդու արմունկից մինչև միջնամատի ծայրն ընկած տարածությունն է. Եգիպտոսում մեծ կանգունը հավասար էր 52,5 սմ, իսկ փոքր կանգունը՝ 45 սմ: «Մղոնաչափքի» երկարության չափական համակարգում մեկ ասպարեզը հավասար է 166 ամբողջ 2/3 գիրկ = 500 կանգուն = 1000 թիզ = 8000 կոճ = 10600 եղունգ = 231,75 մ: Որպես չափի փոքր միավոր՝ շատ ժողովուրդներ օգտագործել են գարու կամ ցորենի հատիկը:

Բ. Դեռևս քարե դարում կրոնը բնության ուժերի հետ պայքարի մեջ մտնելու առաջին փորձերն է արել՝ կախարդելու, հմայելու տարր մտցնելով թվային ու երկրաչափական պատկերացումների մեջ, առանձնացրել առեղծվածային, մոգական թվեր՝ որպես ճակատագրի ազդանշան: Շատ վաղուց Ճապոնիայում «մահ» բառին համահունչ «4» թիվը, «տանջանք և «ցավ» բառերին համահունչ «9» թիվը «դժբախտ» թվեր են համարվում. Եվրոպայից փոխառել են նաև երրորդ «սև»-ը՝ «13»-ը: Հայերի համար խորհրդանշական են «3», «4», «7», «9», «11», «40», «60», «666» թվերը...

Գ. Հաշվական տասնորդական համակարգ ունեցող լեզուներում, նաև հայերենում, 1-10 թվերն ունեն առանձին անուններ, 11- 99-ը կազմվում են հավելումով /վաթսուհինը = 60 +

9/, իսկ տասնյակները, հարյուրավորները, հազարավորները և այլն՝ բազմապատկմամբ /յոթանասուն = 7 անգամ 10, երեք հազար = 3 անգամ 1000 և այլն/:

Հայերենի 1-10 թվականները բնիկ հայերեն բառեր են. հնդեվրոպական ծագում ունեն տասնյակների անունները՝ քսան, երեսուն..., 1000-ը փոխառություն է պարսկերենից, իսկ միլիոնը, միլիարդը, տրիլիոնը եվրոպական ծագում ունեն...:

Դ. Մարդկությունն անցյալում ստեղծված տարրական հաշիվը հարմարեցրել է և հարմարեցնում է կյանքի աճող պահանջներին՝ անուններ տալով ամենամեծ թվերին՝ միլիոն, միլիարդ, տրիլիոն, բիլիոն, սիկստրիլիոն, կվադրիտրիլիոն, գուգուլ, ըստ որում 1 գուգուլը հավասար է 10^{100} -ի, իսկ գուգուլի 10-րդ աստիճանը կոչվում է գուգուլպլեքս: Ամերիկացի գիտնականները հաշվել են, որ Երկիր մոլորակը կշռում է 5972 պետատոննա. դա 5972 թիվն է, որին հաջորդում է 18 զրո: Իսկ գիտե՞ք արդյոք, թե որքան ժամանակ կպահանջվի Երկրի մասսային հավասար մասսա ունեցող ծանրությունը գոնե մեկ սմ բարձրացնելու համար: Ոչ պակաս, քան երեսուն հազար բիլիոն տարի: Երկրի մասսան աստղաբաշխներին հայտնի է՝ 6 000 000 000 000 000 000 000 տոննա:

93. Թվականներով և մի, մոտ, շուրջ, մոտավորապես, մինչև, չափ, անգամ, կարգ, տեսակ, աստիճան, մաս, տոկոս, բաժին, ընդամենը բառերով կազմե՞ք բառակապակցություններ՝ նշելով իմաստային և կիրառական յուրահատկությունները:

94. Ընդգծե՞ք թվականները, դո՛ւրս գրեք նրանցով կազմված բառակապակցությունները և բացատրե՞ք իմաստային նրբերանգները:

ա) 1. Հին աշխարհը ամեն օր Հազար մարդ է մտնում նոր, Հազար տարվա փորձ ու գործ Սկսվում է ամեն օր /ՀԹ/: 2. Մի հարյուր հոգի զբաղված էին տափարակ ու լայն կրիան գլանների վրա գլորելով /ն/: 3. Ինձ ուսումնարան տվին, ինձ հետ էլ մի քսան-երեսուն երեխա /ն/: 4. Պիտի փարվեմ ոտքերիդ՝ Հազար ու մի գիշերներ շնջալով ականջիդ՝ Ա՛խ, դուռդ բաց /ՀՇ/: 5. Սպի չեն տեսնի հայոց վերքերը, ... Քանի Հայաստանն՝ իբրև սուրբ մի սիրտ՝ Երկուս է արել զինված սուրը բիրտ... /ն/: 6. Մենք դուրս ենք եկել Միլիոն ու միլիոն տարիներ առաջ /ՊՍ/: 7. Եվս տասներկու բոլորակ տարի ձեմարանի մեջ եկավ ու անցավ, Ու Սողոմոնը... Կոմիտաս դարձավ: 8. Գերմաներենը շուրջ երեք տարի, հարկադրաբար, ձկվում էր անվերջ նրա բերանում /ն/: 9. Սակայն դեռ երեկ մի հանք չէր փլվում, այլ մի բովանդակ երկինք անողոք, և փլվում էր ոչ թե մեկ, ո՛չ էլ տասնմեկ, այլ միլիոն ու մեկ թշվառի գլխին /ն/: 10. Միլիոն, միլիարդ տարիներ Իր ափին է ծովը... /ՍԿ/:

Բ. 1. Ամենայն տեղ մահը մի է, Մարդ մի անգամ պիտի մեռնի /Մ. Նալբանդյան/: 2. Ծամվում են մշուշում ընկած, Հազար ու հազար գաղթական /ԵԶ/: 3. Այս բուրգերի բարձունքից քառասուն դարեր են ձեզ նայում /Նապոլեոնի՝ Եգիպտոսի բուրգերի վրա գրոհելուց առաջ իր զինվորներին հղած խոսքը/: 4. Հարյուր անգամ կրկնում են, ինչ հարյուր տեղ է ասված՝ Սեր կոչվածը այս ի՛նչ ցավ է, ի՛նչ աղետ է, տե՛ր աստված /Սաուդ Սալման/: 5. Ափսոս որ իմ ջահելության գիրքը թերթվե՛ց – վերջացա՛վ, Եվ իմ կյանքը, հազար ափսոս, վաղ գարնան պես շուտ անցավ ... /Օմար Խայամ/: 6. Երեք թե չորս գնդակ անցան նրա կողքով:

գ) Հարյուր տարի հետո... մեզանից ոչ ոք մնացած չի լինի արևի լույսը վայելող...

Բայց հարյուր տարի հետո էլ արևը նորից այսօրվա պես թարմ ու մանուկ, պիտի գրկի իր զվարթ լույսերի մեջ աշխարհը, և լեռների ձյունը պիտի փայլի, և ջրվեժները պիտի շառաչեն, և թռչունները այնպես ուրախ պիտի երգեն, կարծես թե առաջին գարունն է, որ ծաղկել է երկրի վրա... Եվ հարյուր տարի հետո ծնողների համար աշխարհը պիտի լինի երագների ուղի, իսկ հեռացողների համար՝ ունայնություն, պատրանք...

Բայց հարյուր և հազար տարի հետո, և հազար-հազար դարեր հետո երկինքը պիտի անծայրանա, և աստղերը պիտի սլանան հազարավոր մղոններ մի ժամի մեջ...

Հարյուր տարի հետո էլ մարդիկ անմահության պիտի տենչան, ինչպես առաջ, և պիտի փոշիանան-մոռացվեն: Հարյուր տարի հետո էլ միտքը պիտի ճգնի ու տվայտի տիեզերքի իմաստը լուծելու համար...

Եվ հարյուր տարի հետո և հարյուր հազար տարիներ հետո հյուլեի մեջ պիտի գան մոլորակներն արևի շուրջ...

Հարյուր տարի հետո և հազար տարիներ հետո ծովը պիտի ծփա և պիտի պատմի իր հավերժական գրույցը, ինչպես պատմել է հազար տարիներ առաջ նախամարդուն և իխտիոզավրին...

Հարյուր կամ հազար տարի հետո էլ մահկանացուն պիտի ցավագնորեն ձգտի անմահության, և օրհասականը պիտի սպասի հրաշքի՝ չհաշտվելով մահվանը:

/Ըստ Ավ . Իսահակյանի/

95. Տրված թվերը փոխարինելով տառային համարժեքներով՝ կարդացե՛ք Իմաստունի 5 խորհուրդները /բառերն սկսվում են այս նշանով՝ ◊/:

1. ◊70-1-3000-1-4000-1 ◊ 200-20-1-300-400, ◊ 1-700-9000-600-3000 ◊4000-5-2000-1-50-20-4, ◊30-2000-5-30-600-3000 ◊1-2000-1-50-8 ◊60-5-2000-8 ◊2000-7000-4000 ◊7:

1. ◊30-5-1000-8 ◊3-600-3000-20-5000` ◊4-1-500-4000-7000-200 ◊200-400-1 ◊50-600-3000-8 ◊3-600-3000-20-5000` ◊6000-1-200-1-9000-7000-200 ◊1-800-5000-20-5000, ◊1-200-7000-2000-400-7000-9-300-7000-400-8 ◊3-600-3000-20-5000` ◊ 5-5000-60-5000-600-5000-4 ◊1-400-3-1-200 ◊200-20 ◊1-200-7000-2000-400-1-6000-20-5000:

2. ◊7000-90-4000-1-800-1-400-20 ◊70-5-4000 ◊2-1-5000-5-60-1-200-7000-9-300-7000-400 ◊1-400-600-90-8 ◊20-5000 ◊4000-1-400 ◊4-7000-1000-8 ◊800- 5-4000-9000 ◊7 ◊2-1-5000-80-5000 ◊500-20-400-5:

3. ◊1-5000-4-1-5000 ◊3000-1-2000-4000-1-60-8 ◊200-1-6 ◊7-30 ◊4-1-1000-400-1, ◊700-20 ◊60-4000-5000-3000-20, ◊70-1-5000-1-200-8 ◊3-5-5000-1-400 ◊7-30 ◊4-1-1000-400-1` ◊60-60-4000-5000-3000-20:

4. ◊200-1-5000-4-7000 ◊8000-600-90-8 ◊600-5000 ◊500-1-4000-1-400-1, ◊4000-1-400 ◊2000-300-7000-400-5-5000-400 ◊ 1-700-9000-20-400 ◊50-7000-1000 ◊60-5-5000-և-1-400:

96. Ընդգծե՛ք դասական թվականները. կազմե՛ք դրանք որպես վերջնաբաղադրիչ ունեցող 2-ական բարդ ածանցավոր թվականներ:

Երբ որ մեռնեմ, ինձ այրեցե՛ք, բայց մոխիրս յոթը բուռ,

Առաջին բուռն համասփյուռե՛ք կրծքին բանտված Մասիսի,
Որ խառնվիմ իր մեծ սրտին, հովանա սիրտն իմ հույսի...
Երկրորդ բուռը լուռ շա՛ղ տվեք մայր Արաքսի սրտի մեջ,
Որ հովանա մոխրիս մեջ էլ կարոտավառ սիրտս խեղճ:
Երրորդ բուռը տարեք ցրե՛ք Ղարաբաղիս լեռներին,
Որ մուրազի ծաղկունք դառնան պանդուխտ հողիս լեռներին:
Սրտիս մոխրի չորրորդ բուռը տարե՛ք ծովակն իմ Վանա,
Որ կարոտից մեռած սիրտս կենդանանա, հովանա՛...
Հինգերորդ բուռն իմ Տարոնի դաշտերի մեջ շա՛ղ տվեք,
Որ հինգ հազար դարեր քախի, մոխրիս մեջ էլ սիրտս հևա.
Վեցերորդ բուռն իմ մոխրի՝ որպես փյունիկը սրտիս,
Դուք շա՛ղ տվեք հազարագանձ ավերակուն Անիիս...
Յոթերորդ բուռն իմ մոխրի, որպես անշեջ մի ցասում,
Լցրե՛ք աչքը քար մարդկության, որ իմ վիշտը չէր կիսում...

/Հ. Շիրազ/

97. Ա. Դուրս գրե՛ թվականական կապակցությունները և թվական բաղադրիչները դարձրե՛ք դասական՝ արտահայտելով գրության տարբեր ձևերով /ինչպես օրինակ՝ հազար լճերի երկիր /շրջասույթ/– 1000 – 1. հազարերորդ 2. 1000-րդ 3. Մ 4. Ո/, բացատրելով ձևակազմական, ուղղախոսական և ուղղագրական օրինաչափությունները:

Ա. 1. Ճառագայթային այս ախտը բնավ նո՛ր չէ, բարեկան, - Նա նորածին չէ, Այլ առնվազն ութ հազար և ութ հարյուր տարեկան... Այս ախտը միայն նրանց է բռնում, Ովքեր յոթ հազար յոթ գույն են տեսնում ծիածանի մեջ... 2. Բայց ամաչկո՛տ իմ սիրելի, ես քեզ գիտեմ Ու սիրում եմ առնվազն մի 40 կամ 4000 կարճիկ տարի: 3. Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի Ես վախենում եմ, Շա~տ եմ վախենում Բյուրավոր ու բութ հավատացյալից... 4. 5000 տարվա և 50 տարվա պատմություն ունի այս ջարդ-սպանդը, նախճիր-եղեռնը: 5. Մեզ համար միշտ էլ նահանջ էր տարին, ու փետրվարը՝ միշտ 28 օր... 6. Չեմ կարող ապրել Աստվածաշնչի հերոսների չափ Ո՛չ 300, ո՛չ 100 տարի: 7. Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ, Ծերանում ենք, Սիրելի՛ս, Մեկ օր խմում Եվ երկու օր արդեն խումար ենք ընկնում, Մեկ ժամ քայլում Եվ երկու ժամ խոսում դրա օգուտից: 8. 2 000 000 մարդ ի խաչ բարձրացավ, 2 000 000 խաչ չտնկվեց հողում... 9. Երկրագնդի պտտվող կողին հասարակածի լայնության վրա սառցե գրիչով մեծատառ գրվեց նրա տարիքը՝ 1914 թիվը... Հիսուսը, նստած Հոր աջում, ինքնին մեծացավ արդեն մե՛կ տարով, և երկրագնդի կիսարյունաքամ-գունատ ճակատին արյունոտ մատով աղվեսագրվեց 1915 թիվը... 10. Անհնարին է, Անհավատալի՛, Որ այս աշխարհը Քանի՛ միլիոն դար Կապրի՛, Կլինի՛, նաև այս դարի Հազար ինն հարյուր Վա՛տ թվից հետո – Կապրի, կլինի... 11. Ութաձև միջատն իննաձև ճամփով իր բույնն է սողում: 12. Միավո՛ր է պետք՝ Երջանկությունից կամ թուլությունից մշտապես ծնվող Գլխապտույտի գերոյի համար, Ջերոյանման մեր գլխի համար, Ջերոյանման մեր սրտի՛ համար Եվ գերոյացող ա՛յն կյանքի համար, Որ ինքն իրեն է ճարմանդած պահում:

/Պ. Սևակ/

Բ. 1. Որքա՞ն է այդ լրտեսության վարձը՝ էլի՞ 30 մանեթ, 30 արծաթ, թե՞ նոր չափանիշներով՝ 30 դոլար... /<< օրաթերթից/: **2.** Շուրջը երազի մի մշուշ անցավ... Արև՝ մեկ, երկու, 13 արև, 40 երկինք և 8 լուսնի շող, Օդի մեջ հնչող 17 բարև, 17 գարուն ու մեկ էլ 7 ցող... Ու մեկ էլ վազող խելագարություն. Սենյակում ես եմ, Սակայն ես չկամ... /Ս. Խաչատրյան/: **3.** Այսօր ինձ նեղում են ասես սենյակիս չորս պատերը խոնարհ /ՍԿ/: **4.** գ/ Ացտեկների հետնորդներն իրենց հինավուրց քաղաքը՝ Մեխիկոն, կոչում են «երեք աշխարհների» կամ «երեք մշակույթների մայրաքաղաք», իսկ ալժիրցիներն իրենց էլ-Ուեդը անվանում են «հազար գմբեթների քաղաք»: «Երեք կրոնների քաղաքը» Երուսաղեմն է: Ֆինլանդիան «հազար լճերի երկիր» են անվանում, մեկ միլիոն փղերի երկիրը Լաոսն է: Եթե Ինդոնեզիան ավանդաբար «երեք հազար կղզիների երկիր» են կոչում, ապա յոթ հազար կղզիների երկիրը Ֆիլիպիններն է:

98. Ա. Ընդգծե՛ք դասական թվականները, բացատրե՛ք կազմությունը, որոշե՛ք շարահյուսական պաշտոնը:

Բ. Ընդգծվածներից առանձնացրե՛ք նրանք, որոնք դարձվածքների, բաղադրյալ հատուկ անունների, շրջասույթների բաղադրիչ են. փոխաբերական գործածության դեպքում թվականը պահպանո՞ւմ է իր խոսքիմասային արժեքը:

Ա. 1. Ես իմ ծնունդով հազար յոթ հարյուր միլիոներորդս Ծնվել եմ որպես 7 միլիարդերորդ մարդը աշխարհում, Կրկնում եմ՝ մա՛րդը, քո՛ խոսքն եմ կրկնում, Ինձ մարդ ես ստեղծել – 7 միլիարդերորդ մարդը աշխարհում Ու իմ մեջ լցրել մինչև ինձ ծնված 6 միլիարդ, հետն էլ 9 հարյուր հազար 999-րդ մարդկանց երազները բյուր, Մեղքերը բոլոր, վերքերը բոլոր, Եվ ուժը նրանց անթիվ ու անսպառ... /ՊՍ/: **2.** Շատ եմ նման այն խեղճ մարդուն, Որ ծանրորեն հիվանդանում օրվա մի օր և իմացած երկրորդ լեզուն մոռանում է բոլորովին /ն/: **3.** Կիսամերկ մի կին հինգերորդ հարկից նկատում է ինձ ու ետ է քաշվում.../ն/: **4.** ... Եվ հերքել եմ ես մի բան, որ հաստատել է պետք, Այն, որ կա վեցերորդ զգայարան, Եվ որ Մարդկանց «սիրտը վկայում է» իրոք... /ն/: **5.** Եվ եղավ ... մի նոր՝ երկրորդ ջրհեղեղ, որ իր տակ առավ առաջին հերթին այ՛ն երկիրը հենց, որ Նոյին փրկեց /ն/: **6.** Ա՛խ, չի կարող, ի՛ն սեր, զգվել ցնծագին Երկրորդ անգամ նույն ալիքը նույն ափին /<</: **7.** Դու գարնան առաջին ծիծեռնակի պես բույն դրիր իմ տանիքի տակ, Երգեցիր քո սերն առաջին, առաջին գարունը քո պերճ... Ու բուրեց համբույրն առաջին /ն/: **8.** Մի՞թե վերջինն ես, Քսաներորդ դար, Եվ ատոմահար Չպիտի՛ հասնես Քսանմեկերորդին,- Քո հաջորդ դարին /ԳԷ/:

Բ. 1. Հայկական մանրանկարչությունը միջնադարյան քրիստոնեական արվեստի ամենաինքնատիպ էջերից մեկն է, որի առաջին նմուշները մեզ են հասել Է դարից: Թ դարից սկսած մինչև ԺԲ դարի վերջը պահպանված մեծ թվով մանրանկար ձեռագրերը հիմք են տալիս գատորոշելու մանրանկարչական մի շարք դպրոցներ: **2.** Մայր Աթոռի հնագույն պատկերազարդ ձեռագիրը թիվ ԸՂԴ Ավետարանն է՝ գրված Ադանայում /Կիլիկիա/ ՌՄՂԳ թվականին: **3.** Ս. թ. ա. 53 թվականին Արտաշատում բեմադրվել է հայոց Տիգրան Երկրորդ արքայից արքայի որդի Արտավազդ Երկրորդի հունարեն մի ողբերգություն: **4.** Նեոֆաշիստների գործունեությունը ուղղված էր հինգերորդ աշխարհամասի բնակիչների դեմ: **5.** Վեցերորդ աշխարհամասը Երկրի մակերևույթի 70, 8

տոկոսն է կազմում **6**. Տասներորդ և տասներկուերորդ մուսաներից առաջինը թարգմանչական արվեստն է, երկրորդը՝ տեսագրությունը, որը նոր և շատ հզոր գաղափարական գեներ է:

Գ. 1. Նա բռնեց վիշապին՝ այն առաջին օձին, որ Բանսարկուն է և Սատանան, և հազար տարով շղթայեց նրան /Աստվածաշնչից/: **2.** Շատ առաջիններ հետինը կլինեն, իսկ հետիններ՝ առաջին /Աստվածաշնչից/: **3.** Ղեռևս հին հույների աստղագիտության մեջ ըստ մեծության վեց կարգի բաժանվածների մեջ առանձնացվում էին առաջին մեծության աստղերը: **4.** Ազգերի առաջին տիկնայք՝ թագավորների, նախագահների կողակիցները, միշտ էլ հասարակության ուշադրության կենտրոնում են: **5.** Բարեկամը է, ինչպես որ եղել է, մի երկրորդ «ինքն» /Ցիցերոն/: **6.** Ես ո՛չ առաջինն եմ, ո՛չ էլ վերջինը: **7.** Յոթերորդ զգայարանը, որ հատուկ է շատ կենդանիների, կոչվում է «երրորդ աչք»: **8.** Բացի հայտնի երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններից, անպայման պիտի գործի և չորրորդ իշխանությունը՝ մամուլի՝ խոսքի, լրատվության իշխանությունը: Կա չորրորդ իշխանություն՝ կա ժողովրդավարական պետություն /մամուլից/:

99. Ղուրս գրե՛ք թվականները՝ կազմելով դրանց բաշխականը գրության տարբեր ձևերով, ինչպես օրինակ՝ 80– 1. ութսուն-ութսուն 2. 80-80 3. ութսունական 4. 80-ական:

Ա. Գերմանացի ականավոր մաթեմատիկոսի՝ Գաուսի ուսուցիչը դպրոցականներին առաջարկում է ինքնուրույն աշխատանք կատարել մաթեմատիկայից՝ հաշվել 1-ից մինչև 100 թվերի ընդհանուր գումարը: Նա հույս ուներ, որ երեխաներն ամբողջ դասին զբաղված կլինեն այդ աշխատանքով: Սակայն դեռ չէր հասցրել տեղավորվել բազկաթոռում, երբ փոքրիկ Գաուսը վեր է կենում և ասում այդ գումարը՝ 5050: Ուսուցիչն ապշում է. «Ինչպե՞ս այդքան շուտ հաշվեցիր»: «Ես չհաշվեցի, այլ նկատեցի օրինաչափությունը»: Ուսուցիչը գրում է գրատախտակին տրված թվերը՝ 1, 2, 3, 4, 5, ..., 15, 16, 17, 18, 19..., 50, 60, 70, 80, 90..., 96, 97, 98, 99, 100:

Ուշադրություն դարձրեք առաջին ու վերջին, երկրորդ ու նախավերջին, սկզբից ու վերջից երրորդ, չորրորդ թվերի գումարներին. մեկին գումարած 100 հավասար է 101, $2+99 = 101$, $3+98 = 101$...: Որոշելով, որ զույգ թվերի գումարը միատեսակ է՝ 101, իսկ ընդամենը կա 50 զույգ, Գաուսի դասընկերները հեշտությամբ և արագ-արագ վճռում են խնդիրը. 50 անգամ 101 հավասար է 5050 /թվաբանական պրոգրեսիայի անդամների գումարը/:

Բ. Աշխարհումս երեք անբժշկելի բան կա մարդուս համար՝ ատամի ցավը, չկամ ու նախանձ հարևանը, վատ կինը: Բայց սրանցից ազատվելու հնար կա. 1-ինի դեպքում հանի՛ր ատամդ, երկրորդ դեպքում՝ տո՛ւնդ վաճառիր և ուրիշ տեղ գնա: Երրորդ դեպքում ապահարզա՛ն տուր: Բայց վա՛յ այն մարդուն, որ զլխացավ ունի, կամ աչքացավ, կամ վատ որդի. ահա այս դեպքերում անբժշկելի են թե՛ առաջինը, թե՛ երկրորդը, թե՛ երրորդը, որովհետև չես կարող զլուխդ կտրել, աչքերդ հանել և որդուդ փոխել:

100. Ընդգծե՛ք մեկ բառը կամ մեկ բաղադրիչն ունեցողները և նշե՛ք խոսքիմասային առանձնահատկությունները ու շարահյուսական պաշտոնը:

Ա. 1. Ազգե՛ր, թե հայոց այս եղեռնը մեծ Ձեր մեկնումեկին խոշտանգեր հանկարծ..., Իմ սիրտը... չէր լռի ձեր պես... Թե մեկնումեկդ իմ ազգի նման եղեռնահարվեր, Ես չէի լռի...

Թե մեկնումեկիդ գենոցիդ բերեր ոսոխը մթար, Ես նույնը պիտի բերեի... 2. Չկար մարմինը ոչ մեկի... սակայն մեկը հայի էր, մյուսը՝ հայուհու... 3. Քշվել են բոլոր հայերն այստեղից՝ տարագրվելով մայրարմատ հողից... 4. Ուր մեկ-մեկ տեսանք հետքերը նրանց... 5. Այս եղեռնապիղծ օրերում գայիք Գեթ մի մանուկի աչքով մեկ լայիք... Ո՛ր մեկիդ մեղքը հայ ազգը ների.. Ո՛վ անգլուհիք, գոնե արտասվեք, Մեկիդ գթաքույր մի գոչը լսվեք... 5. Գլխից թե մեկ մազ պակասի, հավատա՛, Գլուխդ կերթա... 6. Եվ թե լսեի, որ ձեզ, ո՛վ ազգեր, մեկն ահ է բերում, Ես խոլ կամպեի, կապստամբեի երկնի էլ ընդդեմ.. 7. Էլ հայ չի ծնվում ոչ մի հայահող Ողջ Արևմտյան Հայաստանով մեկ՝ զոհը եղեռնի... 8. Վերից էլ ինչ-որ մեկը շշուկեց. Երկինք նայեցինք... 9. Մանրագլխիկն էր կկվից մնացել, Մեկ էլ քնքուշիկ կմախքը կկվի.. 10. Ուրեմն, ե՛կ դու էլ ինձ հետ՝ քո տեսածը քեզ մեկ էլ տեսցնելու այս իմ եփրատյան նորավիշտ քստմնելի դրվագներով տխրամբունչ... 11. Մի կին թռչում էր բոց թևեր առած, Մեկը դառել էր մի սև մոխրակույտ... Մեկի մազերն էր կրակը ծածկել, Մեկը որդուն էր կրակից փրկում, մեկը կրակե շապիկ էր հագել Ու ծովն էր ընկնում... 12. Ծովի սիրտն էլ էր, ասես, մեր սրտից. Մե՛կ մոր բերանով անգոր անհծում, Մե՛կ հոր պես ծառս էր լինում գայրույթից... մե՛կ նահանջում էր ծովից կրակի... 13. Ողջ երկնքով մեկ ամպած հոնքերով Աստված էլ տնքում, Անգոր ցասումով էր խաչակնքվում: 14. Էլ ի՞նչ.. Ջոհերս մեկ առ մե՞կ վրձնեն, Մեկ առ մե՞կ բանամ աչքերը մանկանց... 15. Թե դու Աստված ես ամենակարող, ... Ինչո՞ւ չես կորած մարդ-խիղճը գտնում, - Այսպես բարբառեղ մեզանից մեկը... 16. Ամեն մեկս էինք իրար մենտորվում, Հսկայի մեղքը մենք էինք քավում... 17. Եվ թուրքը խնդաց. «Ինձ մեկ է՝ վարդ եք , թե մեխակ... 18. Աստվա՛ծ իմ, թե որ մեկ էլ աշխարհի գամ, Ինձ վա՛գր ծնիր, թե մարդ է սա... 19. ...Տիգրանի՞ց խոսեն, թե՞ մայր Անիից, որ մայրն է հազար ու մեկ տաճարի... 20. Եվ անցնում էինք, երբ տեսանք հանկարծ ... Անգլուխ մեկին և այն էլ խաչված : 21. Մեջիդն էլ ճչաց՝ «Մեկ զինված հայն էլ ահ է արարչին»: 22. Օ՛, գնա՛նք, հա՛յր իմ, մեկ-մեկ բանամ քո առջև ձերմակ մազերիս գաղտնիքները սև... 23. Ու ես մեկ-մեկ նայում Դանթեին մռայլ Ու տենչում էի համր տանջանքով, Որ խոսեր, բայց նա լռում էր դարձյալ ... 24. Տուն կար, որ յոթից մեկը փրկվեց, յոթանասունից մեկն հագիվ պրծավ...Յոթ վիլայեթից վեցը դատարկվեց...:

/ Ըստ Հովի. Շիրազի «Հայոց Դանթեականի» /

Բ. 1. Նա վերջերս իր մեծ հոր հետ այցելեց հազար ու մեկ գիշերների երկիրը՝ Իրաք: 2. Արշավախումբը եղավ հազար ու մեկ եկեղեցիների քաղաքում: 3. Այդքան խոսելուց հետո նրա մեկը երկու չէր դառնում /ԱԲ/: 4. Եվ հենց նույն օրը չթի գինը մեկին երկու թանկացավ /ԱԲ/: 5. Եվ դա այնքան հայտնի և պարզ իրողություն է, ինչպես մեկին գումարած մեկ հավասար է երկու: 6. Թիվ երկու կուսակցությունը, թիվ 1 կոմունիստի ասելով, քարոզչությամբ չի զբաղվում: 7. Երվանդը մեկը երկուս չարեց: 8. Մեկ երկու լռեց, մի օր էլ չհամբերեց: 9. Գետնից թղթադրամը վերցնելն ու վազելը մեկ եղավ: 10. Համոզված էր, որ դա մեկից մեկ իր հարևանի գործն էր: 11. Ինչքա՞ն համբերես, մեկ չէ, երկու չէ: 12. Դե լավ իմացեք, մեկ էլ որ ձեզ փող տամ, թող երկու լինի:

101. Ա. Դո՛ւրս գրեք կոտորակային թվականները, բացատրե՛ք նրանց կազմության յուրահատկությունը:

Հնադարյան մարդն այնպիսի անշտապ կյանքով է ապրել, որ նրա արեգակնային, ջերմային, ավազի ժամացույցների վրա բուսականների համար հատուկ բաժանումներ չկային: Միայն 18-րդ դարի սկզբից ժամացույցի թվատախտակի վրա սկսեց երևան գալ բուսական սկզբը, 19-րդ դարի սկզբին՝ նաև վայրկյանի սկզբը: Իսկ ի՞նչ կարող է կատարվել վայրկյանի 1/1000 ընթացքում: Շա՛տ բան: Գնացքը, ձիշտ է, կարող է այդ ժամանակամիջոցում տեղափոխվել ընդամենը 3 սմ, բայց ձայնը՝ 33 սմ, ինքնաթիռը՝ 0,5 մ, Երկրագունդը Արեգակի շուրջը վայրկյանի ընթացքում կանցնի 30 մ, իսկ լուսը՝ 300 կմ: Մեզ շրջապատող մանր էակները, եթե կարողանային դատել, ապա վայրկյանի 1/1000 մասը չնչին ժամանակամիջոց չէին համարի: Միջատների համար, օրինակ, այդ մեծությունը միանգամայն զգալի է: Մոծակը մեկ վայրկյանի ընթացքում կատարում է 500-600 թափահարում: Նշանակում է, որ 1/1000 –ի ընթացքում նա հասցնում է դրանք բարձրացնել կամ իջեցնել:

Մարդու ամենարագ շարժումը աչքերի թարթումն է կամ ակնթարթը: Ճշգրիտ չափումները բացահայտել են, որ «ակնթարթը» միջին հաշվով տևում է 2/5 վայրկյան, այսինքն՝ վայրկյանի 400000-րդ մասը: Այն տրոհվում է հետևյալ փուլերի՝ կոպի իջեցում՝ վայրկյանի 75-90 հազարերորդ մաս, իջեցրած կոպի անշարժ վիճակ՝ 130-170 հազարերորդ մաս, կոպի բարձրացում՝ մոտ 170 հազարերորդ մաս... 20-րդ դարի սկզբին չափվող ամենափոքր ժամանակամիջոցը հավասար է վայրկյանի 1/10000 մասին: Այդ ժամանակամիջոցը մոտավորապես այնքան անգամ է փոքր վայրկյանից, ինչքան անգամ վայրկյանը՝ 300 տարուց: Իսկ վայրկյանը բուսական մեկ վաթսուներորդ մասն է, ժամի՝ 1/360 մասը ... :

/Ըստ Յու. Պերելմանի/

102. Բացատրե՛ք թվական բաղադրիչ ունեցող դարձվածքների իմաստները, ինչպես օրինակ՝ *երեք մոգեր* – մեծ, նշանակալից երևույթի ծնունդն ավետող վկաներ:

ա) Առաջին ծիծեռնակ, երկրորդ երիտասարդություն, երկու աչքիս վրա, կառքի /սայլի/ հինգերորդ անիվ, հազար սրբի տեղ մեկ աստծուն դիմել, մի բարձի ծերանալ, սատանայից յոթ օր առաջ ծնվել, յոթ սարից այն կողմ, երեք մոգեր:

բ) Առաջին ջութակ, երկրորդ շնչառություն բացել, երկու երես ունենալ, երրորդ աչք, բարով, հազար բարով գալ, հարյուր կտոր դառնալ, մի ձեռքով երկու ձմերուկ բռնել, յոթ կաշի մաշկել, յոթ սրբի տված, երկուձու խաշելու համար ուրիշի տունն այրել:

գ) Առաջին քայլ, երկրորդ ջութակ նվագել, երկու տիրոջ ծառա, գրոյի հավասարեցնել, հազար բերան, յոթ դռան հաչող շուն, յոթերորդ երկինք, երկու աչքով նայել, երկուսի ջուրը մի արմով չգնալ, թրի երկու կողմն էլ կտրել, հազար դուռ բախել, երկու տիրոջ ծառա:

դ) Մեկը երկու անել, յոթ կողպեքի տակ պահել, մի մատ, հազար տաշտից հաց ուտել, մի աչք ու մի ականջ դառնալ, մի աքլորի բեռ, խոսքը մեկ անել, հազար կտոր դառնալ, երրորդ աշխարհի երկրներ, վեցերորդ զգայարան, ութերորդ հրաշալիք:

103. Ա. Թվե՛ք աշխարհի 7 հրաշալիքները և պատմե՛ք նրանցից մեկի մասին: Բ. Ի՞նչ է նշանակում «աշխարհի ութերորդ հրաշալիք» շրջասությունը:

104. Լրացրե՛ք համապատասխան թվականները:

- նավը նավապետ չի ունենա:

- Վագրին պոչը հարկավոր չէ:
- լավ է, բավ է, ցավ է:
- Ավելի լավ է օր ապրել որպես աքաղաղ, քան տարի՝ որպես հավ:
- Լավ է ոչխար ունենալ առյուծի ղեկավարությամբ, քան թե առյուծ՝ ոչխարի ղեկավարությամբ:
- թել քաշես , կարկատան կթափվի:
- Մխավվելու համար օրն էլ բավական է, ափսոսալու համար օրն էլ քիչ է:
- Փայտի ցեցը որ իրենից չլինի, տարի կապրի:
- կա՝ արժի, կա՝ չարժի:
- Մարդու ուսին խուրջին կա. առջևի մասում ուրիշի թերություններն է լցնում, ետևի մասում՝ իրենը:
- Բնությունը մարդուն աչք է տվել, ականջ, բերան, որ շատ տեսնի, շատ լսի, քիչ խոսի:

105. Հայաստանի Համրապետությունում տոնական ու հիշատակի ի՞նչ օրեր են նշվում և ե՞րբ:

106. Ընդգծե՛ք թվականները, կազմե՛ք մնացած տեսակները և լրացրե՛ք աղյուսակը՝ արտահայտության տարբեր ձևերով. կոտորակային թվականներ կազմելու համար բոլոր դեպքերում որպես համարիչ օգտագործել 1 /մեկ/ քանակական թվականը: /Հիշեցե՛ք՝ հռոմեական թվանշաններով արտահայտված դասականներից սովորաբար գործածվում են մինչև 30-ը: Նրանցից բարձր դասականները սակավ կիրառություն ունեն: Նրանք կամ փոխարինվում են արաբական թվանշաններով, կամ էլ ստանում են բառային դրսևորում/:

Ռուս մեծ գրող Լ. Ն. Տոլստոյը իրավացիորեն գրում է. «Խոր ծերության ժամանակ մարդիկ ենթադրում են, թե իրենց կյանքի վերջն են ապրում, սակայն հենց այդ ժամանակ է, որ կատարում են թե իրենց և թե ուրիշների համար ամենաթանկարժեք և ամենաանհրաժեշտ աշխատանքը»: Իսկապես, **85** տարեկան հասակում Գյոթեն վերջապես ավարտեց իր «Ֆաուստը»: Միքելանջելոն 90 տարեկան հասակում կերտեց իր լավագույն քանդակներից մեկը: Վերդին իր գլուխգործոցը՝ «Աիդան», հանդիսատեսին ներկայացրեց 80 տարեկանում: Տիցիանը 95 տարեկան հասակում ավարտեց իր նշանավոր «Քրիստոսը փշե պսակով» նկարը: Ռուս արվեստաբան, ակադեմիկոս Դմ. Լիխաչովը 100 տարեկանում շարունակում էր իր կրակոտ, հրապարակային ելույթները: Երկարակյաց հանճարներից Չ. Չապլինը, Էդիսոնը, Միքելանջելոն, ապրել են 90 տարի, Տիցիանը՝ 99, Պ. Պիկասոն՝ 92, Մ. Սարյանը՝ 94, Բ. Շոուն՝ 91, Այվազովսկին, Գյոթեն,՝ 83, Գ. Սունդուկյանը, Վ. Համբարձումյանը՝ 87....

Ըստ «Աշխարհի նշանավոր քիմիկոսներ» գրքի տվյալների՝ ի գարմանս բոլորի, նշվում է, որ 1220 քիմիկոսներից յուրաքանչյուր 2-րդն ապրել է 75 տարի, յուրաքանչյուր 5-րդը՝ 80 տարի, յուրաքանչյուր 9-րդը՝ 85 և ավելի: Իսկ նրանցից 50-ը հասել, անցել են 90 տարվա սահմանագիծը: Շատ երկարակյացներ են եղել XIX և XX դարերում: Երկարակյացության դափնին պատկանում է ֆրանսիացի քիմիկոս Միշել Շևրեյիին. նա ապրել է 103 տարի: Ֆրանսիացիների քիմիայի արքան՝ Բերտլոն, ապրել է 79 տարի: Նրա մահից երկու ժամ անց իր մահկանացուն է կնքել նաև կինը, որի հետ շատ սիրով ապրել է կես դարից ավելի:

Շատ քիմիկոսներ դարձել են դժբախտ պատահարի զոհեր: Անգլիացի քիմիկոս Գ. Մոզլին 28-ը դեռ չբուլորած դարձավ Առաջին համաշխարհային պատերազմի զոհ: Պ. Կյուրին 47 տարեկանում իր մահկանացուն կնքեց զարեջրով բեռնված սայլի անիվների տակ: Անհայտ հանգամանքներում 51 տարեկանում գլխատեցին ֆրանսիացի քիմիկոս Ա. Լավուազիերին:

	ՔԱՆԱԿԱԿԱՆ	ԴԱՍԱԿԱՆ	ԲԱՇԽԱԿԱՆ	ԿՈՏՈՐԱԿԱՅԻՆ
Արտահայտման ձևը				
բառերով	ութսունհինգ	ութսունհինգերորդ	ութսունհինգական ութսունհինգ- ութսունհինգ	մեկ ութսունհինգերորդ, մեկ ութսունհինգերորդական
արաբական թվանշաններով	85	-----	-----	-----
հռոմեական թվանշաններով	-----	LXXXV /գործածական չէ/	-----	-----
այբուբենի տառերով	-----	ՉԵ	-----	-----
բառերով և թվանշաններով	-----	-----	-----	-----
կոտորակի ձևով	-----	-----	-----	1 / 85
քանակական թվականից՝ ածանցմամբ	-----	-----	85-ական	-----
քանակական թվականի կրկնությամբ	-----	-----	85 - 85	-----
արաբական թվանշաններով և -րդ /կամ -ին/	-----	85-րդ		-----

107. Գտե՛ք փոխանվանաբար կիրառված թվականները և որոշե՛ք շարահյուսական պաշտոնը:

Ա. 1. Հազարի նման մի աղջիկ ես դու, Որ գտել եմ ես՝ մեկս հազարից /ՊՍ/: 2. Երեք աղջիկ թե հանդիպեն մի օր իրար, Պիտի խոսեն իրենց սիրուց իրավ, որ չիմանան, որ սիրում են մեկին: Նրան, ով սիրել է իրենց մեկտեղ – Մեկին՝ իմ պես, Մեկին՝ ինձ պես, Իսկ երրորդին էլ ՝ ինձ նման /Ն/: 3. Մի ոտ չունեն, Ուստի և ձեր երկուսի տեղ Երեքն ունեն: Երկու ոտով, Ինչ դուք չունեք և հեշտ կոչում եք «հենակներ», Ես մայթերն եմ կետադրում... Իսկ երրորդով... Երրորդով էլ տնտեսում եմ տան ծախսերս... /Ն/: 4. Բայց միավորի կողքին շարվեցին նոր-նոր զրոներ, և զրոների թիվն անցավ հինգից ու հասավ վեցի՝ կես միլիոն ու մեկ, մեկ միլիոն ու կես... /Ն/: 5. Մի աչքովդ ինձ կանչում ես, մի աչքովդ վանում, Մեկով ինձնից դու փախչում ես, մեկով ինձ տուն տանում... Մի աչքիդ մեջ ծովն է Վանա՝ իմ համբույրից խլված, Մեկդ ծովն է իմ Սևանա՝ հույսով իմ խարխլված /ՀՇ/: 6. Ո՞ւր եք բաժանվում, տո՛ւն դարձեք մարդիկ, Մեկի տեղը յոթը ծնեք ու սնեք /Ն/: 7. Մայր լինել և բանաստեղծ լինել միևնույն բանն են. երկուսն էլ արյունելով կբաանվեն և կանմահանան ուրիշ էակների մեջ, մեկը կապրի տասի մեջ, իսկ մյուսը կապրի միլիոնների մեջ /Ըստ Դ. Վարուժանի/: 8. Ուժի ազդեցության օրենքը մեխանիկայի հիմքում Նյուտոնի գրած 3 օրենքներից «երկրորդի» հետևանքն է: Առաջինը իներցիայի օրենքն է, երկրորդը՝ ազդեցության և հակազդեցության օրենքը: 9. Ոչ բոլոր ժողովուրդներն են հաշվի հիմքում «տասը» դրել: Զինացիները հաշվի հիմքում դրել են «հինգը», հաշվել հնգյակներով: Հին Ռուսաստանում այն եղել է «քառասունը», Հռոմում՝ «տասներկուսը», Բաբելոնում՝ «վաթսունը»: 10. «Գլխապտույտ տրյուկի» հաջող կատարման համար անհրաժեշտ է «սատանայի օղակն» այնպես կառուցել, որպեսզի ճանապարհի թեք մասի գագաթը վերին

կետից ավելի բարձր լինի, քան օղակի շառավղի մեկ երրորդն է, իսկ այն կետը, որտեղից հեծանվորդն սկսում է իջնել, պետք է օղակի տրամագծի մեկ քառորդից ավելի բարձր լինի:

Բ. Հազարոտնուկը զբոսնում էր իր հարյուր ոտքերի վրա, հենց դրա համար էլ նրան հազարոտնուկ են ասում: Հրաշք բան է՝ զբոսնել՝ ունենալով հարյուր ոտք. ախր նույնիսկ մի զույգ ունենալու դեպքում դրանք կառավարելն այնքան էլ հեշտ չէ, ուր մնաց 50 զույգի դեպքում: Իսկ հարյուրից գլուխ հանելն իսկապես որ գրեթե անհնար է: Բայց հազարոտնուկին դա առանց դժվարության հաջողվում էր. նախ առաջինը, հետո երկրորդը, երրորդը, չորրորդը, հինգերորդը, Քսաներորդը, երեսուներորդը..., իննսուներորդը, իննսունիններորդը և վերջապես՝ հարյուրերորդը:

Աղվեսի հետաքրքրությունը շարժվեց. չէ՞ որ աղվեսները միշտ հետաքրքրասեր են: Աղվեսը նայում էր, ուսումնասիրում, վերլուծում, բայց չէր կարողանում հավատալ դրան:

-Սպասի՛ր, ես կամենում եմ հարցնել քեզ: Դու ինչպե՞ս ես կառավարում այդ ամենը, ինչպե՞ս ես որոշում, թե որ ոտքդ որից հետո շարժես՝ երկրորդը առաջինի՞ց հետո, տասներորդը՝ տասնմեկերորդից հետո թե՞ տասներկուերորդից, կամ երևի զույգերով ես շարժվում կամ չորս-չորս, հինգ-հինգ... Հարյուր ոտք... Դու այնքան սահուն ես քայլում... Քայլելու համար չորսն էլ է բավական. գուցե փորձես չորսով շարժվել...

Հազարոտնուկը շփոթվեց, փակեց աչքերը և փորձեց գնալ: Դա շատ դժվար էր, գրեթե անհնար. ո՞ր ոտքը որից հետո դնել՝ առաջինը երկրորդից հետո, տասներորդը հետո տասնհինգերորդը, իսկ ինչպե՞ս վարվել մնացած 40-ի, 50-ի հետ. նա ընկավ գետնին. ինչպե՞ս գլուխ հանել հարյուր ոտքերից:

Աղվեսը ծիծաղեց, իսկ զայրացած ու շփոթված հազարոտնուկն սկսեց լաց լինել՝ ցանկանալով հարյուրի փոխարեն զոնե չորսն ունենալ...

Դ Ե Ր Ա Ն ՈՒ Ն

108. Տրված հատվածից դ՛րս գրեք առարկայի, հատկանիշի և հատկանիշի հատկանիշի ընդհանուր հասկացությունն արտահայտող բառերն առանձին-առանձին. դրանց ձևաբանական ու կիրառական առանձնահատկություններից ելնելով՝ բացատրե՛ք, թե դրանք ինչ հիմունքով են միավորվում միևնույն խոսքի մասի՝ դերանվան մեջ:

Առաջին հայացքից այն սենյակը, ուր ինձ տեղավորել էին, տհաճ տպավորություն չէր թողնում. կար դուռ, սեղան, մահճակալ, բազկաթոռ, լվացարան, վանդակապատ լուսամուտ: Սակայն դուռը փակ էր գօր ու գիշեր, սեղանի վրա ո՛չ գիրք կար, ո՛չ թերթ, ո՛չ մատիտ: Իմ «եսը» և իմ մարմինը գտնվում էին դատարկության մեջ: Ինձանից վերցրել էին ամեն ինչ՝ ժամացույցը, որ չիմանայի ժամանակը, մատիտը, որ չկարողանայի գրել, գրչահատը, որ չկարողանայի կտրել երակս, ինձանից խլել էին նույնիսկ իմ ամենաամենա մխիթարանքը՝ ծխախոտը: Մարդկային միակ էակը, որին ես կարող էի տեսնել, բանտային հսկիչն էր, բայց նրան արգելված էր խոսել ինձ հետ և պատասխանել իմ հարցերին: Ես չէի տեսնում մարդկային դեմքեր, չէի լսում մարդկային ձայներ, առավոտից մինչև գիշեր և գիշերից մինչև առավոտ ես ոչ մի սնունդ չունեի աչքերիս, լսողությանս և մյուս զգացմունքներիս համար: Ես մենակ էի ինքս ինձ և մի քանի անշունչ առարկաների հետ: Ես մենակ էի, ինչպես ջրասուզակը, որն ընկղմվել է լռության սև օվկիանոսը և աղոտ կերպով գիտակցում է, որ փրկության պարանը կտրվել է, և որ իրեն երբեք չեն հանի այդ լռին անդունդից...

Ես ոչինչ չէի անում, ոչինչ չէի լսում, ոչինչ չէի տեսնում: Դա դատարկություն էր՝ առանց ժամանակի և առանց տարածության: Կարելի էր քայլել անկյունից անկյուն, և ամբողջ ժամանակ քեզ հետևում էին քո մտքերը: Այստեղից՝ այնտեղ, այնտեղից՝ այստեղ... Բայց մտքերին էլ ինչ-որ հենարան է պետք, այլապես նրանք կսկսեն անմտորեն պտտվել իրենք իրենց շուրջը. նրանք նույնպես չեն դիմանում դատարկությանը: Լուսաբացից մինչև երեկո սպասում էիր ինչ-որ բանի, բայց ոչինչ չէր պատահում: Եվ այդպես դու սպասում ես, սպասում, միշտ մտածում ես, մտածում, մինչև սկսում են ցավել քունքերդ: Ոչինչ: Դու առաջվա պես մենակ ես, մենակ...

(Ս. Ցվայգ)

109. Գտե՛ք դերանունները և բացատրե՛ք դրանց իմաստային յուրահատկությունները: Ինչո՞վ են դրանք տարբերվում առարկա, հատկանիշ ցույց տվող մյուս խոսքի մասերից (գոյականից, ածականից, թվականից, մակբայից):

Մի անգամ Էդիսոնը գանգատվել է Էյնշտեյնին.

- Ոչ մի կերպ չեն կարողանում ինձ համար օգնական ընտրել: Ամեն օր ինձ մոտ են գալիս մի քանի երիտասարդներ, սակայն նրանցից ոչ մեկը գիտելիքներով չի համապատասխանում այդ պաշտոնին:

- Իսկ ինչպե՞ս եք Դուք դա որոշում,- հարցրեց Էյնշտեյնը:

- Այս հարցաթերթիկներով,- պատասխանեց գյուտարարը:

Էյնշտեյնը աչքի անցկացրեց Էդիսոնի հարցերը:

«Քանի՞ մղոն է Նյու Յորքից մինչև Չիկագո», - կարդաց նա և ասաց.

- Պետք է նայել երկաթուղային տեղեկագրում:

«Ինչպե՞ս է ստացվում չժանգոտվող պողպատը»:

- Այդ մասին պետք է կարդալ մետաղների ստացման տեղեկագրում:

«Իսկ որքա՞ն է վոլֆրամի տեսակարար կշիռը»:

- Ոչինչ չգիտեմ: Պետք է նայել մետաղների տեսակարար կշիռների աղյուսակը, որը սովորաբար գետնեղված է լինում ֆիզիկայի դասագրքի վերջում,- պատասխանում է էյնշտեյնը:

«Ե՞րբ»... «Ինչքա՞ն ժամանակ»... «Ինչո՞ւ»... «Ինչպիսի՞ն է»... «Ո՞վ և որտե՞ղ»...

Այս ձևով նա կարդաց բոլոր հարցերը և կատակով նկատեց.

- Ես չեմ սպասում, որ Դուք մերժեք ինձ: Ես ինքս ետ եմ վերցնում իմ թեկնածությունը:

- Այնուամենայնիվ, ես Ձեզ կընդունեի ինձ մոտ,- նույնպես կատակով պատասխանեց Էդիսոնը: - Դուք թեև չգիտեիք հարցերի պատասխանները, բայց գիտեիք, թե ինչպես կարելի է որևէ բան իմանալ, ուրեմն՝ Դուք այն գիտեք:

(Ըստ Յարոսլավ Գոլովանովի)

110. Առանձնացրե՛ք դերանունները՝ նշելով դրանց տեսակը:

Այդուհանդերձ, ինչ-որ, միայն, համայն, այնուամենայնիվ, ամենևին, այսօրինակ, ոչ ոք, միանման, ամբողջ, ամբողջովին, բոլոր, բոլորովին, հիմնովին, երբևիցե, մի քանի, այլ, այլուր, իսկույն, այդչափ, գրեթե, միասին, այդտեղ, դեմուդեմ, համայն, միանգամից, ամենայն, մասամբ, ինչ-ինչ, այնինչ, երբ, անմիջապես, ողջ, ոչ մի, այս, անպայման, թե, մյուս, ես, այդօրինակ, քո, ինչո՞ւ, մեկը, ինչպես, բազմիցս, ոմն, ոչ ոք, անշուշտ, գեթ, յուրաքանչյուր, երեկ, շատ, այսպիսի, սույն, նրանք, ոչ միայն, որոնք, իհարկե, միմյանց, բայց, որևէ, ընդհուպ, ինչևիցե, իրար:

111. Տրված դերանունները դասակարգե՛ք ըստ տեսակների:

Ողջ, այդպես, ինչո՞ւ, ամեն մի, նույնպես, մեկը, քանի՞երորդ, ո՞վ, այստեղ, ի՞նչչափ, ոչ մի, նրանք, այսքան, որքան, ինչքան, յուրաքանչյուր, միմյանց, ոչ ոք, այսինչ, մյուս, ոմն, դու, ամեն մեկը, այս, այլ, որևէ, միևնույն, ինքս, երբ, նույն, որտեղ, մի, քանի՞, ամբողջ, ես, սա, համայն, իրար, մյուս, ուր, ինչպես, ամեն ոք, ամենայն, ինչ-որ, ինչ-ինչ, որոշ, որքա՞ն, ուրիշ, այլ, սույն, ոչինչ, այն, ինչ :

անձնական	ցուցական	փոխադարձ	հարցական	հարաբերական	անորոշ	որոշյալ	ժխտական

112. Տրված դերանունները խմբավորե՛ք ըստ հոլովվելու հատկանիշի : Որոշե՛ք հոլովման տեսակը:

Այս, բոլոր, մյուս, միևնույն, ոմն, նույնպես, ուրիշ, այլ, երբևէ, ողջը, մեկմեկու, ինչու, ես, դուք, սա, ոչինչ, երբ, միմյանց, ինքը, նրանք, ովքեր, ոմանք, ամենքը, ուր, ինչպես, մի, իրար, յուրաքանչյուր, ոչ մի, սույն, միմյանց, որտեղ, իրենք, ով, այնքան, նույնքան, սրանք, ես, ոչ ոք, երբ, դա, այս, բոլոր, ուր, ոմն, ողջ, այն, այնտեղ, քանիսը , ինչպիսի, ամեն մի, ամեն ինչ, ինչ-ինչ, ինչ-որ, քանի, մենք, որ, որտեղ, ամեն մեկը, համայն, յուրաքանչյուր

ոք, որոշ, ողջ, այսքան, այսչափ, նույն, ինչու, ինչ, մի քանի, ուրիշ, ոչ ոք , այդպիսի, այդ, այսչափ, որ, ուր, ամեն ոք:

անվանական	
դերանվանական	
չհոլովվող	
հոլովման պակասավոր հարացույց ունեցող	

113. Տրված բառացանկից առանձին շարքերով դո՛ւրս գրեք գոյականին, ածականին, մակբային և թվականին հարաբերակից դերանունները՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով տեսակը:

Այդ, ամբողջ, ինչ-որ, միևնույն, համայն, այսպես, ամեն մի, այսչափ, ողջ, որերորդ, որևէ, որևիցե, ոչ ոք, միմյանց, քանի՞, դա, երբևիցե, մի քանի, ուր, այդքան, այնպես, այնտեղ, ամեն ոք, ոչինչ, ամենայն, այսքան, սույն, ամենքը, ինչ-ինչ, այսինչ, մի երկու, ոչ մի, ես, այսպիսի, նույնքան, ինչպես, ինչո՞ւ, ոչինչ, որտեղ, այլ, յուրաքանչյուր, մյուս:

114. Գրե՛ք առարկայանիշ, ածականանիշ, մակբայանիշ և թվականանիշ հինգական դերանուն՝ նշելով յուրաքանչյուրի տեսակը:

115. Տրված հատվածներից դո՛ւրս գրե՛ դերանունները, դասակարգե՛ ըստ տեսակի և ըստ հոլովման. որոշե՛ք դրանց պաշտոնը:

Ա. Մի վայրկյան է մտածում Գրուշին, և այդ մի վայրկյանը վճռում է բախտը, Նապոլեոնի բախտը և ամբողջ աշխարհի: Դա՛ այդ մի վայրկյանը, կանխորոշում է 19-րդ դարի ամբողջ ընթացքը, և ահա անմահության երաշխիքը. այդ վայրկյանը դանդաղում է շատ ազնիվ և նույնքան սովորական մարդու շուրթերին, իսկ կայսեր չարաբաստիկ հրամանը պարզ ու ակներև թրթռում է թուղթը նյարդայնորեն ճմռթող նրա ձեռքերում:

Երկուսն էլ սպառել են իրենց ուժերը, և կհաղթի նա, ով առաջինը կստանա համալրում: Նրանցից ամեն մեկը կարող էր մեղադրել մարշալին, պարծենալ թե, ինքը ուրիշ, ավելի լավ էլք էր առաջարկում: Բայց ոչ ոք սիրտ չի անում, ոչ ոք չի ուզում այդ ասել: Անչափելի վիշտը փականք է դրել նրա շուրթերին:

Բոլոր քաղթենիական առաքինությունները հուսալի վահան են խաղաղ ընթացող առօրյա պահանջների հանդեպ. զգուշավորություն, ջանասիրություն, ողջախոհություն: Այս նույն հատկանիշներն անօգնական ու անհարկավոր են դառնում, հալվում, անէանում են այն մի վայրկյանի մեջ, որ բացահայտվում է միայն հանճարի առաջ և նրա մեջ է որոնում իր մարմնացումը: Արգահատանքով նա հեռու է վանում փոքրոգի մարդուն և միայն անվեհերին է բարձրացնում երկինք իր հրեղեն աջով ու նրան հերոսների կաճառը դասում:

Բ. Այլևս չկա տարակուսանք. նրանք տեսել են ծովը, բայց հիմա հարկավոր է ավի իջնել, ձեռքը սուզել խոնավ տարերքի մեջ, դիպչել ջրին, ձեռք տալ նրան, զգալ նրա համը և հիանալ նրանով: Ոչ ոք չի նախատի հաղթողին, եթե նա ծառայությունները գնահատելիս մյուս ռազմիկների հետ միասին բաժին հանի նաև իր շանը՝ ըստ երևույթին տարաբախտ բնիկներին պատառ-պատառ անելու համար: Բայց ճակատագիրը չափազանց բարեհաճ չի լինում նույնիսկ իր սիրելիների հանդեպ. աստվածները մահկանացուներին հազվադեպ են շնորհում մի անմահական մեծագործությունից ավելին: Եվ այսպես, Բալբոան նույնպես

պատրաստությունն է տեսնում դեպի անմահություն փախուստ տալու համար: Նրա երկրորդ սխրանքը առաջինից ավելի նշանակալի էր թերևս, բայց դա նույնպիսի փառք չբերեց նրան, քանի որ պատմությունը մշտապես հռչակում է հաջողության հասնողներին: Մի քանի օր անց Բալբոային իր մերձավոր զինակիցների հետ միասին տանում են կառավարան: փայլատակում է դահճի սուրը, և մի ակնթարթում առմիշտ խավարում են աչքերն այն մարդու, որ առաջինն էր մարդկության պատմության մեջ տեսել մեր հողագունդը ողողող գույգ օվկիանոսները:

(Ըստ Ս. Ցվայգի)

Գ. Ես նրանց շնորհակալություն էի հայտնում և խնդրում անել ևս մի փորձ, և նրանց որոշ առաջարկություններ արդեն կարելի էր ընդունել. նրանք այնպիսի մարդու անուն էին տալիս, որին ես ինքս էլ կընտրեի: Արտահայտելով իմ երախտագիտությունն իրենց օգնության համար՝ ես այդ պաշտոնում նշանակում էի հենց այդ թեկնածուին և թույլ էի տալիս նրանց տեղի ունեցած նշանակման վաստակը վերագրել իրենց: Ես նրանց ասում էի, որ այդպես վարվեցի նրանց հաճույք պատճառելու համար, և այժմ իրենց հերթն է նույնը անել ինձ: Նրանք ստիպված էին լինում այդ անել, որն արտահայտվում էր իրենց կողմից այնպիսի արմատական բարեփոխումներով, ինչպիսիք էին քաղաքացիական ծառայության և մենաշնորհի իրավունքի և արտոնությունների հարկերի մասին օրինագծերը:

Մի քանի տարի առաջ Նյու Բրանսուիկից մի մարդ այդ նույն մեթոդը կիրառեց իմ հանդեպ և հասավ այն բանին, որ դարձա նրա պատվիրատուն: Այն ժամանակ ես պատրաստվում էի գնալ այնտեղ՝ ծուկ որսալու և նավակով զբոսնելու: Այդ պատճառով էլ նամակով դիմեցի տուրիստական գրասենյակ՝ տեղեկություններ ստանալու համար: Իմ ազգանունը և հասցեն, անկասկած, ընդգրկված էին այդ գրասենյակի կողմից հրապարակվող հնարավոր պատվիրատուների ցուցակում, որովհետև ինձ տառացիորեն ծածկեցին տասնյակ նամակներով, որոնք ստացվում էին տուրիստական ճամբարներից և որոշ ուղեկցողներից: Ես բոլորովին շփոթվել էի և չգիտեի ինչ անել: Եվ այստեղ տուրիստական մի ճամբարի տնօրեն խելամիտ քայլ արեց. նա ինձ ուղարկեց Նյու Յորքում ապրող այն մարդկանց ազգանուններն ու հեռախոսի համարները, ովքեր իր մոտ ինչ-որ ժամանակ հանգստացել էին, և խորհուրդ տվեց զանգահարել նրանց՝ անձամբ պարզելու համար, թե ինքն ինչ կարող է առաջարկել իր պատվիրատուներին:

(Ըստ Դ. Քարնեգիի)

116. Դ ո՛րս գրեք դերանունները, որոշե՛ք տեսակը և քերականական կարգերը. ո՞ր խոսքի մասերի կիրառություններով են հանդես եկել դրանք:

Նա կարդում է, և ինքն էլ մնում է զարմացած. սա հենց այն է, ինչ հարկավոր է: Սկիզբը դրված է: Հիմա պետք է նրան համապատասխան ռիթմ ու մեղեդի գտնել: Պահարանից հանում է ջութակը և աղեղը տանում լարերի վրայով: Եվ, օ՛ հրաշք, առաջին իսկ տակտերից նրան հաջողվում է գտնել մեղեդին: Նա մինչև իսկ չի էլ ստեղծագործում, չի էլ մտածում ու հորինում. այդ նշանավոր օրը շուրթից շուրթ անցած խոսքերը հանգավորում է միայն ու տեղադրում մեղեդու ռիթմի մեջ: Եվ նա իր երգում արտահայտեց, պատմեց, փառաբանեց այն ամենը, որ այդ օրն ապրել և վերապրել էր ողջ ֆրանսիական ժողովուրդը: Պատուհանի փակ փեղկերից ներս է թափանցում փողոցի ռիթմը: Այդ ռիթմը

դրվագում են քայլերի ելած գինվորները, թնդանոթների դղողյունը: Կարող է պատահել, որ նույնիսկ ինքը՝ Ռուժեն չէ իր սուր ականջով լսողը, այլ ժամանակի ոգին, որ միայն մի գիշեր թափանցել է մարդու անցավոր, մահկանացու կեղևի մեջ, և նա՝ այդ ոգին է որսում այդ ռիթմերը:

Ավելի ու ավելի հնազանդ՝ մեղեդին ենթարկվում է բերկրալի տակտին, որ դրվագում է բովանդակ ֆրանսիական ժողովրդի սիրտը: Ասես ինչ-որ մեկի թելադրանքով Ռուժեն շտապ-շտապ թղթին է հանձնում խոսքերն ու ձայնանիշերը՝ բռնված մի խենթ պոռթկումով, որ մինչ այդ անծանոթ էր այդ մանր քաղքենական հոգուն:

Այդ ամբողջ տենդագին հուզումն ու ներշնչանքը, որ ոչ թե հատուկ էին իրեն, այլ պարզապես սքանչելիորեն համակել էին իր հոգին, կենտրոնացան մի կիզակետում և հզորագույն պոռթկումով այդ ողորմելի երաժշտասերին բարձրացրին իր համեստ ձիրքից վիթխարիորեն վեր, վառվռուն ու շողշողուն հրթիռի պես հասցրին մինչև հեռու աստղերը:

Եվս մի քանի տող, և այդ անմահ երգը՝ ստեղծված ներշնչանքի մի բռնկմամբ, խոսքի ու մեղեդու այդքան կատարյալ ներդաշնակությունը մինչև լուսաբաց հասնում է իր ավարտին: Ռուժեն մարում է լույսը և փռվում անկողնուն: Ինչ-որ մի զորություն համբարձեց իրեն հոգեկան պայծառատեսության անծանոթ մի բարձունքի, իսկ հիմա նույն այդ ուժը մատնեց բութ ուժասպառության: Ասենք, հենց այդպես էլ եղավ իսկապես. ստեղծագործողը, հանձարը նրա մեջ մեռավ վերստին: Բայց դրա փոխարեն սեղանին դրված է ավարտված գործը:

(Ըստ Ս. Ցվայգ)

117. Տրված նախադասություններից դուրս գրեք դերանունները՝ նշելով դրանց տեսակը (1. անձնական, ցուցական և այլն, 2. առարկայանիշ, ածականանիշ, մակաբայանիշ):

1. Տխրամած կղզին և նրա բնակիչները հետզհետե ազդեցին հոգով ու մարմնով վիրավոր արքայի վրա: 2. Նրա դրությունը օրեցօր ավելի էր վատթարանում: 3. Թագավորը օր օրի նիհարում ու դալկանում էր, ինչպես հինավուրց կաղնին, որի արմատները կրծում են որդերը: 4. Ձորն այստեղ բուրբուկին նեղ էր. ժայռերն ընդհուպ մոտեցել էին իրար և թողել միայն մի փոքրիկ անցք, որի միջով խեղդված հոսում էր գետը: 5. Ամեն անգամ, երբ ինչ-որ թախծագին կարոտով լցվում է հոգիս, և մի անհայտ, անըմբռնելի զգացում սողոսկում է սիրտս, իմ հայրենի եզերքի ոսկեգօծ շավիղները զարթնում են իմ մեջ, ու ես մտովի քայլում եմ հարազատ վայրերով, ինչպես երագում, ինչպես վաղուց, շատ վաղուց՝ իմ ոսկեծամ մանկության զվարթ օրերին: 6. Շուկայի ամենագրավիչ ու գրգռիչ վայրը մրգավաճառների մասն էր, ուր անասելի եռուզեռ, աշխույժ էր տիրում: 7. Վաճառասեղանների վրայից, գետնին միմյանց սեղմած կողովներից զվարթ ժպիտով քեզ էին նայում մրգերի բուրբ տեսակները: 8. Շուկա մտնելով՝ ես անմիջապես շտապեցի մրգավաճառների մոտ և դեռ հեռվից նկատեցի, որ այնտեղ ինչ-որ տարօրինակ բան է կատարվում:

117. Դուրս գրեք անձ ցույց տվող բառերը, առանձնացրե՛ք անձնական դերանունները և նշե՛ք նրանց իմաստային, ձևաբանական ու կիրառական առանձնահատկությունները:

Մանուկ հասակից Արքիմեդը բարեկամանում է գրքերի աշխարհի հետ և ամբողջ կյանքում չի դադարում հիանալ նրանց հավերժական օրենքների խստիվ տրամաբանությամբ, որոնց համեմատ մարդկային օրենքները անկատար են, սին ու

անցողիկ: Սակայն Արքիմեդը լքեց Ալեքսանդրիան, ուր ամենագոր պտղունեոսները, մի աստանդական փիլիսոփայի խոսքերով ասած, «բտում էին ձեռնասուն գրքային որդերին», որոնք անվերջանալիորեն վիճում էին «մուսաների թռչնանցում», ուր «մեխանիկան արհեստավորական գործ էր և վայել ստրուկին»;

Սիրակուզայում չար լեզուներն ասում էին, որ Արքիմեդը մոռանում էր ուտել և գծագրում էր ամեն տեղ՝ մոխրի, ավազի, նույնիսկ իր մարմնի վրա, հազվադեպ էր լինում բաղնիքում... Բայց լոգանք ընդունելիս է նրա ուղեղում հանկարծ առկայծում հեղուկի մեջ ընկղմված մարմնի վրա ներգործող՝ դուրս հրող ուժի գաղափարը...

Այսօր անհնարին է առանց հիացմունքի ու զարմանքի կարդալ Պլուտարքոսի այն տողերը, որոնք պատմում են հռոմեացի զորավար Մարցելիուսի կողմից Սիրակուզան պաշարելու մասին... «Ի՛նչ արած, մենք ստիպված պիտի լինենք դադարեցնել պատերազմը երկրաչափի դեմ», - ոչ այնքան ուրախ սրամտել է Մարցելիուսը... Շատ տարիներ անց, նայելով Արքիմեդի՝ երկնային լուսատուների բարձրագույն մոդելին, Մարկոս Տուլիոս Ցիցերոնը կասի. «Այս սիցիլիացին օժտված էր մի հանձարով, որին, թվում է, մարդկությունը ի վիճակի չէր հասնելու»;

Արքիմեդը պատվիրել էր իր շիրմաքարին փորագրել երկրաչափական իր հայտնագործությունների խորհրդանիշները՝ գունդ և գլան: 137 տարի հետո նույն Ցիցերոնը Աքրոդիսյան դարպասի մոտ գտավ նրա շիրմաքարը... Հետո շիրիմը նորից մոռացվեց և այս անգամ ընդմիշտ: Սակայն Արքիմեդի անունը մնաց: Ու հարյուրամյակներ անց էլ սերունդները միշտ կլսեն նրա ցնծալից, հպարտ բացականչությունը՝ գիտության վսեմ մարտակոչը, նշանաբանը բոլոր նրանց, ովքեր որոնում են՝ «Է՛վրիկա»...

(Ըստ Յարոսլավ Գոլովանովի)

()

117. Որոշե՛ք կապերի հետ գործածված դերանունների հոլովները:

1. Ա՛խ, մայրիկ ջան, ոտքերս չէ, Սիրտս է մրսում առանց քեզ /ՀՇ/: 2. Ա՛խ, իմ ժողովուրդ, Ես դեռ չկայի, Որ քեզ պես ես էլ քեզ հետ տոկայի՝ ծալվելու պատրաստ մեջքդ գրկելով /ՊՍ/: 3. Ու ես անվերջ Ինքս եմ խոսում իր փոխարեն և իմ տեղ՝ Այն մարդու պես, Որ ինքն իր հետ մենակ շախմատ է խաղում /Ն./: 4. Նրան, ով սիրել է իրենց մեկտեղ- Մեկին՝ իմ պես, Մեկին՝ ինձ պես, Իսկ երրորդին էլ՝ ինձ նման /Ն./: 5. Եվ ո՛ւր էլ քեզնից հեռանամ, անգի՛ն, կրկին քայլերս քեզ մոտ են բերում /ԳԷ/: «Ես կերգեմ քեզ համար..., քո մասին..., քո փոխարեն», - ասաց մտքում, և մատների տակից մի հնչյուն թև առավ /ՄԳ/:

118. Դերանունները դրե՛ք պահանջված հոլովներով:

Լա/ մոտ, /դու/ հետ, /նրանք/ մեջ, /նա/ կողքին, /ես/ համար, /դուք/ մասին, /մենք/ դեմ, բացի /դու/, /նա/ համար, /ես/ շնորհիվ, առանց /մենք/, /ես/ նկատմամբ, /ես/ պես, բացի /նրանք/, հանուն /դուք/, դեպի /դու/, /նա/ չափ, /ես/ վրա, /դու/ փոխարեն, /ինքը/ համար:

119. Կազմե՛ք նախադասություններ՝ *ես, դու, նա, ինքը, մենք, դուք, նրանք, իրենք* դերանունները գործածելով *մոտ, վրա, հետ, պես, չափ, համար, հոգուտ, հանձին, ի դեմս, հանուն* կապերի հետ:

120. Դու՛րս գրե՛ ստացականության իմաստ արտահայտող դերանունները. հայ քերականագիտության մեջ ի՞նչ տեսակետներ կան անձնական դերանունների փոխանվանական կիրառության վերաբերյալ:

1. Երբ աչքերն են սառում, Ասում են, թե՛ այ-այ՝ մարդ է գալու: ...Իմոնք էլ են սառում: Սակայն դու չես գալու: Դու չես կարող: Գիտեմ /ՊՍ/: 2. Ողջ երեկոն քոնն էր կարճես, Ողջ երեկոն՝ իր բույրերով ու ջերմությամբ /Ն/: 3. Թե եղբայրների՝ իմոնց պես անգեն, խեղդվեին այսպես, Ես պատերազմի կելնեի իսկույն, կփրկեի ձեզ: Թե ձեր անհամար գյուղերն այրվեին՝ իմոնցի նման, Ես հրդեհամար ծով կդառնայի՝ հրդեհում համայն: Թե ձեր քաղաքներն իմոնցի նման ամայացվեին, Այնպես կանեի, որ մոխիրներից վարդեր բացվեին... /ՀՇ/: 4. Դու ուզեցիր, որ ես քեզ թողնեմ ու գնամ, Բայց և քոնը լինեմ: Քեզ ուրիշին տվիր և չուզեցիր անգամ, որ ես իմը լինեմ /ՀՍ/: 5. Քոնը իմն էր, իմը քոնն էր, Հայաստա նս, Դու միակն էիր, ինչպես Հայաստանս /Ն/: Նա պիտի մեր առաջին ու վերջին սերը լինի, Ի՞նչ ունենք էլ աշխարհում, որ այսքան մերը լինի /Ն/: 6. Հայաստան աշխարհ, դու մերը եղար և մերը չեղար, Դրա համար էլ մենք քեզ սիրեցինք սիրահարի պես /ՍԿ/: 7. Այն ո՞վ է ասում, որ Արարատը ձերն է ու ձերը, Անհեթեթ պատրանք, քարտեզն է ձերը /Ն/:

121. Խմբավորե՛ք ցուցական դերանունները՝ ըստ աղյուսակում տրված բաժանումների:

Առարկա մատնանշող	Առարկայի հատկանիշ	Գործողության հատկանիշ

122. Նշե՛ք, թե որ խոսքի մասին է հարաբերակից ցուցական դերանունների շարքերից յուրաքանչյուրը:

- ա/ սա, դա, նա
- բ/ այս, այդ, այն
- գ/ սույն, նույն, միևնույն, մյուս
- դ/ այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի
- ե/ այսպես, այդպես, այնպես, նույնպես
- զ/ այսքան, այդքան, այնքան, նույնքան
- է/ այսչափ, այդչափ, այնչափ

123. Գտե՛ք ցուցական դերանունները՝ նշելով դրանց ձևաբանական-ձևակազմական հատկանիշները:

Ա. 1. Մենք դուրս ենք եկել նույն քարանձավից Ամե՛ն ակնթարթ: Նույն քարանձավն է մեզ հետապնդում Մեր ներսի՛ց արդեն /ՊՍ/: 2. Ասել-ասում են, թե լավ է այնտեղ, Որտեղ մենք չկանք: Իսկ ես պնդում եմ, որ լավ է այնտեղ, Որտեղ մենք չենք կարող չլինել ու կա՛նք /Ն/: 3. Դու այնքան քնքուշ ես նվագում, Եվ այնպես մեղմորեն հուզում ես, Ինձ մոտիկ է այնքան հուզումդ, Դու այնպես քնքուշ ես նվագում /ԳԷ/: 4. Եղկելի էր որքան նստուկով նվագող քերթողն այն - այնքան Հարգանք էր ներշնչում սրա կերպարանքը ամբողջ նայողին... /ԵՉ/:

Բ. Մի անգամ «ատոմային ռուբլի հայր» Ռոբերտ Օպենհայմերին խնդրեցին այնպիսի բան պատմել Էյնշտեյնի մասին, որն իրենց հայտնի չէ: Մի քիչ մտածելուց հետո նա ասաց.

- Այս դեպքը պատահել է Փրինսթոնի համալսարանում: Քննության նախօրյակին ես էյնշտեյնին հարցրի, թե ինչ հարցեր են լինելու քննաշրջանում:

- Ես պետք է նույն հարցերը տամ, ինչ որ անցյալ տարի:

- Այս դեպքում Դուք կստանաք ճիշտ նույն պատասխանները:

- Այդպես մտածելով՝ Դուք սխալվում եք, սիրելիս: Միևնույն հարցերի պատասխանները չպետք է նույնը լինեն: Այս մեկ տարում գիտությունն այնքան շատ է փոխվել, այնպես է փոխվել, հարստացել այնպիսի հայտնագործություններով ու դրույթներով, որոնք փոխել են այն ժամանակ տրված հարցերի այսօրվա պատասխանները:

(Ըստ Յարոսլավ Գոլովանովի)

124. Համապատասխան հարցերով խմբավորե՛ք գոյականներին, թվականներին, ածականներին ու մակբայներին հարաբերակից ցուցական դերանունները: Առանձնացրե՛ք այն ցուցական դերանունները, որոնք հանդես են գալիս խոսքիմասային տարբեր արժեքներով:

125. *Սա, դա, նա* դերանունները գործածե՛ք նախադասության մեջ թե՛ անձի և թե՛ իրի նշանակությամբ:

126. *Այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ* դերանուններն օգտագործե՛ք նախադասությունների մեջ այնպես, որ մի դեպքում առարկայի հատկանիշ ցույց տան, մյուս դեպքում՝ գործողության, երրորդ դեպքում՝ հատկանիշի հատկանիշ՝ նշելով, թե որ խոսքի մասի իմաստով են գործածվել դրանք:

127. *Այս, այդ, այն* ցուցական դերանունները ո՞ր խոսքի մասի իմաստով են գործածվում հետևյալ օրինակներում:

- Խոսի՛ր միայն այն մասին, ինչը քեզ համար պարզ է, այլապես լռի՛ր:
- Գրողի գլխավոր արժանիքն այն է, որ իմանա, թե ինչ չպետք է գրել:
- Բանականությունը բարձրագույն ընդունակությունն է, բայց այն ձեռք է բերվում միայն կրքերի նկատմամբ տարած հաղթանակով:
- Այն ամենը, ինչ գեղեցիկ է, բարոյական է:
- Խուսափի՛ր այն բավականությունից, որը թախիծ է ծնում:
- Ուսուցիչն աշակերտների հետ պետք է լինի եղբայրական սիրով, և այդ սերը պետք է զգան աշակերտները:
- Մարդիկ միշտ այն չեն լինում, ինչ թվում են:
- Մեր ներսում ապրող օրենքը կոչվում է խիղճ: Խիղճն իսկապես մեր արարքների հարաբերակցությունն է այդ օրենքներին:

(Ըստ Ս. Գրիգորյանի)

128. Կազմե՛ք հինգական նախադասություն՝ *այս, այդ, այն* ցուցական դերանունները գործածելով ածականական (հատկանշային) և գոյականական առարկայական նշանակությամբ:

129. Գտե՛ք փոխադարձ դերանունները, բացատրե՛ք նրանց իմաստային, ձևաբանական առանձնահատկությունները:

1. Այսպես գնաց Հայրիկը, նա էր ցրված հայերին մի տեղ ժողովել և այնպես բարձր կապերով կապել միմյանց հետ, որ մեզ թվում էր, թե մենք բոլորս մի մեծ ընտանիքի զավակներ ենք /ԱԻ/: 2. Ցածում ելնում են օրոցքի հովտից, Իրար են գրկում ցածում մարդացած, Մեկմեկու համար մեռնում են վշտից, Վերկից նայում, ժպտում է աստված: Ցածում իրար են անհաշտ հոշոտում, Ցածում իմաստուն ու խելագարված, Իրար հոշոտում, իրար են պաշտում. Երկնքից տեսնում՝ ապշում է աստված /ՀՇ/: 3. Կանգնել են մայր ու որդի իրար դիմաց ու անբառ, Իրար դիմաց ու անշարժ, ասես գամված մեկմեկու /ՍԿ/: 4. Հայրը ինչպես մըռայլ մի ամպ, Աղջիկն անուշ մի լուսին, Ամպ ու լուսին իրար փարված՝ Դուրս են գալիս միասին /ՀԹ/: 6. Կախարդական մի շղթա կա երկնքում՝ Աներևույթ, որպես ցավը խոր հոգու, Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն՝ Օղակելով լույս աստղերը մեկմեկու: Մեղմ գիշերի գեղագանգուր երազում Այն աստղերը՝ որպես մոմեր սրբազան, առկայծում են կարոտագին, երազուն՝ Հավերժաբար իրար կապված և բաժան: Ես ու դու էլ շղթայված ենք իրարու, Կարոտավառ երազում ենք միշտ իրար, Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու, Աստղերի պես և՛ հարազատ, և՛ օտար /ՎՏ/: 7. Քեզ թվում է, որ մենք իգուր հանդիպեցինք մեկմեկու,- Ո՛չ մեր սրտում երջանկություն, ո՛չ մեր կյանքում՝ մեծ բեկում /ՊՍ/: 8. Արի՛ ինքներս մեզնից բարձրանանք, Թույլ տանք արարքներ ինքնաժխտումի, Փոխադարձաբար իրար նեղացնենք Ու վիրավորենք փոխադարձաբար /ՊՍ/:

130. Հարցական դերանունները խմբավորե՛ք ըստ խոսքիմասային առնչությունների:

Ա. 1. Ինչի՞ց, տե՛ր աստված, ինչի՞ց է, ինչո՞ւ, Որ ամենից շուտ և ամենից շատ Իրեն՝ մարդու մեջ հենց մարդն է կորչում... Ինչպե՞ս, տե՛ր աստված, Մենք ինչպե՞ս անենք, Որ չտապակվենք անարժեքությամբ /ՊՍ/: 2. Քանի՞ չասված շշուկներ խեղդվեցին հողի տակ, Քանի՞ սիրող հայացքներ դեռ չբացված՝ փակվեցին /ՍԿ/: 3. Իր ի՞նչ գործն է, թե կա սահման, ու կա վեճ, իր ի՞նչ գործն է, թե կան ռումբեր ու հրթիռ /Ն/: 4. Ո՞վ է տվել նրան՝ այս ծերունուն վսեմ, Այս ժպիտը անչար, այս հայացքը վսեմ, Ո՞վ է տվել նրա երգին կախարդական Այս խոհերը խորունկ, իմաստությունն այս ջինջ /ԳԷ/: 5. Ա՛խ, կարոտներս այս խենթ Ինչո՞ւ են սիրտն իմ տանջում, ո՞ւր են, ո՞ւր են ինձ կանչում, Ո՞ւր են տանում, չգիտեմ /ՎԴ/: 6. Ե՛րբ և ո՛ր ժամանակ, հայտնի չէ, բայց անհիշատակ դարերից սկսած՝ մարդու էության մեջ տիեզերական գաղտնիքներից մի հյուլե էր ընկել, որ աճեց..., մեծացավ, անողորքությամբ կանգնեցրեց մարդու կյանքի գնացքը և հարցրեց. «Ինչո՞ւ ես ապրում, ո՞ւր ես գնում և ինչո՞ւ, ո՞վ մարդ» /ԱԻ/: 7. Ո՞վ գիտուններդ և իմաստուններդ, ասացե՛ք՝ ինչի՞ համար է ապրում մարդը, ի՞նչն է կյանքի նպատակը, որտեղի՞ց ենք գալիս մենք, ո՞ւր ենք գնում մենք, ի՞նչ է նյութը, ի՞նչ է ուժը, և ինչո՞ւ են դրանք, պատասխանեցե՛ք ինձ, ասացե՛ք, ի՞նչ է տիեզերքը, ինչո՞ւ ստեղծվեց նա, ե՛րբ է նրա սկիզբն ու վախճանը, և, վերջապես, ի՞նչ է ժամանակն ու տարածությունը, ինչո՞ւ են դրանք /ԱԻ/:

Բ. Հույներն են դրել գիտության առաջին հիմնաքարերը... Ինչպես ամեն մի պատկեր, սա ևս կախված էր նրանից, թե որտե՛ղ է գտնվում դիտողը, որտեղի՞ց է նայում աշխարհին և ինչպե՛ս է նայում: Իրոք, որտե՞ղ է պետք տեղադրել դիտողին, որ նա կառուցի աշխարհի

իսկական պատկերը: Հին հույների համար տիեզերքի կենտրոնը Երկիրն էր, որի շուրջը պտտվում էին բոլոր երկնային մարմինները: Սակայն Կոպեռնիկոսի «հրամանով» կանգ առավ արեգակը, և սկսեց շարժվել Երկիրը: Պարզ դարձավ, որ մարդը պետք է ավելի համեստ լինի իր հավակնությունների մեջ և իրեն ու իր օրրանը՝ Երկիրը, չհամարի աշխարհի կենտրոնը: Մշուշը հետագայում էլ ավելի է թանձրանում, երբ պարզվում է, որ Արեգակն էլ մի շարքային աստղ է, Տիեզերքի կենտրոնում չէ և ամենևին էլ անշարժ չէ: Մարդը վտարվեց նաև Արեգակի կողմից: Նա որտե՞ղ պետք է հանգրվանի, ե՞րբ պետք է գտնի հենման կետ, ո՞րն է այն: Ինչքա՞ն ժամանակ է անցել նրա ծնունդից, և դեռ ինչքա՞ն մարդը պետք է իրեն միայնակ զգա Տիեզերքում: Որտեղի՞ց պետք է սկսի կառուցել աշխարհի իսկական պատկերը: Իսկ կա՞րողյոք այն: Ինչո՞վ չափել ժամանակը, ի՞նչ միավոր ընտրել տարածությունը չափելու համար: Ինչո՞ւ է երերում գիտության ոտքի տակի հողը, ինչո՞ւ է խորտակվում աշխարհի հին պատկերը... Մի՞թե Խավարն է պատել Տիեզերքն այս մեծ... Բայց...«Եղիցի՛ լույս...»:

(Ըստ Ս. Ավետիսյանի)

131. Առանձին շարքերով գրե՛ք հարցական դերանուններ, որոնք արտահայտում են հարցում.

ա/ անձի

բ/ իրի

գ/ առարկայի հատկանիշի

դ/ գործողության հատկանիշի վերաբերյալ:

132. Առանձին շարքերով խմբավորել գոյականներին, ածականներին, թվականներին և մակբայներին հարաբերակից հարցական դերանունները:

133. Որոշե՛ք, թե *ո՞վ* և *ի՞նչ* հարցական դերանունները ի՞նչ կիրառություններով են հանդես եկել տրված օրինակներում:

1. Ապիկար՝ մարդիկ, ստրուկ ու վախկոտ, ո՞վ տվեց սուրը նմանիդ ձեռին, Ո՞վ տվեց նրան վրեժի իրավունք իշխել, խողխողել իր նմաններին /ԱԻ/: 2. Եվ ո՞վ են մարդիկ ...աղվեսների հոտ, եսամոլ անհուն, ուրացող մատնիչ /Ն/: 3. Մարդիկ ի՞նչ են որ ... դիմակված դևեր, ժանիքներ ունեն, անտես ձիրաններ /Ն/: 4. Քայլի՛ր քարավան, ի՞նչ ենք մենք թողել, որ կարոտանքով ցանկանք մեր դարձը /Ն/: 5. Եվ ինչպե՞ս և ո՞ւմ աղոթեմ Անել բանտում /ՎՏ/: 6. Ո՞վ ես դու, ո՞վ ես,- բնավ չգիտեմ /Ն/: 7. Սիրտ իմ, այդ ո՞ւմ ես դու իզուր կանչում, Տե՛ս՝ գիշերն իջավ, աստղերը մեռան /Ն/: 8. Ումի՞ց սպասեմ երջանկության սուտ /Ն/: 9. Աշո՛ւն, քեզ ի՞նչ քնքշությամբ, Ի՞նչ խոսքերով երգեմ ես /Ն/: 10. Եվ ինձ ի՞նչ մնաց այն լուսավառ ու պայծառ օրերից: Ի՞նչն է վանում ինձ այդ տնից, չեմ կարող ասել: Աշխարհն անգութ ու անհավատ է, Եվ ի՞նչ է սերը-անգոր մի մանուկ /Ն/: 11. Ինչո՞վ ես մարելու պարտքերդ, չէ՞ որ դու ոչինչ չունես: /Ն/: 12. Ես ի՞նչ անեմ, որ հոգիս չհեծկլտա կարոտից /ԵԶ/: 13. Խոստանալով զարուն ու զարնանային հմայք -Այն ո՞վ է ինձ կանչում, այն ո՞վ /Ն/: 14. Էլ ո՞ւմ համար- էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգի հիմի Սիրտս՝ լցված տարիների սեղմ արձիճով ու կապարով /Ն/: 15. Մեղավորը ես չեմ, Իսկ թե ո՞վ է, քե՛զ ինչ: Ինչո՞վ պիտի օգնես, Ի՞նչ կփոխես ՊՍ/ 16. Ի՞նչ հրաշագործ նայվածք ունես

դու, Ինչի նայում ես՝ քե՛զ ես նկարում /ն/ Ի՞նչ լավ է, որ դու Չես ապրել սիրո արվարձաններում Եվ միայն նրա կենտրոնը գիտես /ն/ 17. Ի՞նչ, հեռախոսն է զանգում, Անո՛թ քեզ, Որ դեռ կարող ես լսել զանգի ձայն /ն/:

134. Ընդգծե՛ք հարաբերական դերանունները՝ նշելով նրանց կիրառական առանձնահատկությունները:

«Հնազանդվելով իմ անհագուրդ ձգտումին՝ մուր ժայռերի մեջ թափառելիս ես մոտեցա մի մեծ քարանձավի մուտքի, որտեղ մի վայրկյան մտախոհ կանգ առա... Հանկարծ իմ մեջ երկու զգացում արթնացան՝ վախը և ցանկությունը», - այսպես է գրել Լեոնարդո դա Վինչին, այսպես է, երևի, նա մտածել այն չորս երկար ու ձիգ տարիների ընթացքում, երբ աշխատել է Մոնա Լիզա Ջոկոնդայի դիմանկարի վրա, քանզի ամեն մի վրձնահարվածը, որ կատարել է, նրա մեջ և՛ վախ է առաջացրել, և՛ նոր գաղտնիքներ հայտնաբերելու անսանձ կիրք:

Վազարին, որի շնորհիվ մենք քաջատեղյակ ենք Վերածննդի ժամանակաշրջանի շատ վարպետների կյանքի մանրամասնություններին, գրում է, որ երբ Լեոնարդոն հանձն է առնում նկարել Ֆրանչեսկո դել Ջոկոնդայի համար նրա կնոջ դիմանկարը, հրավիրում է երաժիշտների, որոնք նվագում են քնարի վրա և երգում, ծաղրածուների, որոնք մշտապես պահպանում էին այդ կնոջ լավ տրամադրությունը: Մի հանգամանք, որով և պետք է բացատրել Ջոկոնդայի անկրկնելի ժպիտը:

20-րդ դարի սկզբներին «Ջոկոնդան» անհետացավ. կիսաոգևորված մի իտալացի գողացավ դիմանկարը և տարավ այնտեղ, ուր իր կարծիքով ոչ ոք չէր գտնի այն...

1974թ. Տոկիոյում ցուցադրելու ժամանակ հերթական մի կիսախելագար կրակեց դիմանկարի վրա, սակայն Մոնա Լիզայի ժպիտը նորից փրկվեց:

Նախանձելի ճակատագրի տեր է այս լուսանկարը...

(Ըստ Յարոսլավ Գոլովանովի)

135. Տրված ասույթներից ու թևավոր խոսքերից առանձին-առանձին դո՛րս գրեք հարցական և հարաբերական դերանունները՝ որոշելով դրանց հոլովը, հոլովումը և պաշտոնը:

- Կարևորն այն չէ, թե քեզ ում տեղն են դրել, այլ այն, թե ով ես դու իրականում:
- Ում սիրում է տերը, նրան ատում են ծառաները:
- Սովորաբար մենք ատում ենք նրանց, ում չենք կարողանում արհամարհել:
- Կյանքում լավ է ապրում նա, ով ֆիզիկապես լավ է կոփվել:
- Ես հերոս եմ անվանում նրան, ով սրտով մեծ է:
- Ինչ չի գրավում, մեռած է:
- Միակ ոլորտը, որտեղ նկատվում է աստվածայինը, արվեստն է, ինչպիսի անուն էլ որ այն ունենա:
- Ինչպիսի՜ հրաշք. գեղանկարչության մեջ հիանալ նրանով, ինչով իրականում չես հիանա:
- Բախտն ում ուզում է կործանել, նրանից խլում է բանականությունը:
- Երբ կասկածում եք, ասեք ճշմարտությունը:

- Ես չգիտեմ, թե ով է եղել իմ պապը. ինձ ավելի շատ հետաքրքրում է, թե ով կլինի նրա թոռը:
- Ո՞վ կարող է ավելի նողկալի լինել, քան նա, ով ընկերոջը նետում է անդունդը թշվառության:
- Ով զգոն է, նա գիտի՝ ինչ է խաբեությունը:
- Ով չի կարող օգտվել երջանկությունից, երբ այն գալիս է, չպետք է գանգատվի, երբ այն անցնում է:

/Ըստ Սուրեն Գրիգորյանի/

136. Դո՛ւրս գրեք որոշյալ դերանունները և որոշե՛ք նրանց իմաստային, բառակազմական ու ձևաբանական հատկանիշները. ո՞ր խոսքի մասին են դրանք հարաբերակից և ի՞նչ պաշտոն ունեն:

1. Եվ անբառ էր ամեն ինչ, և ամեն ինչ անանուն, Ամեն ինչ գույն էր ու ձայն ու ամեն ինչ՝ մեղեդի /ՌԴ/: 2. Ամեն մի հայ լեռան մի ծերպ, Ամեն մի հայ՝ ուրույն մի կերպ, Ամեն մի հայ՝ մի Հայաստան՝ Բաժան-բաժան- Անմիաբան /ԳԷ/: 3. Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հիացա՛վ, պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացավ, Որ պար չէ՛ սա.../ն/: 4. Մի՛ տա ամենքին քո սերը, անգին /ն/: 5. Ա՛խ, այդ Մասիսը, Որից փափկում են սրտերը բոլոր, Երբ ինքը...քար է... Որ աշխարհներից հեռավոր- հեռո՛ւ Բոլոր հայերին այստեղ է բերում, Երբ ինքը... այստե՛ղ չէ.../ն/: 6. Սակայն ես այսօր և ամենայն օր մշտական վշտով նրանց եմ ողբում, Ովքեր չունեցան շիրմաքար- շիրիմ /ՊՍ/: 7. Հայկական հարցը մեջտեղ բերեցին, Քանզի տաք էր դեռ, Եվ ամեն մեկը մատները վառեց: Բայց ամեն մեկը այնքան շատ ճառեց, Մինչև որ հարցը բավական սառեց /ն/: 8. Յուրաքանչյուրը խփեց իր ծնկան, Ու բոլորը մեկ ձեռ ու ոտ ընկան /ն/: 9. Ապա օտարը Ամենա՛յն սիրով, Ապա օտարը Խոսքերով, գրով, Թաքուն, բացահայտ մեզ է բանսարկում... /ն/: 10. Բախտի ճամփեքը տարբեր են լինում, Բախտն ամեն մեկին տարբեր է սիրում /ն/: 11. Եվ ամենքս ենք հիմա կիսով չափ մենակ, Եվ ամենքս ենք հիմա կիսով տխուր /ն/: 12. Թող անկարելին դառնա կարելի Աշխարհում համայն, Ամենքի՛ համար /ն/:

137. Առանձնացրե՛ք հատկանշային և առարկայական իմաստ արտահայտող որոշյալ դերանունները:

Ամեն, ամենը, ամեն մի, ամեն մեկը, ամենքը, բոլոր, բոլորը, յուրաքանչյուր, ամեն ինչ, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ողջ, ամբողջ, համայն, ամենայն:

138. Դո՛ւրս գրեք ժխտական դերանունները՝ որոշելով նրանց պաշտոնը:

1. Մարդիկ շատ են փոքրոգի, Հետներն անու՛շ եղիր միշտ, Որ քո դուռն էլ չչոքի Ոչ մի սև ամպ, ոչ մի վիշտ /ՀՇ/: 2. Ես չեմ հյուսել քեզ հետ ոչ մի հույսի գարուն, Ոչ մի բախտ ու երազ չեմ հյուսել քեզ հետ /ն/: 3. Թող էլ ոչ ոք ճիշտս ու շեղս չիմանար, չփորփրեր գույնս ու տեղս չիմանար: Թողնե՛իր ինձ՝ ինքս ինձ հետ ու երկնի, Հեռանայի, ոչ ոք տեղս չիմանար/ՍԿ/: 4. Ոչինչ չեմ ուզում այս տարեմուտից, Ո՛չ գանձ, ո՛չ նոր բախտ ու սեր /ն/: 5. Ոչի՛նչ, ոչի՛նչ ես չտեսա Ռիալտոյի կամուրջին, Ո՛չ մրահոն աղջիկ տեսա, ո՛չ ջրերը կապտաջիղ/ն/: 6. Ծուխը՝ ոչինչ, քո առջևի Ծխվող խունկից վախեցի՛ր, Դառը՝ ոչինչ, խոսքերի քաղցր տուրքից վախեցի՛ր /ն/: 7. Լառ Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու

արցունքներ երևացին աչքերին.../ԱԲ/: 8. Իսկ Դավոն ոչ մեկին չէր նայում, ոչինչ չէր տեսնում, շուկան տրորելով գնում էր/ՄԳ/:

139. Առանձնացրե՛ք հատկանշային և առարկայական իմաստ արտահայտող անորոշ դերանունները:

Ինչ-որ, ինչ-ինչ, այլևայլ, ոմն, մեկը, երբևէ, երբևիցե, որևիցե, մի քանի, մի քանիսը, ուրիշ, այլ, այսինչ, այնինչ, որոշ, որևէ, մեկնումեկը:

140. Դուրս գրեք անորոշ դերանունները՝ առանձին- առանձին խմբավորելով եզակի իմաստ ունեցողները և հոգնակի իմաստ ունեցողները. ո՞ր խոսքի մասին են հարաբերակից դրանք:

Ա. 1. Ինչ-որ ժամանակ Սեզանից առաջ, մեզ անհայտ մարդիկ Նստել-մտածել և հորինել են զանազան բաներ /ՊՍ/: **2.** Եվ գարունն այնտեղ Այլ փողոցների համեմատությամբ Ուշանում է քիչ /ն/: **3.** Կա անանուն մի կարոտ, անհասանելի ինչ-որ տեմչ, որ զարթնում է հանկարծ ու մորմոքում հոգուդ մեջ /ՎԴ/: **4.** Ինչ-որ մի տեղ շող է դիպել Ամպի բացված սրտին, Ինչ-որ մի տեղ ցող է կաթել Հոգնած ծաղկի թերթերին.../ՍԿ/:

Բ. 1. Սողոմոնի երզը նրանց բերում էր ուրիշ ձևի տխրություն՝ որբի տխրությունից տարբեր. դա անլաց տխրություն էր: **2.** Վեհափառը պահանջել էր միայն, որ նա իր հետ էջմիածին բերի մի որբի, ընտրի ամենաձայնեղին: **3.** Ոչ ոք այդ պահին իր խոսքը չէր գտել, չէր գտնելու, և մեկը կմկմաց. - Սողոմոն, գնալո՞ւ ես: **4.** Կոմիտասի ծնկները դողում էին, էլի մի քանի քայլ փոխեց ու փռվեց ճամփապնակի քարին: **5.** Ձմռան այդ օր ու ժամին աշխարհում մի մարդ, մեկը, միայն մեկը ձմեռնաշունչ փողոցում անծանոթի էր սպասում՝ վերադարձնելու նրա կորցրած տասը ֆրանկը:

(Ըստ Ս. Գալշոյանի)

141. Համապատասխան հարցերով խմբավորե՛ք առարկայի կամ առարկայի հատկանիշի, ինչպես նաև գործողության հատկանիշի իմաստ ունեցող անորոշ դերանունները:

142. Կետերի փոխարեն գրե՛ք համապատասխան գոյականներ՝

ա. եզակի թվով

բ. հոգնակի թվով

գ. թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով

1. ա/ ամեն մի...

2. ա/ ոչ մի...

3. ա/ որևէ...

4. ա/ մյուս...

բ/ ինչ-որ...

բ/ ինչ-ինչ...

բ/ ամբողջ...

բ/ ողջ...

գ/ ո՞ր...

գ/ այդ...

գ/ մի քանի...

գ/ բովանդակ...

դ/ համայն...

դ/ նույն...

դ/ որոշ...

դ/ ամեն...

ե/ այսինչ...

ե/ ուրիշ...

ե/ այսքան...

ե/ այլ, մեկնումեկը...

զ/ յուրաքանչյուր...

զ/ այսպիսի...

զ/ բոլոր...

զ/ այլևայլ...

143. Բոլոր դերանունները գծապատկերի վրա բաշխե՛ք հարցերով՝ ըստ համապատասխան իմաստների. առարկայանշություն, հատկանշանշություն,

թվանշություն, հատկանշահատկանշություն /մակբայական համապատասխան իմաստ/
 Առանձնացնել նաև շաղկապական կիրառություն ունեցողները և եղանակավորող բառերը:

Դերանուն (իմաստը, կիրառութ.)	Անձնական	Ցուցական	Փոխառած	Հարցական	Հարաբերական	Որոշյալ	Ժխտական	Անորոշ
Առարկա								
Հատկանիշ								
Թիվ								
Տեղ								
Ժամանակ								
Եղ. բառ								
Շաղկ. կիր.								

(Վանդակներում բոլոր դերանունները չեն կարող տեղավորվել, ուստի հիմնական մասը համապատասխան համարակալումներով կարելի է տանել գծապատկերի տակ):

Բ Ա Յ

144. Դուրս գրե՛ք բայերը և նշե՛ք ելակետային ձևերը:

Ես միշտ կարկամել եմ հայոց լեզվի առեղծվածի առաջ:

Այդ ինչպե՞ս է, որ գրավոր դառնալուց առաջ նա ուներ ադամանդե այն փայլը, որ ցուում է մեր գողթան երգերի մեջ: Այդ ինչպե՞ս է, որ գրավոր դառնալուց անմիջապես հետո նա կարողացավ թարգմանել մի այնպիսի վիթխարի ու բարդ գործ, ինչպիսին Աստվածաշունչն է: Եվ այնպես թարգմանել, որ աշխարհի խոշորագույն լեզվաբանների կարծիքով դառնա թարգմանությունների թագուհին:

Ես հաճախ եմ հայերեն բառարաններ կարդում: Ես ասես քիմքով վայելում եմ բառեր, որոնց մեջ դարերի համն ու հոտը կա: Կարդում եմ, վայելում, նորից սիրահարվում նրան և խորհում մեր գոյության, մեր հարատևության գաղտնիքի մասին:

Եվ մեր գոյության, մեր հարատևության խորհուրդը ինձ պատկերվում է չորս ամրակուռ սյուների վրա հանգչող գմբեթի տեսքով:

Սյուներից առաջինը մեր մեծասքանչ լեզուն է, որ դարերի խորքից դեպի մեզ է գալիս Մեսրոպ Մաշտոցի սրբացած կերպարանքով: «Եվ մենք քեզ համար, մեր մեծասքանչ, մեր ոսկեղենիկ, Ելանք ազգովին, բռնեցինք ահեղ ճամփան Դեր-Ջորի, Մեր կեսը տվինք, բայց քեզ չտվինք: Քանզի գիտեինք, որ քեզ սրբորեն կոչել մայրենի, Քեզանով ենք մենք դարեդար հառնել, առել շունչ ու կյանք...»:

Սյուսը մեր պատմության ու հայրենասիրության ոգին է, որ խորենացու կերպարանքով է երևում ինձ, քանի որ նա է այդ ոգու հայտնաբերողն ու հաստատողը: Նա էր սահմանողը հայրենասիրական այն որակի, որ մեզ ուղեկցում է մինչև օրս և ուղեկցելու է...

Սյուներից հաջորդը տառապանքով ինքն իրեն գտելու, ինքն իրենից բարձրանալու, ոգու և խղճի ամենաբարձր ոլորտներին ամնչվելու այն հատկությունն է, որն իր հանձարով նվաճեց ու պարգևեց Նարեկա մեծ ձգնավորը. «Բայց դու Նարեկով ինքդ քեզ գտել, Քո սուրբ հարության հրաշքը գտել Եվ ... հասել հողմերին այս ահեղ դարի... Գիտեմ, այս դարի հողմերում վրդով Դարերից բերված խորին խորհրդով Քեզ պիտի նորից Նարեկով գտես... Հավերժես պիտի լեռներում այս լուրթ...»: Իսկ աղարտվող, աղճատվող, այլասերվող ժողովուրդները չեն կարող երկար կյանք ունենալ... և չպիտի ունենան...:

Մեր ժողովրդի գորավոր սյուներից մեկը, իմ խորին համոզմամբ, առողջ, լավատես, կենսահաստատ փիլիսոփայությունն է, որի կրողներից մեծագույնը Հովհաննես Թումանյանն է՝ լուսեղեն բանաստեղծն ու քաղաքացին:

Մեր ժողովրդի գոյության դարավոր հենասյուները՝ մայրենի լեզվի պաշտամունքն ու պահպանումը, մեր պատմության հայրենասիրական ոգին, հոգու և խղճի նարեկյան մաքրությունը, առողջ կենսափիլիսոփայությունը օդի ու ջրի նման պետք են մեզ այսօր, եթե ուզում ենք ապրել իբրև հայ ժողովուրդ, իբրև հայոց երկիր:

(Ըստ Վ. Դավթյանի)

145. Նույնարմատ կամ նույնահիմք բառաշարքերում ընդգծե՛ք բայերը և բացատրե՛ք նրանցով արտահայտված գործողության կամ եղելության իմաստի յուրահատկությունը և խոսքիմասային տարբերակիչ գծերը: Իմաստային տարբերությունը քերականական ի՞նչ հատկանիշների տարբերություններով է ուղեկցվում:

ա/ վազել - վազք - վազան

- բ/ որոշել – որոշյալ - որոշում
- գ/ փայփայել - փայփայանք - փայփայիչ
- դ/ հիշել – հիշեցում – հիշողություն – հիշվելիք
- ե/ ընթանալ – ընթացք – ընթացիկ
- զ/ կարմրել – կարմիր – կարմրավուն – կարմրանալ
- է/ բարձրանալ - բարձր - բարձրություն - բարձրիկ
- ը/ ամբողջանալ - ամբողջ - ամբողջություն - ամբողջովին
- թ/ արագանալ - արագություն - արագ - արագորեն
- ժ/ դռնալ - դռնոց - դը~ռռ

146. Իմաստաբերականական ո՞ր հատկանիշներն են բնորոշ բային:

1. Ցույց է տալիս առարկայի հարաբերականորեն ոչ կայուն, գործընթացային հատկանիշ:
2. Անվանողական արժեք չունի:
3. Ցույց է տալիս գործողության կամ եղելության հատկանիշով օժտված առարկա կամ առարկայացված հասկացություն:
4. Ցույց է տալիս գործողության կամ եղելության այնպիսի հատկանիշ, որով առարկայի ինչպիսին լինելն է նշվում:
5. Հատկանշվում է յուրահատուկ ձևաբանական կառուցվածքով:
6. Թեքվող խոսքի մաս է:
7. Ունի համեմատության աստիճաններ:
8. Հոլովվում է:
9. Գոյականաբար գործվելով՝ հոլովվում է:
10. Չունի արտահայտության ձևեր:
11. Չի առանձնանում խոսքիմասային փոխանցումներով և տարարժեքությամբ:
12. Չունի բառակազմական արժեք:
13. Հատկանշվում է հետևյալ քերականական կարգերով՝

- | | | | |
|---------------|--------------|--------------|----------------------|
| ա/ սեռի | ե/ հոլովման | ը/ խոնարհման | ժա/ անձի և ոչ անձի |
| բ/ առկայացման | զ/ ստորոգման | թ/ դեմքի | ժբ/ խնդրառական |
| գ/ ժամանակի | է/ թվի | ժ/ եղանակի | ժգ/ ժխտման-հաստատման |
- դ/ կերպի

ԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

147. Նշե՛ք տրված բառերի խոսքիմասային արժեքը և կազմե՛ք բայեր /աններածանց, ներածանցավոր/՝ առանձնացնելով լծորդական ձևույթները և ընդգծելով լծորդները կամ խոնարհիչները՝ ինչպես օրինակ՝ պինդ- պնդ+ել /-ել և է/ - պնդան+ալլ – պնդվ+ել – պնդացն+ել – պնդոտ+ել:

Հավատ, սեր, կոպիտ, երկար, կարճ, չոր, մաքուր, նույն, ավստս, բարդ, գիշեր, հաճախ, քար, պարզ, կարմիր, հունձ, ամպ, ոչինչ, ձիգ, վախ, էջ, ամբողջ, գութ, գիր, ուշ, ավաղ, վայ, դանդաղ, մերձ:

148. Ընդգծե՛ք բայարմատները և կազմե՛ք բայեր /աններածանց, ներածանցավոր/՝ բացատրելով նրանց ձևաբանական կառուցվածքը՝ ինչպես օրինակ՝ սակավախոս – խոս+ել, խոս+վ+ել, խոս+եցն+ել:

Ասացվածք, ասուլիս, այրվածք, բերկրաբեր, գրագետ, դանդաղընթաց, դրդապատճառ, զարգացում, զայրույթ, զարմանք, ընկնավոր, կարդացվելիք, հնախույզ, հիասքանչ,

մոռացկոտ, նայվածք, սակավախոս, վագր, վիրաբույժ, տոկուն, ունեցվածք, ուսադիր, ուտեստ, փախուստ, քարուքանդ, քաղվածք:

149. Ա. Լծորդական հարաբերակցության մեջ եղած /կամ կրկնալծորդ/ բայերը դասդասե՛ք ըստ տրված խմբերի՝

ա/ բայազույգեր, որոնք լծորդական տարբերությամբ ունեն իմաստասեռային տարբերություն.

բ/ բայազույգեր, որոնք լծորդական տարբերությունից բացի հատկանշային ուրիշ տարբերություն չունեն.

գ/ բայազույգեր, որոնցում լծորդական տարբերակներից մեկը ձիշտ չէ:

Երերալ - երերել, հաչել - հաչալ, գուժել - գուժալ, փրփրել - փրփրալ, թվալ - թվել, խլրտալ - խլրտել, ոստոստալ - ոստոստել, ծխալ - ծխել, ժպտալ - ժպտել, ծփալ - ծփել, տրոփալ - տրոփել, շշնջալ - շշնջել, փայլփլել - փայլփլալ, շողշողալ - շողշողել, փողփողալ - փողփողել, գուրգուրել - գորգուրալ, խոսել - խոսալ, ափսոսալ - ափսոսել, հազալ - հազել, թռչկոտալ - թռչկոտել:

Բ. Առաջին կետում հավաքված բայազույգերից յուրաքանչյուրով կազմե՛ք նախադասություն՝ ցույց տալով լծորդական տարբերությամբ պայմանավորված իմաստային և քերականական տարբերությունները:

Գ. Բայակազմական ո՞ր ձևերում են նույնանուն ձևաբանական նորմով սահմանված լծորդական տարբերակները:

150. Ընդգծե՛ք բայերը և լրացրե՛ք աղյուսակները:

1.

Բայի կազմությունը			
Համադրական բայեր	հարադրական բայեր		
	հարադրավոր	զուգադրական	պատճառական

1.

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ	
Հ ա մ ա դր ա կ ա ն	Վ եր լ ու ծ ա կ ա ն

Ա. 1. Երագել է տալիս մութը, Իսկ երագել մենք չենք ուզում: 2. Ու մեր այսօրվա անուժությանը ասում է. «Կանգ առ»: 3. Մի՞թե սլաքներն իմ ժամացույցի ետ-ետ չեն գնա... 4. Թող իմ հոտ ու նախրի մտքովն անգամ չանցնի, Թե անտեր են իրենք: «Հե՛յ-հե՛յ» կանչելն, անշուշտ, Նույնպես գործ է: 5. Ես, ինչ խոսք, այսօր պիտի բոց չուտեմ Կամ կուլ տամ դաշույն... Եվ գլխիս վրա չպիտի դնեմ Մի հսկայական երկաթե գերան ՌԻ կախ տամ վրան.. կանայք սիրունիկ: Եվ ոչ էլ պիտի ես արջ պար ածեմ: 6. Հույս ունեմ, որ դուք Ինձ հավատացիք, Ուստի թույլ տվեք՝ շարունակելով՝ Ձեզ հավատացնել... 7. Սխալ է և հողը. Առնվում-ծախվում է: 8. Շանս հետ պիտի ելնեմ ման գալու, Որ մտերմաբար ասուլիս անենք Անդորրության մեջ այս գիշերային: 9. Աշխարհն է կույ չեկել որպես ոզնի, Եվ հարկավոր է տալ նրան թևեր: 10. Ա՛խ այս անվերջ «պիտի»-ին Վերջ ունենա՞ պիտի... 11. Արևը հողից ձգում-հանում է ոչ միայն ցողուն. Արևը նաև շենքեր է ձգում հանում հողից: 12. Ու մոռանում եմ, Որ դու աչքերով ինձ հույս ես տալիս, Ժպտում ես, սակայն և

խույս ես տալիս: **13.** Բայց կանչում եմ նրան քո անունով... ինչպես մարդիկ հնում
 Կանչում-կոչում էին ոգիներին բարի: **14.** Հաճախ մեր աչքերը ջրկվում-պոկվում մեզնից
 Ու գնալով գնում և հասնում են այնտեղ... **15.** Գեղեցիկ չէր, ես էլ գերված-տարված չէի:
16. Ինչպե՞ս ինքս պոկեմ ինձանից Ու վեր կենամ գնամ: **17.** Ու ես էլ ահա
 հավատափոխվում-դարձի եմ գալիս...

(Պ. Սևակ)

Բ. 1. Շա՛տ կուզեի Դանդա՛ղ գնալ-շտա՛յ հասնել Մեր մարդկային հայրենիքը
 սկզբնական: **2.** Մրսած մատներով կրակ են վառում, Որ ցուրտ խորովե՛ն-եփե՛ն-
 տապակե՛ն: **3.** Աջ էր գնում-ձախ էր գալիս... Եվ ջուրը չէր ելնում-իջնում: **4.** Երբ
 դավաճան ինչ-որ երազ Երբևիցե ինձ վերստին հիշել տա քեզ, Աղաչո՛ւմ եմ... Դու մի՛
 հիշիր: **5.** Քեզ գրկել տվին մի... թո՛ւխ մանուկի... **6.** Այս հարցն եմ հաճախ ինքս ինձ
 տալիս, Ինքս ինձ վիճում, առնում ու տալիս, Սակայն իմ հախից ինքս էլ չեմ գալիս .. Ես հո
 չեմ նստել աշխարհի վզին, Որ չմտածեմ աշխարհի մասին: Ի՞նչ է, աշխարհը իմ բուռն եմ
 առել, Որ ճմռթելով գրպանս խրեմ... **7.** Գնամ մտնեմ Վանա լճի խորքերն անտակ... **8.**
 Ի՞նչ էլ նվագեն՝ նա է պարողը, Ի՞նչ էլ կարել տան՝ նա է կարողը, Որ ծառն էլ ցույց տան՝
 նա է քարողը: **9.** Պիտի վիճեմ Եվ երգի՛ դեմ, Թե բռնի են երգել տալիս խեղճ երգողին: **10.**
 Ես հիանում-հրճվում եմ՝ Երկինք մաքրող որոտով: **11.** Վայ տամ ա՛յն գանգին, Ուր
 ծմեռում է խելքը արջի պես: **12.** Նա իր ճռճոցով Հիշել է տալիս, որ դեռևս կա՞մ... **13.** Ու
 ցիների պես ընկնելով վրան՝ Առան-տվեցին, տվեցին-առան: **14.** Վեր են ցատկում, գալիս
 շարվում իրար կողքի: **15.** Փշուր-փշուր կուտակվում է, Չիգ է տալիս, Վրա գալիս: **16.** Եվ
 չես թաղվում ու հող դառնում, Այլ թաղվելիս հարություն ես կրկին առնում: **17.** Հազար
 գետից թռել անցել, Կանգ եմ առել մեկի դեմ:

() (Պ. Սևակ)

151. Համապատասխան շարքերում ավելացրե՛ք երեքական նույնակազմ բայեր:

- | | |
|-------------------------|-------------------------------------|
| ա/ բռնել, կապտել... | զ/ մոտենալ, մերձենալ ... |
| բ/ Կպչել, հանգչել ... | է/ հիշեցնել, քնեցնել ... |
| գ/ Մտնել, առնել ... | ը/ ուրախացնել, թանկացնել... |
| դ/ Խաղալ, գթալ.... | է/ հազցնել, թռցնել... |
| ե/ Կարճանալ, լիանալ ... | ժ/ հավաքվել, կարդացվել, մոտեցվել... |

152. Լրացրե՛ք աղյուսակները:

1.

Բ Ա Յ Ա Ծ Ա Ն Ց Ն Ե Ր			
բաղադրական-քերականական	ք ե ր ա կ ա ն ա կ ա ն		
	կերպային	սեռային	

2.

Պ Ա Ր Զ Բ Ա Յ Ե Ր	ՍՈՍԿԱԾԱՆՑԱԿՈՐ ԲԱՅԵՐ	ՊԱՏՃԱՈՍԱԿԱՆ ԲԱՅԵՐ	ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ	ԲԱԶՄԱՊԱՏԿԱԿԱՆ ԲԱՅԵՐ
----------------------	------------------------	----------------------	---------------------	------------------------

			Ա.	Բ.		Ա.	Բ.
1	վազել	մոտենալ	խոսեցնել	գրել տալ	գրվել	թռչկոտել	վազվազել
2							
3							
4							
5							
6							
7							

153. Բայերը բաժանե՛ք հետևյալ խմբերի՝

ա/ բայեր, որոնցում **-ան-**ը բաղադրական ածանց է /Օր.՝ հեռանալ, հասկանալ/.

բ/ բայեր, որոնցում **-ան-**ը գործողության շարունակական-տևականության իմաստ է արտահայտում /Օր.՝ կանաչանալ, հաստանալ/.

գ/ բայեր, որոնցում **-ան-**ը մի բանից այլ բանի վերածվելու, փոխվելու, դառնալու կամ մի բանի նմանվելու իմաստներ է արտահայտում /Օր.՝ ուրախանալ, երջանկանալ, աքլորանալ/:

դ/ Բայեր, որոնցում **-ան-**ը քարացած է և քերականական-հիմքակազմիչ դեր չի կատարում /Օր.՝ կլանել - կլանեց/:

Ազնվանալ, անէանալ, անհետանալ, բարձրանալ, բեկանել, գոհանալ, գողանալ, գոյանալ, գեղեցկանալ, դառնանալ, դժվարանալ, եղբայրանալ, գայրանալ, զարմանալ, զարգանալ, ընթանալ, ընկերանալ, ընկողմանել, թուլանալ, իմանալ, խոնավանալ, խոյանալ, խոստանալ, ծանրանալ, կայանալ, հիանալ, հղփանալ, մանկանալ, մահանալ, մոռանալ, նրբանալ, որբանալ, սևանալ, վերանալ, ցանկանալ, քարանալ:

154. Բացատրե՛ք տրված բառազույգերի լծորդական, բառիմաստային-բառակազմական և սեռային-քերականական տարբերությունները:

Ծանրել և ծանրանալ	վարարել և վարարանալ	երկարել և երկարանալ
նեղել և նեղանալ	կանաչել և կանաչանալ	կոպտել և կոպտանալ,
չորել և չորանալ	գիշերել և գիշերանալ	դանդաղել և դանդաղանալ
պատկերել և պատկերանալ	դիմել և դիմանալ	բարակել և բարականալ
կծվել և կծվանալ	լողալ և լողանալ	ծարավել և ծարավանալ
կաղալ և կաղանալ	բարդել և բարդանալ	կարճել և կարճանալ
ծնել և ձևանալ	սրբել և սրբանալ	նիհարել և նիհարանալ
փափկել և փափկանալ	տափակել և տափականալ	ուզել և ուզենալ
թանձրել և թանձրանալ	մանրել և մանրանալ	ստվերել և ստվերանալ
արժել և արժենալ	արբել և արբենալ	օտարել և օտարանալ
լվալ և լվանալ	ցանկալ և ցանկանալ	ցոլալ և ցոլանալ
ամպել և ամպանալ	ապշել և ապշանալ	դալարել և դալարանալ
զառամել և զառամանալ	ջերմել և ջերմանալ	պարզել և պարզանալ

155. Դուրս գրե՛ք՝

ա/ -ն- սոսկածանց ունեցող բայերը.

Ջարթնել, անցնել, զբոսնել, առնել, ընկնել, խրտնել, գտնել, հագնել, հառնել, ոստնել, բուսնել, ելնել, բռնել, թողնել, գետնել, դարբնել, իջնել, հագնել, հասնել, խառնել, հարցնել, հատնել, կանգնել, հայտնել, հեծնել, մատնել, մտնել, շիկնել, պրծնել, տեսնել, բառնալ, քծնել, քրտնել, դառնալ, բորբոսնել, պրծնել, դնել:

բ/ -ջ- սոսկածանց ունեցող բայերը.

Դիպչել, կառչել, թռչել, կորչել, կանչել, հաչել, կպչել, հալչել, ճանաչել, հանգչել, սառչել, մարտնչել, ուռչել, փախչել, փակչել, երկնչել, աղաչել, փլչել, կանաչել, մեղանչել:

156. Ա. Տրված բայազույգերում բացատրե՛ք –ջ- սոսկածանցի ոչ օրինաչափ տատանումները /ածանցի քարացում, փոխանցում, անկում/:

ա/ դիպչել -դիպնել, թռչել-թռնել, կպչել –կպնել, փախչել-փախնել.

բ/ թաքչել –թաքնվել, հալչել –հալվել, փլչել -փլվել.

գ/ սառչել-սառել, հանգչել-հանգել, ուռչել- ուռել, կորչել –կորել. /Ծանոթ. կա հանգել համանուն բայը ` «Վերջ ունենալ` մի կետի կամ մի բանի հասնելով» նշ-մբ/:

Բ. Ո՞ր տարբերակները ձևակազմական ի՞նչ դեպքերում են շեղվում ձևաբանական նորմով սահմանված օրինաչափություններից:

157. Կազմե՛ք տրված բայերի պատճառական ձևերը և բացատրե՛ք յուրաքանչյուր շարքի կազմության օրինաչափությունը:

ա/ երգել, պարել, փայլել, հիշել, կանգնել.

բ/ մոտենալ, հագենալ, վախենալ, մերժենալ.

գ/ հագնել, մտնել, հասնել, թռչել, կորչել.

դ/ խաղալ , մղկտալ, զգալ, դողալ, եռալ.

զ/ հեռանալ, զայրանալ, հանգստանալ, չորանալ, քարանալ:

158. Ա. Յուրաքանչյուր շարքում ընդգծե՛ք այն բայերը, որոնք կարող են ստանալ –վ/- ածանցը, և բացատրել կազմության օրինաչափությունները:

Բ. Շարքերը լրացրե՛ք 3-ական բայերով:

ա/ սիրել, քայլել, աճել, օծել, խուսափել, ջարդել.

բ/ գտնել, մեռնել, մտնել, հագնել, տեսնել, թողնել.

գ/ կարդալ, ժպտալ, շողալ, աղալ, եռալ, խոկալ.

դ/ հանգստանալ, տաքանալ, հիանալ, դիմանալ, հեռանալ, բարձրանալ.

ե/ տաքացնել, մեծացնել, դղրդացնել, մղկտացնել, դողացնել.

զ/ մոտենալ, վախենալ, գիտենալ, մերժենալ, պարծենալ.

է/ փայլեցնել, ծիծաղեցնել, մոտեցնել, վազեցնել, տխրեցնել.

ը/ հազցնել, մտցնել, հանգցնել, թռցնել, կորցնել, հասցնել: ~`

159. Ա. Դուրս գրե՛ք բազմապատկական ածանց ունեցող բայերը:

Բ. Առանձնացրե՛ք այն բայերը, որոնցում –ոտ- ածանցը կարող է ընկալվել երկարժեքությամբ` և` բազմապատկական, և` ածականական իմաստներով /Օր.` մրոտել/:

Կոտրտել, ճխլտել, խառնշտորել, հրմշտել, ձգտել, խախտել, փնտրտել, փշրտել, ժանգոտել, մրոտել, ալյուրոտել, աղտոտել, արյունոտել, ծակրտել, քանդրտել, կոտրատել, գինոտել, խցկել, թանաքոտել, թարախոտել, հաստատել, թեփոտել, ժահրոտել, թռչկոտել, խմորոտել, ցատկել, ծխոտել, կավոտել, կեղտոտել, կնճռոտել, հողոտել, կոտրատել, փետրատել, կտրատել, ձեթոտել, կիսատել, գլխատել, ձյութոտել, ձյունոտել, ճարպոտել, հեծկլտալ, ճանկռտել, ծեծկրտել, մաղձոտել, մեղրոտել,

յուղոտել, նավթոտել, կոխկրտել, քաշկռտել, թղթատել, շաքարոտել, ջրոտել, փայլատակել, ջարդոտել, կարմրատակել, բոցկլտալ, կայծկլտալ, հորատել, բզկտել, տղմոտել, ցեխոտել, թխկրտալ, շխկրտալ, ցեցոտել, փոշոտել, ջարդրտել, քանդրտել, մռլտալ, ջարդոտել, քաղոտել, ճխլտորել, խաբխբորել, պաչպչորել, վախվխորել, հոշոտել, փողոտել:

Գ. Ընտրե՛ք 10-15 բազմապատկական բայեր և կազմե՛ք ածանցագուրկ տարբերակները. բացատրե՛ք ձևաիմաստային տարբերությունները:

160. Արմատի կրկնությամբ կազմված բայաշարքում ընդգծե՛ք բազմապատկական բայերը:

Պոկպոկել, բեկբեկել, ձգձգել, ծամծմել, շողշողալ, ոստոստել, արծարծել, գեղգեղալ, կապկպել, խողխողել, ողողել, ծակծկել, ջոկջոկել, ջախջախել, քաշքշել, փողփողել, քայքայել, քրքրել, այլայլել, գոռգոռալ, ճռճռալ, չարչարել, կարկառել, թափթփել, ծածանել, կաղկանծել, զնգզնգալ, փաթաթել, ջարդջրդել, բաբախել, դադարել, փոփոխել, հայթայթել, հեծեծալ, կցկցել, հեկեկալ, հոտոտել, հորջորջել, վազվզել, պաչպչել, կաշկանդել, ճաքճքել, բարբառել, վախվխել:

161. Կազմե՛ք բազմապատկական բայեր:

բայաձև	ածանցմամբ /-ոտ-, -ատ-, -տ-, -կոտ-, -կլտ-, - ռտ-, -րտ-, -կրտ-, -շտ-, -տակ-, - շտոր-... /	բայարմատի կրկնությամբ /նաև որպես հարադրական բարդություն/	և՛ ածանցմամբ, և՛ արմատի կրկնությամբ
պատռել /3/	1. պատառոտել 2. պատռտել	3. պատառ-պատառ անել	
կտորել /3/			
ցատկել /2/			
կտրել /2/			
թափել /3/			
խառնել			
ծախել /3/			
ծակել /3/			
ծամել /4/			
կախել /3/			
կապել /4/			
կծել /5/	1. կծոտել 2. կծռտել	3. կծմծել	4. կծմծոտել 5. կծմծորել
ճաքել /4/			
ջարդել /3/			
քանդել /4/			
փշրել /3/			
ծռել /2/			
փորել /2/			
թափել //3/			

Բայահիմքեր

162. Տրված բայաձևերը բաժանե՛ք հիմքակազմ և քերականական ձևայինների /Օր.՝ իջնել → իջն /հիմն./ - ել/քեր./, հեռացե՛ք → հեռաց -եք/:

Իջնել, լռել, քայլել, օծվել, ընկավ, կգրկեմ, ողջագուրվել, խաղացին, պահանջելու, մեծացրին, ժպտա՛, հեռացե՛ք, փախան, լալիս, հեռանալիս, մոռացել, չհիշեց, հիշեցրո՛ւ, ապրած, զայրացած, երգող, հանգստացող, լռի, շողշողացե՛ք, շողշողան, խելագարվել, հագնվեց, վերանորոգել, հուսահատվում, մեռնելու, մտաք, ցատկոտել, դիպչել, տանեմ, տարա, երկնել, կորցնեի, երերացող, թռչելիս, մտնի, խելագարված, խառնշտորել:

163. Առանձին շարքերով դուրս գրե՛ք այն գոյականները, ածականները, դերանունները, և մակբայները, որոնք կարող են դառնալ բայահիմք՝

ա/ առանց ածանցման /Օր.՝ շտապ /մակբայ/ → շտապ+ել/.

բ/ սոսկածանցների կամ պատճառական ածանցների ավելացմամբ /Օր.՝ ամբողջ /դերանուն/ → ամբողջ+ան+ալ կամ՝ ամբողջ+ացն+ել/.

գ/ և՛ առանց ածանցման, և՛ ածանցմամբ /Օր.՝

↗ օտար+ել

1. օտար /ածական/

↘ օտար+ան+ալ

↗ խավար+ել

2. խավար /ածական և գոյական/ → խավար+ան+ալ

↘ խավար+եցն+ել/:

Ա. Ամբար, ամբողջ, ամեն, այսինչ, ավան, ավանդ, առաջ, ավելի, արագ, արմատ, արևազօծ, աքլոր, բաժան, բազում, բարձր, բաց, բարև, բոլոր, գեր, գլխավոր, գիրթ, գութ, գունավոր, դանդաղ, դառը, դարան, դարս, երրորդ, երկար, երկյուղ, երբ, զգացմունք, զնդան, զույգ, ընդարձակ, թալան, իրական, իրար, լավ, լույս, խավար, խարան, խարտոց, խոտան, ծեր, ծանր, կաթ, կաղ, կացին, կապույտ, կիրթ, կանուխ, կար, կռան, կրկին:

Բ. Կոպիտ, կույր, կրճատ, հաջորդ, հաճախ, հանգ, հարթ, հավերժ, հարմար, հաստ, հեռու, հղի, հույս, ճանկ, ճանապարհ, մեծ, մեղք, մենապար, մետաղ, մերան, մյուս, մրոտ, մոխիր, մոլոր, մոտ, մուգ, յաթաղան, յուղոտ, նիհար, նույն, նուրբ, շահ, շարունակ, շտապ, շուն, շքեղ, ոչինչ, ոլոր, ողբ, ոմն, որոշ, պարզ, սաստիկ, ջերմ, սղոց, սույն, վագք, վախ, վարձել, վաստակ, վերուվար, ցավ, ուժեղ, ուշ, ուրիշ, փայտ, քար, քառորդ, քննադատել, օտար:

164. Ա. Նշե՛ք տրված բայահիմքերի տեսակը՝

1. աններածանց, ներածանցավոր.
2. ներկայի, անցյալ կատարյալի /րեական, ցոյական, արմատական/, դերբայական.
3. աննշույթ և նշույթավոր:

Բ. Ընդգծված բայահիմքերով կազմե՛ք դերբայական և եղանակային բայաձևեր:

իջն-, բանավիճ-, հասցն-, մնաց-, քարան-, մորթոտեց-, համընկն-, համրնկ-, թռցն-, ստեղծագործ-, դողդողաց-, փախչ-, փախ-, կորչ-, ընկ-, միջամտ-, հարցո-, կառչել, կամեց, ունեն-, -տվ-, ամրան-, ցամաքեցն-, հիշեցր-, զնգզնգացն-, ուշան-, ուշաց-, ընթան-, խոյաց-, կարճ-, կարճան-, կարճաց-, փշրտեց-, ջարդոտեց-, բոցկլտ-, վանկատեց-, ծվատեց-, խառնշտոր-, կոտրատվ-, հանգցր-, մն-, լցր-, լցն-, հատկացր-, վերցր-, վերցն-, խորտակվ, հալածվեց-, -թող-, -թողն-: ‘ ‘ ‘

165. Փակագծերում գրե՛ք բայաչարքերն անվանող եզրույթները /Օր.՝ Ա. → վազել, գրվել, թռչկոտել (անորոշ դերբայ), կամ՝ → կվազեմ/եի/..., կգրվեմ/եի/..., կթռչկոտեմ/եի/... (ենթադրական ապառնի /ենթադրական անցյալի ապառնի/)/ և ըստ հաջորդականության սահմանե՛ք՝ դերբայական և եղանակային ո՞ր ձևերն են կազմվում անկատարի /ներկայի, անորոշի/ հիմքով:

Ա. Ե խոնարհման պարզ, բազմապատկական և կրավորական բայերի՝

- վազել, գրվել, թռչկոտել (-----) → վազում, գրվում, թռչկոտում (-----)
- վազել, գրվել, թռչկոտել (-----) → վազած, գրված, թռչկոտած (-----)
- վազող, գրվող, թռչկոտող (-----) → վազի, գրվի, թռչկոտի (-----)
- վազեմ/եի/..., գրվեմ/եի/..., թռչկոտեմ/եի/... (-----)
- կվազեմ/եի/..., կգրվեմ/եի/..., կթռչկոտեմ/եի/... (-----)
- չեմ /չեի/ վազի..., չեմ /չեի/ գրվի... չեմ /չեի/ թռչկոտի... (-----)
- պիտի վազեմ/եի/..., պիտի գրվեմ/եի/..., պիտի թռչկոտեմ/եի/... (-----)
- վազի՛ր, գրվի՛ր, թռչկոտի՛ր (-----)
- վազե՛ք, գրվե՛ք, թռչկոտե՛ք (-----)
- մի՛ վազիր, մի՛ գրվիր..., մի՛ թռչկոտիր... (-----):

Բ. -Ն- և -ջ- սուկածանցներն ունեցող բայերի՝

- հասնել, փախչել (-----) → հասնում, փախչում (-----)
- հասնող, փախչող (-----) → հասնի..., փախչի... (-----)
- հասնեմ/եի/..., փախչեմ/եի/... (-----) → կհասնեմ/եի/..., կփախչեմ/եի/... (-----)
- պիտի հասնեմ/եի/..., պիտի փախչեմ/եի/... (-----):

Գ. -Ացն-, -եցն-, -ցն- պատճառական ածանցներն ունեցող բայերի՝

- վազեցնել, հեռացնել, վերցնել (-----)
- վազեցնում, հեռացնում, վերցնում (-----)
- վազեցնող, հանգստացնող, վերցնող (-----)
- վազեցնի, հեռացնի, վերցնի (-----)
- վազեցնեմ/եի/..., հեռացնեմ/եի/..., վերցնեմ/եի/... (-----)
- կվազեցնեմ/եի/..., կհեռացնեմ/եի/..., կվերցնեմ/եի/... (-----)
- չեմ /չեի/ վազեցնի..., չեմ /չեի/ հեռացնի..., չեմ /չեի/ վերցնի... (-----)
- պիտի վազեցնեմ/եի/..., պիտի հեռացնեմ/եի/..., պիտի վերցնեմ/եի/... (-----):

Դ. Ա խոնարհման պարզ բայերի՝

- ժպտալ (-----) → ժպտում (-----)
- ժպտա (-----) → ժպտամ/այի/... (-----)
- կժպտամ /այի/... (-----) → պիտի ժպտամ/այի/... (-----)
- ժպտա՛ (-----) → մի՛ ժպտա (-----):

Ե. -Ան-, -են- սուկածանցներն ունեցող բայերի՝

- հեռանալ վախենալ (-----)
- հեռանում , վախենում (-----)
- հեռանա , վախենա (-----)
- հեռանամ/այի/..., վախենամ/այի/... (-----)
- կհեռանամ/այի/..., կվախենամ/այի/... (-----)
- չեմ /չեի/ հեռանա..., չեմ /չեի/ վախենա... (-----)
- պիտի հեռանամ/այի/..., պիտի վախենամ/այի/... (-----)

166. Փակագծերում գրե՛ք բայաչառքերն անվանող եզրույթները /Օր.՝ Ա. → վազեցի..., գրվեցի..., թռչկոտեցի... (Սահմանական եղանակի անցյալ կատարյալ)/ և ըստ հաջորդականության սահմանե՛ք՝ դերբայական և եղանակային ո՞ր ձևերն են կազմվում անցյալ կատարյալի հիմքով:

Ա. Ե խոնարհման պարզ բայերի՝

→ վազեցի..., գրվեցի..., թռչկոտեցի... (-----):

Բ. -Ն- և -Ը- սուկածանցներն ունեցող բայերի՝

→ հասած, փախած (-----) → հասել եմ/էի/..., փախել եմ/էի/... (-----)

→ հասա..., փախա...(-----) → հասի՛ր, փախի՛ր /փախչի՛ր/ (-----)

→ հասե՛ք, փախե՛ք (-----) → մի՛ հասեք, մի՛ փախեք (-----):

Գ. Ա խոնարհման պարզ և ածանցավոր բայերի՝

→ կարդացել, վախեցել, հեռացել (-----) → կարդացած, հեռացած, վախեցած(-----)

→ կարդացող, վախեցող, հեռացող (-----) → կարդացե՛ք, վախեցե՛ք, հեռացե՛ք (-----)

→ -----, վախեցի՛ր, հեռացի՛ր (-----) → մի՛ վախեցիր, մի՛ հեռացիր (-----)

→ մի՛ կարդացեք, մի՛ վախեցեք, մի՛ հեռացեք (-----):

Դ. -Ացն-, -եցն-, -ցն- պատճառական ածանցներն ունեցող բայերի՝

→ վազեցրել, հեռացրել, հազգրել (-----)

→ վազեցրած, հեռացրած, հազգրած (-----)

→ վազեցրի..., հեռացրի..., հազգրի... (-----)

→ վազեցրո՛ւ, հեռացրո՛ւ, հազգրո՛ւ (-----)

→ վազեցրե՛ք, հեռացրե՛ք, հազգրե՛ք (-----)

→ մի՛ վազեցրու, մի՛ հեռացրու, մի՛ հազգրու (-----)

→ մի՛ վազեցրեք, մի՛ հեռացրեք, մի՛ հազգրեք (-----):

167. Փակագծերում գրե՛ք տրված բայերի ապակատար և համակատար դերբայները, ընդգծե՛ք դերբայական հիմքը /Օր.՝ հեռանալ (հեռանալու, հեռանալիս) և նշե՛ք, թե եղանակային ո՞ր ձևերն են կազմվում դերբայական հիմքով:

վազել (-----) (-----) գրվել (-----) (-----), խաղալ (-----) (-----)

ժպտալ (-----) (-----) թռչկոտել (-----) (-----) կտրատել (-----) (-----)

հասնել (-----) (-----) փախչել (-----) (-----) մտնել(-----) (-----)

հեռանալ (-----) (-----) վախենալ (-----) (-----) երեկոյանալ (-----) (-----)

վազեցնել(-----) (-----) հեռացնել (-----) (-----) վերցնել (-----) (-----)

168. Գրե՛ք 5-ական բայեր, որոնք՝

ա/ անկատարի հիմքում աննշույթ են, կատարյալի հիմքում՝ նշույթավոր /Օր.՝ ժպտալ.../

բ/ անկատարի հիմքում նշույթավոր են, կատարյալի հիմքում՝ աննշույթ / Օր.՝ հազնել.../

գ/ նշույթավոր են և՛ անկատարի հիմքում, և՛ կատարյալի / Օր.՝ արթնացնել.../

169. Լրացնել գծապատկերը:

	ԱՆԿԱՏԱՐԻ ՀԻՄՔ		ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔ			ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՔ
	աննշույթ	նշույթավոր	աննշույթ	նշույթավոր		
			արմատական	ցոյական	րեական	
սահել (պարզ)	սահ -			սահեց -		սահել-
գրվել (...)						

թողնել (...)		թողն-	թող - //	// թողեց-		թողնել-
խղճալ (...)						
հուրհրատել (...)						
խորհել (...)						
դյութել (...)						
մերժենալ (...)						
ցուլալ (...)						
ցուանալ (...)						
կռանալ (...)						
հղփանալ (...)						
արբենալ (...)						
հրապուրվել (...)						
հազնել (...)						
բարականալ (...)						
հոզնեցնել (...)						
արթնացնել (...)						
բարակել (...)						
դիպչել (...)						
հանգչել (...)						
հանգել (...)						
մտնել (...)						
վախեցնել (...)						

170. Դուրս գրե՛ք բայերը, ընդգծե՛ք բայակազմական հիմքերը և նշե՛ք տեսակները: /Օր.՝ տաքրավ → անցյալ կատարյալի հիմք, աննշույթ, արմատական/:

Կան պահեր, երբ մարդը լսում է իր արյան հոսքը, արյան ձայնը երգի նման տիրում է ունկերին, և անհնար է չունկնդրել: Կան պահեր, երբ ժողովուրդը լսում է իր արյան ձայնը. արթնացած արյունը, ինչ էլ կոչվի, միշտ ճշմարիտ է, որովհետև կարող են ստել, խարդախել, անազնիվ լինել անհատները, բայց ժողովուրդը՝ ոչ: Մեր արյունը մեր երգն է նաև, իսկ մեր երգի արյունը Կոմիտասն է՝ «Ամենայն հայոց երգի վեհափառը»:

«Կոմիտասները ծնունդ են հազարարմյակների: Նրանց դիմաքանդակը կերտում է ժամանակն ինքը, կերտում է դանդաղ ու անշտապ, ու դեռ վար չի դրել իր մուրճն ու տաշիչը» /Պ. Սևակ/: Կան անհատներ, որ կերպավորում են ժողովրդի ճակատագիրը: Հայը լուսո որդեգիր է ու կարապետ խավար վայրերում, հույս ունի ու գիտի հուսալ նաև կորցնելուց հետո... Դեպի ապագա լուսի կանթեղն է հառած նրա հայացքը, դեպի այն կանթեղը, որ տարել է բազմաբեղուն ու երկնադետ Արագածի գագաթը և անթել կախել երկնի անտես առաստաղից, որ խավար մարդիկ ձեռք տալ չկարողանան: «Ու մենք ևս մեր ձեռքին լույս ենք բռնել, և թեպետ ջանացել են դեերը փչել ու մարել մեր կյանքը, բայց փչողներն են խորտակվել, ու մենք դեռ մոխիրների տակ առկայծել ենք՝ ապավինելով գիտության և կրթության, որ թեև մերն է եղել, բայց մեր ձեռքից դուրս է եկել ու Եվրոպան լուսավորել. ինչու՞ չունենանք մեր լուսի ջահը մեր - գրում է Կոմիտասը Ա. Չոպանյանին: - Ուժ առ, ուժ տուր, պի՛նդ կաց, որ բարձրացած դարավոր ազատության ձգտող կոհակներն ու ալիքները չզարնվեն ժայռին ու այս անգամ էլ փշրվեն...»:

Ուր էլ նա տարավ իր երգը, դարձավ դեսպան ու բալասան, ինքնության ոգեկոչ ու ոգեկանչ: «Անցյալ գիշեր երգելով ու բարբառելով, զվարճաբանելով, երբեմն էլ տխրեցնելով Հայաստան ուխտագնացության տարաք մեզ, կամ ավելի ճիշտ՝ մի քիչ Հայաստան բերեցիք Եգիպտոսի հայերի համար: Մենք կարծում էինք, որ էջմիածնից եկող հայ կրոնավորը միայն մյուռոն է բերում իր հետ, բայց Դուք Մասիսն ու Արագածը մի պահ տեղափոխեցիք այստեղ. ո՞վ է ասում, թե լեռները չեն քայլում» /1911 թ. Տ.Կամսարական/:

Այո՛, երգը մեր արյունն է, իր արյան ձայնը լսած ժողովուրդը անպայման փնտրում է իր արմատները: «Ո՞վ ենք մենք... Ո՞ւր ենք գնում: Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը»... Հարցին պատասխանելու համար պետք էր պարզել պատմությունը դեռ միջնադարից լռող հայոց խազերի: Նա ասես մտավ մի վայրի անտառ և տարբեր խոտերից, անկանոն, խճճված բույսերից քաղեց հայկական ծաղիկները: Քաղեց, փնջեց, արևազօծեց, հետո ձերբագատեց օտար տարրերից, հայկական համ ու հոտ տվեց, հասցրեց գերագույն պարզության ու բյուրեղացրե՛ց, մարգարտացրե՛ց, խոսեցրե՛ց... Կոմիտասը վերստեղծեց խազերի համակարգը: Մինչդեռ հայոց խազերը լռում են... 1915 թիվ... «Գարուն ա, ձո՛ւն ա արել...»:

Լռեցնում էին հայոց խազերը, բայց անլռելի՛ է մեր զանգակատունը... Մեր խենթացած երգը, մեր լռած - անլռելիին... մահացավ Փարիզում՝ քսան տարի ապրելով-վերապրելով-չապրելով: «Ես ճամփորդ եմ». նրա բառերն են: Ճամփորդը տուն դարձավ ու հայրենի հողում դադար առավ՝ իր մահով իսկ համախմբելով ու միասնական դարձնելով ասդին ու անդին սփռված հայրենակիցներին: Եվ վկայեց Չարենցը. «Կապրի հոգիդ հմայող՝ Դարձած ելնող երգի ձայն»...

... Մարդկությունը դանդաղում է պատժաձև գտնելու այն ոճրագործին, որն սպանեց Կոմիտասին: Սակայն մեր մխիթարությունն այն է, որ նա Կոմիտասին սպանեց և ոչ թե Կոմիտասն սպանեց: Կոմիտասը չսպանվեց, նա ապրեց, հաղթանակեց ... **Ուրեմն՝ լսենք մեր արյան ձայնը. մեր արյունը մեր երգն է, իսկ մեր երգի արյունը Կոմիտասն է՝ «անմահ հայրը երգի մեր համայն»...**

(Մամուլից)

ԲԱՅԻ ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

171. Խմբավորե՛ք բայերն ըստ սերի:

ՆԵՐՂՈՐԾԱԿԱՆ	ԿՐԱՎՈՐԱԿԱՆ	ՉԵԶՈՔ			ԿՐԿՆԱՍԵՌ
		կրավորածև	անդրադարձ	փոխադարձ	
այրել	կառուցվել	խելագարվել	օծվել	տեսնվել	բաժանվել

Ա. Այրել, ամաչել, անցնել, ապրել, ավարտվել, ավելացվել, ատել, արբենալ, արիանալ, արհամարիվել, արտասվել, արտաքսվել, բաժանվել, բախվել, բնակվել, բերվել, բզզացնել, բլբլացնել, բորբոքել, բռնել, գանգատվել, գգվել, գերվել, գժտվել, գնահատվել, գրկախառնվել, գրվել, գունատվել, դիտել, դյութել, դնել, ելնել, երևալ, երդվել, զարդարվել, զարկվել, զարմացնել, զբաղվել, զգվել, զմայլվել, զորակոչվել, զուգվել, ընդհարվել, թախծել, թթվել, իջնել, լսվել, լվացվել, խաղաղվել, խելագարվել, խենթանալ, խնդալ, խշշացնել, խռմփացնել, խուսափել, ծածկել, ծավալվել, ծլել, ծլվլացնել, ծխալ, ծխել, ծփալ, ծփել, կախվել, կանգնել, կանչել, կաշկանդել, կառավարել, կառավարվել, կառուցվել, կարոտել, կծվել, կռվել, կործանել, հալվել, հակակրել,

համբուրվել, հազնվել, հակառակվել, հայտնել, հանձնել, հանձնվել, հաշվել, հարգել, հարձակվել, հեռանալ, համարձակվել, հաշտվել, հավատալ, հեռացվել:

Բ. Հիասթափվել, հիշվել, հպատակվել, ճանաչել, մաշվել, մարտիրոսվել, մաքրվել, մշակվել, մշմշացնել, մոլորվել, մոտենալ, մտադրվել, նայել, նմանվել, նորոգել, շաչել, շարժվել, շողալ, շպարվել, ողջագուրվել, ոչնչացվել, որոնել, չարչարվել, չքվել, պահպանել, պաշաչվել, պաշտել, պաշտպանվել, պապանձվել, պատրաստվել, պատվել, սանրվել, սափրվել, սգավորվել, սիրահարվել, սթափվել, սխալվել, սրվել, սքողել, վախենալ, վախճանվել, վառվել, վարժվել, վերաբերվել, վերցնել, վիճել, վիատվել, տանել, տանջվել, տեղափոխվել, տեղավորվել, տեսնվել, տիրապետել, տրաքվել, տուժել, ցնծալ, ուղղվել, ուշաթափվել, ուսումնասիրվել, փաթաթվել, փակցնել, փակվել, փշաքաղվել, փնտրվել, փնջացնել, փռթկացնել, փոխադրել, փրկել, քնել, քննել, քշվել, քսվել, օգտվել, օծվել, ֆշացնել:

172. Կազմե՛ք 2-ական նախադասություններ, որոնցում ներգործական սեռի բայերը՝ ա/ Գործածվում են առանց ուղիղ խնդրի /ներգործական բայերի բացարձակ գործածություն/. այսպիսի դեպքերում ինչպիսի՞ գործողություն են ցույց տալիս:

բ/ Ունեն բացառական հոլովով մասնական խնդիր. ի՞նչ են ցույց տալիս նման կապակցությունները:

գ/ Ունեն սեռական հոլովով և մասին կապով արտահայտված վերաբերության խնդիր: Ի՞նչ իմաստներ են արտահայտում նման բայերը, և նմանատիպ կապակցությունները ինչո՞վ են տարբերվում «ներգործական բայ + ուղիղ խնդիր» կապակցություններից:

դ/ Ունեն բացառական հոլովով արտահայտված վերաբերության խնդիր /հատկապես ժողովրդախոսակցական լեզվում/:

173. Հազնել – հազցնել, խմել –խմեցնել, մեղմել –մեղմացնել, պտտել-պտտեցնել, հիշել-հիշեցնել, սովորել – սովորեցնել, հասկանալ-հասկացնել, գրել-գրել տալ, սիրել – սիրել տալ բայազույգերով կազմե՛ք նախադասություններ և բացատրե՛ք պարզ-ներգործականների և պատճառական-ներգործականների միջև եղած տարբերությունը: Ընդգծե՛ք այն բայազույգերը, որոնք համանիշներ են և իրարից տարբերվում են սոսկ իմաստային երանգով:

174. Ա. Ընդգծե՛ք կրավորական սեռի բայերը:

Ա. 1. Ծփում է նա, ու լույս ծփանքի տակ, Իմ Հայաստան, հողդ է ծփածանվում, Այդպես հպարտ, այդպես բարձր ու շիտակ Քո դարավոր երագն է ծածանվում: **2.** Օծված է նա բախտի մեծ արևով, Կանգնած է մեր տենչի լույս գագաթին, Այնքան բարձր է, որ իր բոսոր թևով Ասես քսվի պիտի Արարատին: **3.** Երկիր, Ո՞ւմ ներշնչանքից Դու ծնունդ առար ու արարվեցիր, Եվ սակայն գիտեմ՝ Դու արարվել ես միայն այն պահին, Երբ միացել են իմաստությունը և խենթությունը: **4.** Եվ այրվում ես դու, Դու ոտից գլուխ այրվում ես, Երկիր... **5.** Այստեղ տնքում է դարեր վիրավոր մի գեղեցկություն, Եվ համրանում է քարե մի Նարեկ, Անի՛, Լո՛ւռ Անի, Փշրված կամար, Փշրված դու սյուն, Դու ստեղծումի փշրված տարերք: **6.** Ամռան հրդեհներից այրված, խարկված լեռներ՛, Ձմռան մրրիկներից ծեծված, զարկված լեռներ՛, Լեռներ՛, հայր՛ց լեռներ, Խոնարի ու բա՛ց լեռներ, Հոբի նման տանջված

Ու տառապած լեռներ... 7. Հայաստան, իմ հող, իմ մամո՛ւռ, իմ սե՛գ, Ծերպերից կախված իմ կապույտ թախի՛ծ, Քարերից քամվող արտասու՛ք իմ հեզ... Հողմերին տրված դարավոր իմ ձյուն... 8. Խաչքարի թևից Խաչված երազի Կսկի՛ծը կաթեց... 9. Որձաքարի բեկոր՝ Վրան այրված մամուռ, Ու քարաքոս, Ու ժանգ... 10. Քարը ելնում, Երկինք սուրում, Բիրտ շուրթերով լեռն համբուրում, Փշրվում է վիհերն ի վեր: 11. Քո տառապանքը փոխվել մի թեթև, ներող մի լույսի Ու դեմքիդ վրա ցոլում էր պայծառ... 12. Ու չկա մայրս հիմա.. Նա երազիս է գալիս, Թեքվում, ծածկում է վրաս, աստժո անունն է տալիս, Նոր սպիներս է շոյում, աղոթում է ու լալիս... Եվ թվում է, հավիտյան խոնարհված է սնարիս:

(Վ. Դավթյան)

Բ. 1. Հող իմ կիսված՝ սիրտ չկիսվող... Արյունն իմ հին քո հողի մեջ Սուզվեր պիտի երակ-երակ... Խառնվեի պիտի հողիդ, Արածանուդ ահեղ լացին... Ես քեզ արյուն պիտի տայի: **2.** Գետերդ ի վար, ձորերդ ի վար ուռիներդ են շարվել տրտում, Կատարներդ լճեր կան լուրթ, ու քո ոգին է մկրտվում: **3.** Տեսիլքից են ծնվել տառերը մեր, Հողմերով են սնվել տառերը մեր, Ջրդեղվել են, դարձել երկաթագիր, Քարերին են գրվել տառերը մեր, Երբ փորձել են ջնջել ու եղծանել, Կայծակին են տվել տառերը մեր: **4.** Այգեբաց է, ու բացվում, արթնանում եք, դուք, վազեր .. Իսկ այգեպանը, վազե՛ր, բացում է ձեզ, ու սակայն Դողում է սիրտը բարի... Բացվե՛ք, վազե՛ր, ու ծաղկե՛ք... **5.** Բացվել, Ցոլում էր ծնկածալդ թուխ ... Ու ես հիշեցի՝ Եվա է եղել, Եղել արգելված, Սակայն ի վերջո ճաշակված պտուղ: **6.** Ու վառվում է դեղձենին այգաբացի լույսերում՝ իբրև փոքրիկ այգաբաց ... Կակաչն է շոգից ուշաթափվում: **7.** Աշնան գույներն են խառնվել Առունների ջրում հստակ, Փշատի ծառն է բեռնվել Ու խոնարհվել է ոսկու տակ... Եվ օրորվում են ճամփեքին Սեզ բարդիներ, շե՛կ բարդիներ: **8.** Եվ այդ սիրո դեմ ցածում խոտերը խոնարհվում են վար, Եվ այդ սիրո դեմ հողն է սարսռում... Եվ օրորվում են, տարուբերվում են պարտեզներ կախված, ... Եվ վար է հոսում երկինքն անհունի խորհրդով շաղված: **9.** Գնամ, մոլորվեմ Քո այդ սպիտակ թեթևության մեջ... **10.** Այս հողն ես սիրում... Փոքրիկ այս հողը, Որ բնակվում է սրտիդ այն խորշում, Ուր բնակվում են երդումն ու ցավը: **11.** Թռչունի նման Ջարթնեի ծագող արևից առաջ Ու լվացվեի լեռներից պոկված կապուտակ քամով: **12.** Նայի՛ր այս ժայռին, Այնքան է զարկվել հողն ու կայծակով, Որ մարգարեի ու առաքյալի կերպարանք է առել:

(Վ. Դավթյան)

Գ. Մի ազգ խոցվելիս՝ ես կդառնայի մի նոր զանգահար,
 Ես կզանգեի բյուր-բյուր զանգերն հայոց վանքերի,
 Թե որ տեսնեի բլուրվելն այսպես ձեր խեղճ զանգերի:
 Թե մեկն ու մեկդ իմ ազգի նման եղեռնահարվեր,
 Ես չէի լռի՝ համակված ձեր սուրբ վշտով կարեվեր,
 Թե ձեր ժողովուրդն հազարաքարվան արվեր տեղահան,
 Ես կգոռայի՝ «Պատյանդ չքվի՛ր, ո՛վ ժանտ յաթաղան»:
 Թե ձեր մանուկներն իմոնցի նման մորթվեին անվերջ՝
 Ես կթքեի անգամ երկնքի բյուր աչքերի մեջ...
 Թե ձեր ժերուկներն իմոնցի նման թաղվեին կենդան՝
 Ես թաղողներին պիտի թաղեի, ո՛վ մահազնդան:
 Թե ձեր մայրերը իմոնցի նման կախաղանվեին,
 Կկայծակեի ժանտ ոսոխների անմայր աչքերին:

Թե ձեր քույրերն էլ իմոնցի նման պղծվեին մահով,
Ես ընթոստացած կռվի կելնեի գենք ու զրահով:

(Հ. Շիրազ)

175. Ընդգծե՛ք այն բայազույգերը, որոնցում երկուսն էլ ճիշտ կազմություններ են, և կազմել երկուական նախադասություններ:

Վերաբերել-վերաբերվել, բռնկվել - բռնկել, թեքել – թեքվել, քայլել-քայլվել, կախել-կախվել, կուտակել – կուտակվել, խոստովանել-խոստովանվել, ցնդել-ցնդվել, նախանձել-նախանձվել, հակառակել – հակառակվել, հակել – հակվել, համաձայնել-համաձայնվել, հնազանդել – հնազանդվել, մոլորել – մոլորվել, մռայլել-մռայլվել, նմանել – նմանվել, շառագունել-շառագունվել, հանդարտել-հանդարտվել, տուժել-տուժվել, տրաքել-տրաքվել, խաղաղել-խաղաղվել, ցնորել – ցնորվել, փլել- փլվել, փքել- փքվել, քծնել-քծնվել, պարապել-պարապվել, ճանապարհորդել- ճանապարհորդվել, խաչակնքվել-խաչակնքել, կապել-կապվել:

176. Որոշե՛ք տրված բայերի սեռը և հիմնավորե՛ք նրանց՝ բայական մեկ բառույթում սեռային տարբեր հատկանիշներ համատեղելու՝ կրկնասեռության իրողությունը:

Ա. ՄԱՐԵԼ – 1. Իմ աչքերի մեջ այնքան կրակներ եմ մարել ես Եվ հոգուս մեջ հուսահատ այնքա՛ն աստղեր եմ մարել... /ԵԶ/: **2.** Կյանքս կանցնի, կմարի, - բայց երգս կա, կապրի դեռ .. /Ն/: **3.** Ես մարում էի խանդիս ցավառիթ բռնկումները անվերջ ու անվեջ /ՍԿ/: **4.** Իմ կրակները դանդաղ կմարեն, Իսկ քո աչքերը կմնան շողուն... /ԿԴ/: **5.** Մի բուռ ես դարձել, ո՛չ հառաչում ես ու ո՛չ ձայն հանում, Մարում ես խաղաղ մի հոգեվարքով... Մարում ես, մայրի՛կ, դու խի՛ղձ իմ արդար.. ես՝ ոչինչ, Խիղձը պիտի որբանա... /Ն/: **6.** Երբ որ մարում են արդեն ձայներն այս բոլոր Ու լույսերն այս նույն, Երևի նաև հասնում է պահը Տիեզերական պատասխանների /ՊՍ/: **7.** Ճրագներ, ո՞նց եք արևը մարել. Նա միշտ՝ այնքան վեր, դուք միշտ՝ այսքան վար... /ՀԵ/:

ՆԱՅԵԼ – 1. Ու երբ տուն եմ մտնում ու հայելուն նայում, Հասկանում եմ շա՛նն էլ, ազոավի՛ն էլ... /ՊՍ/: **2.** Բուդդայաբար պազած գորտերը Առվի եզերքին Պլշած աչքերով ինձ էին նայում /Ն/: **3.** Հայացքը թեքում ու ինձ չէր նայում, Նայում էր ասես հեռու անհայտին, Հեռու մեկին էր ասես հմայում /ԿԴ/: **4.** Ավերակ բերդը նստել քարափին ու նայում է ցած, Ես նայել հեռվից ու կարծել էի՝ դա ժայռ է անել, Եվ սակայն նայիր, սա մագաղաթ է ասես քարացած /Ն/: **5.** Թողեք նա մի քիչ ինքն իր հետ մնա, Իր ներսը նայի /ՀՍ/: **6.** Երկինք նայեցինք. երկնքով մեզ հետ Աղավնիների մի երան կուգար... /ՀԵ/: **7.** Այդ ո՞ւմ եք մորթում. նրանց, որ դարեր նայել են երկնին /Ն/:

ԲՈՒՐԵԼ – 1. Եվ միջօրեի բարկ արևի տակ խիստ բուրում էին նարձիս ու ծոթոր /Ա. Իս./: **2.** Հորուտ-Մորուտն ծաղկանց ծովում բուրում էր բույր ու երգեր /Ն/: **3.** Մերկ ուսերդ ի վար ալիքը սևի Բուրում էր ծովի ջուր ու ավազով /ԿԴ/: **4.** Քարերը լռում, դարերը լռում, Բուրում են ծխով ու բուրում խունկով /Ն/:

ԼԱԼ – 1. Անո՛ւնդ... Իմ շրթունքերին դողում լույսի պես Ու հաղորդության Եվ իմ ծարաված այդ շրթունքների Աղի ու լեղի կարոտն է լալիս... Ու սրտիս վրա աստղեր է լալիս /ԿԴ/: **2.** Կար ժամանակ, գարո՛ւն, այդպես գալիս, Իսկույն նրան էիր դու այցելում, Նրա կրծքին ընկած անուշ լալիս.. /Ն/: **3.** Եվ ջուրը կարծես չի՛ լալիս անգամ. Ջուրը տենդո՞ւմ է /ՊՍ/:

ՄԱՂԵԼ – 1. Ժայռի պղնձից բուսել է ահա կապույտ մի ծաղիկ, Բուսել է ցավով ու շատ է ծարավ, Վրան երկնային քո ցողը մաղի՛ր /ՎԴ/: 2. Տեսնո՞ւմ ես, Մարիա՛ն, Դրսում անձրև է շեղակի մաղում... /ՊՍ/:

ՔԱՆԴՎԵԼ - 1. Առեղծվածները քանդվում թել առ թել, Հեկեկում էին մեր ոտքերի տակ /ՎԴ/: 2. Սարքո՛ւմ են այսպես: Դարե՛ր շարունակ: Անդուլ սարքում այն, ինչ որ չի սարքվում, Ուրեմն նաև չի՛ կարող քանդվել /ՊՍ/:

Բ. ՇՆՉԵԼ – 1. Ես ինչ կանեի, եթե չլինեիր հողն այս մի պատառ, Թե չչնչեի բուրմունքն այս հողի, ուրցի, փշատի /ՎԴ/: 2. Քանի հազար տարի Կարծրությունը ձեռքել Այս բիրտ որձաքարի, Դու շնչել ես իբրև ցայգածաղիկ /Ն/: 3. Ցեմենտ կոչվածը կարգին շնչում է միայն ջրի՛ մեջ, Մինչդեռ այդ խեղճը շնչահեղձվում է Հենց ի՛ր իսկ փոշով /ՊՍ/: 4. Չտվեց... , Որ թախծոտ երգը օդի պես շնչեմ, Որ Վերթերի հետ տառապեմ ու լամ /ՍԿ/:

ՇԱՐԺՎԵԼ- Աշնան պաղ քամուց ծառերն են շարժվում, Ինչպես որ մարդու գլխում շարժվում է Միտքը ճյուղավոր... /ՊՍ/

ՏԵՍՆԵԼ - 1. Ես անակնոց էլ պարզ տեսնում եմ քեզ: 2. Դարձյա՛լ չեն տեսնում ու չեն ճանաչում, Թաքստոցներ են փնտրում կանաչում /ՊՍ/: 3. Այս ախտը միայն նրանց է կայչում, Ովքեր ապառաժ-անտաշ քարի մեջ Տեսնում են Ֆորում, տեսնում Ջվարթնոց, ժայռի զաանգվածում տեսնում Աջանտա, Էլլորա,Գեղարդ, Անգույն կտավին՝ Սրբազան ընթրիք ու Մագթաղինե... /Ն/: 4. Եվ մի հատիկ իմ այս աչքով Շատ եմ տեսնում, Իսկ երկրորդով՝ ավելի՛ շատ ... /ՊՍ/:

ԱՆՑՆԵԼ – 1. Իսկ նա երևի Բուենոս-Այրես հսկա քաղաքի Մետաղյա ու չոր աղմուկի միջով Անցնում է մի տաք շշուկի նման Եվ անցնում իբրև արյան աղերսանք ու հիշողություն /ՎԴ/: 2. Ո՞վ է ջահել այն խիզախը, Որ հենց հարբած իր սիրով ... Ծովն անցնում է գիշերով: /ՀԹ/: 3. Անցնում եմ արագ ես ձեր փողոցով, Ձեր դռան առջև կանգնում եմ երկար /ՎՏ/: 4. Դու տեսե՞լ էիր նման մի դժոխք. Դու, որ դժոխքն ես քրքիջով անցել... /ՀՇ/:

ԱՇԽԱՏԵԼ – 1. Դու ինձ չես մերժում: Դու աշխատում ես ժխտել ինքդ քե՛զ /ՊՍ/: 2. Ես շարժվում եմ այնտեղ, Ապրում այնտեղ, Գուցե այն ինքնավար ժամացույցի նման, Որի սլաքները պոկելուց էլ հետո Աշխատում է դարձյալ՝ ցույց չտալով Այլևս ո՛չ թույն և ո՛չ ժամ.../ՊՍ/: 3. Ուրեմն Մաշտոցը տառերը երկնեց նրա համար, որ հայերը այդ գրերով հա՞ց աշխատեն /Մ. Գալշոյան/:

ԱՊՐԵԼ – 1. Գարո՛ն, մենութայն մեջ իր անձավի մի կախարդ էր ապրում, հոգնած մի մոգ /ՎԴ/: 2. Մեր ապրած մահը և վերապրումը Կամալենք կյանքի երեսի վրա /ՊՍ/: 3. Ուզում եմ ապրել անչար ու բարի՝ Գմբեթի ձեռքում բուսած տուղտի պես /Ն/: 4. Մի՛ գարմանար... մտքով արդեն Ես մեր կյանքը ապրեցի ... /ԱԻ/:

ԽԱՂԱԼ – 1. Մանուկներն այստեղ խաղում են գնդակ, Մանուկներն այդտեղ գնում են դպրոց /ՊՍ/: 2. Մինչդեռ մեզ համար Նրանք պարզապես թատրոն են խաղում /Ն/: 3. Չեռ առնելու չափ միամիտ մի հով Բարակ մութի հետ իրիկնաժամի Գալխս խաղում է նրա մորուքով /ՀՍ/: 4. Թափուր է սիրտս ու դռները՝ բաց, Մեջը խաղում է հուշերի քամին /ՍԿ/:

177. Ա. Ընդգծված բայերի սեռը որոշե՛ք ըստ խոսքային միջավայրի և սեռափմաստային երկրորդ արժեքով կազմե՛ք նախադասություններ՝ Օր.՝ Քիչ է պատահում, որ ինքս ինձնից Փոքր-ինչ գոհ լինեմ: Դժգոհ եմ հաճախ, Ուրեմն մարդ եմ ու դեռ ապրում եմ /ՊՍ/: *Սպրում եմ*- չեզոք սեռ: — Ալ կարմիր մեխակներ վաճառող Այս փոքրիկ,

սիրունիկ հայուհին Հենց այստեղ՝ այս քարե մայթերին Ապրում է առավուտն իր գարնան /Հր. Հովհ./: Ապրում է - ներգ. սեռ:

1. Քիչ է պատահում, որ ինքս ինձնից Փոքր-ինչ գոհ լինեմ: Դժգոհ եմ հաճախ, Ուրեմն մարդ եմ ու դեռ ապրում եմ /ՊՍ/: 2. Դեռ թեքված է Ու ճոճվում է վաղր՝ց դատարկ գավի վրա, Ինչպես ահեղ մի անդունդի... /ն/: 3. Եվ ցերեկային ամպած երկնքից ներքև են թափվում Աստղերի պաղ-պաղ կաղապարները, Որ ավելի կարճ կոչվում են «տերև» /ն/: 4. Էլեկտրոնային ձեր գանգոլ հուժկու ... Բաղադրեցեք այն ծուխն էլ անտես, Որ անջատվում է միշտ այդ կարոտից Եվ ո՞ւր է քաշվում... /ն/: 5. Թիվը ցույց տվեք Ա՛յն երազների և անուրջների, Որ այս բառով են կոչվում աշխարհում Լոկ այն պատճառով, Որ չեն կատարվում /ն/: 6. Եվ դրանով գոնե մաս-մաս վերադարձնենք Օտարացվող էությունը մեր մտքերի, Որ չխամրեն սրանք ... /ն/: 7. Բանաստեղծնե՞րը: Նրա համար չե՞ն, Որպեսզի... այսպե՛ս Ամե՛ն բան չըջեն աստառի վրա /ն/: 8. Եվ ժամանակն է կախվում օդի մեջ՝ Նո՛ւյն Չինգիզ խանի հորդայի նման /ն/: 9. Եվ զուցե այնժամ ես մահը սիրեմ, Երբ անմահ լինեմ, Երբ հավերժանամ, Երբ գարունները ողջ թագավորեն /ՀՇ/: 10. Էլ ո՞րն հառաչեմ, լեզուս է կապվում /ն/: 11. Այս վիշտն, Աստված իմ, ինչպե՞ս հառաչել. Ի՞նչ սրտով կիսել վշտերն այս լուսնի... /ն/: 12. Միայն կաղնին խշշում էր խոլ մի երգ Գալիք հպարտ սերունդների մասին /ԵԶ/: 13. Գութանն էր ճռնչում հորովելները հին /ՆԶ/: 14. Գիտես դու մեղմել և՛ ցավ, և՛ խոկում ու վանել սրտից տրտունջն անօրոր /ՎՏ/: 15. Երգ են կարկաչում աղբյուր ու վտակ /ՍԿ/: 16. Հովը սեր է չրշում ծաղիկներին, թփերին /ն/: 17. Եվ սուրբ կարոտիս երգերը խոր Մրմնջացել են ես հայերեն /ն/: 18. Ես նախանձում եմ հոսող ջրին, Ինքն իրեն մաքրում և մաքրվում է, Օրինաբանենք այս օրենքը հին Եվ ապրենք, քանի դեռ ապրվում է /ՀՍ/: 19. Քարայրի հոնքը ծռվել, Աչքը շաղվել է /ն/: 20. Հարավքամին է փչում, ու քամուց այդ տաք թև է առնում ծառերի ծաղիկն սպիտակ /ՎԴ/: 21. Ու երբ տխրեի, Դաշտերի խոտը խունկի պես բուրբեր, Հովն իր արծաթե սրինգը սուլեր... /ն/:

178. Ա. Ընդգծված կապակցություններում որոշե՛ք բայերի սեռը:

Բ. Բացատրե՛ք՝ ի՛նչ է նշանակում «գործողության ներքին խնդրառություն». նման կիրառություններում բայը փոխո՞ւմ է իր սեռային հատկանիշը:

1. Այդ առավուտ Սասնա սարում Մի աստղ ընկավ հանգած, **Լացն** իր **լացեց** մի ջինջ աղբյուր Ու չորացավ հանկարծ /ՎԴ/: 2. Ի՞նչ կա խորքի մեջ... երևի գետի արծաթե մի թել.. Բայց **խոսք են խոսում**, թե ցերեկ օրով նրա հատակից Կարող ես ոսկե աստղերը դիտել /ն/: 3. Ու երգում է ծառը, տե՛ս, քաղցր մի **երգ է երգում**, **երգում է երգը** սիրո, նվիրումի ու այրման... /ն/: 4. Երաժշտում և դեռ պիտի Հորդաբխուն երաժշտեր, Վիշտ երգելով ցրեր վշտեր, Սուտը հերքած՝ **ճիշտը ճշտեր** /ՊՍ/: 5. Եվ զգում եմ քեզ այնքա՛ն մոտիկ, Որ կարծես նույնիսկ քո **շունչն եմ շնչում** /ն/: 6. Իսկ եթե դեռ պիտի խաղաք, Է՛հ, խաղացե՛ք, խնդրե՛մ, ինչքան սրտներդ ուզի. **խաղ խաղացե՛ք** ինքներդ ձեզ և իրար հետ /ն/: 7. Նրանք **կռվում էին** իրենց **կռիվը** /ԴԴ/: 8. Իսկ ավեր դարձած գյուղական ալևոր ... **ննջում էր** անվերջ իր սև **նինջը** խոր... /ԵԶ/: 9. Քո մի խոսքից առավուտել, Թաքուն բախտով ներսից հորդել, Փխրել, տխրել ու **կարոտել** – **կարոտում եմ** /ՍԿ/: 10. Վա՛խ, դու էլ էիր այս **լացս լալիս**... /ՀՇ/: 11. Ոտքերի տակ իր բոբիկ աստղեր է առել ու **պար է պարում**: 12. Հողմը, սպիտակ կորուստների ու կարոտների կսկիծն առած, մենակ ու տխուր իր **վայն է վայում**:

179. Ա. Տրված բայաշարքերում բայակազմական-քերականական ի՞նչ դեր են կատարում բայակերտական *անել, լինել, արվել, դարձնել, տալ, պատճառել* բայերը:

Բ. Առանձնացրե՛ք սեռային հակադրություն դրսևորող ձևերը.

1. արմատահան անել /ն./ - արմատահան լինել /չ./ - արմատահան արվել /կր./
2. ուժասպառ անել – ուժասպառ լինել – ուժասպառ արվել
3. թևաթափ անել – թևաթափ լինել – թևաթափ արվել
4. խայտառակ անել – խայտառակ լինել – խայտառակ արվել
5. վազեցնել – վազել տալ
6. հիշեցնել-հիշել տալ
7. մեծացնել –մեծ դարձնել,
8. երջանկացնել - երջանիկ դարձնել
9. հզորացնել – հզոր դարձնել
10. տխրեցնել –տխրություն պատճառել
11. վշտացնել – վիշտ պատճառել:

Բ Ա Յ Ի Ա Ն Դ Ե Մ Ձ Ե Վ Ե Ր

180. Ա. Գտե՛ք անդեմ և դիմավոր բայերը: Համեմատե՛ք և հակադրե՛ք՝ ընդգծելով նմանություններն ու տարբերությունները /բառակազմական, ձևակազմական, կիրառական-շարահյուսական/:

Դ. Ըստ «Լեզվաբանական բառարանի» բացատրե՛ք «դերբայ» «բուն», «անկախ», «ձևակազմիչ», «կախյալ», «ձևաբայ» եզրույթների իմաստները:

Կուզեի գալ ու ճակատդ համբուրել քո ջինջ ու խոր երգերի համար, ...այն քարափների համար, որոնց ընդերքում թաքնված խորհուրդն ու քնքշությունը բացեցիր դու, այն կածանների ու անտառային արահետների համար, ուր քո մանկության ոտնահետքերից «անծրևաջուր էր խմում եղջերուն», քո այն պահերի համար, երբ «փակվող մուրճ ճոճք է դառնում, մութի մորթը քրտնում է, դեղին բեղերով բողբոջը ննջում է կարմիր կակաչի կախ ընկած թևին, հովը հուշում է ժամը ներգաղթի, քարափը նստում, երկինքն է կարդում», երբ օրը մթնում է, ժամ է իրիկնահացի, և տխրությունդ «կամաց-կամաց փոխվում է լացի»:

Կուզեի գալ ու ճակատդ համբուրել քո երգերում ապրող մարդկային բարության ու ազնվության համար, քո գույների, երանգների, քո զրնգուն հանգերի համար, քո ուշաթափվող ուռենու, հորինել իմացող առվի և սիրահետող ու համբուրող քամու համար, քամու համբույրին հավատացող ծառի տերևի ու ծառն իր գրկի մեջ փայփայող անտառի՝ երկինք հասնող խշշոցի համար, քարափի հոնքին՝ ծիածանի թևի տակ հոգին ավանդող ամպի պատառի համար:

Կուզեի քեզ պես շնորհակալ լինել քո սրտից, որ դիմացել է այսքան ցավերի, վիհեր է անցել անանցանելի և «կանաչել է ժայռերի մեջ բիրտ», որ դեռ կարող է արտասվել սրտանց, կարող է սրտի խոսք ասել մարդկանց և տանել հոժար «նրանց հույսերի ծանրությունն ուսիդ»:

Քեզ պես ես էլ «իմ չլինելուց չեմ վախենում, չեմ վախենում իմ բաժին մահից», բայց քո ծնկների անվերջ դողից իմ ծնկներն էլ են անվերջ դողում «մեր հոգնահանձար, բայց խեղճ ու անձար այս մոլորակի անվախճանության վախճանի ահից»....

Քո սրտի տազնապներից իմ սիրտն էլ է տազնապում. «Արտույտի երգին մի՛ խփեք քարով, դա ամենամեծ մեղքն է աշխարհում», քո ավեկոծություններից իմ սիրտն էլ է ավեկոծվում, երբ «ինչ-որ մի տեղ ինչ-որ մի մութ սպառնում է» լուսաբացին, ծաղկի բացվելուն:

Քեզ պես կուզեի՝ «Մեկն ինձ հավատար», այնպես կուզեի «հավատալ մեկին». կուզենայի՝ բարձունքից բարձունք ընկնող քո սրտի նման իմ սիրտն էլ կարողանար այսքան տարի բարուն հավատալ ու մնալ բարի, չարի դեմ լինել անողոք ու բիրտ:

Կուզեի քեզ նման զգա՛լ, տեսնե՛լ, շոշափե՛լ, լսե՛լ ու մարդուն հասնել, հասնե՛լ ու մարդանալ. «Ես ա՛յն եմ եղել, ինչ որ եղել եմ...»:

(Ըստ Վահագն Դավթյանի)

181. Համեմատե՛ք 1. և 2. կետերում տրվածները և բացատրե՛ք -ել-ի և -ալ-ի բառակազմական-բայակազմական արժեքը:

1. ա/ գր +ել և գր+ություն բ/ շարժ+ել և շարժ+ում գ/ խոս+ել և խոս-ք
դ/ խաղ+ալ և խաղալիք ե/ վազ+ել և վազ+ք գ/ ափսոս+ել և ափսոս+անք
է/ դեղին + ել և դեղին+ավուն ը/ հավերժ+ել և հավերժ+ական
2. ա/ գր+ել - գր + եց - գր +ած
բ/ շարժ+ել – շարժ+ում – շարժ+եց – շարժ+ի
գ/ խոս+ել – խոս+ում – խոս+ի – խոս+եց
դ/ խաղ+ալ – խաղ+ում – խաղ+աց – խաղ+ամ
ե/ վազ+ել – վազ+ում – վազ+ող -վազ-ի
գ/ կարդ + ալ – կարդ+ամ – կարդ +ում – կարդ+ա

182. Ընդգծե՛ք անորոշ դերբայները և նշե՛ք ձևաբանական հատկանիշները. որոշե՛ք կիրառությունը: Կիրառական առումով ո՞ր խոսքի մասին է համարժեք:

Ա. 1. Եվ թո՛ւյլ տուր խոսել գնալուց առաջ, Գրկելուց առաջ, Փարվելուց առաջ, Թո՛ւյլ տուր քեզ նայել մի փոքր հեռվից. – Իմ Սո՛ւլ... Սուլամի... Իմ Սուլամիթա՛, Առանց քեզ ապրելն այնքան է հիմա Անհասկանալի ու տարօրինակ, Որքան սառույցի կամ ձյան վրա Վառվող խարույկը: Ու ես ապրում եմ՝ այդպես վառվելով /ՊՍ/: 2. Իմ ձեռքերի գործը քեզ սիրելն էր որ կար, Փայել-փայփայելը, Գրկել-գուրգուրելը /ն/: 3. Սա իրավունք մի՞թե ինձ չի տալիս Գեթ այսքանից հետո պահանջելու, Որ իրավունք չունես ինձ տանջելու /ն/: 4. Է՛հ, ասելը հեշտ է: Թե ասելով լինե՛ր՝ Կարելի էր շուռ տալ աշխարհն իրոք Եվ իսկույն էլ տեղը մի նոր աշխարհ շինել /ն/: 5. Դու շատ հաճախ էիր իմ մազերը գովում, Որովհետև ուրիշ գովելու բան չունեմ /ն/: 6. Եվ ինձ չսիրելուդ, ինձնից հեռանալուդ Հանկարծահաս գյուտիդ ես կնայեմ այնժամ, Ինչպես որ նայում ենք այս վառողի գյուտին.../ն/: 7. Աչքերիս եմ սաստում՝ պինդ փակելով: Սակայն կոպերիս տակ քո աչքերն են բացվում... Ճերմակ ամպերն էին նրանց խորքում լողում, Հեռանալուց առաջ մի պահ կաշկանդվելով Քո կեռ թարթիչների վանդակի մեջ թավուտ... /ն/: 8. Այստեղ ամեն ինչ չքնա՛ղ է այնպես,... Ու ամեն քայլի մրմնջում ես «ջա՛ն». – Ջան, այս աշխարհում մի օր ծնվե՛լը, Այս հողում թեկուզ մի օր ապրե՛լը, Այս հողի համար թեկուզ մեռնե՛լը, Մեռնելով այս սուրբ հողին մերվելը, Եվ

սիրելը՝ ջա՛ն, Եվ խանդե՛լը՝ ջա՛ն.../ն/: **9.** Եվ պե՞տք է արդյոք Քեզ միշտ ունենալ իմ կողքին: Ինչո՞ւ:... Ուրեմն ի՞նչ անել, Ինչպե՞ս սիրել քեզ - սիրվել քեզանից և... Էլ չուզենալ Ոչի՛նչ ավելի. Սեփական իղձը, դավաճանի պես, Գամել չորս մեխով, Սեփականի ցավին Չորստապակ մեղր քսել ու կլլել՝ Տհաճ, բայց բուժիչ դեղահատի պես, Սեփական մտքից Կտրել ուղղանկյուն մի քառակուսի Ու վրան գրել սեփական արյամբ. «Եղա՛ծն էլ շատ է», Գրել ու մեխել սեփական ափին, Եվ ամեն վայրկյան ընթերցել ծածուկ՝ Դասը չիմացող աշակերտի պես... /ն/: **10.** Եվ ինչպե՞ս եմ հաճախ իջել-ստորացել՝ Բարկանալու և դատելու աստիճանի, Չարանալու և ատելու աստիճանի, Ու թույլ տվել, որ նողկանքը տեղից հանի Հիացմունքին /ն/: **11.** Ով որ դնում է այստեսակ գլխարկ, նա դադարում է և մտածելուց: Սակայն մի՞թե մեզ, ինչպես ասում են, Պատիվ է բերում չմտածելը: Եվ ճի՞շտ ենք անում, Երբ մենք վարժվում ենք չմտածելուն, Ի՛նչ է թե հանկարծ սխալ չգործենք /ն/: **12.** Բայց սիրում են նրանք իրենց ծունկը ծալել՝ Անտանելի ցավն աշխարհի Որևէ կերպ բարձրացնելու Եվ արևի կիզարանում մոխրացնելու նպատակով: Բայց սիրում են նրանք իրենց ծունկը ծալել՝ Գեղեցկության մերկ ծնկներին շուլալվելու՛, Հողի տաքուկ բուրմունքի մեջ լուռ հալվելու՛, Մանուկների աչքերի մեջ նկարվելու՛ երազանքով.../ն/: **13.** Արվեստի բնագավառ մտնելն ու չփնտրելը նույնն է, ինչ որսի գնալն ու շուրջը չնայելը: Բայց ամեն դեպքում կարևորը որսածն է և ոչ թե շուրջը նայելը, ինչպես որ կարևորը գտնելն է և ոչ թե փնտրելը /ն/: **14.** Չեմ հարգում շանն էլ, որին չար տերը Անտեղի տեղը որքան ծեծում է, Այնքան նա լիզում է տիրոջ ոտերը՝ Իրեն տրորող-ջարդող ոտերը, Եվ կծելու տեղ լոկ կաղկանձում է /ՊՍ/ **15.** Մահը մի՛շտ հիշիր. Բայց հիշիր ոչ թե լացելու համար. Այլ, որ իմանա՛ս,- Թե դեռ ինչքա՛ն է մնում... ծիծաղել, Եվ... ուրախանա՛լ. Մահը մի՛շտ հիշիր Ոչ թե անիմաստ կարծելու համար Անելիքը քո, Այլ շտապելու... Մահը մի՛շտ հիշիր, Որ հիշես՝ ինչո՛ւ Եվ ի՛նչ ես ուզում անել աշխարհում.../ԳԷ/:

Բ. Ուրեմն, ինչպե՞ս, հեղեղներն արյան
Թողնե՞լ, որ ծածկի մոռացման փոշին.
Խլացնե՞լ սիրտը, որ էլ չլսվեն
Վրդով ձայները խորքերից հառնած,

Փակե՞լ աչքերը, չզգա՞լ, չընդվզե՞լ,
Մոռանալու տա՞լ, անգամ մոռանա՞լ.
Ո՛չ, ի՛ն ժողովուրդ, դու շատ ես տեսել,
Դու պիտի հիշես ապրելու համար...
(Ս. Կապուտիկյան)

Գ. Դու դեռ իրավունք չունես լռելու,
Այս մեծ ամպրոպը թող քեզ նորոգի,
Դեռ այնքան լուսեր ունես փռելու,
Խոսքով կռելու հավատք ու հոգի:
Դու դեռ իրավունք չունես մեռնելու...
Դեռ ամրություններ ունես առնելու
Հեռաստաններում հոգնահորիզոն:
Դեռ կարողություն ունես փորձելու

Մեր տառապանքներն իմաստուն ու մեծ...
Իրավունք չունես զգաստանալու...
Ժամանակ չկա հանգստանալու,
Եվ ծերանալու ժամանակ չկա:
Դեռ պարտքեր ունես աշխարհին տալու,
Պատրաստվիր վաղվա ճակատամարտին:
Էլ ի՞նչ ամպ ես, որ չես որոտալու,
Անծրև չես տալու լեռանն ու արտին...
(Հ. Սահյան)

183. Ա. Ընդգծե՛ք բայերը, առանձնացրե՛ք հարակատար դերբայածները թե՛ բուն, թե՛ փոխանվանական գործածությամբ՝ նշելով քերականական հատկանիշները /ուշադրություն դարձնել «հարակատար դերբայ+օժանդակ բայ» կառույցին/:

Բ. Մնացած բայերի հարակատարի ձևերը կազմե՛ք և ընդգծե՛ք հիմքերը:

Ա. 1. Չեմ էլ հարցրել ես պահակներից Քո՝ Իմ չունեցած-չինացած հասցեն: Ես ճամփորդի պես, Ու մոլորվածի, Հասել եմ դուռդ.../ՊՍ/: **2.** Ապրած-զգացածս ասել չգորելո՛ւց Ես կխեղդվեմ մի օր՝ Ինչպես մահանում եմ Կոկորդի մեջ խցված սուր ոսկորից /Ն/: **3.** Ինձ խաբելով ինքս՝ Ինձ չեմ հաշվում խաբված /Ն/: **4.** Էլ չեմ քայլի այնպես, Ասես մարդ չեմ ապրող, Այլ կախարան քայլող, որից կախ եմ տվել Մի վերարկու մաշված և մի ծանոթ գլխարկ.../Ն/: **5.** Լավագույն դերը՝ Վատ խաղացածը: Լավագույն սերը՝ Կիսա՛տ թողածը: Լավագույն տանջված ու տառապածը Վարդն է /Երգերո՛ւմ/ /Ն/: **6.** Ի՛նչ կախարդական բան է այս հայրենիք ասվածը, այս Հայաստանը: Երբ նա մեր ձեռքին է, մենք չենք զգում, թե որքան գրավիչ է այն: Իսկ երբ նա կաշկանդված է, կամ ստրկության մեջ է, սկսում ենք մորմոքել նրա կարոտից: Երբ նա ազատ է, անփույթ ենք դառնում նրա հանդեպ, երբ նա գերված է, սկսում ենք ախ ու վախ անել ու տանջվել նրա համար՝ ուրիշներին էլ տանջելով մեզ հետ, և ճիգ ու ջանք թափել, որ ազատենք մեր ձեռքից անզգուշությամբ փախցրած դրախտահավը /Խ. Ղաշտենց/: **7.** Մենք չգիտենք, որ կյանքը մեր հետածգված մահն է միայն /ԱԻ/: **8.** Լավ ասված խոսքը մեռած մարդն էլ կլսի /Սիցշե/: **9.** Գազանն անգութ է, երբ սոված է, մարդն անգութ է, երբ հղփացած է /Ս. Առաքելյան/: **10.** Երաժշտությունը բոլոր արվեստներից ամենամարդկայինն ու ամենտարածվածն է /Ժան Պոլ/:

Բ. Գզգզված ամպերի արանքից ծիկլակում էր Արեգակը: ... Ծառի շուրջբոլորը ողողված էր արևով, իսկ քիչ այն կողմ ստվեր էր. լույսը ստվերն էր շեշտել, իսկ ստվերը՝ լույսը: Թվում էր, թե ծառի շուրջբոլորը ծիածաններն են քանդվում ու հյուսվում: Գյուղից վեր՝ լեռնալանջին, Արեգակը դեղին մի արտ էր փռել՝ օղակված սևահողի հերկով, և լույսով ցողված տանիքներին փողփողացին ծխերի կապույտ ժապավենները...

Լավ կլիներ, որ գլխի ընկած չլիներ, հասկացած չիներ, բայց հասկացել էր արդեն:

Նա հասկացել էր, թե ինչու է ապրել ծառը: Այսպես՝ ճամփեգրին լքված, այս տոժացող կիրճի պռնկին կանգնած, այս քարերի մեջ ծառը, որ ողողված էր արևի ճառագած լույսով, ինչու է համարել ու կանգուն մնացել այսքան ժամանակ:

Հրաշք տեսնելու համար: Երկնքի ու երկրի հրաշագործությունները տեսնելու:

Ովքե՞ր են այս ճամփով անցուդարձ անողները, որ չեն նկատում ծառին – սատանի ձի հեծածները: Եվ թող չնկատեն միայնակ ծառին. երկինքն ու գետինը ծառի համար հրաշքներ ունեն պահած՝ արևածագից արևամուտ և գիշերվա մութ ծալքերի մեջ: Ահա լույս ու ստվերի հետաքրքիր խաղը, երկնքում ծաղկած կտավատի կապույտ արտը, երկնքում աճած ընկուզենին, ահա ընկուզենու սաղարթում խճճված մառախուղի բզիկը, դեղին տերևների բռերում՝ մի կաթ ջրի մեջ ծաղկած մեծ Արեգակը, լեռներում բռնկված ամպերի հրդեհը..., և այս ամենը՝ մի պռատ օրվա մեջ... Ծառը հակվել՝ լույսի ցուլքն է որոնում՝ այս կիրճում տեսած հրաշքներից վերջինը... Դեռ հրաժեշտ չտված տերևները ուրու տեսած ծտերի նման ալեկոծվել էին. տերևները լսել էին կացնի ձայնը, գիտեին, որ բունը կտրված է... Դժվար ապրած այս ծառը ի՛նչ հանգիստ կտրեց Հազրոն: Սա՛ այս համառ ու միայնակ ծառը, անտառի ծառերից մեկը չէր, սա ջրերի հետ խաղացող գետափի ծառերից մեկը չէր, այգիներում գուրգուրվող ծառերից մեկը չէր... Միայն այսօր, հենց այսօր, հենց Հազրոյից ստացած կացնի դողը չէր, որ բռնել էր ծառին. նոր չէր կացնի ահը: Սա գուրգուրանքը անցուդարձողների անտարբեր հայացքներում որոնող

հավատավոր ծառ էր, գետը քարե ընդերքում որոնող համառ ծառ էր, անտառից վտարված-վիրավորված ծառ էր, սա հրաշքներով ապրող երազկոտ ծառ էր... Ծառը սպասում էր այսօրվան. գիտեր, որ ծառի պես չի մեռնելու. կանգնած չի մեռնելու... Ե՛վ այս ճանապարհին, և՛ այս տժացող կիրճին ծառը վաղուց հրաժեշտ տված կլիներ, եթե չլինեին երկրի ու երկնքի հրաշքները: Եվ նա զսպել էր իր մեջ բուն դրած կացնի սարսափը ու որոնել հրաշքներ... Բայց ծառն արդեն կտրված էր... Արևը պարուրել էր ծառին. ծառի շուրջքուրդը շաղ եկած մութ ստվերները ավելի էին շեշտել աշնան արևի դեղինը. արևը գուրգուրում-սփոփում էր ծառին, վերջին մի կյանք էր խոստանում նրան. բայց ծառը գիտեր, որ արևը մնաս բարև է ասում, գիտեր, որ Արեգակը հրաժեշտի դեղին շապիկ է հագնում իրեն... Ծառը գնում էր, բայց նա այնպես էր համոզված. որ նա՝ ծառը, այդպես հակված դեռ որոնում էր կիրճով ցուած լույսը...

(Ըստ Մ. Գալշոյանի)

Գ.

- Ինչքան գիտուն լինես, չիմացածդ մի անգետից հարցրո՛ւ:
- Ըրտեղ մարդիկ վշտացած են, դու էլ վշտացիր:
- Ժողովուրդը քնած առյուծ է, որ զարթնեց, էլ չի քնի:
- Կաթի հետ մտածը հոգու հետ դուրս կգա:
- Աչքի տեսածը հաստատ է, քան ականջի լսածը:
- Քնածը քնածին չի կարող արթնացնել:
- Բերանից թռած խոսքը հրեղեն ձիով էլ չես բռնի:
- Ասածը հասկանալու համար անհրաժեշտ է վերծանել նաև չասածը:
- Կարկուտը ծեծած տեղն է ծեծում:
- Կուշտը սովածին մանր է բրդում:
- Ջուրը չտեսած մի՛ բոբիկացիր:
- Դառը պտուղները երբեք արգելված չեն:
- Խարդախները հակված են մտածելու, որ մնացած բոլորը նման են իրենց:
- Խուր խոսքը քնած է հիմար ականջում:
- Գայլը թողածի համար է ափսոսում, հովիվը՝ տարածի:

184. Ա. Դուրս գրե՛ք ենթակայական դերբայները և որոշե՛ք շարահյուսական կիրառությունը:

Բ. Սահմանե՛ք՝ ո՞ր հիմքից է կազմվում *է* խոնարհման բայերի և *ա* խոնարհման բայերի ենթակայական դերբայը:

Մի անգամ Վահրամ Փափագյանը հանդիպում է ունենում Երևանի ոստիկանության աշխատողների հետ: Ջեկուցումից հետո մի խումբ ոստիկաններ հուզված և ոգևորված ողջունում են աշխարհահռչակ դերասանին: Իր շնորհակալական խոսքում Փափագյանը «քննող, ուսումնասիրող» հայացքով նկատում է.

- Ինչ լավ հայերենով էին խոսում այս ամբիոնից ինձ ողջունողները: Այն ընկերը, որ առանց թղթի կտորի խոսեց այդքան գեղեցիկ, նույնպե՞ս ոստիկանության աշխատող է:

Դահլիճում նստածներն ասում են, թե, այո, խոսողը ոստիկան է:

- Անցյալ օրը, - շարունակում է խոսքը Փափագյանը,- գնացել էի փոստ՝ արտասահմանում բնակվող և ինձ միշտ հիշող, ինձնով ոգևորված ու ոգևորող ընկերոջս ծրար ուղարկելու: Կողքիս կանգնած էր մի կին, երիտասարդ հայ կին՝ մանչուկի ձեռքից բռնած: Եվ, պատկերացնու՞մ եք, այդ գեղեցիկ, հրապույրներով գերող կինն իր մանչուկի հետ խոսում էր մի այնպիսի անձռոնի, ոչինչ չասող հայերենով, որ զարհուրեցի: Քանի որ

ծեր մեջ լավ հայերեն իմացողներ կան, ապա աղերսագին խնդրում են ձեզ, չե՞ք կարող, արդյոք, մեր լեզուն այդպես անխնա աղավաղողներին, անճոռնի հայերենով խոսողներին, հայերեն չիմացող կամ կիսատ-պռատ իմացող մարդկանց կալանքի տակ առնել:

Դահլիճում ուրախ ծիծաղ է բարձրանում՝ ձերբակալել ճի՛շտ չխոսող, հայերենից «կաղացող», հայերենն աղարտող հային...

- Մի՛ ծիծաղեք, լուրջ են ասում: Մի՞թե կարծում եք, որ դրանց հասցրած վնասը նվազ է գրպանահատի հանցանքից:

(Ըստ Ռ. Ջարյանի)

185. Կազմե՛ք վերոբերյալ տեքստի հարակատար դերբայների ենթակայական և ենթակայականների՝ հարակատար ձևերը /Օր.՝ հուզված – հուզվող և իմացող-իմացած/. երկանդամ հակադրություններում բացատրե՛ք յուրաքանչյուրի բայիմաստն ու նրանց հարաբերակցությունը:

186. Ընդգծե՛ք այն ենթակայական դերբայները, որոնք նաև գոյականական արժեք ունեն:

Ընթերցող, արհամարհող, ծնող, կարող, հերձվածող, փախչող, տանող, տանող-բերող, ուրացող, քծնող, քերթող, հարբեցող, աշխատող, առաջնորդող, ասացող, արդյունաբերող, արտադրող, գրող, ընտրող, լրագրող, ծառայող, կրծող, մատուցող, մտածող, մեղադրող, նվաճող, որոճող, սիրող, գծագրող:

187. Ընդգծե՛ք համակատար դերբայները, բացատրե՛ք ձևակազմությունը և կիրառական առանձնահատկությունները:

1. Գարունդ հայերեն է գալիս, Ձյուներդ հայերեն են լալիս, Հայերեն են հորդում ջրերդ /ՀՍ/: 2. Հայաստան ասելիս այտերս այրվում են, Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են ... Հայաստան, անունդ տալիս ժայռի մեջ մի տուն են հիշում /ն/: 3. ...Տղան եկել Ու հոր տունը չի ճանաչել, Որովհետև տան կտուրին փուշ է աճել, Շեմքի վրա՝ սունկ ու մամուռ: Մի այդպիսի տուն հիշելիս Ես չեմ կարող չհառաչել: Պատահել է, էլ ո՞ւր մնաց հայրը որդուն, Որդին նայել հայելու մեջ, Ինքը իրեն չի ճանաչել: Այդպիսի հոր հանդիպելիս Ես չեմ կարող չհառաչել: Պատահել է Մարդը տարել արտ է ցանել, Ցանած արտը չի կանաչել, Այդ խեղճ մարդուն հանդիպելիս Ես չեմ կարող չհառաչել /ն/: 4. Պատահում է սիրտդ լցվում Ու չի լալիս ժամանակին, Ամպը անձրև է խոստանում Ու չի տալիս ժամանակին.. Եվ այդպես էլ գլխի չընկանք, Թե մեր ուզած ժամանակը Երբ է գալու ժամանակին /ն/: 5. Այս վերջին հաչն է ինձ շատ դուր գալիս, Թեպետ շատ հաճախ ինձ տեսնում ես դու Ոչ թե խնդալիս, Այլ դառն լալիս /ՊՍ/: 6. Երագել է տալիս մութը, Իսկ երագել մենք չենք ուզում /ն/: 7. Բարությունս, վերջ ի վերջո, ես կխեղդեմ, Թե չարացնող կյանքն էլ չօգնի՝ խեղդվելիս ... մեջս կխեղդեմ... /ն/: Չորից թռչելիս, ժայռից ցատկելիս... Նա խեղանդամվում... Փռչի է հանում ճանապարհներին... /ն/: 8. Մենք կժպտանք, գոհ կժպտանք մեռնելիս, Որ երագում երագեցինք ու անցանք /ԵԶ/: 9. Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես. Կյանքս կանցնի, կմարի, բայց երգս կա, կապրի դեռ /ն/: 10. Մանկությունս հիշելիս սիրտս դառնում է գինով /ն/: 11. Ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում տիրելիս է լինում Ուրբանա թագավորը: /ՀԹ/: 12. Եվ ամեն անգամ հիշելիս սիրտս լցվում է միշտ նույն խորին հուզումով /ԱԻ/: 13. Այո՛, Սաադի, Ինչո՞ւ վարդը հոտոտելիս խորիել նրա վաղանցուկ շնորհի մասին: Պահի՛ր հիշատակը

բույրի.../ն/: 14. Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ երեկոյան՝ ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ձեմելիս, հարբած գեղեցկի հրեղեն գինով, իրեն ծովն է նետել՝ ալիքների վրա քայլող լուսնյակը բռնելու /ն/: 15. Երբ փոթորիկ էր լինում և մրրիկ, նա տեսնում էր Լիլիթին իր մոտով շեշտակի անցնելիս /ն/: 16. Երագիս մեջ լիճը տեսա՝ Ոսկի ալիք ցուլալիս, Մի տղի հետ յարիս տեսա՝ Ոսկի նավով ման գալիս /ն/: 17. Երեկ տխուր, այսօր ուրախ, Ալիքի պես ծափ եմ տալիս, Երեկ՝ դեպի անհայտություն, Այսօր դեպի ասի եմ գալիս /ՌԴ/:

188. Լրացրե՛ք աղյուսակը՝ առանձնացնելով յուրաքանչյուր դերբայի հիմքն ու վերջավորությունը:

անոթ	բնութագրող բնութագրիչ	ստորադաս	ստորադաս	անոթ	ստորադաս	ստորադաս	ստորադաս
գն-ալ							
	կորչ-ող						
		իջ-ած					
			մոտենալ-իս				
				հասկան-ում			
					կտրտել-ու		
						հագ-ել	
							մտն-ի
անցն-ել							
			հեռացնել-իս				
						վագ-ել	

189. Լրացրե՛ք աղյուսակը + և - նշաններով:

ԴԵՐԲԱՅ /բայօրինակներ՝ ելակետային ձևերով/	ԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՏԻՊԸ	ներկայի հիմքով	կատարյալի հիմքով	դերբայական հիմքով
ԱՆՈՐՈՇ /վազել, հնչել, կարդալ, մտնել, հեռացնալ, գրվել, կտրատել/	ե խոնարհման պարզ բայեր	+	-	-
	ա խոնարհման պարզ բայեր			
	սոսկածանցավոր բայեր			
	պատճառական բայեր			
	կրավորական բայեր			
	բազմապատկական բայեր			
ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ /գրել, հոգալ, մոտենալ, վազեցնել, սիրվել, ծակոտել/	ե խոնարհման պարզ բայեր			
	ա խոնարհման պարզ բայեր			
	սոսկածանցավոր բայեր			
	պատճառական բայեր			
	կրավորական բայեր			
	բազմապատկական բայեր			
ՀՈՐԱԿԱՍԱՐ /բերել, դրդալ, փախչել, փախցնել, քերվել, ցատկոտել/	ե խոնարհման պարզ բայեր			
	ա խոնարհման պարզ բայեր			
	սոսկածանցավոր բայեր			
	պատճառական բայեր			
	կրավորական բայեր			
	բազմապատկական բայեր			
ՀԱՄԱԿԱՍԱՐ /սիրել, խաղալ, հանգստանալ, խմեցնել, կառուցվել, հուրիրատել/	ե խոնարհման պարզ բայեր			
	ա խոնարհման պարզ բայեր			
	սոսկածանցավոր բայեր			
	պատճառական բայեր			
	կրավորական բայեր			
	բազմապատկական բայեր			

ԱՆԿԱՏԱՐ /քայլել, թվալ, զայրանալ, բարձրացնել, գրվել, ճանկրտել/	է խոնարհման պարզ բայեր			
	ա խոնարհման պարզ բայեր			
	սոսկածանցավոր բայեր			
	պատճառական բայեր			
	կրավորական բայեր			
	բազմապատկական բայեր			
ԱՊԱԿԱՏԱՐ /հմայել, տոկալ, վախենալ, հագեցնել, քշվել, փշրտել/	է խոնարհման պարզ բայեր			
	ա խոնարհման պարզ բայեր			
	սոսկածանցավոր բայեր			
	պատճառական բայեր			
	կրավորական բայեր			
	բազմապատկական բայեր			
ՎԱՂԱԿԱՏԱՐ /քնել, դողալ, ընթանալ, փախցնել, լսվել, թքոտել/	է խոնարհման պարզ բայեր			
	ա խոնարհման պարզ բայեր			
	սոսկածանցավոր բայեր			
	պատճառական բայեր			
	կրավորական բայեր			
	բազմապատկական բայեր			
ԺՆՏԱԿԱՆ /հիշել, դողալ, թռչել, նստնացնել, ծռվել, հրմշտել/	է խոնարհման պարզ բայեր			
	ա խոնարհման պարզ բայեր			
	սոսկածանցավոր բայեր			
	պատճառական բայեր			
	կրավորական բայեր			
	բազմապատկական բայեր			

190. Ընդգծե՛ք դերբայները և նշե՛ք ձևաբանական հատկանիշները:

Ա. Մեր մայրենին լեզուների անձեռակերտ ու հրաշագեղ զարդ-մատանու մի ակնաքար ունի՝ իր խորախորհուրդ բառերը, որոնք ներկայացնում են վաղնջական ժամանակներից իր հողում ապրող ու արարող, իր ստեղծած հարստության համար պայքարող ժողովրդի նկարագիրը: Բառի հաջող ընտրության առինքնող օրինակը տվել է մեծն Մաշտոցը՝ իր ստեղծած առաջին տառերով իմաստությունը ճանաչելու հորդոր անելով: Երբ մեր նախնիները երկընտրանքի մեջ էին մահը կամ ազատությունը ընդունելու հարցում, մեծն Եղիշեն հավաստեց. «Մահն անիմացյալ մահ է, մահն իմացյալ՝ անմահություն»: Երբ պետք էր ազգին լուսավորել մտքի փայլատակումներով, զորականի առնական կանչի պես հնչեց իմաստության ծայրը՝ «Լավ է կույր լինել աչքով, քան մտքով»:

Անցնում էին դարերը, և մեսրոպյան տառերով հյուսված բառերը շողարձակեցին բազմադարյա մեր պատմության քառուղիներում՝ դառնալով Սասնա ծուռ ու Դավթի Թուր Կեծակի, Քուչակի սերը՝ շաքարով, Ֆրիկի պոռթկացող գանգատը, դաղերից բեզարած բանաստեղծի ըմբոստ բողոքը, «Եղբայր եմք մեք» ու «Զարթի՛ր, լա՛ո»: Հետո նոր առավոտ դարձան ու վերածնված Հայաստան: Երբ նորից սպառնաց ահեղ թշնամին, բառերի հաջող ընտրությունը հնչեց որպես ձայն հայրենական...

Բառերի մեջ միշտ էլ տեսանելի պատկեր կա, խոր միտք, անհուն զգացմունք... Մի՞թե «մագաղաթ» ասելիս աչքի առջև չեն հառնում վաղնջական օրերի շունչը պահող մատենագրության էջերը, և «Մատենադարան» ասելիս չենք տեսնում ձեռագրերի պահոց-ամրոցը... Իսկ երբ «յաթաղան» ենք ասում, չենք կարող չսարսռալ, չսարսափել, բայց նաև կրակի մեջ թրծվող պողպատի պես չչիկանալ, որովհետև աշխատավոր, անմեղ մարդկանց արյունը թափելու «միջոց» լինելով՝ այն նաև խորհրդանշում է սուլթանական Թուրքիայի բարոյական քստմնելի նկարագիրը:

Անշուշտ հասկանալի է, որ ոչ մի ժողովուրդ չէր ցանկանա «սփյուռք» ունենալ. այս Երկիր մոլորակում վաղնջական օրերից իր բնօրրանը, իր հողն ունեցող հայ ժողովուրդը ևս: Եվ թող մեր լեզվի մեջ չլիներ այդ բառը, մեզ չպարտադրեին այն ստեղծելու ճակատագիրը: Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում գոյատևելով,

ապրելով ու պայքարելով, իր վարք ու բարքով ոչ մեկին չի պարտադրել մի այնպիսի բառ, որ նման լիներ «յաթաղանին», ոչ մի ժողովրդի չի ստիպել «սփյուռք» ունենալ... Մարդկություն, սեր, ջերմություն, բարություն են ճառագում մեր շատ բառերից. թեկուզ հիշենք մեր «խաղողը», «գինին», «քարը»...ու ճառագելու են...

(Վ. Մովսիսյան)

Բ. Բոլորս շտապում ենք, բոլորս հոգնել ենք, շատ ենք հոգնել: Մեզ բաժին հասածից ու սպասվածից, տրվածից ու չտրվածից: Ապրածից ու չապրածից: Հավատալուց: Խաբվելուց: Չհավատալուց: Բոլորիս ճնշում է անորոշությունը: Օրվա: Կյանքի: Երկրի: Մեր իսկ ճակատագրի: Շուրջբոլորը ճշում են, թե արքան մերկ է, ազգովին անդերսենյան մանուկ ենք դարձել, բայց ո՞վ է արքային հանդերձավորելու, դե՛, գոնե մերկությունը ծածկելու: Իսկապես հոգնել ենք, որովհետև ապրում ու ապրում էինք թմրած-ընդարմացած, երազելով, հուսալով, ու հանկարծ միանգամից բոլորն սկսեցին ճչալ: Չխոսել, չասել, չպատմել, չլացել. ճչալ. ասել է՝ ցավն ուժեղ է եղել, ասել է՝ խոսելիքը կուտակվել է: Բայց պատրաստ ենք արդյոք լսելու: Խոսելիս, ասելիս, պատմելիս ու ճչալիս շատ-շատերս մոլորվեցինք մեզ տրված ազատության հորձանքում. մեզ վրա թափվեց հուսադրող կիսաճշմարտությունների, ընկճող խաբեությունների, մոլորեցնող կեղծիքի, հոգիդ կեղեքող ճշմարտության այնպիսի հեղեղ, որ կողմնորոշվելու համար բնական խելքն ու փորձը քիչ են. իմաստավորելու ժամանակ է պետք: Ժամանակ չկա: Հայտնագործում ենք նորից ու նորից հեծանիվը, անվերջ սայլին ենք կցում հինգերորդ անիվը. մի տեսակ արժանապատիվ կեցվածք է դարձել ոչնչին չհավատալու, ամեն ինչից զզված լինելու, թևաթափ մեր կենսակերպը: Ինչ լինում է, լինի... Ստեղծել ենք ու ստեղծող ենք, կառուցել ենք ու կառուցող ենք..., եղել ենք, կանք, կլինենք..., չենք կորչի ու չենք թողնի մեր Մասիսներն անտեր... Եվ այս ենք ասում, և ազգային զարթոնք ենք ասում, ինքնորոշման իրավունք, միացում, անկախություն, հայրենիք, հայրենասիրություն – հասկացությունների համակարգ ենք հնարել ու... Ոչ, մենք չենք հնարել: Մեր մեղքը չէ, որ ուժեղները կարողանում են ուժեղ լինել և իրենց ուզածն անել: Ու նորից ու նորից հայտնագործում ենք ինչ-որ ազգային կոմպլեքսներ՝ **թերածեքության՝** եկե՛ք մեզ ապրեցրեք, տո՛ւն շինեք, կերակրե՛ք, մենք մեղք ենք, **ընկճվածության՝** մեզ շարունակ սպանել են, խեղել են, թալանել, եղեռնվել ենք մենք, մեր արդար դատին ոչ ոք պաշտպան չի կանգնել ու չի կանգնում... Մենք պիտի կարողանանք մերը դարձնել ուժեղ լինելու հոգեբանությունը... «Հայքում» Մերուժան Տեր-Գուլանյանը սքանչելի ու իմաստուն մի քանի տող էր գրել, ուր հայերի հոգեբանությունն ու հայի պատմությունը, նաև հայի ապագան է ամփոփված. «Ջվարթնոցն ուներ երեսունվեց երկինք միտող սյուներ, և յուրաքանչյուր սյուն մտածելիս է եղել, որ իրենից բացի երեսունհինգ սյուն էլ կա, որ ինքը կարող է չպահել գմբեթը. երեսունհինգը պահում են. և որովհետև բոլոր սյուներն էլ այդպես էին մտածում, Ջվարթնոցն ավերվեց...»: Մենք կունենաք մեր Ջվարթնոցը, երբ բոլոր 36 սյուները մտածեն, որ առանց իրենց գմբեթը փուլ կգա. աշխարհը չի կարող առանց հայի. փուլ կգա, կկործանվի: Եվ որովհետև մեզնից յուրաքանչյուրն իր մեծ կռիվն ունի աշխարհի հետ ու աշխարհի համար, մեզնից յուրաքանչյուրը մի քիչ պարտվում է անգամ իր շահած մարտերում, քանի դեռ Կարսը, Ախթամարը, Արարատը...

Բարոյական հաղթանակների պանծացումից հոգնած ենք, մեզ հիմա իրական Ջվարթնոց է պետք... Պարզվում է՝ խոսել բոլորս գիտենք, մնում է լսել ու սովորել...

Ու ժ ե ղ լ ի ն ե ն ք.....

(ԼԳԴ ամսագրից)

Բ Ա Յ Ի Դ Ի Մ Ա Վ Ո Ր Ձ Ե Վ Ե Ր

191. Ա. Դուրս գրե՛ք բայերը և որոշե՛ք արտահայտության ձևերը՝ անդեմ կամ դերբայական, դիմավոր կամ եղանակային:

Բ. Կազմե՛ք ` ա/ անկախ դերբայների կախյալ ձևերը /Օր.՝ ստեղծելիս – ստեղծում – ստեղծելու – ստեղծել – ստեղծի/ .

բ/ դիմավոր ձևերի դերբայաձևերը: /ինչպես օր.՝ ասում է -դիմավոր բայածև - ասել-ասող-ասած-ասելիս/:

Գ. Կա՞ն բայեր, որոնց դերբայաձևերը հնարավոր չէ կազմել. ինչո՞ւ:

Ավանդությունն ասում է, թե Աստված ցամաքն ստեղծելիս կանգնել է հայոց լեռների վրա և իր հունցած անորոշ զանգվածը հսկայական մաղով մաղելով՝ փափուկ հողը մի կողմ է լցրել, իսկ մաղի տակ մնացած մեծ-մեծ քարերը՝ այստեղ՝ Հայաստանի տեղը: Թվում է՝ այս հողի վրա քարե վիթխարի մի կոթող կամ արձան է եղել՝ Հայաստանի ու հայ ժողովրդի քարե կոթող-արձանը, որը հետագայում ջարդել-ավերել են, և Հայաստանով մեկ սփռված քարերն այդ քանդված կոթողի բեկորներն են:

Երիցս իրավացի էր Մարիետա Շասհինյանը՝ հին Հայաստանը նմանեցնելով Լերմոնտովի նշանավոր բանաստեղծության այն աղքատին, որի պարզված ձեռքի ափի մեջ հացի փոխարեն քար են դրել: ... Այո՛, միայն քար և ամենից ավելի՝ քար, որովհետև ամեն ինչ քար է դառնում ավերումից ու տառապանքից հետո՝ շենք լինի, կոթող, ձեռագիր, թե .. շատ տառապանքներ տեսած մարդկային սիրտ... Շա՛տ և ամեն տեակ քար կա Հայաստանում, բայց այստեղ ... անգրագետ քար համարյա չե՛ս գտնի:

Ջգո՛ւյշ քայլիւր այս հողի վրայով և զգո՛ւյշ վարվիր ամեն մի քարի հետ, որն արտաքինից կոպիտ է , չեչոտ, չոր մամուռով ու քարաքոսով պատած...

Ջգո՛ւյշ, որովհետև եթե եղունգով փոքր-ինչ մամուռը քերես, նրանցից մեկի վրա նախնադարյան մարդու գծանկար կտեսնես, նշանագրե՛ր, արամեական, խուռիտական, աքքադական-ասորական սեպագիր արձանագրություններ, զարդ ու քանդակ...

... Ոչ միայն գրագետ՝ ստորագրվա՛ծ են այս քարերը. մեր քարերն են...

Մեր ինքնության քարե կնիքն են այս հողի վրա Հռիփսիմեն, Գեղարդը, Աղթամարը, Էջմիածինը, Կարմրավորը...

Պատահակա՞ն է արդյոք, որ ամեն թշնամի ու նվաճող աշխատել է առաջին հերթին ավերել մեր ճարտարապետական կոթողները, փշրել մեր հուշաքարերը, այսինքն՝ ջնջել մեր ստորագրությունն այս հողի վրայից և քերել մեր ինքնության կնիքը...

Հայաստա՛ն, քարերի՛ երկիր, քարաստա՛ն...

(Գ. Էմին)

192. Տրված բազմանդամ հակադրություններում նշե՛ք քերականական տարբերությունը և սահմանե՛ք բայի եղանակի քերականական կարգը՝ որպես քերականական իմաստի և քերականական ձևի միասնություն:

ա/ Կարդում ես – կարդաս – կկարդաս – պիտի կարդաս – կարդա՛:

բ/ Մոտենալու ես - մոտենաս – կմոտենաս – պիտի մոտենաս – մոտեցի՛ր:

գ/ Հեռացել եք - հեռանաք - կհեռանաք - պիտի հեռանաք - հեռացե՛ք:

դ/ Տեսել էիր – տեսնեիր – կտեսնեիր – պիտի տեսնեիր – տե՛ս:

193. Ա. Ընդգծե՛ք դիմավոր բայերը և խմբավորե՛ք ըստ եղանակի քերականական կարգի:

Բ. Ընտրե՞ք անդեմ բայերից մեկը և կազմե՞ք սահմանական եղանակի բոլոր ժամանակային ձևերը /7 գլխավոր ժամանակածև և 21 երկրորդական կամ հարաբերական/ եզակի թվի առաջին դեմքով:

Կինը աստվածի նման է, իրավ, Բայց իր ետևից աշխարհներ տարավ. Այնքան չեն նայել աստղերն աշխարհին, Որքան ես՝ նրա աստղե աչքերին: Բայց ինչքան շատ են ես նրան նայում, Այնքան հայացքն է նա ինձ խնայում: Էլ չի՛ խնայի, թե էլ չնայես, Սիրտ իմ, քի՛չ սիրիր, որ շատ սիրեն քեզ: Ինչքան շատ վազես աղբրիդ ետևից, Այնքան շատ պիտի վառվես ծարավից: Բայց նա կվառվի, հենց որ դու սառչես, Վազելով կգա, հենց որ դու փախչես:	Թեկուզ կրակվես, ձյան պես համբերիր, Ձյուն եղիր, որ նա քեզ գարուն բերի: Թե չէ ինչքան շատ իր ոտքն ընկնես՝ Սերն էլ չի թողնի՝ իր ոտքն էլ գրկես: Քեզ կինն աստղի պես կմնա անհաս՝ Թեկուզ հանձարեղ աստղագետ դառնաս: ... Թեկուզ կնոջ մի եղնկահեզ Մարմինը տիրես Տիգրան Մեծի պես, Բայց լավ իմանաս՝ Չպիտի դառնաս Դու կնոջ ոգու աշխարհակալը,- Կի՛նն է պարզել քեզ հավերժ լալը...
---	--

(Հ.Շիրազ/

194. Տրված օրինակի նմանությունը լրացրե՞ք շարքերը. ինչպե՞ս են արտահայտվում ժամանակի, թվի, դեմքի, կերպի, ժխտման քերականական կարգերը սահմանական եղանակի ժամանակածևներում:

- ա/ 1. հավատում են – 2. հավատում էի – 3. հավատալու են – 4. հավատալու էի – 5. հավատացել են – 6. հավատացել էի – 7. հավատացի.
- բ/ 1. սիրում ես - 2. ----- 3. ----- 4. ----- 5. ----- 6. ----- 7. -----
- գ/ 1. փախչում է - 2. ----- 3. ----- 4. ----- 5. ----- 6. ----- 7. -----
- դ/ 1. ժպտում ենք - 2. ----- 3. ----- 4. ----- 5. ----- 6. ----- 7. -----
- ե/ 1. մտնում եք - 2. ----- 3. ----- 4. ----- 5. ----- 6. ----- 7. -----
- զ/ 1. վախենում են - 2. ----- 3. ----- 4. ----- 5. ----- 6. ----- 7. -----
- է/ 1. հազցնում է - 2. ----- 3. ----- 4. ----- 5. ----- 6. ----- 7. -----
- ը/ 1. դառնում է - 2. ----- 3. ----- 4. ----- 5. ----- 6. ----- 7. -----
- թ/ 1. լինում են - 2. ----- 3. ----- 4. ----- 5. ----- 6. ----- 7. -----
- թ/ 1. գալիս են - 2. ----- 3. ----- 4. ----- 5. ----- 6. ----- 7. -----

195. Դուրս գրե՞ք սահմանական եղանակի անկատարի ձևերը և որոշե՞ք քերականական նրբինաստները:

Լավ փողոց է Աբովյանը, միակ փողոցը... Նրա պատմությունն սկսվում է 19-րդ դարի 70-ական թվականներից. 1933 թվականին Աբովյան փողոցով անցնում է առաջին տրամվայը: Ժամանակին Աստաֆյանի երկու կողմերում հոսում էին առուներ, որոնց ափերին բարձրանում էին բարդիներ. դրանք Երևանի նահանգապետ Աստաֆևի հրամանով կտրատվեցին: Ասում են՝ բարդիների արանքից կրակել են նրա վրա ...

Աբովյան փողոցում էին գտնվում Պողոս-Պետրոս /5-6-րդ դ./ և Կաթողիկե /13-րդ դ./ եկեղեցիները: Այս փողոցում է հիմնվում Խորհրդային Հայաստանի առաջին կրթօջախը՝ հայոց Համալսարանը: Աբովյան փողոցի հիշողության մեջ անցած տարիների և օրերի անմոռաց դեմքերն ու դեպքերը պահող-պահպանող վկաներից է «Ինտուրիստ» հյուրանոցը... Այստեղ ապրել և ստեղծագործել է երևանյան երագողների հրաշալի

«բոհեման», որոնց լուսեղեն երազներին կերպարանք տվեց Երևանյան ամենավառ երագողը՝ Ալ. Թամանյանը: Ե. Չարենցի բազմաթիվ լավ ու վատ, խելահեղ ու ցնորական օրերը Աբովյան փողոցի հիշողության կծիկի մեջ են: Ու երբ քանդում ես կծիկը, քո առջև հառնում է հին օրերի Աբովյան փողոցը, փողոց, որ մարդկանց միացնում էր, ուրախացնում ու հաշտեցնում... «Օրվա ընթացքում մի քանի անգամ բաժանվում էինք միմյանցից, բայց առօրյա կյանքի գետակներն ու առվակները նորից մեզ իրար մոտ էին բերում գլխավոր գետի՝ Աբովյանի վրա», - հիշում է Մկրտիչ Արմենը:

... Ամառային երեկոներին մեղմ գեփյուռի շնչով օրորվում էին Աբովյան փողոցի հպարտ ու սլացիկ բարդիները, որոնց ստվերում հոսում էին մեղմախոս առուները... Չարենցն իջնում էր հյուրանոցի բակը՝ «ջուր լսելու» և բարդիներից մեկին հենված ծխելու: Նույն ժամանակ Բակունցը Չարենցի պատուհանից հիանում էր գեղեցիկ Աբովյանով և հուշիկ երգում կոմիտասյան մի թովիչ մեղեդի: «Որքա՛ն հուշ ու կարոտ կա մեր այս սլացիկ բարդիների կանաչ տերևների քնքշահյուս շրշյունի մեջ», - խորհում էր Չարենցը: «Որքա՛ն հուշ, կարոտ ու ափսոսանք կա Աբովյան փողոցի դեռ ապրող հինավուրց քարերի մեջ», - խորհում է նա... Կարծես այսօր էլ դեռ ճեմում են Չարենցը, Մահարին. տաք-տաք խոսում է Չարենցը, ասես ինչ-որ բանում ուզում է համոզել Բակունցին, որը ներողամիտ ժպիտով լսում է խանդավառված ընկերոջը, իսկ Գուրգեն խանը վանեցու խոր ժպիտով ողջունում է Հովհաննես Աբեյանին, որը, բաճկոնի վերին ձախ մասում ամրացված կարմիր մեխակը կրծքին, դեմ դիմաց գալիս է գեղեցիկ մի տիկնոջ հետ: Մյուս մայթով քայլում է Շիրվանզադեն. դարձյալ խռոված է Աբեյանից, և, ինչպես միշտ, խռովության մեղավորը Չարենցն է:

Աբովյան փողոցը իմաստավորվում է նաև մեծ Աբովյանով. սկսվում է նրա հարթաքանդակով, ավարտվում Աբովյանի պուրակով, ուր կանգնեցված է մեծ լուսավորչի արձանը /հեղինակ՝ Սուրեն Ստեփանյան/: Քանի որ Աստաֆյան փողոցը եղել է Երևանի առաջին պլանավորված փողոցը, ուստի ժամանակին երևանցիները «պլան» ասելով նկատի էին ունենում Աստաֆյան փողոցը, իսկ «Պլանի գլուխ» անունն ասելով՝ Աստաֆյան փողոցի վերին մասի վերջավորությունը: «Պլանի գլխից» էլ սկսվում է Երևանից Քանաքեռ տանող խճուղին: Եվ, թվում է, Աբովյանը հենց նոր Քանաքեռից իջնում է Երևան, իսկ քիչ անց Երևանից պիտի բարձրանա իր ծննդավայրը...

(Ըստ Ա. Եսայանի)

196. Կազմե՛ք 2-ական նախադասություններ, որոնցում սահմանական եղանակի ներկա ժամանակաձևով արտահայտվում է՝

ա/ Խոսելու պահին կատարվող /սկսված, բայց դեռ չավարտված/ ստույգ գործողություն կամ եղելություն /Օր.՝ Երեխաները նկատեցին, որ անծանոթ մարդկանց մի խումբ մոտենում է իրենց դպրոցի դարպասին: Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ, Ծերանում ենք, սիրլի՛ս /ՊՍ/:

բ/ Ոչ միայն խոսելու ընթացքում, այլև բոլոր ժամանակների համար մշտապես կատարվող, կրկնվող գործողություն /Օր.՝ Աղը կրակ է հանգցնում: Բայց մենք պիտի մեր կրակով աղն էլ վառենք /ՊՍ/. Ջերմաստիճանի որոշման համար Ձեռքը դնում են մարդու ձակատին /ՊՍ/:

գ/ Անցյալում կատարված գործողություն, որ մտածվում է որպես ներկա /կենդանի, տպավորիչ դարձնելու նպատակով - պատմական ներկա/ /Օր.՝ Բժշկո՛ւմ են... Ի՞նչ են բուժում. .. Ովքեր նրա միտքը պաշտում Եվ կորստին դեռ չեն հաշտվում, Ուղարկում են նրան Փարիզ /ՊՍ/:

դ/ Բնության երևույթներ, աշխարհագրական տեղադրություններ, կայուն վիճակում եղող երևույթների նկարագրություններ /Օր.՝ Ես, գիտեմ, անգին, այս երկրագունդը Պատվում է միշտ շուրջն արեգակի /ԳԷ/. Ձմեռը նորից գարուն է դառնում, Ամառն էլ կրկին հետևում գարնան /ՊՍ/ ե/ Իրար հաջորդող գործողություններ, որոնք իբրև սովորություն միշտ կրկնվում են, բայց ոչ թե խոսելու ընթացքում, այլ այդ ներկան ևս իր մեջ առնող մի հարածիզ ժամանակաշրջան. /Փողո՛ց եմ ելնո՛ւմ՝ անցնում ես կողքից Անժանոթ կնոջ կերպարանք առած, Համե՛րգ եմ գնում՝ Ամեն ջութակից Քո ծա՛յնն եմ լսում.../ԳԷ/։ Ամեն առավոտ նա հաց է թխում... Հավաքարարը շենքերն է մաքրում, Դռնապաները՝ բակեր ու փողոց: Ամեն առավոտ, Ամեն երեկո գործի է անցնում ջրցան մեքենան /ՊՍ/:

ե/ Հաստատ կատարվելիք գործողություն, որի կատարումը ստույգ է և կախված չէ որևէ պայմանից /Աղջիկը ելևէջող տոնով ասաց. – Վաղը մեկնում ենք արտասահման: Երբ շաչում է գենքը, օրենքները լռում են /Ցիցերոն/։/:

զ/ Թելադրանք, կարգադրություն, հրաման, հորդոր՝ կատարելու որևէ գործողություն /Հիմա գնում ես տուն, այրո՛ւմ ես նամակները և մոռանում ամե՛ն-ամե՛ն ինչ/:

է/ Որպես ճշմարտություններ ընդունված իրողություններ /Օձի գլուխը որ ցավում է, գնում, ճամփի մեջտեղն է պառկում: Թե չղջիկը լույս ցերեկով չի տեսնում, Ի՞նչ մեղք ունի արեգակը դրանում /Սաադի/:

197. Ընդգծե՛ք ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերը. դրանց փոխարեն ո՞ր եղանակաձևերը կարելի է գործածել:

Ա. 1. Գիտեմ՝ Ե՛ս էլ եմ գնալու շուտով. Ուր որ է, այո՛, գնալու եմ ես. Բայց չե՛մ կորչելու: Դառնալու եմ ձեր ... առողջությունը /ՊՍ/: 2. Բարեկամաբար ասացե՛ք նաև՝ Քանի տարին մեկ աշխարհ է գալու Այն անդերսենյան մանուկը... /ն/: 3. Իսկ խեղճ ու աղքատ այդ եբրայեցին Եկավ շաղ տալու խոստումներ օդում /ն/: 4. Սա իրավունք մի՞թե ինձ չի տալիս, Գեթ այսքանից հետո պահանջելու, Որ իրավունք չունես ինձ տանջելու /ն/: 5. Պարի՛ր, Դու դեռ երազ ունես կատարելու, Վրե՛ժ ունես պատմությունից դեռ հանելու /ԳԷ/: 6. Սիրո համար պատրաստ եմ Ես իմ կյանքը զոհելու, Ազատությանը թանկագին սերս էլ չեմ խնայելու /Շ. Պետեֆի/: 7. Մենք ծերանալու ենք, բայց դա երկար ապրելու միակ միջոցն է /Դ. Օբեր/: 8. Մի՛ վախեցեք կատարելությունից, դուք դրան չեք հասնելու: 9. Գավաթս մեծ չէ, բայց ես իմ գավաթից եմ խմելու: 10. Էլ ի՞նչ արահետ, որ տաճար չի տանելու: 11. Ջահելության երազանքը ծեր հասակում է կատարվելու: 12. Այն ծառերը, որոնք բարի պտուղ չէին տալու, կտրում էին և կրակը նետում; 13. Ծեր վարպետի սխալը ուրիշ վարպետ է շտկելու, բայց բժշկի սխալը միայն հողն է ծածկելու: 14. Օդաչուին երբեք չեն մեղադրելու հողից կտրվելու համար: 15. Եթե թախիծը արցունքներով չդրսևորես, ապա ներքին օրգաններին ես ստիպելու լաց լինել:

Բ. Եթե քարե կացիններ պատրաստող մարդուն հարցնելու լինեին, թե մարդն ապագայում ինչպիսի՞ կացիններ է պատրաստելու և ինչպե՞ս է օգտագործելու, ապա լռելու էր, չէր հասկանալու ու վախենալու էր, անգամ սարսափելու: Կացնային գործի նույնիսկ ամենահմուտ վարպետն էլ հազիվ թե կարողանար պատմել շոգենուրձի, հիդրավիկ մամլիչի և այլ մեքենա-գործիքների մասին, նրանց պատրաստելու, մշակելու, օգտագործելու մասին:

Մեր օրերում էլ ևս մենք ինքներս մեզ կարող ենք հարցնել, թե կիբեռնետիկական մեքենաներն ի՞նչ կարող են տալ և ի՞նչ են տալու մեր սերունդներին: Եվ հարկավոր է

առանց անաչելու խոստովանել, որ այդ հարցին մենք հազիվ թե ավելի լավ պատասխանենք, քան քարանձավաբնակ վարպետը: Այս բոլորն իմանալու, մեր երազանքներն իրականացնելու միայն մի ճանապարհ կա, և այդ ճանապարհն անցնելու է կիբեռնետիկայի այսօրվա խնդիրները լուծելու համար անխոնջ ու համառ աշխատելու միջոցով:

/Ըստ Ի. Պոլետակի/

198. Ա. Գտե՛ք վաղակատար ներկա ժամանակաձևերը, կազմե՛ք քառանդամ հակադրություններ /Օր.՝ իջել է - իջել էր – իջավ – իջնում էր/ և բացատրե՛ք հակադրվող եզրերի /վաղակատար ներկայի, վաղակատար անցյալի, անկատար անցյալի և անցյալ կատարյալի/ քերականական-իմաստային տարբերությունները:

Ա. 1. Այնտեղ, ու կրթությունը սկսվել է տեխնիկայից, երբեք արիստոտելներ չեն հայտնվել: Իսկ այնտեղ, ուր սկսվել է Արիստոտելից, բանն անմիջապես հասել է տեխնիկական մեծ նվաճումների /Դոստոևսկի/: **2.** Փող ես կորցրել՝ ոչի՛նչ չես կորցրել, ժամանակ ես կորցրել՝ շա՛տ բան ես կորցրել, առողջությունդ ես կորցրել՝ ամե՛ն ինչ ես կորցրել: **3.** Պետք է փորձեր կատարել, որովհետև փորձն է տվել և տալիս ճշմարիտ կանոնները: **4.** Երբ դու ես հայտնագործում, հրաշալի է, սակայն իմանալ ու գնահատել այն, ինչ գտնված է ուրիշների կողմից, մի՞թե ավելի քիչ է, քան ստեղծելը: **5.** Չարաբաստիկ համարիր այն օրը կամ ժամը, երբ դու ոչ մի նոր բան չես ավելացրել քո կրթությանը: **6.** Հառաչս առել ձեր մեջ՝ Աղբյուրներ՛ր, տխուր կերթաք /ՍԿ/: **7.** Մահը կարող է բացատրել միայն մեռնողը... եթե չմեռներ /Վ. Փափազյան/

Բ. Արեգակն իջել, փարվել է ծովին,
Հրդեհ է դարձել ծովն ամբողջովին,
Հրդեհն ամպերի ոտքերն է վառել,
Հորիզոններն է բոցերով առել:
Հրդեհը հասել է երկնքի ծայրին

Եվ սպառնում է արար աշխարհին...
Արեգակն է այդ հրդեհը վառել
Եվ ինքն է նրան նահատակ դարձել.
Նա հրդեհի մեջ դողում է, մրսում
Եվ ինքն իրեն փրկել է ուզում...
(Հ. Սահյան)

199. Կազմե՛ք 2-ական նախադասություններ, որոնցում սահմանական եղանակի վաղակատար ժամանակաձևը գործածվի հետևյալ երկրորդական նշնակություններով՝
ա/ սահմանական եղանակի ներկա ժամանակի
բ/ սահմանական եղանակի անցյալ կատարյալի
գ/ ըղձական ապառնիի
դ/ հարկադրական ապառնիի:

200. Ա. Լրացրե՛ք գծապատկերները՝ կազմելով՝

1. Երկանդամ հակադրություններ՝ ըստ օժանդակ բայի ցույց տված ժամանակային տարբերության.

2. Եռանդամ հակադրություններ՝ ըստ դերբայների տարբերության:

Բ. Ժամանակային ի՞նչ հաջորդականություն են դրսևորում բայական ուղղահայաց շարքերը /1. ա., բ.: 2. ա., բ., գ./:

1.

ա.	բ.
իջնում եմ	
	գտնելու էի
դարձել ես	
	կարկառում էինք
անցնելու են	
	օրորվում էին
ընկել եք	
	մոլորվել էիր
մտել է	
	տալիս էր
փախչում ենք	
	խոնարհվում էիք
զղջալու եք	

2.

ա.	բ.	գ.
իջնում եմ		
	գտնելու ես	
		դարձել ենք
զղջում էինք		
	աղոտանալու էր	
		չէիք խորհել
մոռանում են		
	հռհռալու են	
		թմբկահարել են
չէիք հիշեցնում		
	անէանալու էին	
		արթնացրել ես
սայթաքում էին		

201. Լրացրե՛ք գծապատկերը՝ բացատրելով անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սկզբունքները:

	ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ →	Հ Ի Մ Ք			ԿԵՐՁ-Ն
		ՑՈՅԱԿԱՆ	ՐԵԱԿԱՆ	ԱՐՄԱՏԱԿԱՆ	
ծաղկել էին	ծաղկեցին →	ծաղկեց-			- ին
հանդիպում եմ	----- →				
նկարվել էիք	----- →				
շողալու էր	----- →				
մնալու ենք	----- →				
փախչելու ես	----- →				
կաչում են	----- →				
մտնելու եք	----- →				
տեսնելու ես	----- →				
մոտենալու եմ	----- →				
կամենում ենք	----- →				
նեղացել են	----- →				
սևանում էր	----- →				
հագցնելու էր	----- →				
քնեցնելու էինք	----- →				
մեծացնելու ես	----- →				
կտրատել էին	----- →				
գրվելու են	----- →				
թռչկոտում ես	----- →				
կազմվում են	----- →				

202. Տրված հիմքերով կազմե՛ք անցյալ կատարյալի եզակի թվի առաջին դեմքի ձևերը և բացատրե՛ք, թե կրկնահիմք բայերից ո՞ր ձևերն են կանոնական, ո՞ր ձևերն են սխալ, և ո՞ր ձևերը՝ թույլատրելի՝ որպես զարգացման միտում:

1. ա/ բեր- և բերեց-, բ/ հան- և հանեց-, գ/ դր- և դրեց-, դ/ թող- և թողեց-, ե/ ար- և արեց-, զ/ դառ- և դարձ-, է/ ջոկ- և ջոկեց-.
2. ա/ հանգ- և հանգեց-, բ/ սառ-, սառեց- և սառչեց-, գ/ փախ-, փախչեց- և փախն-, դ/ բռն- և բռնեց-.
3. ա/ մոտեցր- և մոտեցրեց-, բ/ հեռացր- և հեռացրեց-, գ/ հարցր- և հարցրեց-, դ/ վերցր- և վերցրեց-:

203. Կազմե՛ք 2-ական նախադասություններ, որոնցում սահմանական եղանակի անցյալ կատարյալն արտահայտում է՝

ա/ Խոսելու պահից առաջ մի որոշակի անցյալ ժամանակակետում կատարված, ավարտված գործողություն կամ եղելություն /Օր.՝ նետվեցի նրա ընդերքը մթին, Սանձեցի նրա տարերքը խրթին, Մարգարիտ գտա նրա հատակում, Եվ նա, հեալո՛վ ավագոտ ափում, Փլվե՛ց ոտքիս տակ ու ծանր շնչեց... /Գէ/:

բ/ Այնպիսի գործողություն, որը կատարվել է խոսելու պահից անմիջապես առաջ. /Երբ ջահելությունս անցնում է արդեն, Ես նո՛ր հասկացա, Որ շատ եմ նման փետրվար ամսին /ՊՍ/:

գ/ այնպիսի գործողություն, որի տևողությունը կարճ է, և որ գործողությունը կատարվել ավարտվել է անցյալ ժամանակի մի պահի /Ուշ առավոտ էր, երբ նա տուն դարձավ. Ժամացույցը խուլ զնգաց խավարում, Նա շուրջը նայեց խավարում անծայն / /Գէ/:

դ/ Կատարված գործողություն, որին խոսողը ականատես է եղել /Սիրում եմ քեզ նրա՛ համար, Որ անմոռաց, խե՛նթ մի ամառ, Սիրտըս ուզե՛ց, բայց... սիրտ չարե՛ց Քեզ համբուրել Ջանգվի ափին /Գէ/:

ե/ Խոսելուն հաջորդող պահին հաստատ կատարվելիք գործողություն /ըղձական եղանակի ապառնի ժամանակի նշանակությամբ/ /Կա-չկա հարբե՜ց մեր պոետն էլի /Գէ/; Թաղեմ քեզ հատիկ, և դարդս քեզ հետ, թե աստված ուզեց, դու կանաչեցիր, թող դարդս մեռնի գետնի տակ անհետ /Հովհ.. Հ./:

ե/ կատարելիք գործողություն՝ որպես պայման մի այլ գործողության /բարդ ստորոդասական նախադասության երկրորդական նախադասության մեջ/. Ականջներդ կախեցիր՝ ուղեղդ կկտցահարեն:

+գ/ կրկնվող, որպես ճշմարտություն ընդունված իրողություններ՝ /ընդհանրական իմաստով/. /Սիրե՛ց հարուստը աղքատին, Իմաստունը՝ ապիրատին..., Լավը՝ գեշին, Ոսկին՝ ժանգոտ, սև գրոշին /Գէ/: Եզն ընկավ, դանակավորը շատացավ:

204. Ընդգծե՛ք անցյալ կատարյալ բայաձևերը. եղանակաժամանակային ի՞նչ նշանակություններով են գործածվել: Կազմե՛ք եռանդամ հակադրություններ /Օր.՝ ասել ես - ասել էիր - ասացիր/ և բացատրե՛ք հակադրվող եզրերի /վաղակատար ներկայի, վաղակատար անցյալի և անցյալ կատարյալի/ քերականական-իմաստային տարբերությունները:

Ա. 1. Ի՞նչ ասեմ խելքիդ. ժամանակից շուտ մի խոսք ասացիր, Քեզ դրա համար Մեղավորների շարքը դասեցին: Բա ո՞նց մոռացար. «Աքլորը կանչեց ժամանակից շուտ՝ Մորթեցին կերան, Հետն էլ մատները մի լավ լիզեցին» /ՊՍ/: Թե ասես. «Աչքս դուրս եկավ», «Տո՛ւր տանեմ խեղճ կատվիս», կասի /ՊՍ/:

Պ. Սևակ

Բ. Երբ անձրևն անցավ, Ծերուկն, առաջվա պես, դժգոհ հևաց, Աղջիկն էլի նեղսի՛րտ ու չարախո՛ն դարձավ, Մուրացիկը կծկվե՛ց ու խուլ նվա՛ց, Բանաստեղծը նորից հիշեվ

քննադատին... Նորից փռեց արևն իր ոստայնը սարդի /ԳԷ/: Երբ ես ծնվեցի այս հողագնդում, Ես լալիս էի, աշխարհը խնդում /ԳԷ/:

Գ. Էմին

Գ. Երբ դարձա տասնհինգ տարեկան, ամբողջովին տրվեցի ուսմանը: Երեսուն տարեկանում ձևավորվեցի վերջնականապես: Քառասուն տարեկանում այլևս կասկածներ չունեի: Հիսուն տարեկանում ես ճանաչեցի երկնքի կամքը: Երբ դարձա վաթսուն տարեկան, նուրբ լսողությամբ կարողացա տարբերել Բարին ու Չարը, Ճշմարիտն ու Կեղծը: Յոթանասուն տարեկանում հնագանդվեցի սրտիս կամքին՝ առանց խախտելու չափը:

Կոնֆուցիոս/:

Դ. Կարասին ասացին՝ ինչի՞ց ես վախենում, ասաց՝ փոքր ամաններից: Կատուները դուրս գնացին, մկները տանը պար բռնեցին: Գայլի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ ոչխարը սարն անցավ:

205. Ա. Դուրս գրե՛ք սահմանական եղանակի բայաձևերը և նշե՛ք քերականական կարգերը:

Բ. Առանձնացրե՛ք պարզ և բաղադրյալ ժամանակաձևերը:

Նրա առջև դրված էր Վալտեր Սկոտի «Լճակի կույսը», որի կողքին հենց նոր գրած նոտաներն էին: Իոսիֆը կարդաց. «Ավե՛, Մարիա»:

-Օհո՛,- բացականչեց նա, - իսկ դու ասում էիր, թե աղոթել չես սիրում... Չես աղոթել ու չե՛ս աղոթելու...

Շուբերտը բարձրացրեց գլուխն ու հետ նայեց՝ առանց հուզվելու, առանց մտածելու...

- Սա լավ չստացվեց, - ասաց նա, առջևի թուղթը ճմռթեց ու անտարբերությամբ նետեց զամբյուղի մեջ...

- Չէ՛, քեզ մնում է աղոթել, - կատակեց Իոսիֆը, Շուբերտից աննկատ զամբյուղից վերցրեց ճմռթված նոտաներն ու դրեց գրպանը:

Երկու օր հետո ընկերները Շուբերտին քարշ տվին եկեղեցի... Երգեհոնից աստվածային մի մեղեդի հնչեց, հետո եկեղեցու կամարների ներքո տարածվեց երգը: Շուբերտը ցնցվեց. ի՞նչ հրաշք է: Նա լսեց սեփական սրտի բաբախյունը, սեփական հոգու ձայնը: Հնչում էին իր մտքերը, իր ապրումները, իր զգացմունքները: Բացվել էր, ու երգում բաց էր իր հոգին, սակայն բացվել չէր ուզում... Ցանկանում է բանտարկել երգը, սանձել հնչյունների հեղեղն առ աստված, սակայն իզուր... Գիտեր՝ հանդգնել էր լինել Աստծու հետ, և համարձակվել էր հանդգնել, խոսք խոսել նրա հետ և խոսել էր.... Հանդգնել էր իր մեջ տեսնել Աստծուն, իսկ Աստծու մեջ՝ իրեն, և ... տեսե՛լ էր... Չգիտեր, սակայն, որ ինքն է դառնում հայտնություն, դառնում է անմահ... և ապրելու է հավերժի գրկում...

«Ավե՛, Մարիա», - հնչում է երգը, հիմն է երգում մաքրված հոգու, ստիպում է ծնկի գալ, ձուլվել, հասնել երկնայինին, մղում է աղոթելու, անէանալու, աստվածանալու: «Ավե՛, Մարիա»՝ եթերային զուլալություն, մոգական մաքրություն, որ ամենաթունդ հերետկոսին ստիպում է աղոթք մրմնջալ:

«Ավե՛, Մարիա»՝ աստվածային երանություն, որի արարիչն այնպես անտարբեր ճմռթեց քեզ ու նետեց զամբյուղը... Ու չէիր հնչելու. կորչելու էիր՝ ծնվելու պահին՝ առանց հնչելու...

«Ավե՛, Մարիա, - հնչում է եկեղեցու կամարների տակ, ուր Աստծու ամենակատարյալ ստեղծագործությունն էր խաչված, և ուր բազում մահկանացուներ երանության մեջ

կարծես քարացել, անէացել էին մի ուրիշ աստծու ստեղծած եթերային ստեղծագործության հնչյուններից... Ուր ձուլվել էին մարդ ու Աստված...

(Ըստ Վ. Բալայանի)

206. Ա. Ընդգծե՛ք ըղձական և ենթադրական եղանակի ապառնի բայաձևերը, կազմե՛ք նրանց անցյալի ձևերը:

Բ. Գրե՛ք նույն բայերի հարկադրական ապառնիի և անցյալի ձևերը:

Որդի՛ս, քեզ ի՞նչ կտակեմ, ի՞նչ կտակեմ, ի՛նքն քալիկ,
Որ ինձ հիշես վշտի մեջ ու խինդի մեջ քո գալիք...
Քեզ այնպիսի գանձ կուզեմ ես կտակել հայրաբար,
Որ չի կարող կտակել ուրիշ երկրում ոչ մի հայր, -
Ես քեզ այն եմ կտակում, որին այս մեր մեծ դարում
Փոքրիկ մարդիկ են բանտել ու շղթայել ամպերում:
Քեզ մեր սարն եմ կտակում, որ դուրս բերես սև ամպից,
Որ դուրս բերես շալակած արդարությամբ մեր անբիծ.
Ու կբերես, ի՛նքն քալիկ, թեկուզ քո խեղճ թաթիկով
Մեր սարն այս կողմ շուռ կտաս՝ արդարությանդ ուժն է ծով...
Ու երբ բերես, ի՛նքն քալիկ, սիրտս շիրմից կհանես,
Կբարձրանաս ու սիրտս Ազատն ի վեր կտանես
Ու կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,
Որ շիրմում էլ՝ դարավոր հուր կարոտից չմրսի.
Քեզ Մասի՛սն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան...

(Հ. Շիրազ)

207. Կազմե՛ք 2-ական նախադասություններ, որոնցում ըղձական եղանակի ապառնի ժամանակաձևի բայը արտահայտում է՝

ա/ Խոսողի անձնական իղձը, ցանկությունը, խնդիրը խոսելու պահից հետո՝ մի ապառնի ժամանակամիջոցում կատարվելիք գործողության նկատմամբ /Իմ արցունքով ջրեմ, ցողե՛մ, Վարդերն՝ կանաչ քո ճամփեքին. Ջահել-ջիվան սիրտս հանեմ, Գցեմ ճանաչ~չ քո ճամփեքին: Բո՛ց է սիրտս. վախենա~մ թե Ոտքդ այրե~ս քո ճամփեքին /ՍԿ/:

բ/ Կոչ, որով խոսողը դիմում է ուրիշներին՝ որևէ գործողություն կատարելու /Օր.՝ Ապրե~ք, երեխե՛ք. բայց մեզ պես չապրեք /ՀԹ//.

գ/ Սովորական, կրկնվող երևույթներ, գործողություններ /Օր.՝ Ուռենիները նրա~ համար են, Որպեսզի ցույց տան ջրին ճանապարհ: Ծղրիդներն, անշո~ւշ, նրա՛ համար են, Որպեսզի մամլեն մութն իրիկնային... Բանաստեղծնե՞րը; Նրա համար չե՞ն, Որպեսզի այսպե՛ս Ամե~ն բան շրջեն աստառի վրա... /ՊՍ/:

դ/ Հորդոր, պահանջ, երբեմն հրաման, կոչ՝ խոսողի հետ համատեղ որևէ գործողություն կատարելու վերաբերյալ /Եկ այս գիշեր խնջու~յք անենք... Եվ սեղանի վրա դնենք՝ Հասուն պտուղն իմ տանջանքի... ԳԷ/.

ե/ Հորդոր, պահանջ, հանձնարարություն՝ որևէ գործողություն կատարելու վերաբերյալ՝ թող եղանակավորող բառի հետ կամ առանց նրա /Թող գարունները գան ու չգնան, Թող բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան... /ՀԵ/:

զ/ Խոսողի մտադրությունը, հաստատ որոշումը ներկային շատ մոտ ապագայում որևէ գործողություն կատարելու իմաստ /հաստատապես կատարվելիք գործողություն/ /Օր.՝

Սեղմե՛մ մի կոճակ՝ Եվ մարդկանց հոգում Ծաղիկների պես լույսերը ծաղկեն... Հո՛ւպ տամ մի կոճակ՝ Եվ ստվերները դառնան ցայտաղբյուր ճառագայթների /ՊՍ/:

է/ Ապառնի ժամանակում ենթադրվող, սպասվող, կատարվելիք այնպիսի գործողություն, որի կատարման դեպքում կկատարվի մեկ այլ գործողություն ևս /ըղձականի եղանակային իմաստը հասնում է նվազագույնի կամ չի պահպանվում՝ հատկապես բարդ ստորադասական նախադասություններում և այնպիսի կառույցներում, որոնք բացասում են ըղձականի իմաստը /տարբեր շաղկապներով, եղանակավորող և այլ բառերով/: /Օր.՝ Որ ծմ'եռ գա ու ձյո'ւն տեղա, Ես ուզում եմ հա'րց տալ միայն.../ԳԷ/. Ու տես, որդի'ս, ուր էլ լինես, Այս լուսնի տակ ուր էլ գնաս, Թե մորդ անգամ մտքիցդ հանես, Քո մայր լեզուն չմոռա'նաս /ՍԿ/:

ը/ Ողջույն, անեծք, բարեմաղթություն, օրհնանք /Աստված ազատի նապաստակի քացուց: Կյանքդ ջրի նման երկարի: Տե՛ր Աստված, դու բարի'ն կատարես/:

208. Կազմե՛ք 2-ական նախադասություններ, որոնցում ենթադրական եղանակի բայն արտահայտում է հետևյալ իմաստները՝

ա/ ենթադրաբար կատարվելիք գործողություն

բ/ պայմանով կատարվելիք գործողություն

գ/ հաստատապես կատարվելիք գործողություն

դ/ գործողության կատարման հրաման:

Օրինակներ՝

ա/ Հավանաբար այսօր անձրև կտեղա: բ/ Եթե համաձայն ես, ես նույնպես կգամ ձեզ հետ: գ/ Բաղը երեկոյան կգամ ձեզ հետ, կգրուցենք: դ/ Կգտնե'ս այդ հանցագործին և անմիջապես կձերբակալե'ս:

209. Գտե՛ք հարկադրական եղանակի ապառնիի բայաձևերը և կազմե՛ք դրանց՝ ա/ հարկադրական անցյալի և հրամայական եղանակի ձևերը՝ լրացնելով գծապատկերը:

հարկադրական ապառնի	հարկադրական անցյալ	հրամայական եղանակ
պետք է լսես	պետք է լսեիր	լսի'ր

-Որոյա՛ն իմ Հելիոս, դու պե՛տք է լսես իմ խոսքերը. արագավազ ձիուն էլ է մտրակ հարկավոր, իմաստուն մարդուն էլ է խրատ պետք...

Լեզուդ փակի տակ պետք է պահես. չպետք է մոռանալ՝ լռել չգիտի նա, ով խոսել չգիտի:

Եթե մեկի բախտը բերում է, չպետք է նախանձես, այլ պիտի ուրախանաս նրա հետ, և նրա հաջողությունը քոնը կլինի...

Չպետք է ամաչես սովորելուց նաև հասուն տարիքում. լավ է սովորել ուշ ,քան երբեք:

Պետք է ապրես նրանով, ինչ ունես, իսկ այսօրվա ավելցուկը պահես վաղվա օրվա համար: Պետք է հիշել՝ ավելի լավ է բարիքը թողնել թշնամուն, քան թե բարեկամներից ողորմություն մուրալ:

Ում հետ էլ ստիպված ես գործ ունենալ, պետք է զիջող լինես և հարգալից. չէ՞ որ շունն էլ շոյանք տեսնելիս պոչը խաղացնում է, մահակ տեսնելիս կծում է:

Կոպիտ կերպով չպետք է կտրես բարեկամության թելը. նորից կապելու ազո՛ւյց թող:

Պետք է աշխատես դառնալ խելացի և ոչ թե հարուստ. հարստությունից կարելի զրկվել, իսկ խելքը միշտ քեզ հետ է:

Բամբասկոտին ու շաղակրատին, եթե նույնիսկ հարազատ եղբայրդ է, փորձելուց հետո պետք է իսկույն վանես քեզանից...

Եթե փողդ շատ է, չպետք է ուրախանաս, եթե քիչ է, չպետք է տխրես:

Երբեմն նույնիսկ օգտակար է մոռանալ այն, ինչ գիտես...

Այսպես ասաց Եզրպոսը և հեռացավ:

210. Լրացրե՛ք աղյուսակը՝ բացատրելով հրամայական եղանակի բայերի ձևակազմության սկզբունքները /Կ-ն ---վերջավորություն/:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐՔԱՅ	Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ			
	Հ Ա Ս Տ Ա Տ Ա Կ Ա Ն		Ա Ր Գ Ե Լ Ա Կ Ա Ն	
	եզակի թիվ	հոգնակի թիվ	եզակի թիվ	հոգնակի թիվ
	բւթւթեւ → հւթեւ-ւ	բւթւթեւ → հւթեւ-ւ	բւթւթեւ → հւթեւ-ւ	բւթւթեւ → հւթեւ-ւ
սիրել	սիրիր→սիր/սեր/ / + իր	սիրեք→ սիր/սեր/ + եք /սիրեցեք/	մի՛ սիրիր →/մի/ սիր/սեր/ + իր	մի՛ սիրեք→ /մի/ սիր/սեր/ + եք
զննել				
գթալ				
ժպտալ				
գրվել				
թռչկոտել				
ընկնել				
փախչել				
հանգչել				
նեղանալ				
հագնալ				
կորցնել				
հասցնել				
մեծացնել				
վախեցնել				
ամրացնել				

211. Ա. Ընդգծե՛ք հրամայական եղանակի բայաձևերը՝ նշելով ձևաբանական հատկանիշները:

Բ. Գրե՛ք՝

ա/ թվակազմական հակադիր եզրերը /եզակի ⇄ հոգնակի/ /Օր.՝ հիշեցե՛ք – հիշի՛ր/.

բ/ դրական ձևերի արգելականները /Օր.՝ հիշեցե՛ք – մի՛ հիշեք/.

գ/ արգելականների դրական ձևերը /Օր.՝ մի՛ հիշիր – հիշի՛ր/:

Գ. Կազմե՛ք մնացած բայերի հրամայական եղանակաձևերը /Օր.՝ կհանի – հանի՛ր, հանե՛ք, մի՛ հանիր, մի՛ հանեք/:

Խոսքն ամենակարող է: Հիշեցե՛ք ժողովրդական առածները՝ «Անուշ լեզուն օձը բնից կհանի», «Լեզվի կծածին դեղ չկա», «Խոսք կա՝ սարի գլուխը կհանի, խոսք կա՝ սարից

ներքև կբերի», «Ձուկը թռռով են որսում, մարդուն՝ լեզվով», «Թուրը մեկ մարդ սպանեց, լեզուն՝ մեկ բանակ», «Լավ ասված խոսքը մեռած մարդն էլ կլսի»...

Սովորի՛ր ասելիքդ արտահայտել հակիրճ ու հստակ, բայց առանց աղավաղելու:

Անընդհատ հարստացրո՛ւ բառապաշարդ, որի ամենալավ միջոցը ուշադիր ընթերցանությունն է:

Անծանոթ բառ լսելիս կամ կարդալիս ... օգտվի՛ր բացատրական բառարանից:

Երբեք մի՛ գործածիր այն բառը, որի իմաստը չգիտես:

Աշխատի՛ր խոսել մաքուր հայերենով և խուսափի՛ր ոչ հայերեն բառեր գործածելուց. դրանով դու կպահպանես մայրենի լեզվի անաղարտությունն ու գեղեկությունը:

Սովորի՛ր ուշադիր լսել դիմացիներին: Մինչև վերջ լսի՛ր նրան, հետո առարկի՛ր:

Ընդհանրապես քի՛չ խոսիր քո անձի մասին:

Հարցին հարցով մի՛ պատասխանիր: Մի՛ կրկնիր հարցը, եթե անհրաժեշտություն չկա: Եթե մեկին գաղտնի բան ես ասելու, մի՛ շշնջա նրա ականջին... Իսկ եթե խիստ անհրաժեշտ, անհետաձգելի բան ես ասելու, ներողություն խնդրիր ներկաներից և առանձին ասա նրան, ում անհրաժեշտ է:

Խուսափի՛ր ավելորդ, ոչինչ չասող բառեր գործածելուց:

Մի՛ խառնվիր մեծերի խոսակցությանը:

Ձայնդ անտեղի մի՛ բարձրացրու. ընտրի՛ր ասելիքիդ համապատասխան հնչերանգ:

Կա՛մ լռիր, կա՛մ ասա այն, ինչ լավ է լռելուց:

Քիչ շտկի՛ր խոսքդ, եթե չես ուզում բախտդ ավերել:

Որևէ մեկին դիմելիս ներողություն խնդրիր, վերջում չմոռանաս շնորհակալություն հայտնել:

Մի՛շտ հիշիր մեծերի խոսքերը. «Առանց մտածելու խոսելն առանց նշանառության կրակել է» /Սերվանտես/, «Շատախոսությունը փորձանքի է հասցնում» /Մենադրոս/, «Դատարկ ու շատ մի՛ խոսիր, անշնորհք մի՛ ծիծաղիր, անտեղի մի՛ վիճաբանիր» /Ն. Շնորհալի/, «Խոսիր, որ քեզ տեսնեն /ճանաչեն/» /Սոկրատես/...

(Ըստ Հ. Հարությունյանի)

212. Դուրս գրե՛ք հրամայական եղանակի բայերը և լրացրե՛ք աղյուսակները՝

1. Ըստ նշված իմաստային խմբերի.

հրաման	պատվեր առաջարկ	կարգադրություն	պատգամ խորհուրդ	կոչ հրավեր պահանջ	խնդրանք աղաչանք	հորդոր խրախուսանք

2. Ըստ ձևակազմության

բ ա յ ա ծ և		ԽՈՆԱՐՀՈՒՄ		Բ Ա Յ Ա Հ Ի Մ Ք		Կ-Ն
կանոնավոր	անկանոն	դրական	ժխտական	Անկատարի	Կատարյալի	
մի՛ կանչիր	-	-	+	+ /կանչ/	-	-իր

Ա. Հանգի՛ստ թող ինձ, ծո՛վ,
Մի՛ կանչիր, գնա՛,
Իմ հոգու ներսում, բա՛վ է, մի՛ մխա,

Ծո՛վ, ես չեմ ուզում, որ դու, դու այրվես,
Ծո՛վ, երբ իմ մեջ ես դու, ես հանգիստ չունեմ,
Երբ իմ ներսում ես, լուռ այրվում ենք մենք,

Եթե ես չայրեն ալիքներդ , ծո՛վ, ~ ~ ~ ~ ~
Դու պիտի այրես իմ հանգիստը, ծո՛վ...
Վե՛ր կաց ու գնա՛ և էլ չդիպչես իմ
երազներին,
Դու է՛լ չհասնես իմ մերկ լարերին,
Որ... ինձ նվագես...
Ծո՛վ, չնվագես, ինձ չնվագես,
Լսո՞ւմ ես, դու, ծո՛վ,
Ինձ ետ չկանչես,
Վերքս չթրջես, չթրջես ինձ, ծո՛վ...

Բ. -Ճչա՛,
Թեկուզ ինձ անիծի՛ր,
Ու նզովի՛ր,
Բայց գեթ մի խո՛ւք,
Մի բա՛ռ ասա...

Թող ես մարդ մնամ,
Ծովի մարդ մնամ,
Բայց մի՛ թող, որ գնամ,
Գամ ու ծով դառնամ...
Վե՛ր կաց ու գնա, մի՛ կանչիր ինձ, ծո՛վ,
Մի՛ ճչա...գնա՛...
Ճակի՛ր թևերդ, մի՛ գրկիր ինձ, ծո՛վ...
Ինձ ետ մի՛ կանչիր,
Մի՛ տրվիր ինձ, ծո՛վ...
/Ս. Խաչատրյան/

Ուզում եք՝ սե՛ր կոչեք,
Ուզում եք՝ կի՛րք..
Միայն թե ինձ լսե՛ք
Ու հասկանա՛ք...
/Գ. Էմին/

Գ. 1. Լուսերես աղջիկ ես դու, Ծաղիկ ես դու, Շքե՛ղ մնա, Մաքուր ես, փոքրիկ ես դու, Մանկիկ ես, Անմե՛ղ մնա: Եղնիկ ես ծերպերի տակ, Դուրս մի՛ գա, Կզարկեն քեզ. Կոկոն ես թփերի տակ, Մի՛ բացվիր, կպոկե՛ն քեզ.. **2.** Գնացե՛ք, ծո՛վ գնացեք, Ծովի՛ն էլ դարդս լացեք, Հառաչս տարե՛ք չորս կողմ, Աշխարհի սիրտը գցեք: Ախ, մենակ մերս թե գա, Չասե՛ք՝ իմ հառաչն եք դուք, Ասե՛ք թե՛ իր աղջկա կարկա՛չն եք դուք...**3.** Թո՛ղ գնամ, ծովը գնամ, Թո՛ղ կորչե՛մ ծովերի մեջ.. **4.** Հայրենի՛ երկինք, դու պայծառ մնա, Արև՛, իմ երկրին հուրհրա հավե՛րժ... Հայրենի՛ ջրեր, դուք զվա՛րթ կանչեք, Դուք կարկաչեցե՛ք, գետե՛ր հայրենի:.. Հայրենի՛ դաշտեր, ծաղիկներ սիրուն, Դուք կանաչեցե՛ք, ծաղկեցե՛ք նորից... Երկրիս աղջիկներ, քույրե՛ր իմ անգին, Ի՛մ բախտավորներ, դուք ծիծաղեցե՛ք... **5.** Արի՛, արի՛, արի՛, Թեկուզ վերջին անգամ, Թեկուզ քայլով դժկամ, Միայն արի՛, արի՛... **6.** Հոգնած ձյունները քեզ սպասելով՝ Քո հուր կարոտից հալչո՛ւմ են, արի՛, Սիրող աստղերը մինչև առավոտ ճամփադ նայելով՝ հանգչո՛ւմ են, արի՛... Աշխարհն ինձ համար խենթ մի կանչ է լոկ, Բոլո՛ր ձայներով կանչում է «արի՛»... **7.** Լավություն արա ու ջուրը նետիր, լավություն արա ու մի՛ երկնտիր, Թաքուն մի՛ հուսա հատուցում ու վարձ, Նետիր գետե՛րը, նետիր անդարձ... Լավություն արա ու ջո՛ւրը նետիր... **8.** Բաց շուրթերդ, խոսի՛ր, անգին, Ժիր դայլայլի՛ր, իմ սիրասուն, Թող մանկանա՛ քո շուրթերին Մեր ալեհեր հայոց լեզուն... **9.** Սեղա՛ն բացեք, թող խառնվեն վիշտ ու խնդում, արցունք ու երգ...**10.** Բայց դու այս օրը հիշի՛ր, հիշեցրո՛ւ նրան, Որպեսզի այրի դու սզավորդ Չդառնաս նաև սզավոր մա՛յր...**11.** Տե՛ն, թռչնում է մեր լեզուն շուրթերին այն պատանի, Ջավակներդ կորչում են ասֆալտներին այն օտար. Ո՛ւժ տուր խամրող մեր բառին, դարձիր ավիշ ու նեկտար, Նրանց երեք ոտքի տակ դարձի՛ր դու հող հայրենի... Տա՛ր, այնտեղ տար մեր ոգու նորոգված ուժը անծիր... Արյո՛ւն մղիր, դարձի՛ր սիրտ՝ հայի ցամքող երակին, Երկրից երկիր, ծովից ծով կապի՛ր կամար ու կամուրջ. Ժողովրդիս ցանուցիր ա՛ռ թևի տակ ալիքիդ, Երևանի հզո՛ր ձայն, Երևանի անմահ շունչ... **12.** Արդեն ուշ գիշեր է, Քնի՛ր, քնի՛ր, Դատարկ են մայթերը, Քնի՛ր, Քնի՛ր... Ա՛խ, սի՛րտ իմ, էլ զուր է, Մի՛ զարկիր էլ... /Ս. Կասպուտիկյան/

213. Լրացրե՛ք գծապատկերը:

Բայեր, որոնք հանդես են գալիս երեք դեմքով	Բայեր, որոնք գործածվում են միայն երրորդ դեմքով	Բայեր, որոնք միայն փոխաբերական կիրառությամբ են երեք դեմքով հանդես գալիս
ագատել	դողանջել	որոտալ

Ազատել, դողանջել, որոտալ ախտորոշել, ահաբեկել, աղոթել, աճապարել, ամաչել, այցելել, առաջնորդել, արժել, մամռակալել, ճառագել, մակագրել, ճախրել, ձնել, բառաչել, բաբախել, բողբոջել, բորբոսնել, գաղթել, ժառանգել, խոխոջել, ծլել, ծորալ, կաթել, կարկաչել, կեղծել, հաչել, մզլել, նեխել, որդնել, վրնջալ, ծփծփալ, ծխալ, ծխել, ոռնալ, կաղկանծել, մռնչալ, մկկալ, մռլտալ, քչքչալ, դայլայլել, նախագծել, նախագծվել, հետաձգել, հետաձգվել:

214. Տրված վերջավորությունները բաշխե՛ք ըստ եղանակաժամանակային ձևերի կազմության:

	Ա.		Բ		Գ		Դ	
	Եզ.	Հոգն.	Եզ.	Հոգն.	Եզ.	Հոգն.	Եզ.	Հոգն.
1-ին դ.	-ի	-ինք	-ա	-անք	-մ	-նք		
2-րդ դ.	-իր	-իք	-ար	-աք	-ս	-ք	-ա, -իր, -ու	-եք
3-րդ դ.	0, g, ը	-ին	-ավ	-ան	0	-ն		

215. Ըստ գծապատկերի վերլուծե՛ք բայերը / Որպես օրինակ՝ ընդգծված են 1. մի՛ թող /1./ և 2. ապրել էր /2/ բայերը/:

Գրիգորի հոգին լիքն էր արարման անհանգստացնող, թևավորող մոտիկությունից: Տաղերը երկնելիս **ապրել էր** ոգեշունչ, վեհացնող պահեր, սակայն արարումն այս հիշեցնում էր փոթորկին նախորդող պահերը՝ ամենաբզկտող, ամենատառապեցնող, ամենավեհացնող, ամենա...: Գրվում է «Մատյանը»: Եվ սպառվել է մոմը կանթեղի մեջ: Եվ սպառվել է արևը՝ արևմուտքում: Եվ հունական Պառնասը տեղափոխվել է Նարեկ, և լազուր երկնքում անընդհատ, անկանգ սավառնում են մուսաները՝ թռչնի թևերով պսակված: Նրանք չեն թողնում՝ Գրիգորը աչքերը գոցի, հանգստանա, կերակրի իր հյուծվող մարմինը, սրբի աչքերը վարագուրող հոգնության շղարշը, մի պահ շնչի խուլցերի մեջ չբանտարկված դրսի մաքուր օդը: Մուսաները սիրահարված են նրան: Իսկ ում սիրում են մուսաները, նա դառնում է աստվածաշնորհ: «Մատյանի» թերթերը դարսվում են իրար վրա, «Մատյանը» զորանում է, որ սպասող ընթերցողի մեջ առաջացնի այնպիսի մի հաճելի գլխապտույտ, ինչպես լինում է երիտասարդ գինին ըմպելուց հետո: Որ կաչի, համբուրի Սուրբ Գրքի չափ զորավոր սուրբ «Նարեկը»... Եվ բախտավորվել, լցվել մայրության սրբազան ավիշով, ազատվել ցավերից, աչքի լույս ստանալ և լուսավորվել, հերոսանալ... անմահանալ:

«Մատյանը» շուտով պիտի ավարտվեր: Մոմը հանգչելու վրա էր; Արդյոք զգու՞մ էր Գրիգորը, որ «Մատյանի» ավարտումով պետք է ավարտվեր իր կյանքը մոմի նման՝ սպառելով ինքն իրեն: Գրիչը դրեց ներքև. մտածում էր: «Մարդը պարտավոր է մոտենալ Աստծուն: Բայց ինչպե՞ս. մինչև Աստծուն հասնելը՝ երկար, շա՛տ երկար է ճանապարհը, մեղքերից ազատվելու և մաքրվելու ճանապարհը վերջ չունի... Մարդը հզոր է, երբ պայքարում է ուրիշի մեղքերի դեմ, անզոր է սեփական մեղքերը քավելու հարցում: Պետք է հասցնել նրա գիտակցությանը, որ մեկտեղված գեղեցկությունն ու կատարելությունը ի գորու են աստվածության դռները բախելու... Սիրի՛ր մարդուն, քո նմանին: Դրախտը հետմահու **մի՛ թող**, այլ կառուցիր կյանքի համար: Մի՛ քանդիր, մի՛ ավերիր, մի՛ ամայացրու: Օջախ վառելու համար ամբողջ ծառը մի՛ կտրիր: Ի վերջո՝ մի՛ սպանիր. մեռցնելն անմարդկային արարք է: Ընդհակառակը, հարատև դարձրո՛ւ կյանքը: Մի՛ շնանար: Սիրով մաքրվի՛ր և ոչ թե պղտորվի՛ր: Մի՛ խաբիր, մի՛ շողոքորթիր, որ անկեղծությունը չվիրավորվի: Ապրի՛ր այսպես և Աստված կունենաս, և Աստված կբնակվի քո մեջ»:

Եվ շառաչեց մատյանը՝ ջրվեժի ուժգնությամբ նետվելով մարդկային հոգու խորխորատները: Եվ ընդվզեց «Մատյանը» մարդկային հոգու բարձունքներից երկինք

նետվող հրաբուխի նման: Ափսոս, չգիտի Նարեկացին, որ ինքը դառնում է առեղծված, աստվածություն միտող մարդ-արարած, հողածին Քրիստոս... Նա գիտի, որ ինքն անմահ է, հավատացած է, որ գալու է ժամանակը, երբ ընկնելու են սրերը մահ տարածողների, ցիրուցան են լինելու ուտիճ-ցեցերի տարմերն անպատկառ, քանդվելու են ամրոցները ստամբակների... Գիտի՝ բախտավոր ու սիրված չի կարող լինել այն ժողովուրդը, որն իր գոյությունը խարսխում է ստրկացնելու ու գերելու վրա՝ գերելով նրանց և նրանց մտածողությունը: Հարատևելու միջոցը ոչ թե ջարդելու և ավերելու, այլ կառուցելու և արարելու մեջ է: Եվ հավատում է հայ ժողովրդին, քանզի քրտինք թափելը նա գերադասում է արյուն թափելուց: Պաշտպանվելը՝ հարձակվելուց: Աշխատելը կողոպտելուց: Գոյատևելը բնական և բանական արդյունքն է այս ամենի...

Հյուսվեց «Մատյանը»: Սուրբ Գրքի կողքին հաստատապես հանգրվանեց ոչ պակաս զորավոր սուրբ «Նարեկը»: Հայոց մեծերի կողքին հայտնվեց մեծագույնը: Եվ որովհետև հողածին էր, շտապեց և մահը: Սակայն մահը սխալվել էր. Գրիգոր Նարեկացու մահն ու անմահությունը տեղի ունեցան միաժամանակ: Ավարտվեց «Մատյանը», փակվեց վերջին էջը, ու հավիտենապես փակվեցին նաև աչքերը: Հետո անմահությանը գումարվեց նաև սրբությունը: Սրբացավ, դարձավ հայոց և աշխարհի անմահության պանթեոնի հավերժական բնակիչը: Անցնում է նա անմահության ճանապարհը՝ առանց երկնչելու ժամանակից... Միշտ, այսօր և հավիտյան...

/Ըստ Մկրտիչ Սարգսյանի/

1./ապրել էր/ 2. /մի՛ թող/

1. ԸՍՏ ԸՇՈՐԴՈՒԹՅԱՆ	Ա			
	Ե		✓	✓
2. ԸՍՏ ԴԵՐՔԱՅԱԶԵՎԵՐԻ	Անկախ	Անորոշ		
		Ենթակայական		
		Հարակատար		
		Համակատար		
	Կախյալ /ձևաբայ/	Անկատար		
		Ապակատար		
Վաղակատար		✓		
	Ժխտական			
3. ԸՍՏ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԻ	դիմավոր		✓	✓
	անդեմ			
4. ԸՍՏ ՀԻՄՔԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ	Անկատարի հիմք		✓	
	Կատարյալի հիմք	ցոյական		
		րեական		
		արմատական		✓
Դերբայական հիմք				
5. ԸՍՏ ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ	Ներգործական		✓	✓
	Կրավորական			
	Չեզոք			
6. ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ	Պարզ		✓	
	ածանցավոր	սուկածանցավոր		✓
		պատճառական		
		կրավորական		
բազմապատկական				
	Սահմանական	ներկա		

7. ԸՍՏ ԵՂԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ		անցյալ անկատար		
		ապառնի		
		անցյալի ապառնի		
		վաղակատար		
		անցյալի վաղակատար	✓	
		անցյալ կատարյալ		
	ըղծական	Ապառնի		
		Անցյալի ապառնի		
	ենթադրական	Ապառնի		
		Անցյալի ապառնի		
հարկադրական	Ապառնի			
	Անցյալի ապառնի			
հրամայական			✓	
8. ԸՍՏ ՂԵՄՔԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ	1-ին դեմք			
	2-րդ դեմք			✓
	3-րդ դեմք		✓	
1. ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ	ներկա			
	անցյալ			
	ապառնի			
2. ԸՍՏ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ	եզակի	✓	✓	
	հոգնակի			
3. ԸՍՏ ԺՄՏՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ	հաստատական	✓		
	ժխտական		✓	
4. ԸՍՏ ԿԵՐՊԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ	կատարվող			
	կատարված	✓		
	կատարելի		✓	
5. ԸՍՏ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ	կանոնական	✓		
	անկանոն		✓	
	պակասավոր			
6. ԸՍՏ ՇԱՐՎՀՅՈՒՄԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ / նաև կապական կառույցներով/	պարզ ստորոգյալ	✓	✓	
	բուն գործածությամբ			
	փոխանվանական գործածությամբ			

216. Լրացրե՛ք գծապատկերները /1., 2., 3./ և բացատրե՛ք ժխտականի ձևերը կազմելու սկզբունքները:

1.		2.		3.	
երգում են	չեն երգում		չեն տվել	փայտե՛ք	
զալիս են		կարդաց			մի՛ իջեցրու
	չի մնա		չգզալուց	մտածել տալ	չպիտի երգեն
պիտի գրեն	մի՛ ափսոսա	գրած	չպիտի տեսնի	պիտի նայի	
հանդիպել էինք		փրկել են	երանի չի տալիս		մի՛ եղեք
	չէր եղել	ընկնում է		ցույց տվե՛ք	մի՛ լինիր
ապրել	չի հասնի		չպիտի կանգ առնեն	մոտ է գալիս	չգրածով
կխոսեն	չգտներ	կտեսնեի			հույս ունեցի՛ր
հեռացի՛ր	չի հարբելու	գրվելու է	չեն դառնալու		մի՛ թռեք
			թույլ չտվեցին	քշեն-տանեն	
նայեր		գնացող			չի լռի

	չսպասենք		թույլ մի՛ տուր	վերհիշում է	
հիշելիս		սիրտ առավ			չհավատաց

217. Գրե՛ք ժխտական ձևերը՝ օգտվելով փակագծերում տրված հուշումներից:

1. Կյանքում կան բաներ, որոնք /քերվել – սահմ. եղ. ներկա/, Ինչպես /քերվել – սահմ. եղ. ներկա/, արյունը սրտից Կամ գույնը վարդից: Կյանքում կան բաներ, որոնք /ներվել – սահմ. ներկա/ /ՊՍ/: 2. Դե՛, շրթունք բեր, որ /անհծել- ըղծ. ապառնի/, Դե՛, բեր բռնունքք, պրկված կռուփ, Որ /դառնալ – ըղծ. ապառնի/ քինահարույց կրքի խոյանք... /ն/: 3. Օ Սուլամի՛թա, Այդպես ամաչկոտ /շուռ գալ – հրամ./ ինձնից... /ն/: 4. Նորահաստա՛տ մի սեր և նորաքա՛նդ մի սեր,- Սա մի պատմություն է, որ /հնանալ – սահմ. ապառնի/, ինչպես երբևիցե /ենթ. - ապառնի/ մահն ու ծնունդը նոր, Լացը երեխայի Ու ծերացած աչքի արցունքոտվելն անլաց... Դերը /սիրվել հարակատար դերք./ կամ մերժվածի Ես՝ կարող եմ խաղալ նո՛յն հեշտությամբ, Ինչ հեշտությամբ կյանքում պիտի դառնա Համ /զգալ - ենթակայական դերք./ մարդը՝ լավ զինեգործ, Գույն /ջոկել - ենթակայական դերք./ մարդը՝ լավ ծաղկագետ: Մերժված ես /լինել սահմ. վաղակատար/ Ու /լինել - ենթադրական ապառնի/ - երբե՛ք: Եվ ինձ /սիրել- անորոշ դերք./ - անհնար է նույնքա՛ն... /ն/: 5. Ես գիտեմ, առասպելն այս նո՛ր /եմ – սահմ. եղ. ներկա/ ,... բայց ասա՛, ես ինչով Նոր Նո՛յ /եմ – սահմ. ներկա/, Եվ ինչով՝ հողը /կորցնել – սահմ. վաղակատար/ /Գէ/: 6. Ինքնասպան լինել /լինել - ենթ. ապառնի/ Ո՛չ պարանով այս, ո՛չ այս դանակով. /Դառնալ - ենթ. ապառնի/ ջուրն այս օղի կամ գինի, Եվ երգ /գրվել - ենթ. ապառնի/ արյան թանաքով.../ն/: 7. Անհնարի՛ն է, Անհավատալի՛, Որ այս աշխարհը Քանի՛ միլիոն դար - Ապրել է, Եղե՛լ, Եվ դու /ծնվել – սահմ. վաղակատար/, Եվ դու ... /լինել – սահմ. վաղակատար/- Քանի միլիոն դար - ... Անհնարին է, Անհավատալի՛, Որ այս աշխարհը... Կապրի՛, Կլինի՛, Երբ դու... /ապրել -ենթ. ապառնի/, Էլ դու ... /լինել - ենթ. ապառնի/ ... Սակայն ավելի՛ անհավատալի՛ Ու սարսափելի՛ կլիներ, Եթե Դու /ծնվել – ըղծ. անցյալի ապառնի/ Եվ /լինել –ըղծ. անցյալի ապառնի/ Այս անսկիզբ ու անվե՛րջ աշխարհում... Փա՛ռք տուր և օրհնա՛նք, Որ դու երջանիկ ու բախտավոր ես քանի՛-քանիսի՛ց, Որոնք /ծնվել – սահմ. վաղակատար/, /կամ –սահմ. ներկա/, /լինել – սահմ. վաղակատար/... Որ փրկվել ես դու Աշխարհ /գալ - անորոշ դերք. սեռ. հ./ Այդ անհնարին, Անհավատալի՛ Ու մե՛ծ փորձանքից.../ Գէ/:

218. Գրե՛ք պոկվել ընկնել հարադիր բայի դրական և ժխտական խոնարհման առաջին դեմքի բոլոր ձևերը:

219. Գրե՛ք՝
 ա/ գնալ, վերցնել բայերի ներկայի բոլոր ժամանակաձևերը.
 բ/ մոտենալ, թռչել բայերի անցյալի բոլոր ժամանակաձևերը
 գ/ փախչել, ցույց տալ բայերի ապառնիի բոլոր ժամանակաձևերը:

220. Դուրս գրե՛ք երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը՝ անվանելով դրանք և նշելով, թե գլխավոր ժամանակներից որի հարաբերությամբ են ցույց տալիս գործողությունը

/Օր.՝ տեսած է լինում – 1. նախորդող ներկա 2. անկատար ներկայի հարաբերակցությամբ՝ տեսնում է/:

Ա. 1. Արշալույսից առաջ քունն ավելի խորն է: Նահանջած են լինում մղփավանջներն արդեն /ՊՍ/: 2. Եթե տեսած լինեիք ոսկով բեռնված էշ, չպիտի որ կարծեիք՝ ոսկյա էշ էր... Եթե տեսնելիս լինեք էշ, որ դիպում է կրում, մի՛ ասեք, որ կրթված էշ է. դա միայն դիպում կրող էշ է: Եթե էշ տեսնելու լինենք Երուսաղեմում, չմտածե՛ք, որ սուրբ էշ է, դա միայն էշ է սուրբ քաղաքում /հայկական/:

Բ. 1. Այդ ժամանակներում այդ քաղաքում մի այսպիսի սովորություն է լինում. եթե մեկը մեռնելիս է լինում, բարեկամներին ոչ թե մեռելի տերն է հայտնելիս լինում, այլ ծխատեր քահանային են հայտնելիս լինում, սա էլ բարեկամներին՝ թե ինացած եղեք...: 2. «Հայր, ես միտք չունեմ աղջիկ ուզելու, իսկ եթե ուզելու լինեմ, պետք է հոր ու մոր ծնունդ չլինի»: Թագավորը հարցուփորձ է անում, բայց ոչ մեկը որդու ուզածի նման աղջիկ ոչ տեսած է լինում, ոչ լսած: 3. Պառավը զարմացավ. «Ո՞վ պիտի արած լինի այս բանը. գուցե մեկը մտած լինի և թաքնված»: 4. «Մենք որ կթելու լինեինք, քո միակ այծը չէինք կթի»: 5. Սրան անպատճառ հայրս ուղարկած կլինի, բայց ինձ տեսնելիս սառը եղավ... 6. Շատ հին ժամանակներում Մասիս սարի մյուս երեսին ապրելիս է եղել մի թագավոր: 7. Ես արդեն մեռած կլինեի, եթե Արսենի հուսատու հորդորները չլինեին, և եթե թույլ տալու չլինես մեր գնալը, իմ հուսահատվելն ու մեռնելը միասին կլինի:

/Ըստ Ղ. Աղայանի հեքիաթների/

Գ. 1. Ես վաղուց մեռած կլինեի, եթե այդ հրաշագեղ թագուհին ինձ հույս տված չլինեի, ու պիտի հուսով ապրելու լինեմ: 2. Դու էլ լսած կլինես, որ ես արհեստին մեծ նշանակություն եմ տալիս: 3. Երբ դուրս գալու կլինենք, և կտեսնեք, որ ոչինչ չեք տեսնում, փակեք ձեր աչքերը: 4. –Պապի՛, -հարցրեց երիտասարդը, - դու անպատճառ տեսած կլինես թևավոր ձին կամ պիտի որ լսած լինես: -Եթե պատահած էլ լինեմ Պեգասին, վաղուց, շատ վաղուց կլինեմ պատահած: 5. Տխրած պիտի լինի մեր քույրը: 6. Արդյոք այդ կռվողների մեջ եղել է մեկը, որ Վուրդի նման սիրահարված լինեի և կամ որևէ պառավ կամ օրհնությունով նրա մեջ ձգած լինեի Աննանի սերը: 7. Եթե նրանց բերելու համար ուղարկելու լինես մեկին, կպատվիրես, որ նա այդ ճամփով գնա քսան օր: 8. Արևամանուկը պետք է վեր կացած լինեի: 9. Նա անշարժ է, կարծես թմրած լինեի կամ մրափած:

/Ըստ Ղ. Աղայանի հեքիաթների/

221. Կազմե՛ք՝

Ա. տեսնել և ժպտալ բայերի սահմանական եղանակի գլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը /7 և 21/. բացատրել վերջիններիս կազմության սկզբունքները:

Բ. Աշխատել և թռչել բայերի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների գլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակները / յուրաքանչյուրում՝ 2 և 6/. բացատրել վերջիններիս կազմության սկզբունքները:

Գ. *Գնալ, վաճել, սպասել, ժպտալ* բայերի հրամայական եղանակի գլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակները /1 և 3/. բացատրել վերջիններիս կազմության սկզբունքները:

222. Լրացրե՛ք գծապատկերը և բացատրե՛ք՝ քերականական ինչ հատկանիշներով են տարբերվում և նմանվում հակադրվող զույգերը. ի՞նչ են ցույց տալիս երկրորդական բաղադրյալ ժամանակների անդեմ և դիմավոր բաղադրիչները:

սովորում եմ	սովորելիս եմ լինում - սովորած եմ լինում - սովորելու եմ լինում
ապրելու ես	
	գնալիս է եղել - գնացած է եղել - գնալու է եղել
	քնելիս կլինեմ - քնած կլինեմ - քնելու կլինեմ
պիտի անցնենք	սիրելիս պիտի լինեմ – սիրած պիտի լինեմ – սիրելու պիտի լինեմ
մոռացանք	
	մեռնելիս էինք լինելու – մեռած էինք լինելու – մեռնելու էինք լինելու
գրկել էի	
	երագելիս լինեիք – երագած լինեիք – երագելու լինեիք
կղառնայի	
	հասնելիս էին լինում – հասած էին լինում – հասնելու էին լինում
բաժանվեն	

223. Գրե՛ք *տեսնել, ծնվել* բայերի երկրորդական բաղադրյալ ժամանակների եզակի առաջին դեմքի բոլոր ժամանակաձևերը:

Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Ե Ր

224. Որոշե՛ք անկանոն բայերի կազմությունը և նշե՛ք, թե դրանք ո՞ր ձևերում են անկանոնություն դրսևորում:

ա/ Ասել, բերել, զարկել, ուտել.

բ/ Անել, դնել, տանել, ելնել, առնել, տեսնել, թողնել, լինել.

գ/ Գալ, լալ, տալ.

դ/ Դառնալ, լվանալ, /վեր/ կենալ:

225. Բացատրե՛ք վերևում տրված բայերի հիմքակազմությունը և լրացրե՛ք գծապատկերը:

ՊԱՐՁ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ		ՍՈՍԿԱԾԱՆՑԱԿՈՐ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ			
Ներկայի հիմք	Կ ա տ ա ղ յ ա լ ի հիմք		Ներկայի հիմք	Կ ա տ ա ղ յ ա լ ի հիմք	
	նույն-արմատ	տար-արմատ		նույնարմատ	տար-արմատ

227. Համենատե՛ք արժեն /արժել/ - արժենալ, գիտեն - գիտենալ /իմանալ/, լվալ- լվանալ, ունեն – ունենալ, ցանկալ-ցանկանալ, ուզել-ուզենալ, հուսալ - հույս ունենալ **բայագուգերը: Նրբիմաստային և ձևակազմական ի՞նչ տարբերություններ ունեն:**

228. Դուրս գրե՛ք բայերը և լրացրե՛ք գծապատկերը:

Կանոնավոր բայեր	անկանոն բայեր	պակասավոր բայեր

1. Ու ես աչքերս բացի, դու չկայիր մեր բակում, Այդ նշենին էր ծաղկած իմ լուսամուտը թակում /ԿԴ/: 2. Հավատում էի, գիտեի հաստատ, որ այս աշխարհում Դու ինչ-որ մի տեղ ապրում ես ու կաս, Բայց չգիտեի, որ մոտ ես այդքան ու հենց այս գարուն Հայտնվես պիտի ու գարնան հետ գաս... Եկել ես ահա ու բերել նորից գաղտնիքն ու լացը, Որ գիտեն այնպես տրտմորեն լացել, Եվ ի՛մն է ասես լեռներում կորած այն քարանձավը, որի գաղտնիքը ոչ ոք չի բացել: Ի՛մն է հեքիաթի ցայգածաղիկը, այն ծաղիկը լուրթ, Որի ծաղկումը չի տեսել ոչ ոք /Ն/: 3. Եվ այն, ինչ դու ես ինձ տվել, Ո՛չ կարոտ է, Ո՛չ թախիծ է Ու ո՛չ էլ սեր... Ուրիշ է սա, Ի՞նչ անեն ես... /Ն/: 4. Բայց դատ չունեն ես քո դեմ ու ոխ չունեն ես բնավ, Քանզի տեսնում եմ ահա - վիրավոր ես ու տրտում, Քանզի գիտեմ, որ աշնան գիշերներն այս խոնավ Քրքրում ես ինքդ քեզ ու ինքդ քեզ բզկտում /Ն/: 5. Քաղաքը թողինք, թողինք ներքևում տրտմությունը գորշ... /Ն/ 6. Մենք կա՛նք-չկա՛նք, աշխարհը կա ու կմնա, Եվ մեզանից հետք ու անուն էլ չի մնա. Երբ չկայինք, աշխարհը բան չէր կորցրել, Երբ չլինենք, նա էլի նույնը կմնա /Օմար Խայամ/: 7. Գիտեմ՝ դու գիտես աստղերի լեզուն, Բայց ես չեմ փոխի քո ողջ աստղավետ Երկինքը երկրիս մի բուռ հողի հետ /ՀՇ/: 8. Սիրածներիցս ոչ մեկը Չարժեր ոչ մի արցունքիս, Ե՛վ թխիկը, և՛ շեկը Ավերեցին բերդ հոգիս /Ն/: 9. Տե՛ս, ծառե՛րը այս նորուղեշ. նրանք մեզ հետ հասակ առել, Մեր դպրոցի ծանոթ ճամփին հով են արել մանուկ մի օր, Հիմի սիրո մեր գաղտնիքին հովանի՛ են արդեն դարձել, Ե՛կ, թափառե՛նք Երևանի սիրո ճամփա փողոցներում /ՍԿ/: 10. Ես քիչ եմ տվել՝ առածիս դիմաց, Քեզ, ի՛մ ժողովուրդ, նվիրել եմ քիչ, Քիչ եմ տոկացել քո կյանքի համար, Չոհասեղանիդ չեմ բերել ոչինչ /Ն/: 11. Ելավ, կանգնեց կենդանի, ոգիացա՛վ, բարձրացա՛վ, Տարա՛վ, տարա՛վ ետևից մի ողջ, անխոնջ ժողովուրդ, Դավիթ դարձավ ու Միեր, դարձավ ոգի ու խորհուրդ, Ջարկեց, զարկվեց Անիի պատերի տակ բարկացայտ /Ն/: 12. Չզվում է վեր, որ բարձրանա, որ զլուխը մի կերպ հանի Քար ու ժայռից ու երևա՛, ու երևա՛ Երևանին, Ասի՛ նայի՛ր, եղե՛լ եմ, կա՛մ ու կլինե՛մ, ինչ էլ լինի... /Ն/: 13. ... Թող Սասունն իր պարը պարի՛, Իսկ դու դեռ մի՛ ծափահարիր, Այլ հասկացի՛ր, թե այս պարով.. Մեկ խնդալով ու տաս լալով Սասունը քեզ ի՛նչ է ասում.. Հեյ վա՛խ, Աշնակ տեսած լա՛ն, Թե տեսնեիր մի օր Սասուն... /ԳԷ/: 14. Մեկ զարկելով, տաս զարկվելով, Թողի՛ն Սասնա գմրուխտ սարեր... Եկա՛ն, դրին քարը քարին, Դուշմանն եկավ, խառնեց իրար, Ողջ ու մեռել ջոկ-ջոկ արին, Դուշմանն եկավ խառնեց իրար /Ն/: 15. Որքան ցավեր տվին , առան, Որքա՛ն սևե՛ր, սևե՛ր, սևե՛ր, Տարիներս, տարիներս, Որքան չասված խոսքեր տարան.... Ո՞ր գնացին, ինչպե՞ս անցան Քար քրքրող, երկինք խմող Տարիներս, տարիներս... /ՀՍ/:

229. Ձևափոխել՝ ընդգծված բայերը՝ փակագծերում տրված նշումներին համապատասխան:
 Ա. Սպասվող հոգևոր փոթորկի, հրաբուխի առջև մերկացած էր հոգին: Նրա մեծ էությունը *թռչել* (սահմ. եղ. անկ. անց., եզ. թ., 3-րդ դ.) *սպասվել* (ենթ. դերբ.) հողմերին ընդառաջ՝ *տենչալ* (անոր. դերբ., գործ. հ.,) տիեզերական բախումների, կուրացնող բռնկումների, հոգին *կործանել* (ենթ. դերբ.) և փրկող ալեբախումների: Ցանկանում էր մռնչալ տիեզերքն ի վեր, ի վեր աստծուն, ցանկանում էր հիշեցնել, ապա խնդրել, ապա աղերսել աստծո բարեհաճությունը՝ մարդկանց հոգիները մեղքերից *մաքրել* (անոր. դերբ. սեռ. հ.,) համար, իսկ եթե *ընդդիմանալ* (ըղծ. եղ. անց., եզ. թ., 3-րդ դ.) աղերսին, ապա *պահանջել* (հարկ. եղ., անց., եզ., 3-րդ դ.), *բանավիճել* (հար. եղ., անց., եզ., 3-րդ դ.)՝ *վախենալ* (անոր. դերբ., գործ. հ., ժխտ.) հանդգնությունից, չերկնջելով *մեղք գործել* (անոր. դերբ., բաց. հ.): «Ես *գրել* (ենթ. եղ. ապ., եզ. թ., 1-ին դ.) մատյանն իմ ողբերգության... Ես հյուր *կանչել* (ենթ. եղ., ապ., եզ. թ., 1-ին դ.) երկնային տիրոջն ու տիրոջ իրավունքով կհյուրասիրեմ ոգեղեն և հոգեղեն սնունդով: Ասես իմ սրտում կուտակվել, *ծովանալ* (սահմ. եղ., վաղ. ներ., հոգն. թ., 3-րդ դ.) գարնանային ելման ջրերը և ուր որ է *քանդել* (սահմ. եղ., ապակ. ներկ., հոգն. թ., 3-րդ դ.) իրենց ճամփան խոչընդոտող հոգեկան բոլոր պատնեշները, և արարման հեղեղը *նետվել* (սահմ. եղ., ապակ. ներկ., եզ. թ., 3-րդ դ.) մազադաթի անբասիր սպիտակության վրա և *վերածել* (սահմ. եղ., ապակ. ներկ., եզ. թ., 3-րդ դ.) հրաշագործ մատյան ողբերգության»:

Բ. Աստվածացման պահ էր, և եթե այդ պահին *հարցնել* (ըղծ. եղ., անց., հոգն. թ., 3-րդ դ.) նրան՝ ում հետ ես, Գրիգոր՝ Նարեկացի, *ասել* (ենթ. եղ., անց., եզ. թ., 3-րդ դ.)՝ Աստծո: *Եվ ստել* (ենթ. եղ., անց., եզ. թ., 3-րդ դ., ժխտ.), *խաբել* (ենթ. եղ., անց., եզ. թ., 3-րդ դ., ժխտ.).. Այդ պահին, միայն այդ պահին *հանդգնել* (սահմ. եղ., վաղ. անց., եզ. թ., 3-րդ դ.) լինել Աստծո հետ և խոսք խոսել նրա հետ... «*Նեղացնել* (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 1-ին դեմք) քեզ, անարժանս, բայց *դավաճանել* (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 1-ին դ., ժխտ.): *Չարախոսել* (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 1-ին դ.), բայց *ատել* (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 1-ին դ., ժխտ.): *Խոստումնազանց լինել* (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 1-ին դ.), բայց *խաբել* (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 1-ին դ.): Թեև մոլեգնել, բայց *հայհոյել* (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 1-ին դ., ժխտ.): Չարմացել, բայց *կասկածել* (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 1-ին դ., ժխտ.): Կասկածել, բայց *հիասթափվել* (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 1-ին դ., ժխտ.)... *Ազատել* (իր. եղ., եզ. թ.) ինձ ինձանից: *Փրկել* (իրմ. եղ., եզ. թ.) ինձ ինձանից: *Ղաղարեցնել* (իրմ. եղ., եզ. թ.) իմ կռիվն իմ դեմ: Իմ բաժանված եսերը *միացնել* (իրմ. եղ., եզ. թ.)... Ճգնավորի քուրձ *հագնել* (ենթ. եղ., ապ., եզ. թ., 1-ին դ.), *գլուխ դնել* (ենթ. եղ., ապ., եզ. թ., 1-ին դ.) քարե բարձին, *չարչրկել* (անոր. դերբ., գործ. հ.) մարմինն իմ և *ծվատել* (անոր. դերբ., գործ. հ.) հոգիս՝ *հալածել* (ենթ. եղ., ապ., եզ. թ., 1-ին դ.) մեղքերն իմ, որ *իրավունք ունենալ* (ըղծ. եղ., ապ., եզ. թ., 1-ին դ.) *աղաղակել* (անոր. դերբ. տր. հ.)՝ *ներել* (իրմ. եղ., եզ. թ.) մեղավորիս... Զի *ներել* (անոր. դերբ., ուղղ. հ., որոշ.) շնորհ է աստվածային...»:

Գ. Ժամանակը *կանգ առնել* (սահմ. եղ., վաղ. անց., եզ. է., 3-րդ դ.)՝ գիշեր-ցերեկ *կամ* (սահմ. եղ., անկ. ներ., եզ. է., 3-րդ դ.): «Մատյանը» բռնել է (սահմ. եղ., վաղ. ներ., եզ. թ., 3-րդ դ.) հոգուց...

«Մատյանը» *հրամայել* (սահմ. եղ., անկ. ներ., եզ. թ., 3-րդ դ.): Մագաղաթի առջև *բացվել* (սահմ. եղ., անկ. ներ., եզ. թ., 3-րդ դ.) հոգին: Մերթ *հեծեծայ* (սահմ. եղ., անկ. ներ., եզ. թ., 3-րդ դ.), մերթ *լայ* (սահմ. եղ., անկ. ներ., եզ. թ., 3-րդ դ.), մերթ գետնատարած *խնդրել* (սահմ. եղ., անկ. ներ., եզ. թ., 3-րդ դ.) է ու աղաչում... Աշխարհի *կործանվել* (հրկ. դերբ., փոխանվ., եզ. թ., հայց. հ.) ու *փրկվել* (հրկ. դերբ., փոխանվ., եզ. թ., հայց. հ.), *գտնել* (հրկ. դերբ., փոխանվ., եզ. թ., հայց. հ.) ու *կորցնել* (հրկ. դերբ., փոխանվ., եզ. թ., հայց. հ.) ասես *դնել* (սահմ. եղ., վաղ. ներ., հոգն. թ., 3-րդ դ.) աստվածային կշեռքի նժարների վրա, և դատավորն ինքն է: «Ամեն ոք իր մատյանն *ուներ* (սահմ. եղ., անկ. ներ., եզ. թ., 3-րդ դ.) իմ «Մատյանում». ամենքինն է իմ «Մատյանը»... Նրանցը, ովքեր *կորցնել* (սահմ. եղ., վաղ. ներ., հոգն. թ., 3-րդ դ.) իրենց Աստծուն: Ովքեր մերժել են իրենց Աստծուն: Ովքեր սիրել ու սիրվել երազելով *անտարբեր դառնալ* (սահմ. եղ., վաղ. ներ., հոգն. թ., 3-րդ դ.) *սիրել* (անոր. դերբ., տր. հ.) և *սիրվել* (անոր. դերբ., տր. հ.) նկատմամբ, դադարել են *հավատալ* (անոր. դերբ., բաց. հ.)... Ովքեր *մեղանջել* (համ. դերբ.) թե *զղջալ* (համ. դերբ.) միշտ զգում են հավասարապես կորստյան մատնված: Ում որ կյանքը նետել է շավղից դուրս...

Սուրբ Գրքի կողքին հաստատապես *հանգրվանել* (սահմ. եղ., անց. կատ., եզ. թ., 3-րդ դ.) ոչ պակաս զորավոր սուրբ «Նարեկը»: Գրիգոր Նարեկացու մահն ու անմահությունը *տեղի ունենալ* (սահմ. եղ., անց. կատ., հոգն. թ., 3-րդ դ.) միաժամանակ. սրբանալ (սահմ. եղ., անց. կատ., եզ. թ., 3-րդ դ.), դառնալ (սահմ. եղ., անց. կատ., եզ. թ., 3-րդ դ.) հայոց և աշխարհի անմահության պանթեոնի հավերժական բնակիչը:

(Ըստ Մկրտիչ Սարգսյանի)

230. Ըստ անհրաժեշտության ձևափոխե՛ք փակագծերում տրված բայերը:

Ջարմանալի, ավելի զարմանալի երկիր /դառնալ/ մեր այս հին Տունը՝ Հայաստան բարձրիկ-քաղցրիկ աշխարհը, երբ նրա սուրբ հողին առաջին անգամ /ուտք դնել/ հայ այն մանուկները, որոնք, տրամաբանորե՛ն, /ծնված լինել/ հենց այստեղ՝ Արարատի հայացքի ներքո, բայց /ծնվել/... Ուր ասես, որ հայ /չծնվել/: Դուք արևի ճառագայթները /հավաքե՛լ/ ձեր աչքերով: Հիմա /փորձել/ երկիր մոլորակի տարբեր անկյուններից մանուկներ /հավաքել/: Դժվա՞ր /եմ/: Բնավ: Հայաստանը հենց բաց աչք /եմ/, որ արեգակի նման /նետվել/ բոլոր այն անկյունները, ուր հայերեն /բարբառել/, Հայաստան /ասել/, հայրենիք /դրոնել/ լեզու ու սիրտ /կամ/: Եվ նրանք /գալ/, և ամեն մի երեխա /դառնալ/ մի աղբյուր: Աղբյուր, որ /բխել/ մեր սարերից ու ձորերից, բայց /բխել/ մեր ժայռեղեն ոգուց: Այսպես էլ ես /իմանալ/, թե քանի բարբառ ու ենթաբարբառ /ուներմ/, բայց ամեն մի մանուկ /դառնալ/ կարոտի այն բարբառը, որ /դողանջել/ իր հի՛ն արծաթով: Հայրենիքից հեռու-հեռավոր անկյուններում /ծնվել/ և առաջին անգամ նախնյաց երկիրը /ուտք դնել/ մանուկների համար լույսը ուրիշ սարսուռ /ուներմ/, այդ լույսերի մեջ /զրնգալ/ մայրենին ուրիշ խորհուրդ /ուներմ/, /ծանրանալ/ ապրումներ, ու նրանք նորից /մտածել/, թե ճակատագրի ի~նչ խաղով /շարունակել/ /ծնվել/ հայրենիքից հեռու: Եվ այս կարոտի հողը /դառնալ/ անծիր-անտակ շտեմարան, նրանք /օծվել/ լույս-շտեմարանի մեջ, /հպարտանալ/ մայր հայրենիքի խոյանքներով, ու այնուհետ նրանց ուղեկից /լինել/ հպարտությունը՝ մենք հայրենիք /ուներմ/, հայրենիքում մեր հայերենն /եմ/:

Ամեն ամառ տարբեր գաղթօջախներից հարյուրավոր երեխաներ /գալ/ մայր հայրենիք, /լիցքավորվել/, /օծվել/, /լցվել/ հավատով, առաջին մկրտությունն /ստանալ/ պատմական

ու ժամանակակից կառույցների հետ **/չվերջանալ/** գրույց **/սկսել/**: Ամեն ամառ **/զալ-զնալ/**, **/զալ-զնալ/**, և այդ հոսքը քո աչքին առու **/երևալ/**, ու **/հավատալ/**, որ աղբյուրը միշտ ջինջ ու հորդուն **/մնալ/** ու միշտ **/հասնել/** հայրենի ակունքներին: Ամեն մանուկ՝ մի աղբյուր. **/խոնարհվել/** նրա աղբյուրին, կարկաչը հայերեն **/եմ/**, բխումը խորք **/ունեմ/**: Ամեն մեկն իր երկրի, իր դպրոցի, իր տան, իր մոր լեզուն **/առնել/** ու **/զալ/** Հայաստան: Եվ **/հավատալ/**, որ **/զալ/** բոլոր աշխարհներից հայորդիք, **/բոլորել/** Մասիսի շուրջը, Արարատը կղզի **/անել/** ու հայերեն շուրջպար **/բռնել/** ու **/կանչել/** մյուսներին. «**/զալ/**, **/ետ դառնալ/**, **/ապրել/** մեր հայ հողի վրա: Հայորդիք, **/մոռանալ/** Հայոց Պատմությունը, **/պատմել/** բոլորին, որ **/գիտենալ/** արժեքն հայերի»:

/Գալ-զնալ/ հայրենի եզերքում նրանք **/հանդիպել/** իրենց երազին ու երազանքին: **/Հանդիպել/** այս դրախտավայրին, որի ճանապարհը **/ցույց տալ/** հեքիաթի յոթձամփի մեջտեղում **/նստել/** ծերունին. այս ճամփով որ **/զնալ/**... Նրանք ջուր **/խմել/** մեր կյանքի լույս ակունքներից, **/հովացնել/** իրենց սրտերը և **/հավատալ/**, որ այսուհետ իրենց բոլոր ճանապարհները **/անցնել/** հայրենիքի սրտով ու հայրենիքի սրտում իրենց սրտի մի փոքրիկ մասնիկն **/դնել/**: Ոսկեղենիկ մեր լեզվի գանձատնից իրենց մայրենի փայլն են **/առնել/** ու **/գինվել-գինավորվել/** **/անցնել/** հաղթական իրենց ճանապարհը: **/Կամ/** հայրենիքը, ուրեմն նահանջ չկա: Հայրենի բնաշխարհը մայրենի անմար սիրտ **/դառնալ/** **/տրոփել/** ու արյուն **/տալ/** նրանց:

Հայրենիքը նրանց համար **/դառնալ/** մայրենի սիրտ: Եվ **/զալ-ունկնդրել/** այդ սրտի զարկերը՝ մեր լեզվի Ավարայրի ու Սարդարապատի զանգերը, ամենօրյա զանգերը...

(Ըստ Հրաչյա Մաթևոսյանի)

231. Յուրաքանչյուր շարքում գտե՛ք սխալ բնորոշումը:

Գիտեմ – 1. ըղծական եղանակ 2. ներկա ժամանակ 3. 2-րդ դեմք 4. եզակի թիվ:

Ունեի – 1. սահմանական եղանակ 2. անկատար անցյալ ժամանակաձև 3. եզակի թիվ 4. չեզոք սեռ:

Չմտածես – 1. հրամայական եղանակ 2. ապառնի 3. չեզոք սեռ 4. կանոնավոր բայ:

Տեսանք – 1. սահմանական եղանակ 2. անցյալ կատարյալ 3. ածանցավոր 4. կանոնավոր բայ:

Մտնենք – 1. սահմանական եղանակ 2. հոգնակի թիվ 3. ածանցավոր 4. չեզոք սեռ:

Չեմ խոսի – 1. արգելական հրամայական 2. 1-ին դեմք 3. չեզոք սեռ 4. անանցողական:

Ասա՛ - 1. հրամայական եղանակ 2. ապառնի ժամանակ 3. պակասավոր բայ 4. եզակի թիվ:

երգել է - անորոշ դերբայ, եզակի թիվ, Ե խոնարհում, կատարված կերպ:

Վազելու եմ – 1. ըղծական եղանակ 2. աններածանց 3. չեզոք սեռ 4. 1-ին դեմք:

Հեռացանք – 1. սահմանական եղանակ 2. վաղակատար ներկա 3. սոսկածանցավոր 4. կանոնավոր:

Չլռել - 1. հրամայական եղանակ 2. ժխտական խոնարհում 3. չեզոք սեռ 4. պարզ:

232. Ի՞նչ քերականական հատկանիշներով են նույնանում և տարբերվում ներքոբերյալ բայազույգերը:

1. բարձրացավ և տեսնում էր

13. կգնամ և պիտի գնամ

2. կառուցվելու է և կգտնի

14. բարձրացրել եմ և գրել եմ

- | | |
|-------------------------------|-----------------------------|
| 3. լինում է և բերեց | 15. թվել է և թվացել է |
| 4. ցատկոտող և մոտեցող | 16. ցատկոտող և մոտեցած |
| 5. տեսնելու էր և տեսնեի | 17. ապրելու է և ապրելու |
| 6. տո՛ւր և կարդա՛ | 18. եղել են և լինել |
| 7. թողի և թողեցի | 19. թողնող և թողած |
| 8. ծաղկող և ծաղկած | 20. զա՛րկ և զարկի՛ր |
| 9. կառուցվում է և կառուցում է | 21. պիտի խոսեն և պիտի խոսել |
| 10. /խոտ/ հնձած և հնձած /խոտ/ | 22. բե՛ր և բերե՛լ |
| 11. չգրեիր և մի՛ գրիր | 23. մի՛ խոսիր և խոսի՛ր |
| 12. չխոսել և չխոսես | 24. շողշողալ և շողշողել |

233. Տրված բայաշարքերում բառափմաստային և քերականական ի՞նչ հատկանիշներ կփոխվեն՝

- ա/ Չ** ժխտական մասնիկն **ավելացնելիս՝** երգում են, գնամ, կարդաց, տեսնեի, պիտի գամ.
բ/ Կ կամ **պիտի** եղանակիչն **ավելացնելիս՝** մտնեմ, սիրեի, հիշեմ, մոռանար, երագեիք.
գ/ Ը կամ **մ** **ավելացնելիս՝** ժպտա, մեծանա, կհանգստանա, կմոռանա, պիտի հոգա.
դ/ Է ժժանդակ բայն **ավելացնելիս՝** երգել, երգելու, հարբած, խաղաղվում.
ե/ Ընդգծվածները հանելիս՝ պետք է գնամ, չեմ տեսնի, մի՛ խոսիր, տեսա, խաղում էիը, չէի գրում, ժպտալ, գրվել, կկրծոտեր, քնեցնելու էր, մտնելիս, հազնեք.
զ/ Ընդգծվածները փոխելիս՝ **ա/ ն → ց, ռ, ք, լ՝** սովորեն, քայլեն. **բ/ չ → կ՝** չխոսես, չտեսնեի, չտաք **գ/ մ → ռ՝** գրեմ, կարդում եմ, պիտի ժպտամ.
է/ շեշտազրկելիս՝ խաղա՛, վագե՛ք:

234. Դուրս գրե՛ք վերաբերականի խոսքիմասային արժեքով գործածված բայերը և կազմե՛ք նախադասություններ դրանց բայական արժեքով:

1. Թողություն տուր, Տե՛ր, ծանրը Խավարին, Սիայն թե թող Նա թողնի հեռանա: **2.** Բավական է. Եկեք ժպտա՛նք... **3.** Ուզում է ասես իր ոտք-կարկինով Չափել իր անցած-անցնելիք ուղին: **4.** Մնում է, որ դու ի՛նձ սիրես, Ես քե՛զ սիրեմ: **5.** Քիչ է մնում «հե՛յ-հե՛յ» գոռամ՝ Նախրապանի նման կամ հովվի պես: **6.** Մենք լռում ենք դեռ... Իսկ դրսում, - մի պահ, խնդրում են, լսի՛ր, Թռչուններ ինչ-որ՝ Յուրաքանչյուրը մի-մի լարովի խաղալիք ասես, Նույն երգն են երգում: **7.** Ուրեմն արի ոչ թե խոսենք, Այլ մտովի քայլենք առաջ: **8.** Հյուրասիրում են Ձմռան վերջերին՝ խաղողի ճուրթով, Եթե չեք ճաշել՝ կաքավի ճուտով, Որին, հավատա, ես չեմ սպանել: **9.** Եկեք միասին չհարգենք նրա՛նց, Ովքեր սերտում են և ոչ թե դատում: Տնից ելել ու ինչ-որ տեղ մոլորվել է: Գնանք գտնենք ու ետ բերենք: **10.** Բայց-կեցցե՛մ թող ես Ու թող նա՛ կեցցե - Չկարողացավ կործանել: **11.** Պատվում է ու պատվո՛ւմ: Դե եկ ու մի՛ խղճա նրան... **12.** Ախար ինձ համար ո՛չ մի բան չարժի Փայտին տալ, ասենք, ուղեղի ծալքեր: **13.** Դառնամ փառաբանեմ ձկնորսներին ծովում՝ փոթորկի թունդ պահին: **14.** Մի օր հանկարծ ջղայնանամ ու վերցնեմ Մթնոլորտը մեկ այլ օդով թարմացնեմ: **15.** Տե՛ս, Օրորվող այս լապտերից Ես մի շող են քաշում-պոկում: **16.** Թե «սեր» ասես՝ խնդրում է շեշտ,

Թե ասես «կին»՝ վեհ ածական: **17.** Կարծես ոչ թե կարկաչում է առու դարձած, Այլ հեկեկում-ջղածգվում...

(Պ. Սևակ)

235. Ընդգծված բայերը վերլուծե՛ք ձևաբանորեն:

Եվս մի Փարաջանյան...

Մի խենթ, որ, վարդերի ճամփան մի կողմ թողած, բոբիկ ոտքերով քայլում է, քայլում կրակների, փշերի վրայով:

Մի սուրբ, որ անդադար ճգնում է խաչվել ու խաչվել:

Մի արտիստ, որ խաղում է անընդհատ, խաղում է բոլորի համար և ամենից շատ և նախ և առաջ հենց իր համար:

Մի մահկանացու, որ երբ էլ և ինչպես էլ մահանա, միևնույն է, անմահ է:

Մի երջանիկ, որ միակն է, որ անդադար գնում է դեպի բարձունքը անդադար ցած իջնելով:

Մի իմաստուն, որի նախ և առաջ ոչ թե ուղեղը, այլ հոգին է խելոք:

Մի զգայուն շնչավոր, որի ոչ թե հոգին, այլ ուղեղն է զգայուն:

Մի հրաշագործ, որ ոչնչից կարող է կերտել ամեն ինչ:

Հավերժական մի ճամփորդ, որի ճամփորդությունը ոչ մի պահ ճանապարհ չի ունեցել:

Մի զարմանալի բնավորություն, որ, աշխարհին ընկեր լինելով, կարողացավ չունենալ ոչ մի ընկեր:

Մի մանուկ, որ հազար անգամ ծերացավ, բայց միշտ մնաց երեխա:

Մի ծերուկ, շատ ծերուկ շնչավոր, որը հազար անգամ մանկացավ, բայց միշտ մնաց ծեր:

Միակը, որի հետ ամենից շատ են ուզեցել շփվել, բայց, ավաղ, ամենքից քիչ են հանդիպել:

Միակը, որ ինձ ամենից ճիշտ է ճանաչում, չնայած ոչ մի պահ նրան չեն բացվել:

Արվեստագետ, որի արվեստը խորթ է ինձ, բայց հպարտորեն խոնարհվում են նրա առաջ:

Մի ուսուցիչ, որ չունեցավ ոչ մի աշակերտ, բայց ընդօրինակողներին թիվ ու դադար չկա:

Ջորեղ մի բնավորություն, որ ցավալիորեն փլվում է, փլվում ամեն պահ:

Մի մեծ շնչավոր, որը, որքան էլ հուշարձանանա, մնալու է ամենից ավելի կենդանի:

Իմ բոլոր, բոլոր ծանոթներից ամենաերեսառած ու ամենից շատ տանջված, հավերժական մի արվեստագետ:

Մի անհանգիստ կատակասեր, որի լեզվին միաժամանակ տեղ են գտնում և՛ թույնը, և՛ մեղրը:

Մի իսկական թիֆլիսեցի՝ նրա և՛ կինտոն, և՛ ղարաչոխելին:

Սերգեյ Փարաջանյան...

(Հենրիկ Մալյան)

236. Դուրս գրե՛ք դարձվածքները և նշե՛ք դարձվածակազմիչ բայերի ձևաբանական հատկանիշները:

Ա. 1. Ես թռն եմ աշնան ու կտակառուն Ու թույլ եմ տալիս, որ դու տեր դառնաս Մի ամբողջ խտիտ թղթադրամի. Բարո՛վ վայելես: 2. Սոխի գլխի տեղ էին մեզ հաճախ դնում: 3.

Կան խայտառակ ժամանակներ, Երբ մարդ եթե իր բերանին կապ չի դնում, Ապա նրա ձեռք ու ոտքին Ուրիշներն են դնում կապանք: Մենք մեր լեզվի կապն ենք կտրել, Որովհետև, ճիշտ է, լեզուն չունի ոսկոր, Բայց կարող է ... ոսկոր ջարդել: **4.** Մենք չենք ուզում դառնալ ընծուղտ, Որ վիզներս չերկարացնենք... Որովհետև ընծուղտ կոչված այդ վիթխարին Չայն ու ծպտուն չի՝ արձակում: **5.** Իսկ դու գիտե՞ս՝ ի՞նչ դուրս եկավ. «Տղան հասավ իր մուրագին, Դուք էլ հասնեք ձեր մուրագին: Հեքիաթն, այո՛, միտքս ընկավ... Անկեղծ ասած՝ նեղանում ես, թե լրջանում, Մեկ է հիմա: Ել չեմ գցի ինձ սար ու ձոր. Անկեղծ կասեմ՝ հեքիաթն ինչով է վերջանում. Ցած է ընկնում երեք խնձոր... **6.** Հիմա էլ Կտրում ես յոթ անգամ, Բայց գոնե Մեկ անգամ չափեցի՞ր: **7.** Գալի՛ս ես, գալի՛ս... գաս հազա՛ր բարով, Իմ գլխի՛ վրա և իմ աչքերի՛: **8.** Պիտի գնա՛ս, Որ ես անվերջ իմ մտքի մեջ Նո՛ւյնը կրկնեմ. «Շատը գը-նաց, քի-չը մը-նաց»: **9.** Ռուբիկոնն անցած, ոչ շատ թեթև «Լինել-չլինելու» խնդիրն ահա Այսպես լուծած ու լուռ թողած... Ես նետվում եմ առաջ... **10.** Բարությունըս, վերջ ի վերջո, ես կխեղդե՞մ, Թե չարացնող կյանքն էլ չօգնի՝ Խեղդվելիս ... մե՛ջըս կխեղդեմ: **11.** Սիրտս կտորվեց սափորի նման...

(Պ. Սևակ)

Բ. Աչք մտնողը աչքի ընկավ՝
 Աչք կհանի...
 Աչքալույս տաս՝ աչքի լույսն ես –
 Աչքով կանի.

Աչքիդ չընկավ՝ աչքի փուշն ես-
 Այնուհետև քեզ նայելու աչք էլ չունի
 Չորսաչքանին: /ՊՍ/

Գ. Իսկ ես, Տե՛ր Աստված,
 Կրակն եմ ընկել իմ խելքի ձեռքից:
 Խելք ունենայի՛
 Վաղուց էի ես կարգին մարդ դարձել...
 Տեղն ընկած տեղը
 Տեղի կտայի,
 Ինձ կհերքեի;
 Ու կլինեի
 Ոչ դեմ, ոչ էլ թեր,
 Այլ ոսկե միջին:

Գլուխը քարը,
 Թող էժան լիներ,
 Միայն շատերին գեղեցիկ թվար:
 Հերն էլ անիծած, Թող ներկված լինի,
 Միայն թե դուր գա,
 Խաբվեն-հավանեն:
 Գրողի ծոցը.
 Թող որ սուտ լինի.
 Միայն թե կույր-կույր
 Պաշտեն-դավանեն: /ՊՍ/

Դ. Բայցևայնպես մերպեսները
 Նախընտրում են զրկվել գլխից,
 Քան խոնարհել գլուխն իրենց նրա՛նց առաջ,
 Ովքեր լուրջ-լուրջ փորձ են անում
 Ուղեղ հատել՝ դրամի պես
 Ու միտք դաջել՝ լաթի նման:
 Մերպեսները, ո՛չ, երբևէ,

Ծունկ չեն ծալում կուռքի առաջ
 Եվ չեն հանում իրենց աչքը...
 Այս հավատով ու հույսով է, բարեկամըս,
 Որ աշխարհում մերպեսները ամեն
 գիշեր
 Աղքատ քնում ու գարթնում են
 հարստացած:

(Պ. Սևակ)

237. Ընդգծե՛ք բայերը և ձևաբանորեն վերլուծե՛ք:

Օր.՝ 1. կանգնած- անդեմ բայ, կանոնավոր, հարակատար դերբայ, և խոնարհման, դրական խոնարհում, պարզ, ներկայի հիմքից, չեզոք սեռ:

2. գեկույց էր տալիս - դիմավոր հարադիր բայ, անկանոն /պակասավոր/, ա խոնարհման, դրական խոնարհում, պարզ, դերբայական հիմքից, չեզոք սեռ, սահմ. եղանակ, անկատար անցյալ, 3-րդ դեմք, եզակի թիվ:

Ա. Ծեր դպիրը, գահասրահի կենտրոնում կանգնած, գեկույց էր տալիս.

- Արքա՛, կատարելով քո հրամանը, ես վեր ու վար արեցի մեր հին ու նոր մատյանների բոլոր թերթերը և տեղեկացա, թե հայոց աշխարհում ով ինչ է արել տարվա օրերի թվով: Հայկ Աղեղնավորի ժամանակներում մեր հզորներից մեկը մի պուրակ է գցել Երզնկայի կողմերում, որի մեջ իր ձեռքով տնկել է տարվա օրերի թվով պտղատու ծառեր: Հայոց այդ առաջին այգեպանի անունը չի պահպանվել, քանզի մատյաններն ընդօրինակող գրիչները, ենթարկվելով իրենց տերերի կամքին, ամեն անգամ հին անունը ջնջել, նորն են գրել: Ափսոս, որ այգին էլ չի պահպանվել, թե չէ նրա ծառերի սոսափյունով կարելի էր կռահել հիմնադրի անունը: Հայոց ամենամեծ լճի՝ Կապուտանի տեր Քաջայրը տարվա օրերի թվով հարձեր էր պահում: Տիգրան Մեծ աշխարհակալ արքան իր թագավորության սահմաններում տարվա օրերի թվով ամրոցներ է կառուցել: Ավա՛ղ, դրանցից անմատչելի են մնացել մի քանիսը: Հայոց արքաներից մեկն էլ տարվա օրերի թվով խրախճանքներ է սարքել՝ հուսալով, թե դրանով իր անունը կանմահացնի: Բայց այդ մասին վիպող գրիչը ջնջել է արքայի անունը և կողքին գրել. «Խրախճասերի փառքը կես օրվա կյանք ունի»: Մեկ ուրիշ արքա, երբ թշնամին խուժեց Հայոց աշխարհը և սկսեց կողոպտել, քանդել ու ավերել ամեն բան, տարվա օրերի թվով զոհեր մատուցեց աստծուն՝ աղոթելով ու աղերսելով, որ նա թշնամուն վռնդի իր տերության սահմաններից: Բայց թշնամին շատ երկար մնաց հայոց հողում, և թագավորը հուսահատությունից մեռավ: Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից մեկը՝ վաղարշապատցի մի գրիչ, որ ապրել է մի դար, տարվա օրերի թվով մատյաններ է ընդօրինակել: Մինչ այդ ոչ մի գրիչ այդքան գիրք չի արտագրել: Եվ հետնորդները տարվա օրերի թվով ափսոսել են, որ չի պահպանվել այդ պերճապայծառ վաղարշապատցու անունը: Արքա՛, գովական է քո մեծ պապի՝ Առանի արածը: Մեր Տրտու գետի ափին տարվա օրերի թվով նա ջրաղացներ է կառուցել և հացաբույր դարձրել համայն Արցախական աշխարհը:

Միայն այս յոթ դրվագներն են դրոշմվել գրչով: Բայց, հավանաբար, տարվա օրերի թվով ուրիշ բաներ էլ են կատարվել աշխարհում, որ մենք չգիտենք: Պետք չէ, արքա՛, որ դու կրկնես կամ նմանակես այդ յոթից որևէ մեկը. մի՛ կրկնիր և մի՛ նմանակիր...:

Դպիրը լռեց և ձգվեց տեղում: Վաչագանը հնչեցրեց գահաթռռից կախված բազմաթելափունջ զանգակը՝ գնա՛, հեռացի՛ր, և դպիրը, գլուխը կախ տալով, դուրս եկավ գահասրահից: Արքան ելավ տեղից և մոտեցավ Տրտուի կողմը բացվող լուսամուտին:

(Ըստ Հայկ Խաչատրյանի)

Բ. Աշնանային արևը երկնքից ընկել էր Մթին անտառի արևմտյան փեշին և, խարույկ դարձած, ասես ծառերը բոցավառելով, մոտենում էր դեպի Արցախի մայր գետը: Աշխարհում

ոչ մի տեղ վերջալույսն այնքան հեքիաթ ու երազանք չի արարում, որքան Տրտուի ափերին: Գունագեղ ու փառահեղ տեսարանն այնպես խենթացրեց Վաչագանին, որ նա սկսեց անհանգիստ շարժումներ անել տեղում: Եթե արքա չլիներ, կիջներ ներքև ու, վազելով անտառի բազմադարձ արահետներով, իրեն կզգեր Տղմուտի ջրերը:

Միտքը հեռու թռավ: Ի՞նչ կարելի էր ստեղծել տարվա օրերի թվով, որ Տրտուի պես հավերժական մնա: Միայն ժամանակը չէ, որ մոռացության է տալիս մարդուն և նրա գործերը: Մարդկանց ամենից շուտ մոռանում են հենց իրենք՝ մարդիկ: Հաճախ նախանձից իրենց հիշողությունից ու մատյաններից նրանք ջնջում են երևելի այրերի անունները: Պիտի այնպիսի մի բան անես, որ ոչ ժամանակը, ոչ էլ որևէ մեկի քմահաճույքը չկարողանան մոռացության մատնել քեզ: Չէ՛, գետերն էլ հավերժահոս չեն և մի օր կցամաքեն կամ կփոխեն իրենց հուները: Ոչ էլ լեռներն են հավերժագնա, փլվում են նաև քարե այդ հսկաները: Ասում են՝ աշխարհում անմահն ու հավիտենականը միայն մարդկային հոգին է: Եթե ես ուզում եմ տարվա օրերի թվով որևէ հիշարժան բան անել, ապա դա պետք է կապված լինի մարդկային հոգու հետ:

Հանկարծահաս մի մտքից Վաչագանի դեմքը բոլորափայլ դարձավ: Ուրախությունից նա գլուխը դուրս հանեց լուսամուտից, որպեսզի ավելի մոտիկից զգա զարմանահրաշ վերջալույսը: Նա գտել էր այն, ինչ որոնում էր: Իր փոքրիկ թագավորության սահմաններում տարվա օրերի թվով դպրոցներ կբացի և կկրթի հայ մարդու ոգին: Անմահանալ կարելի է նախ և առաջ հայերենի պահպանումով: Հային կարող է հավերժակյաց դարձնել միայն հայկական դպրոցը: Իր հողի վրա հայը հայի և Աստծու հետ պիտի խոսի միայն հայերեն: Հայերենով է, որ հայը պիտի հայ մնա, իսկ Հայոց աշխարհը՝ հայկական հող: Մեր թիկունքում մենք ոչ մի դար չենք թողել առանց լցնելու հերոսությամբ: Իսկ եթե դառնանք օտարախոս ու այլադանդ, ապա դատարկ կմնան ոչ միայն մեր դարերը, այլև հազարամյակները: Օտար լեզվով աշխարհին մեր ասածն այնքան ճապաղ կլինի, որ ոչ մի հուշադարանում չի մնա: Հայերենի կամուրջներով է, որ մենք պիտի դարերն ու հազարամյակները կամարենք իրար: Հիմա պարսիկն ու բյուզանդացին պինդ են բռնել մեր կոկորդը, նրանք բաց կթողնեն մեզ, եթե հայերենը խլանա մեր հոգում, և մեր կոկորդն արտաբերի պարսկերեն ու հունարեն հնչյուններ:

Արևի շողերի մի փունջ ներս ընկավ լուսամուտից և ասես վառեց արքայի խորհրդածությունների թելը: Տարվա օրերի թվով հայկական դպրոցներ բացելու մտահղացումը խարույկ է վառել նաև նրա հոգում, և քանի գնում, նրա դեմքն ավելի ու ավելի էր պայծառանում:

(Ըստ Հայկ Խաչատրյանի)

Գ.

- Ձիու առջևից անցի՛ր, շան՝ հետևից:
- Մարդամո՛տ եղիր, բայց ոչ գռեհիկ:
- Վիզը ծռելով նպատակին չեն հասնի :
- Արյունը արյունով չեն լվանում:
- Ձուկը, երբ էլ որսաս, թարմ է:
- Հացը տաշտիցդ վերցրո՛ւ, ընկերոջը՝ գյուղիցդ:

- Փախի՛ր էն ջրից, որ ո՛չ վշշում է, ո՛չ էլ թշշում:
- Աչքն ինչքան բարձրանա, հոնքից վերև չի բարձրանա:
- Բզի գլխին բռունցքով չեն խփի:
- Ծառի տակ պարկելով՝ բերանդ տանձ չի ընկնի:
- Ջուրն ընկածը անձրևից չի վախենա:
- Բեռը շալակողի շալակին կոնեն:
- Երկար լեզու ունեցողը կարճ մտքեր է ունենում:

Դ.

- Պարտականությունը փետուրի պես թեթև է լինում, լեռան չափ՝ ծանր:
- Ջրի մեջ կոկորդիլոսի հետ մի՛ վիճիր:
- Եթե երիտասարդությունը գիտենար..., եթե ծերությունը կարողանար...
- Թե՛ տունը մեծ ունի, մեծի՛ն պաշտիր, թե՛ մեծ չունի, մե՛ծ քար դիր, նրան մեծի տեղ պաշտիր:
- Երիտասարդությունը գեղեցիկ դեմք ունի, ծերությունը՝ գեղեցիկ հոգի:
- Մարդու որտեղը ցավեց, հոգին այնտեղ է:
- Հարուստի հագին շոր տեսան, ասացին՝ շնորհավոր, աղքատի հագին տեսան, ասացին՝ որտեղի՞ց է:
- Ձիուն պայտում են, իսկ գորտը ոտքն է պարզում:
- Ինչքն շուտ վեր կենաս, այնքան շատ բան կտեսնես, ինչքան ուշ քնես, այնքան շատ բան կլսես:
- Հնարավոր է համեստ լինել առանց իմաստնության, սակայն հնարավոր չէ իմաստուն լինել առանց համեստության:
- Մխավելու համար մի օրն էլ բավական է, իսկ ափսոսելու համար տարին էլ քիչ է:
- Արվեստագետը գիտի, որ հանգելու է ոչնչի, բայց շարունակում է ստեղծագործել:
- Անբանը հաց ուտելիս առողջ է, բանելիս՝ հիվանդ:
- Սողալու համար ծնվածը թռչել չի կարող:
- Նկարելով ճյուղը՝ պետք է լսել՝ ինչպես է սուլում քամին:

Մ Ա Կ Բ Ա Յ

238. Ա. Ընդգծե՛ք մակբայները՝ բացատրելով նրանց իմաստային, քերականական առանձնահատկությունները.

Բ. առանձնացրե՛ք մակբայաբար գործածված ածականները. հայ քերականության մեջ ի՞նչ տեսակետներ կան այս տիպի բառերի խոսքիմասային պատկանելության վերաբերյալ:

Ա. 1. Մի՞թե չգիտես, որ երբ խավարում բացվում են նրանք, Արշալույսներն են զարկվում պատեպատ: 2. Կապույտ մշուշն է ելնում վիհերն ի վեր, ձորն ի վեր, Ոտից գլուխ ինձ նորից թախիծով է մկրտում: 3. Ու սաստիկ է երևի դողում ծառն այն մենավոր, Որ աճել էր ժայռերի հողմահարված պղնձից, Գնա՛մ, գրկեմ քնքշորեն տառապանքը նրա որբ, Որ մի վայրկյան ջերմանա իմ շոյանքից ու շնչից: 4. Տե՛ր, ուզում էի Ես հոգնածորեն պառկել ու ննջել... 5. Մի աստղ ընկավ երկնքից ու գլորվեց ձորն ի վար Ու երևի ձորի մեջ դեռ հուրհրում է ծավի: 6. Ծնկներդ արնած՝ բարձրանում ես վեր, Ավեր բերդի հետ նորից պաշարվում, Ավերվում նորից վանքի հետ ավեր, Այրված ժայռի հետ նորից ես այրվում: 7. Քրմորեն արդար ծունկի էր իջնում նա արևի դեմ, Փառաբանում էր շողն արեգական: 8. Այնպես ուզում եմ մեկ-մեկ դեմ նետել Երզը կաշկանդող այս չափն ու հանգը:

(Վ. Դավթյան)

Բ. 1. Մանկութ ընտրեցի ճամփորդական ցուպ, Թողի հայրենի տնակս ավեր: 2. Քո պայծառ գահից մեղմորեն իջի՛ր, Մազերդ փռի՛ր հոգնատանջ կրծքիս: 3. Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել, Ես ամենուրեք քեզ եմ որոնում, Դու երազների լուսե օրրանում Անուրջ, որ գուցե բնավ չես եղել: 4. Դարծյալ իջավ գիշեր, դարծյալ ու կրկին Մենակ ես դու, ինքդ քո դեմ՝ մերկ ու բաց. Ու նորից դու շփոթմունքով ցավագին, Երկյուղով ես, երկյուղով ես դու լցված: 5. Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում Ե՛վ շշնջում ես, և՛ անուշ շրջում: 6. Մենության խավար զնդանից կրկին Ես վերադարձա հզոր ու հպարտ: 7. Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ, ննջեցին անուշ երկինք ու երկիր, Աչքերդ փակի՛ր, ինձ քնքուշ գրկի՛ր, Ես քեզ կպատմեմ ոսկե հեքիաթներ: 8. Ելնել ճանապարհ, խնդուն հեռանալ, Ջվարթ ու թեթև թափառել ազատ, Եվ ո՛չ հայրենիք, ո՛չ տուն ունենալ:

(Վ.Տեղյան)

Գ. 1. Էսպես ասավ Սայաթ –Նովեն ու վեր կացավ, որպես գիշեր, Գնաց նորից տխուր ու լուռ՝ սիրտը հազար մուրազ ու սեր: 2. Սովորի՛ր գրել դու պարզ ու պայծառ, Ինչպես այն չքնաղ պոետը զանգուր: 3. Հրկեզ քո հոգին՝ որպես առատ խունկ, Աշխարհի համար պարզեցիր անպարտ, Հեզ ընդունեցիր երդում ու երկունք, Դու արքայաբար վեհ ու անհպարտ: 4. Թնդանոթները թնդում էին թունդ, Եվ սրտատրոփ տեսնում էինք մենք, թե ինչպես այնտեղ՝ լեռներում կապույտ, Ավեր է փռում նա, հարված ու վերք, Ու դառնում են շեն գյուղեր – մոխրակույտ, Ու ծուխը կապույտ բարձրանում է վեր: 5. Բայց ճիգ թափելով մի գերմարդկային՝ Ես քայլում էի լուռ, ուշիուշով: Ու արյունը մեր խառնված հրին՝ Վառվում է ազահ,-Ու լույս է տալիս վառվող աշխարհին Դեմքդ հեռակա: 6. Լուռ, անձայն նստել մի բաժակ թեյի: Ձեռքերդ դնես հոգնած ծնկներիս: 7. Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,

Որպես ուրու հալածական, որպես տեսիլ - Տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր... 8. Անցնում եմ ես ահա փողոցներով քարե, Հսկա շենքերը ինձ նայում են խիստ, խոժոռ,- Ապրել եմ ես այստեղ հարյո՛ւր, հազա՛ր տարի, Բայց նո՛ր եմ ես նորից՝ քաղաքներում այս նոր:

(Ե.Չարենց)

239. Տրված բառակապակցություններում ընդգծե՛ք մակբայները, որոշե՛ք նրանց հետ կապված բառերի խոսքիմասային պատկանելությունը, ձևաբանական հատկանիշները:

1. Հայրաբար խրատել, մեղմորեն նայել, քնքշագին սեղմել, միանգամից հեռանալ, մեկ-մեկ հիշել, քայլ առ քայլ մոտենալ, հետզհետե նոսրանալ, կրկին տանջել, սաստիկ ամաչել:
2. Արագ շարժում, դանդաղ ընթացք, լիովին ոչնչացում, հանկարծակի խոստովանություն, ուշ աշնանը, վաղ գարնանը, թեթևակի ժպիտ:
3. Հազիվ լսելի, չափազանց գեղեցիկ, հար հոսուն, հար մնայուն, շատ խելացի, բավական երկար, գրեթե ամայի, հավիտյան լուռ, ծայրաստիճան մաքրասեր:
4. Հազիվ 3 կմ, գրեթե 4 գիշեր, համարյա 3 շաբաթ, ընդամենը 200, ուղիղ 6 ամիս, 3 անգամ, մոտավորապես 4 րոպե, շուրջ 2 տարի, մոտ 10 օր, ավելի քան 3,5 միլիոն:
5. Համարյա միաժամանակ, գրեթե հայրաբար, չափազանց շուտ, շատ դանդաղ, ծայրաստիճան քնքշորեն, միշտ շուտ, սաստիկ արագ, բավական ուշ:
6. Գրեթե ամբողջ /ժողովուրդ/, համարյա բոլորը:

240. Դուրս գրե՛ք մակբայները՝ դասակարգելով ըստ տեսակների:

Բայց ահա տեղի է ունենում այն, ինչ Բյուզանդիոնի կողմի հուսալքվող, ճիչ ու կական բարձրացնող բազմությանը հրաշք է թվում: Հանկարծ ծովը հուզվում է թեթևակի, և ուժեղ քամի է բարձրանում: Չորս գալիոնների թռչնած առագաստները իսկույն լցվում են, ուռճանում, մեծանում, դառնում կլորավուն: Քամին, բաղձալի, փրկարար քամին վերստին զարթնեց: Գալիոնների նավախելները բարձրանում են հաղթականորեն, առագաստները ուռճացրած, հանկարծակի մղումով առաջ են շարժվում և հակահարձակման անցնելով՝ հիմնովին խորտակում են ամենուր վխտացող թուրքական նավերը: Նրանք ազատվել են արդեն, նրանք փրկված են: Հազարավոր բազմության ցնձագին աղաղակների ուղեկցությամբ ապահով նավահանգիստ է մտնում առաջին նավը, հետո՝ երկրորդը, երրորդը, չորրորդը: Փակոցային շղթան զրնգալով վերստին բարձրանում է, իսկ թուրքական նավերի վտառը այլևս արդեն անօգնական, ծովածոցով մեկ ցիրուցան մնում է ետևում: Եվ մռայլ, հուսահատության մատնված քաղաքի վրայով մի անգամ ևս շառագույն ամպի մնան անցնում է հույսի ցնձությունը:

Վերջապես ապրիլի 20-ին՝ ժամը 3-ին, բռնկեց ազդանշանը: Հեռվում առագաստներ նշմարվեցին: Ճիշտ է, դա այն հզոր քրիստոնեական նավատորմը չէ, որ վաղուց երազում էին պաշարվածները, բայց և այնպես քամին դանդաղորեն դեպի ասի է մղում ջենովական երեք մեծ նավ, իսկ ետևից ցորենով բարձված բյուզանդական մի փոքր նավ, որ ամբողջովին շրջապատված է այդ երեքի պաշտպանությամբ: Իսկույնների ամբողջ Կոստանդնուպոլիսը

հավաքվում է այդտեղ՝ առափնյա ամրությունների մոտ՝ օգնության հասնողներին ցնծագին ընդունելություն ցույց տալու համար: Բայց նույն այդ պահին Մահմուդը անմիջապես թռչում է ձիու թամբին, իր ծիրանափայլ վրանի մոտից քառատրոփ սուրում դեպի ցած՝ դեպի նավահանգիստ, ուր արդեն խարիսխ էր նետել թուրքական տորմիղը, և հրաման է արձակում ամեն գնով խանգարել նավերին Բյուզանդիոնի նավահանգիստը՝ Ոսկեղջյուր մտնելու:

(Ըստ Ս. Ցվայգի)

241. Կազմե՛ք նախադասություններ, որոնցում մակբայները դառնան առարկայի՝ ածականով հատկանիշ ցույց տվող բառի լրացում:

Օրինակ՝

Փախստականների խումբը, *գրեթե* անթափանց խավարի մեջ խարխափելով, փորձում էր գտնել նոր քաղաք տանող միակ արահետը:

Ուսանողական տարիներին նա *չափազանց* ինքնավստահ երիտասարդ էր՝ իր ուժերին վստահ, նույնիսկ փոքր-ինչ մեծամիտ:

Անձրևից հետո *ամբողջովին* թաց ու լարծուն սալահատակի վրա հաճախ էին սայթաքում ոչ միայն մարդիկ, այլև ձիերը:

Դատարանում վկան հայտարարեց, որ նախաքննության ժամանակ ցուցմունքը տվել է *լիովին* սթափ վիճակում և հիմա էլ պնդում է նույնը:

243. Կազմե՛ք չորս նախադասություն, որոնցում մակբայները դառնան գործողության՝ մակբայով հատկանիշ ցույց տվող բառի լրացում:

Օրինակ՝

Նրանք վերջերս *ավելի* հաճախակի էին հանդիպում:

Վիրավոր զինվորը *հազիվ* լսելի ինչ-որ բան շնջաց և փակեց աչքերը:

Չնայած նոր էին ծանոթացել, բայց *շատ* մտերմաբար էին զրուցում:

Այդ դեպքից հետո նրանք *համարյա* թշնամաբար էին վերաբերվում հավաքույթի ժամանակ իրեն անպարկեշտ պահած ընկերոջը:

244. Կազմե՛ք նախադասություններ, որոնցում մակբայները դառնան առարկայի՝ թվականով հատկանիշ ցույց տվող բառի լրացում:

Օրինակ՝

Ջեկուցումը տևեց *չուրջ* մեկ ժամ: Հաղթանակի օրվան մնացել էր *մոտավորապես* չորս ամիս:

Առնվազն երեք տարի պետք է քրտնաջան աշխատեր, կարողանար վճարել բոլոր պարտքերը: *Գրեթե* հինգ տարի տևեց եկեղեցու վերակառուցումը:

245. Կազմե՛ք նախադասություններ, որոնցում մակբայները դառնան առարկայի կամ գործողությանը լրացնող դերանվան լրացում:

Համարյա ողջ գիշեր արթուն էր:

Նա ևս *հիմնականում* այդպես էր մտածում:

Գրեթե բոլորը նույն հարցն էին տալիս:

246. Կազմե՛ք նախադասություններ, որոնցում մակբայները դառնան.

- ա. մակբայի լրացում,
- բ. ածականի լրացում,
- գ. թվականի լրացում,
- դ. դերանվան լրացում:

247. Գտե՛ք մակբայները և որոշե՛ք նրանց կազմությունը:

1. Մենք փող զարկինք, և արձագանքն ասիվոր Երկից երկիր որոտաձայն շառաչեց /ԵԶ/: 2. Մեզ բոլորիս համար սահմանված է վերուստ մի քնքշաբույր գարուն անվերադարձ /ն/: 3. Գալիս եք միշտ ու հավիտյան և բերում եք Ձեզ հետ Պարզևներ անհուն և անհատնում /ն/: 4. Առուններով, գետակներով, վտակներով անհամար Հոսում են հար ու կուտակվում քո մեջ խոհեր ու գանձեր/ն/: 5. Հորիզոնի վրա ամպեր են մութ կրկին ծանրանում, Մահն է կրկին ղխակալել՝ մռայլ նստած դարանում /ն/: 6. Այզը բացվեց աշխարհում, երբ դու դեռ քերթող էիր լոկ, Այժմ կեսօր է արդեն,-ժամ է դառնաս իմաստուն /ն/: 7. Արևի նման բոցվում է, Ռոպե առ ռոպե բացվում է Փոքրիկ իմ, սիրուն իմ մանկիկը /ն/: 8. Դու անդադար չափում էիր, թե որքան է լայն իմ հոգին, Որքա՞ն են ես տանում, ներում, Կրկին տանում, ներում կրկին: Արդ, երբ գիտեմ, մի հարց ունեմ Քո մնացած խղճին տալու, Արժե՞ր հոգիս փորձել այդպես Դաժանորեն ու ցավագին /ՀՀ/: 9. Բայց ես երբեք չեմ տրտնջում Իմ խառն ու դառն երազանքներից, Որ այլոց մոտ ամառ-ձմեռ Միատեսակ սառն են լինում /ն/: 10. Սարերից վեր, չարերից վեր, Սովորական բառերից վեր Թափառում է հեզ մի հոգի /ն/: 11. Հին դարերից մի մեղեդի Հնչում է միշտ նվիրաբար Ու չի լռում երբեք, Հնչում է զիլ ու տիրաբար /ն/: 12. Շրջում էին պապերը մեր Երկրեերկիր ու դարեդար /ն/: 13. Հեռու-հեռվում մի արևոտ, Ծաղկածիծաղ հովիտ մնաց /ն/:

248. Տրված մակբայները դասակարգե՛ք ըստ կազմության՝ առանձին շարքերով գրելով պարզ, կրկնավոր, քարացած հոլովական ձևերից ու նախդրով կապակցություններից առաջացած մակբայները:

Այժմ, առհավետ, հանիրավի, այնուհետև, մեկ առ մեկ, ապա, նախ, դուրս, դիմաց, ձեռաց, դեռ, վաղ, հույժ, ուշ, քիչ, հոտնկայս, անձամբ, մասամբ, հրապարակավ, միշտ, շարան-շարան, շիթ առ շիթ, քարեքար, կաթիլ առ կաթիլ, տարեցտարի, օրեցօր, ի վերջո, հկիհև, բերնեբերան, ի բնե, ի ծնե, ցմահ, հապճեպ, խումբ-խումբ, շարեշար, դռնեդուռ, իրավ, կանխավ, դես-դեն, տեղի-անտեղի, հնուց, առմիշտ, կամաց, երբեք, արագ, ստեպ-ստեպ, կաթիլ առ կաթիլ, արագ-արագ, բառ առ բառ, խառնիխուռն, վերջիվերջո, հետո, պատեպատ, ի սրտե, վաղուց, փոքրուց, հույժ, շտապ, շարունակ, քայլ առ քայլ, խստիվ, բնավ, հանպատրաստից, ի սպաս, զույգ-զույգ, թաքուն-թաքուն:

249. Տրված շարքերը լրացրե՛ք նույնատիպ մակբայներով. բացատրե՛ք համապատասխան ածանցների իմաստները:

1. եղբայրաբար, թշնամաբար, հայրաբար...
2. նենգաբար, խիզախաբար, դաժանաբար...
3. հաճախաբար, միասնաբար, շարունակաբար...
4. հեզորեն, ազնվորեն, լրջորեն...
5. ասպետորեն, բնագդորեն, տրամագծորեն...
6. արագորեն, դանդաղորեն, հեշտորեն...
7. եղբայրապես, հոգեպես, նյութապես...
8. ազնվապես, հիմնավորապես, փառավորապես...
9. գլխովին, կամովին, ամբողջովին...
10. եռապատիկ, կրկնապատիկ, տասնապատիկ...
11. մորուց, մանկուց, վաղուց...
12. շեշտակի, թեթևակի, հանկարծակի...
13. գժավարի, գողավարի, մարդավարի...
14. կարոտագին, ցավագին, սրտագին...
15. դառնագին, ջերմագին, տրտմագին...
16. բառացի, փաստացի, արդարացի...
17. բազմիցս, երիցս, քառիցս...
18. արտաքուստ, ներքուստ, վերուստ...
19. ցմրուր, ցմահ, ցկյանս...
20. գլխանց, երեսանց, սրտանց...

250. Բացատրե՛ք տրված մակբայական խմբերից յուրաքանչյուրի բառակազմական ընդհանուր օրինաչափությունը և շարունակե՛ք՝ ավելացնելով առնվազն 4-5 մակբայ:

1. Դանդաղ, կամաց, հաճախ, ետ, կանուխ...
2. Տխուր-տխուր, արագ-արագ, մեն-մենակ, մեկիկ-մեկիկ...
3. Կամա-ակամա, ամառ-ձմեռ...
4. Փոքր-ինչ, դույզն-ինչ...
5. Քարեքար, դարեդար, բերնեբերան, ամսեամիս...
6. Տնից տուն, ճակատ ճակատի, երկրից երկիր...
7. Բերանքսիվայր, հոտնկայս, մանկուց, այսուհետև, համարյա...
8. Ի սրտե, ի վերջո, առայսօր, առավել...
9. Ցմահ, ցկյանս...
10. Մեկընդմեջ, բացեիբաց, հետզհետե, ինքնըստինքյան...
11. Դեմառդեմ, ժամառժամ, մերթընդմերթ, մեկառմեկ, աջուձախ, դետուդեն...
12. Ռոպե առ ըոպե, սակավ առ սակավ, արցունք առ արցունք...
13. Սարն ի վեր, ձորն ի վար, լեռն ի վեր, քարերն ի վեր...
14. Լալագին, խիզախորեն, սրտանց, հաճախակի, բազմապատիկ, գաղտնաբար, խմբովին...

251. Հետևյալ գոյականներից, ածականներից, թվականներից կազմե՛ք մակբայներ:

Թեթև, երեք, գազան, գլխավոր, դաժան, ընկեր, գլուխ, չորս, խիզախ, եռանդ, գազան, վերջին, բարեկամ, ազգ, բերան, հինգ, խումբ, վայրկյան, դիվանագետ, հայր :

252. Ներս, դուրս, վեր, առաջ, մոտ մակբայներով կազմե՛ք հարադրական բայեր:

253. Դուրս գրե՛ք ժամանակի իմաստ արտահայտող բառերը՝ առանձնացնելով ժամանակի մակբայները, նշե՛ք մյուսների խոսքիմասային պատկանելությունը. ի՞նչ ընդհանրություն կա դրանց մեջ:

Ա. 1. Լուսաբացին մենք անցանք գրոհի, - լուսաբացին խփեցին Լիպոյին: **2.** Երեկ առավոտ բարձրացա կանուխ Եվ լուռ կանգնեցի բլուրի վրա: **3.** Դու արդեն հեռացել ես, աշխարհում էլ չկաս դու, Ու լռել է երգը քո արդեն հիմա, Բայց զգում է սիրտս, որ նորից կգաս դու, Երբ իջնի գիշերը ու անձրևը լա: **4.** Արդեն բացվում էր առավոտը, Արդեն բաց կարմիր թանաքի սման Երևանի վրա թափվում էր Հորանջող ու մզլած այգը /ԵԶ/: **5.** Ա խ, եթե պիտի բաժանվենք էլի՝ բաժանվենք մի՛ օր, տեսնվենք տարով: Թե որ գժտվենք՝ մի՛ օր գժտվենք, Մի ամիս զղջանք, տարով հաշտվենք: Ու թե սիրում ենք՝ Մեր սրտի բոլոր լարերով սիրենք, Ու թե սիրում ենք՝ Յոթ տարիս ո՞րն է- դարերով սիրենք /ՊՍ/: **6.** Մի՛ մոռացիր, որ շատ հաճախ, ցանկալիս, երբ հույս ցանում ու հավատ ես շաղ տալիս, Չի կանաչում: Հիշի՛ր, որ միշտ ուշանում է ցանկալին, Իսկ երբեմն էլ իր ոտքով է երբ գալիս, Չե ն ճանաչում... /ն/: **7.** Ես պարզապես վաղուց համոզված եմ, Որ դուր գալու ծանոթ առևտրում Հարկավոր է լինել չմանրվող դրամ Եվ չժախսել իրեն կոպեկ-կոպեկ /ն/: **8.** Բայց հոգնել եմ արդեն Եվ հոգնել եմ այնքան, Որ չեմ զգում ոչի նչ, Ցավ չեմ զգում անգամ /ն/: **9.** Ես կարծում եմ՝ երբ խոր վերքից Մարդ ժպտում է համառությամբ, Այդ ժպիտը վերջիվերջո Փոխարկվում է ծամածռության /ն/: **10.** Հողն ավելի լավ ես զգում Այն ժամանակ, Երբ նա հանկարծ տատանվում է Քո ոտքի տակ /ն/...

Բ. Անգլիական գրոհը չէր հասցրել ջախջախել Նապոլեոնի բանակը, երբ ինչ-որ մարդ, մինչ այդ գրեթե անանուն, փոստային արագընթաց կառքով արդեն սուրում էր Բոյուսելից դեպի ծովափ, ուր նրան երեկվանից նավ էր սպասում: Նա Լոնդոն է հասնում կառավարական լրաբերներից առաջ և օգուտ քաղելով այն հանգամանքից, որ լուրը դեռ մայրաքաղաք չի հասել, տառացիորեն պայթեցնում է բորսան. այդ հանձարեղ քայլով Ռոտշիլդը հիմնում է մի նոր կայսրություն:

Վաղնեթ ողջ Անգլիան կիմանա հաղթանակի մասին: Մի մարդ կա միայն, որ հաջորդ առավոտյան դեռ ոչինչ չգիտի Վաթեռլոյի մասին, չնայած նրան ընդամենը չորսժամյա անցում է բաժանում ողբերգության վայրից: Բայց, որքան էլ զարմանալի է, պրուսացիները դեռևս չկան ու չկան, և դա անհանգստացնում է մարշալին: Այժմ ավելի ու ավելի բարձր են որոտում թնդանոթները՝ ասես օգնություն աղերսելով: Բոլորը արդեն գիտեն, որ դա սովորական հրաձգություն չէ, և վիթխարի ճակատամարտը վաղուց բռնկվել է: Մռայլ ու անխոս առաջ է շարժվում Գրուշին՝ շրջապատված իր սպաներով: Նրանք այլևս վեճի մեջ չեն մտնում մարշալի հետ. չէ՞ որ նա չանսաց իրենց խորհրդին:

(Ըստ Ս. Ցվայգի)

254. Տեքստից դուրս գրե՛ք ձևի ու չափի մակբայները:

Տոլստոյն այնքան հռչակավոր էր, որ նրա երկրպագուները գիշեր ու ցերեկ կրնկակոխ հետևում էին նրան և անմիջապես գրի էին առնում նրա արտասանած յուրաքանչյուր բառը: Եվ հիմա ռուսական կառավարությունը հրատարակում է նրա ստեղծագործությունների լիակատար ժողովածուն, որը բաղկացած կլինի առնվազն հարյուր հատորից: Փառքից բացի Տոլստոյն ու նրա կինը ունեին բավական մեծ հարստություն, հասարակական դիրք, երեխաներ: Ոչ մի ամուսնություն երբեք ավելի նպաստավոր պայմաններ չէր ունեցել: Սկզբում նրանց երջանկությունը չափազանց անխռով, չափազանց կատարյալ էր թվում երկար շարունակվելու համար: Այդ պատճառով էլ կողք կողքի ծնկի իջնելով՝ նրանք ջերմեռանդ աղերսում էին ամենակարող Աստծուն՝ երկարացնելու իրենց երջանկությունը:

Այնուհետև զարմանալի բան տեղի ունեցավ. Տոլստոյը հետզհետե փոխվում էր և բոլորովին ուրիշ մարդ դարձավ:

Այդ մարդը, որը մի անգամ խոստովանեց, որ երիտասարդության տարիներին գործել է բոլոր հնարավոր մեղքերը, փորձում էր տառացիորեն հետևել Հիսուսի ուսմունքին: Նա մարդկանց էր բաժանել իր հողը և բոլորովին չքավոր կյանք էր վարում: Լև Տոլստոյի կյանքը իսկական ողբերգություն էր, և այդ ողբերգության պատճառը նրա ամուսնությունն էր. Նրա կինը սիրում էր շքեղություն, իսկ ինքն ատում էր:

Շատ երկար տարիների ընթացքում կինը հանգիստ չէր տալիս , կշտամբում էր և միջադեպեր էր սարքում, քանի որ գրողը համառորեն պնդում էր, որ հրատարակիչներին իրավունք կտա տպելու իր գործերը առանց հոնորարի, իսկ կինը ցանկանում էր դրամ ստանալ նրա գրքերի համար:

Եվ վերջապես, երբ Տոլստոյն ութսուներկու տարեկան էր, այլևս չկարողացավ տանել իր ընտանեկան կյանքի ողբերգականությունը և փախավ կնոջից:

Տասնմեկ օր անց նա մահացավ փոքրիկ երկաթուղային կայարանում թոքերի բորբոքումից: Այսպիսին էր գինը, որ վճարեց կոմսուհի Տոլստայան իր մանրախնդրության, բողոքների և հիստերիայի համար: «Ես իսկապես մտածում եմ, որ խենթ էի», - այդպիսի եզրակացության հանգեց կոմսուհին, երբ արդեն չափազանց ուշ էր:

Դա այնքան հիանալի է ասված, այնքան հրաշալի, որ ես նորից կրկնում եմ այդ խոսքերը:

(Ղ. Քարնեզի)

255. Տրված մակբայները դասակարգե՛ք ըստ աղյուսակի:

Այժմ, այլուր, ակամա, ամենևին, առաջ, արդեն, բնավ, գիշերուզօր, գյուղեգյուղ, գաղտագողի, գրեթե, դարձյալ, եռապատիկ, իսկույն, կրկին, կրկնակի, հանկարծ, հաճախ, հիմնովին, մեկ-մեկ, նորից, ներքև, վերջերս, վերուստ, վերստին, սաստիկ, տեղ-տեղ, փոքր-ինչ, քանիցս, օրըստօրե, վայրկյան առ վայրկյան, օրեցօր, վաղուց, դուրս, ներս, վերև, սարեսար, գետն ի վար, դռնեդուռ, բոլորովին, հնգապատիկ, իսպառ, շատ, քիչ, ընդամենը, մոտավորապես, պատեպատ, հապճեպ, երեկ, վաղը, հավիտյան, քայլ առ քայլ, մեղմիվ, բազմիցս, բավականին, չափազանց, անմիջապես, անընդհատ, թեթևակի, մոտավորապես, շուրջ, եռակի, միասին, դեմ դիմաց, տեղնուտեղը, խմբովին, ազգովին, հիմա, հետագայում,

այսօր, արտաքուստ, ներքուստ, լռելյայն, սրտանց, կողքանց, արագ, հետո, ներկայումս, առաջիկայում, դանդաղ:

Պարագայական մակբայներ		Հատկանշային մակբայներ		Ընդհանրական մակբայներ
տեղի	ժամանակի	որակական (ձևի)	Քանակական (չափի)	

256. Տրված ընդհանրական մակբայներով կազմե՛ք նախադասություններ՝

1. ձևի և չափի իմաստներով՝ ամբողջովին, լիովին, լրիվ, թեթևակի.
2. ձևի և ժամանակի իմաստներով՝ իսկույն, հանկարծ, շտապ, ստեպ-ստեպ.
3. տեղի և ժամանակի իմաստներով՝ առաջ, հետո.
4. տեղի և ձևի իմաստներով՝ դեմ առ դեմ, տեղնուտեղը, ներքուստ, քարեքար.
5. ձևի, ժամանակի և չափի իմաստներով՝ անընդհատ, անդադար, շարունակ, մերթնդներթ, մեկ-մեկ, շուտ-շուտ.
6. չափի, ձևի և տեղի իմաստներով՝ բերնեբերան, ծայրեծայր:

257. Տրված բառերը տարբեր նախադասություններում գործածե՛ք նշված խոսքի մասերի նշանակությամբ և բացատրե՛ք տարբերությունները:

1. Հայերեն, ռուսերեն /գոյական, ածական, մակբայ/
2. հեռու /գոյական, ածական, մակբայ, կապ/
3. առաջ, հետո /մակբայ, կապ/
4. մոտ /ածական, մակբայ, կապ/

258. *Բոլորովին, երբեք, բնավ, ամենևին* բառերը տարբեր նախադասություններում գործածե՛ք մակբայի և վերաբերականի նշանակությամբ:

259. Կազմե՛ք նախադասություններ, որոնցում *անկախ, նման, զուգընթաց* բառերը գործածված լինեն որպես ածականներ, կապեր և մակբայներ :

260. Նշե՛ք, թե տրված հատվածներում ինչ խոսքիմասային նշանակությամբ է հանդես գալիս *էլ* բառը:

1. Երդվում եմ ձեզ , ասացե՛ք նրան,
Ուզում եմ լինի նա իմ սերը վերջին,
Իսկ ես էլ՝ նրա առաջին սերը:

2. Քաջեր միշտ էլ կան
Ձենք է հարկավոր :

3. Նա էլ չէր տեսնելու երկիրն այն չքնաղ,
Որտեղ ծնվել էր տարիներ առաջ...

4. Հային անվանել

Ասիական մթնում գիտության մշակ,
Է՛լ ջահ , է՛լ կերոն , է՛լ միակ փարոս...

5. Դու ես քանդել վանքն այս վսեմ, դու էլ
կվերաշինես :

261. Կազմե՛ք տարբեր նախադասություններ, որտեղ արաջ բառը գործածվի որպես՝

ա. տեղի մակբայ,

բ. ժամանակի մակբայ,

գ. կապ,

դ. հարադիր բայի բաղադրիչ:

Օրինակ՝

Ջինվորները շարժվեցին արաջ: Գետն արաջ այլ հուն ուներ: Ուսանողները առավել բարեխղճորեն են պարապում քննություններից մի քանի օր արաջ: Նա մեծ կարծիք ունի իր մասին և սիրում է միշտ արաջ ընկնել:

262. Կազմե՛ք նախադասություններ, որոնցում հայերեն բառը գործածվի որպես.

ա. գոյական,

բ. ածական,

գ. մակբայ:

Օրինակ՝

Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է: Կարծիք կա, որ Մեսրոպ Մաշտոցից առաջ ևս եղել են հայերեն գրեր, որոնք ժամանակի ընթացքում գործածությունից դուրս են մնացել և մոռացվել:

Գարունդ հայերեն է գալիս,

Ձյուներդ հայերեն են լալիս,

Հայերեն են հորդում ջրերդ /ՀՍ/:

263. Կազմե՛ք նախադասություններ, որոնցում նույն բառը մի դեպքում գործածվի որպես մակբայ, մյուս դեպքում՝ վերաբերական: *Օրինակ՝* ժամը տասին նա *դեռ* քնած էր: Ամաչելու փոխարեն *դեռ* վիճու՞մ ես:

Կ Ա Պ

264. Դուրս գգրե՛ք կապերը, որոշե՛ք տեսակը:

Ա/ Հին, դեղնած մի լուսանկար մինչև օրս կախված է սենյակի պատից՝ հայելու դիմաց: Հորս ձախ կողմից պազել էր Գասպարը: Հակառակ կարճ հասակին՝ մարմինը թիկնեղ էր, դեմքի վրա ժպտացող և խորամանկ աչքերն էին, որոնց շուրջը արևի ճառագայթների պես դասավորվել էին կնճիռները, բերանի մեջ ոսկի ատամներ կային, արծաթե գոտին փորի տակ էր, ձիու պայտը՝ ձեռքին: Նրանից քիչ հեռու կանգնած էր մրոտ Սկոն: Դեմքին հնարավորության չափ լայն բացված խոշոր աչքեր՝ ածուխի նման սև բիբերով: Մազերը «ծիծեռնակ» կոչվող ձևով իջեցրած կարճ ճակատի վրա: Միշտ չսափրված դեմքին՝ մազմորուքի արանքում կորած բեղեր: Թեպետ հիշողության մեջ նրանք այդ ժամանակ տարիքավոր էին թվում, սակայն ամենամեծը՝ հայրս, մոտ քառասուն տարեկան էր: ...Այդ օրերի ընթացքում Սկոն անճանաչելի էր դարձել: Հաճախ քթի տակ երգում էր: Հանկարծ կարծես մի հոսանք էր անցնում նրա միջով, և նա բռնում էր իմ թևերի տակից ու բարձրացնում իր ահեղի բազուկների վրա: Դա մի քիչ ինձ նսեմացնում էր, և նրանից ազատվելու համար ես դեպի դուրս էի վազում:

/Ա. Այվազյան/

Բ/ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մեջ ընդունված է նորանշանակ դեսպանի հավատարմագրերի հանձնումը կազմակերպել պարզեցված ձևով, առանց արարողակարգային հատուկ միջոցառումների: ԱԳՆ արարողակարգերի ծառայությունը հայտնում է նորանշանակ դեսպանի հավատարմագրերի հանձնման օրը և ժամը ու պայմանավորվում նստավայր ժամանելու շուրջ: Երկրի նախագահին իր հավատարմագրերը հանձնելուց հետո դեսպանը համարվում է իր պարտականությունների կատարման անցած և տեղ գրավում տվյալ երկրում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների անձնակազմի մեջ: Դեսպանն իր նշանակման և հավատարմագրերի հանձնման մասին անձնական նոտարով տեղյակ է պահում տվյալ երկրում հավատարմագրված բոլոր դեսպաններին:

/Ըստ Ն. Չալըմյանի/

265. Ո՞ր կապերը կարելի է փոխարինել հոլովներով և հակառակը՝ հոլովը՝ կապերով. փոխակերպե՛ք և ցույց տվե՛ք զուգահեռ ձևերի իմաստային, ոճական տարբերությունները:

1. Կաթողիկոսը մթազնեց մնաց. Մինչ հանկարծահաս զայրույթի ծնած Կրակը վառվեց ծեր աչքերի մեջ, Հենց նոր սկսվող ժպիտը հանգավ: Առաջին անգամ, Առաջին անգամ Աստ՝ Վեհարանի հին պատերի մեջ, Սրբապղծորեն թուրք երգ է մխում.../ՊՍ/: **2.** Իմ աչքերի մեջ այնքա՛ն կրակներ եմ մարել ես Եվ հոգուս մեջ, հուսահատ այնքան աստղեր եմ մարել /ԵԶ/: **3.** Երգերիս մեջ- դու գիտե՞ս- ինձ ոչ ոք չի ճանաչում. Կարծես ուրի՛շն է երգում կապույտ կարոտը հոգուս /Գ/: **4.** Նո՛ւյնն է խոսքը, կարծես նոր տրվող աղջկա,- Միայն մարած աչքերում էլ հրդեհ չկա /Գ/: **5.** Ո՛ր էլ ամեն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում. Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ աչքս է հեռուն /Գ/: Եվ արցունքներ դառնաղի ահա ընկնում եմ մեկ-մեկ Քո ձեռքերի վրա ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին /Գ/: Երբ երեկոն իջավ, որպես հոգնած ճամփորդ, Եվ փոշապատ նստեց տանիքների վրա,- Ես սենյակս մտա իմ խոհերի ճամփով Եվ հանեցի երգերըս մի երեկո գրած /Գ/: Ահա կրկին արև է իմ խավարած հոգում Եվ կենսատու

Ժպիտ է իմ տարամերժ դեմքին /Ն/:

266. Հետևյալ անիսկական կապերն ու կապական բառերը խմբավորե՛ք ըստ այն խոսքի մասերի, որոնցից առաջացել են:

Չնայած, ժամանակ, հետո, հեռու, ձեռքից, երեսից, ընթացքում, ներքև, ձեռքով, գծով, կից, հակառակ, հետևանքով, առիթով, նայած, հավասար, չանցած, զուգահեռ, համապատասխան, չնայելով, սկսած, վերև, կողմից, հետո, կերպով, տարբեր, մինչ, նպատակով, առաջ, զուգընթաց, մոտ, ժամանակ, պատճառով, ձեռքից, պահին, դուրս:

267. Դասդասե՛ք ստորև բերված կապերն ու կապական բառերը ներքևում նշված տարբեր սկզբունքներով:

Անկախ, անցած, անունից, առ, առանց, առաջ, առընթեր, առթիվ, առջև, ավել, ավելի, բացառությամբ, բացի, գծով, դեմ, դեմ հանդիման, դեպի, դեպքում, դիմաց, դուրս, ձեռքով, երեսից, զատ, զերդ / զերթ /, զուգընթաց, ընդ, ընդդեմ, ընթացքում, ըստ, ժամանակ, կից, կողմ, կողմից, իբրև, ի դեմս, ի հաշիվ, ի հեճուկս, ինչպես, ի շահ, ի պատիվ, ի սեր, ի վար, ի վեր, ի տրիտուր, ի փառս, կապակցությամբ, կերպով, հակառակ, համաձայն, համապատասխան, համար, համեմատ, համեմատությամբ, համընթաց, հանգույն, հանդեպ, հանդերձ, հանձին, հանձինս, հանուն, հավասար, վրա, հասցեին, հետ, հետևանքով, հետո, հոգուտ, ձեռքից, մասին, մեջ, մինչ, մինչև, միջև, միջոցին, մոտ, նախքան, ներքև, ներքո, նկատմամբ, նման, նպատակով, շնորհիվ, շուրջ, որպես, չափ, չնայած, չնայելով, պակաս, պահին, պատճառով, պես, սիրուն, սկսած, վար, վեր, վերև, վերաբերմամբ, վերաբերյալ, տակ, տեղ, տեղակ, ուղղությամբ, փոխանակ, փոխարեն, քան, օգտին, օրոք :

Ա/ Ըստ կազմավորման աստիճանի

Իսկական	Անիսկական	Կապական բառեր

Բ / Ըստ շարադասության

Նախադրություն	Ետադրություն	Երկդրություն

Գ / Ըստ կազմության

Պարզ կամ արմատական	Քերականական ձևերից առաջացած	Նախդրավոր

268. Տրված կապերը խմբավորե՛ք ըստ նրանց արտահայտած հարարաբերությունների և իմաստների:

Առաջ, մասին, ներքև, դիմաց, օրոք, հասցեին, առանց, պատճառով, հանուն, համար, փոխարեն, տեղ, համապատասխան, իբրև, հանդերձ, չնայած, ընդդեմ, չափ, համեմատ, օգտին, ուղղությամբ, կողմից, դեպքում, հանձին, միջև, վրա, միջոցին, սկսած, առթիվ, վերաբերյալ, զատ, բացառությամբ, երեսից, շնորհիվ, նպատակով, փոխանակ, ըստ, պես,

նման, որպես, ի հեճուկս, հակառակ, հետ, ավելի, պակաս, հոգուտ, գծով, համեմատությամբ, առ, դեպի, հանգույն, զերթ, մինչև, ներքո, նկատմամբ, բացի, մեջ, առաջ, առջև, ձեռքից, հետևանքով, հեռու, միջոցով, վերաբերմամբ, ընթացքում, չնայելով, իվեր, անց, դեմ, զուգընթաց,մեկ, երեսից :

Տարածական	
Ժամանակային	
Վերաբերության	
Բացառման	
Պատճառի և հիմունքի	
Նպատակի	
Փոխարինության	
Համապատասխանության	
Ձևի և նմանության	
Բացահայտման	
Ընդդիմության և հակառակույթ	
Հակառակ հիմունքի	
Միասնության	
Չափի	
Համամատության և շահի	
Սահմանափակման	
Ներգործության	
Պայմանի	
Դիմառնության	

269. Տեքստից դուրս գրե՛ք կապերն ու կապային խնդիրներն իրենց գերադաս անդամների հետ՝ որոշելով, թե որ օրինակներում են կապերն արտահայտում խնդրային և որ օրինակներում՝ պարագայական հարաբերություն:

Ա/ Մենք աշխատում ենք մեզ համար պատվաբեր դարձնել այն թերությունները, որոնք չենք ցանկանում շտկել: Բ/ Կանանց մեծմասն անտարբեր է բարեկամության հանդեպ, քանի որ սիրուց հետո բարեկամությունը թվում է անհամ մի բան: Գ / Սիրո ծերության, ինչպես նաև տարիքի ծերության մեջ մարդիկ դեռևս ապրում են ցավերի համար, բայց արդեն ոչ հաճույքների: Դ/ Մենք հաճախ ամաչում ենք մեր ամենաազնիվ արարքների համար, երբ մարդիկ նկատում են դրանց շարժառիթները: Ե/ Հնարավոր էարժանիքներ ունենալ, բայց կյանքում առաջ չգնալ, բայց անհնար է առանց որևէ արժանիքի առաջ գնալ: Զ/ Մեղադրանքներ կան, որ հնչում են որպես զովեստ, զովեստներ կան, որ հնչում են որպես չարախոսություն: Է/ Ծերանալու հետ մտքի արատներըդ ենքի արատների պես շատանում են : Ը/ Ամենից շուտ մոռանում ենք այն բաները, որոնց մասին խոսելիս ձանձրացել ենք: Թ/ Սակավապետությունը ծնվում է առողջության հանդեպ տածած խնամքից կամ շատ ուտելու

անկարողությունից: Ժ/ Խանդոտ կինը երբեմն հաճելի է լինում ամուսնուն թեկուզ այն պատճառով, որ ամուսինը շարունակ լսում է սիրած էակի մասին:

/Ֆրանսուա դը Լառոշֆուկո /

270. Տրված կապական կառույցներում որոշե՞ք կապվող բառերի խոսքիմասային պատկանելությունը:

Առ այն, առ այսօր, մինչևայժմ, դեպի ետ, մինչև հիմա, հանուն հայրենիքի, երգողի մոտ, հեռանալուց առաջ, հիսունին մոտ, փոքրի մասին, գեղեցիկի վերաբերյալ, երգողի կողքին, առանց ասելու, դրանից բացի, առանց նրա, ինձ պես, բոլորի առաջ, ընդդեմ հուսահատվածների, ի շահ ուսանողների, մինչև որտեղ, ամենքի նման, ու՞մ համար, հոգնելու չափ, մահճիս մոտ, մինչև ստանալը, ցավի դեմ, քո մասին, հակառակ ուրացողների, աշխարհով մեկ:

271. Տրված բառերը նախադասությունների մեջ գործածե՞ք տարբեր խոսքի մասերի իմաստով:

Ա / Գոյական և կապ

Երեսից, ընթացքում, կողմից, հետևանքով, միջոցով, նկատակով, պատճառով, ժամանակ, դեպքում, պահին, կապակցությամբ, ձեռքից, միջոցին, ուղղությամբ, տեղ, հասցեին, գծով:

Բ / Ածական և կապ

Անկախ, զուգընթաց, համաձայն, համապատասխան, համընթաց, հավասար, նման :

Գ / Մակբայ և կապ

Առաջ, դեմ, դուրս, ընդառաջ, հեռու, հետո, մեջ, մոտ, ներքև, շուրջ, վեր, վերև, վրա:

Դ / Ղերբայ և կապ

Նայած, չնայած, նայելով, չնայելով, սկսած, չհասած, չլինելով, չեղած:

272. Գոյականներից առաջացած հետևյալ կապերը խմբավորե՞ք ըստ հոլովական ձևերի՝ առանձնացնելով նաև գրաբարյան հոլովական ձևերն ու նախդրային կապակցությունները :

Ժամանակ, դիմաց, առթիվ, մասին, համար, հանձին, իսեր, ձեռքով, ընթացքում, միջոցին, շնորհիվ, հանդերձ, իհեճուկս, հանձին, հանձինս, չափ, պահին, հետևանքով, հանուն, վերաբերմամբ, միջոցով, նկատմամբ, իդեմս, հօգուտ, դեպքում, կապակցությամբ, նկատակով, տեղ, պատճառով, ձեռքից:

273. Տրված օրինակներից դուրս գրե՞ք կապերը. ի՞նչ խոսքի մասերով են արտահայտված նրանց խնդիրները :

Ա. 1. Եվ գերեզմանս երբ փակվի ինձ հետ - Մեղքս կմոռնան, սիրո խոսք կասեն,- Եվ անցած կյանքս կդառնա լեգենդ՝ օրերիս նման անդարձ ու վսեմ: **2.** Անաղարտ մետաղն հանելու համար, Անպետք խարամի լեռներն են հալում: **3.** Մտահոգված միայն մտքով այն, որ գրագի համար նա աշխարհում Չկշռվի հանկարծ Լչթափվի նրա վրա շարված Հարստությունն իր ողջ: **4.** Մի տեսիլի նման կանգնեց իր դեմ աղջիկը՝ ոսկե գիսակներով, Աչքերով, որպես երկնականար, Աստվածածնի նման պսակավոր: **5.** Եվ այժմ մենավոր Նա գնում էր կրկին դեպի հեռուն այն լուր, Դեպի լյառը անհաս ու վեհանիստ: **6.** Մանկությունից իմ լուրթ մինչև կեսօրն իմ թեք Իմ օրերում՝ անցած երազի պես, Ի՞նչ որ արել են ես, ի՞նչ անելու են դեռ Քեզ գտնելու

համար է, իմ Նավզիկե: 7. Նա դուրս եկավ տնից առավոտյան ծեփին, Իր ետևից կամաց դուռը փակեց, Վերջի նանգամ նայեց իր տնակին եվ քայլերը ուղղեց դեպի բաղերը:

/Ե. Չարենց/

274. Նախադասությունների մեջ գործածե՛ք *անկախ, բացի, ընդդեմ, հակառակ, համաձայն, համապատասխան, հանդեպ, հեռու, շնորհիվ* կապերն ուկապական բառերը մե՛կ որպես նախադրություններ և մե՛կ որպես ետադրություններ:

275. *Մոտ, վրա, հետ, պես, չափ, համար, հոգուտ, հանձին, հանձինս, ի դեմս, հանուն* կապերը գործածե՛ք անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի հետ: Որոշել դերանունների հոլովը:

276. Հետևյալ կապերից առանձնացրե՛ք բացառական հոլովով խնդիր պահանջող կապերը:
Առաջ, անց, առանց, առթիվ, բացի, դեպի, դիմաց, համար, հանձին, հանուն, համեմատ, հետ, հանդերձ, մեջ, մոտ, մասին, միջոցին, մինչև, ներքև, նախքան, նման, շուրջ, շնորհիվ, չնայած, պես, պատճառով, վրա, տեղ, տակ, փոխարեն:

277. *Ջուզընթաց, ընդառաջ, հակառակ, համաձայն, հավասար, չնայած, չնայելով* կապերը գործածե՛ք անձնական դերանունների և գոյականների հետ: Օրինակներից ելնելով՝ որոշե՛ք այս կապերի հոլովառությունը:

278. Աղյուսակը լրացրե՛ք գոյականի տվյալ հոլովաձևերը պահանջող կապերով:
Առթիվ, ընդդեմ, նախքան, ի, իբրև, հանձին, առ, հանուն, որպես,ի վեր,համար, կից, առաջ, գատ, մեկ, մասին, ինչպես, միջև, մերձ, նման, ներքո, նկատմամբ, անց, պես, հանդերձ, օրոք, դեմ, առընթեր, ներքև, մոտ, հոգուտ, վրա, շուտ, առաջ, առջև, հեռու, ըստ, առանց, նախքան, ըստ, վեր, հակառակ, շնորհիվ, վերև, ժամանակ,բացի, բացառությամբ, դեպի, հանդեպ, չափ, քան, չնայած, կից, ընդառաջ, հասցեին:

ուղղական	
սեռական	
տրական	
հայցական	
բացառական	
գործիական	

279. Տրված կապերի հետ համապատասխան հոլովաձևերով բառեր գործածե՛ք:
Չափ, սկսած, բացի, մեկ, հանդերձ, փոխանակ, շնորհիվ, համեմատ, առ, առընթեր, նման, կից, իդեմս, հանձին, համաձայն, գատ, իհեճուկս, չնայած, հակառակ, հանընթաց, իթիվս, հոգուտ, հանուն, պես, դուրս:

280. Կազմե՛ք կապական կառույցներ՝ փակագծերում տրված բառերը համապատասխան ձևափոխությունների ենթարկելով:
ա/ /դու/ պես, /ընտանիք/ հանդերձ, /նա/ գատ, /դուք/ հետ, /ինքը/ մոտ

բ/ /ես/ վրա, /հանուն/ հայրենիքի, ի /գիտություն/, մինչև /կիրակի/, /դա/ մեջ
զ/ նախքան /գալ/, իբրև/ ուսուցիչ/, դեպի /ես/, /ինքը/ դիմաց, դեպի /տուն/
դ/ /քննություններ/առաջ, /ես/ հետ, /ընտրություններ/ հետո, առանց /ընկեր/
ե/ ընդդեմ /նա/, առ /ես/, նախքան /դուք/, չհաշված /նա/, /վթար/ հետևանքով
զ/ /ես/ պես, /նա/ շնորհիվ, /ընկեր/ բացի, /ծնունդ/ առթիվ, ի դեմս /դիմորդ/
է/ ըստ /երևույթ/, /տեսնել/ նպատակով, ըստ /օրենք /, առանց /ժպիտ/
ը/ /դուստր/ համար, /մենք/ նման, /դուք/ մոտ, /ոսկի/ նման, հոգուտ /մենք/
է/ /մենք/ հետ, իհեճուկս /ծնող/, /դպրոց/ կից, հակառակ /դու/, մինչև /դու/
ժ/ /դուք/ համար, հանձինս /դուք/, հանուն /դու/, /սեղան/ մոտ, /ծյուն/ պես
ժա/ բացի /ընկերները/, հեռու /հայրենիք/, /հայրենիք/ հեռու, /սարեր/ վեր
ժբ/ /հաճոյախոսություն/ հանդերձ, հակառակ /հայր/, /հայր/ հակառակ
ժգ/ /մանկություն/ սկսած, ընդդեմ /ատելություն/, /նրանք/զատ, ի գիտություն /դիմորդ/
ժդ/ /բոլոր/ չափ, հանուն /ազտություն/, /ասած/ հակառակ, հանձին /ուսանող/
ժե/ /մտնել/ պես, /զյուղ/ մեկ, հանուն /դու/, /ես/ նկատմամբ, /նա/ փոխարեն
ժզ/ դու /մեջ/, չնայած /դա/, /դուք/ վրայից, /ես/ զատ, բացի /դա/, հանձինս /հաղթող/

281. Ընդգծե՛ք կապերը և որոշե՛ք տեսակը:

Աշխարհը ոտքի տակ առնել, աչքի տակ առնել, Աստված քեզ հետ, արդար յուրի տեղ դնել, գլխի վրա դնել, դափնիների վրա հանգստանալ, եղունգի չափ, կրակի տակ առնել, հինգ մատի պես ճանաչել, մեղքի տակ ընկնել, սարի պես կանգնել, վատ աստղի տակ ծնվել, ավազի վրա տուն շինել, դեզի մեջ ասեղ փնտրել, շան նման քարշ գալ, աչքի առաջ ունենալ, աչքից հեռու, ասուլի նման երևալ, արյան մեջ խեղդել, մահվան հետ կռիվ տալ, կրակի վրա յուղ լցնել, գլխի տակ փափուկ բարձ դնել, շան պես պոչը պտտեցնել, պատերի տակ մնալ, սարի նման թիկունք ունենալ, ջրի նման գնալ, ավազի նման մնալ, սրտի վրա մի թիզ յուղ բռնել, դունչը մեղրի մեջ թաթախել:

282. ա/ Նախադիր կապերով կառույցները փոխարինե՛ք հոմանիշ՝ ետադիր կապային կառույցներով: Օր.՝ փոխանակ արգելելու – արգելելու փոխարեն

1/ *Նախքան* հեռանալը, 2/ *բացի* քեզանից, 3/ *ինչպես* երազ 4/ *հանուն* սիրո, 5/ *շնորհիվ* առատածեռնության, 6/ *ըստ* դիմումի, 7 / *ի հեճուկս* հարևանների, 8/ *ընդդեմ* թշնամու, 9/ *զ երթ /գերդ/* գազան, 10/ *բացառությամբ* տղաների, 11/ *մինչ* սկսվելը, 12/ *իբրև* երազ:

283. Գետկյալ բառակապակցություններում ընդգծված ետադրությունները փոխարինե՛ք հոմանիշ՝ ետադիր կապական կառույցով: Օր.՝ ներս մտնելու պահին– ներս մտնելու ժամանակ:

1/ հնագույն ժամանակներից *սկսած*, 2 / կարևոր հարցերի *վերաբերյալ*, 3/ Մայր աթոռի հովանուտակ, 4/ հոբելյանական հանդիսության *ժամանակ*, 5 / քաջ զինվորի *նման*, 6/ Աստծու աչքի *առաջ*, 7 / սիրեցյալից *բացի*, 8 / այսինչ հողվածի *համաձայն*, 9/ ատելու *չափ*, 10 / Դասմիկի *նկատմամբ*:

284. Արտագրե՛ք ճիշտ ձևերը և հիմնավորե՛ք ընտրությունը:

1/ Ես՝ որպես առաջամարտիկ - ինձ՝ որպես առաջամարտիկ

- 2 / առանց ծաղիկ - առանց ծաղկի
 3 / հանձինս նրանց - հանձին նրանց
 4 / առանց խոսելու – առանց խոսել
 5/ նրան՝ իբրև զինվոր – նրան՝ իբրև զինվորի
 6/ մեզ մոտից – մեր մոտից
 7/ ի թիվս վարկառուների - ի թիվս վարկառուի
 8/ քո պես - քեզ պես
 9/ ի գիտություն ուսուցիչների – ի գիտություն ուսուցիչներին
 10/ իմ նման – ինձ նման
 11/ բացի նրանից - բացի նա
 12 / իրեն համար – իր համար
 13 / հանձին նրա - հանձինս նրա

285. Կետերի փոխարեն գրե՛ք համապատասխան կապերը:

- Արա՛ ինձ ---- , սովորի՛ր քեզ ----
- Իմաստունի --- քար քաշի՛ր, տգետի --- մեղր մի՛ կեր:
- Կրակի --- յուղ չեն լցնի :
 Մտածի՛ր ոչ այն ---- , որ հաղթես , այլ այն --- , որ չպարտվես:
- Աշխատի՛ր ծառայի ---- , որ տիրոջ ---- վայելես:
- Հիմարություն է աղքատ ապրել հարուստ մեռնելու --- :
- Սովորելը նույնն է, ինչ որ հոսանքին --- լողալը. մի պահ կանգ առար, քեզ կտանի :

286. Որոշե՛ք ընդգծված բառերի խոսքիմասային պատկանելությունը:

1. Սարից վայր է իջել մի մարդամոտ քամի, Որիչ նյութերից է գրույց բացում: 2. Առաջ է սուրում գնացքը անթեք :3. Բայց թե լինե՛ր, Շուրջը անտառը լիներ: 4 / Մի քանի ժամ հետո ես չեմ լինի, Կլինի լուռ երկինքը ու դատարկ պարկու՛ճ: 5. Իմ հոգսը ես չեմ, քեզ համար եղի՛ր, Որ հետո, հետո զղջունդ վիատ, Քո փակվող վերքը անվերջ չպեղի : 6. Դու կարծես չկաս Ո՛ր չես լինելու, Այլևս ինձ համար մեռած ես կարծես: Սակայն ես գիտեմ, Որ դու անմահ ես, ինչպես անմահ է կրակն աշխարհում. Այստեղ կհանգչի, կվառվի այլուր: Եվ դու ինձ համար չես մեռնի երբեք, ինչպես չի մեռել քո նախա-նախա-նախամայրիկը: 7. Փողոցով մի կին լալիս էր անգոր, Ես նրա մոտով անցա խոզի պես: Անկյունից լացի ձայներ են լսվում, Ո՛ր լացի կողքով անցնում են մարդիկ... 8. Այնպես որ, ո՛վ մահ, տանում ես՝ տա՛ր, Բայց ինչ ես ժպտում քթիդ տակին: 9. Տե՛ս, մի վայրկյան հետո Սարքեն ու տա՛մ քեզ մի ողջ լեռնաշխարհ: 10. Տարանցիկ քամին մեկնում է հեռու ... Դարի չափ ձիգ ժամ է անցել :

/ Պ. Սևակ /

287. Ընդդեմ, հակառակ, անկախ, բացի, համաձայն, համապատասխան, շնորհիվ, հանդեպ, հեռու, փոխանակ կապերով կազմե՛ք բառակապակցություններ երկու դիրքով էլ՝ թե՛ նախադաս, թե՛ ետադաս՝ ուշադրություն դարձնելով կապակցվող բառի հոլովական ձևավորմանը: Դրանք օգտագործե՛ք նախադասություններում:

Շ Ա Ղ Կ Ա Պ

288. Տրված հատվածներում գտե՛ք շաղկապները, որոշե՛ք դրանց տեսակը:

Ա. Տե՛ր, հոգնել ենք: Դու ինքդ էլ գիտես, որ երկար տարիներ է արդեն, ինչ կռվում ենք, ու մեր դեմքի քրտինքը ոչ մի այն սրերով, սլաքներով, այլև նիզակներով և տեգերով ենք սրբել: Սակայն մենք այլևս չենք կարողանում դիմանալ, որովհետև հոգնել ենք: Եթե Արշակ թագավորը ուզում է շարունակել պատերազմը, թող կռվի, բայց իր Վասակ գորավարի և աներոջ՝ Անդրվկի հետ: Կամ ուզում է հարձակվել, ուզում է, չէ՞, իր գործն է. Իսկ մենք չենք ուզում, քանզի արդեն հոգնել ենք: Իսկ նրա որոշումները ևս ոչ միայն նպատակադրված են, այլև կոնկրետ ու հստակ են: Չնայած ժամանակին հաշվենկատ չեղանք ու սխալվեցինք, այնուամենայնիվ, եթե վերլուծենք անցյալ շաբաթվա հրավիրված համաժողովը Արտիշատի եկեղեցում, շատ բան կպարզվի :

(Ըստ Լևոն Խեչոյանի)

Բ. Թեև ես բանաստեղծ եմ, բայց այնքան էլ անմիտ չեմ, ինչպես դուք կուզեիք կարծել, և եթե դուք ինձ հաճախակի հոգնեցնեք ձեր սեթևեթ նվնվոցներով, ապա ես ձեզ հետ կվարվեմ այնպես, ինչպես այն վայրենի կնոջ հետ, և կամ պատուհանից ձեզ դուրս կնետեմ դատարկ շշի պես: Զենց որ ներս մտանք, ես ևս դիմեցի այդ մարդկանցից մեկին, հարցնելով, թե ուր են գնում : Նա պատասխանեց, որ նաև իրենք չգիտեն՝ ո՛չ ինքը, ո՛չ մյուսները, բայց պարզ է, որ ինչ-որ տեղ են գնում, քանի որ առաջ են մղվում քայլելու մի անդիմադրելի ցանկությամբ :

(Ըստ Շառլ Բողլերի)

Գ. 1. Պատահականություններն առիթ են ստեղծում, որպեսզի ոչ միայն շրջապատի մարդիկ մեզ ճանաչեն, այլև ինքներս մեզ: 2. Մարդիկ դատապարտում են անարդարությունը ոչ այն պատճառով, որ ատում են, այլ վախենում են , թե կվնասի իրենց շահերին: 3. Մարդիկ բնավ տարբերություն չեն տեսնում զայրույթի տեսակների մեջ, չնայած մի դեպքում դա թեթև է և գրեթե անմեղ, որովհետև գալիս է բորբոքուն բնավորությունից, մինչդեռ լինում է հանցավոր զայրույթ, որ ծնվում է գոռոզության մոլուցքից:

(Ֆրանսու դը Լարոշֆուկո)

289. Դուրս գրե՛ք զուգադրական շաղկապները:

1. Եթե վարպետը բարկանում է աշակերտի վրա և հանդիմանում, ապա հիշատակում է և այս փողոցի անունը /ԱԲ/: 2. Երբ արագիլը տղմուտ հողերում այլևս գորտ չէր բռնում, ուրեմն ետ

էին գնացել Արաքսի ջրերը: **3.** Ծտերն ասես ոչ թե երգում, Այլ «ի՛նչ...ի՛նչ» էին ճշում անվերջ եվ դրանով պատառոտում երկնի մովը, Իսկ լորենին ոչ թե երգում, Այլ «չէ՛.... չէ՛» - ի իրենց մեխն են մխում անվերջ Այդ կապույտի պատռվածքում /ՊՍ/: **4.** Ու եթե մեկը սուրճով բախտ բացեր, Ապա կարող էր գուշակել անսուտ, Որ ես ինքնական ու սիրահոժար Մնացած կյանքիս կեսը կտայի, Միայն թե տեսնեի կրծքիդ թուխ մանուկ /Ն/: **5.** Թեպետ իրար հետ վաղուց ենք ծանոթ, Թեպետ ծանոթ է պապերի՛դ անգամ, Բայց քրտնած գլխով տված բարևիդ Չիպատասխանում /Ն/: **6.** Եվ փա՛ռք աստծո, Որ աղմուկների հասունացումից Թագադրվում է ոչ թե գիշերը, Այլ օրն է ծնվում: Եվ փա՛ռք աստծո, Որ մեր հոգու մեջ Եթե կա ամիս տերևաթափի, Ապա կան օրեր և աստղաթափի ... /Ն/:

290. Տրված շաղկապները դասակարգե՛ք ըստ ստորև բերված աղյուսակների:

Կամ, որպեսզի, և, իսկ, մանավանդ, ու, բայց, և կամ, եթե, մանավանդ որ, էլ, մինչդեռ, կամ թե, և՛...և՛, երբ որ, ուստի, ևս, ասես թե, նաև, այնինչ, կամ թե չէ, թե, մինչև որ, ուրեմն, այլև, ոչ թեայլ, թե որ, մինչ, թե՛.....թե՛, և ոչ թե, այսինքն, եթե միայն, հենց, ո՛չ ...ո՛չ, այլապես, այնէ, ոչ միայն...այլև, որովհետև, հենց որ, բայց և այնպես, որ, քանի որ, ինչպեսայնպես, այնուամենայնիվ, թե, կարծես թե, չէ՞որ, թե չէ, քանի դեռ, այսուամենայնիվ, քանի, կամ ... կամ, հետևապես, միայն, հետևաբար, թեպետև, թեկուզ, միայն թե, չնայած, չնայած որ, թեև, ինչպես որ, ասես, կարծես:

Ա /

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ	ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Բ /

ՄԵՆԱԴԻՐ	ԿՐԿՆԱԴԻՐ	ՋՈՒԳԱԴԻՐ

Գ /

ՄԻԱՎՈՐԻՉ - ՀԱՎԵԼԱԿԱՆ	
ՆԵՐՀԱԿԱԿԱՆ	
ՏՐՈՂԱԿԱՆ	
ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ	
ՄԵԿՆԱԿԱՆ	
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ	
ՊԱՅՄԱՆԻ	
ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԻՄՈՒՆՔԻ	
ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ	
ՀԵՏԵՎԱՆՔԻ	
ՋԻՋԱԿԱՆ	
ՁԵՎԻ ԵՎ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ	

291. Հետևյալ համադասական շաղկապները դասակարգե՛ք ըստ իմաստի:

էլ, իսկ, բայց, և, ու, ևս, այսուհանդերձ, կամ, այս է, սակայն, այլ, կամ թե, իմա, ապա, նաև, կամ թե չէ, մինչդեռ, բայց և այնպես, այլև, թե՞, թե...թե, ո՛չ..ո՛չ, թեչէ, եթե ոչ, այն է, այնուամենայնիվ, նույնպես և, ոչ միայն...այլև, այնուհանդերձ, ոչ թե ...այլ, միայն թե, ևթե, այսինքն, այնինչ, նույնպես և, այսինքն թե, և կամ, նմանապես և, այլ, ոչ թե, ապա թե ոչ, և սակայն, այլ ոչ թե, ինչպես և:

միավորիչ	ներհակական	տրոհական	մեկնական

292. Դուրս գրե՛ք համադասական շաղկապները և որոշե՛ք նրանցով կապակցված լեզվական միավորների /նախադասությունների և նախադասության անդամների/ արտահայտած հարաբերությունների բնույթը՝ ներհակական, միավորիչ, տրոհական:

Ա. 1. Մուրը դառնում է գրատախտակի ջնջոց, Մինչդեռ երկինքը դանդաղ պատվում է աստղաեղյամով: 2. Թողություն տու՛ր, Տե՛ր, ծանր խավարին, Միայն թե նա թողնի հեռանա: 3. Ես չեմ կարող նշել ճշտված թվականը, Եվ ժամանակը ճշգրիտ, բայց և այնպես այս հանդեսը... Ավարտի է հասնում արդեն: 4. Ես վախենում եմ, շատ եմ վախենում, Բայց ո՛չ ինձ համար, այլ լոկ քեզ համար: 5. Նաև դու ... Խղճա՛ ինձ, և ինքդ էլ ասա՛, Սիրելի՛ս, քեզ բարի՛ գիշեր: 6. Իսկ աշխարհում Երջանկությունն ավելի է տարողունակ, Քան տանջանքը, Թե չէ սողուն ժամանակը այդպես արագ չէր ընթանա՝ Երջանկության ժամը վայրկյան դարձնելով: 7. Նույն կյանքը հիմա Իր սքանչելի նույն ձեռագրով Գրագիտության դասեր է տալիս Թե՛ շնորհալի վազերին այգու, Թե՛ տաղանդավոր գետերին բոլոր:

(Պ. Սևակ)

Բ. 1. Ե՛վ անբառ այս երգում կա թախիծ մի անբառ, Ե՛վ արյան հեկեկանք, և ' աղերս մի տխուր /ՎԴ/: 2. Կարոտներով ու ցավերով ճանապարհը պիտի ցողեն, Բայց և հավետ, բայց և հավետ օրհնանքներով քեզ ողողեն /ՎԴ/: 3. Բայց բնության օրենքներից Յոդ դառնալն է զարհուրելի, Մահը պիտի լիներ, սակայն Մահվան ուրի՛շ տեսակ էր պետք /ՅԴ/: 4. Մեկին թողնում եզերքին, Մեկին ծովերն ես տանում, Ու որոնում ես մեկին ... Այդպես էլ է պատահում /ՅՍ/: 5. Ապրած բոլոր տարիներս Օրհնանքով եմ հոգիս պատում, Ո՛չ ահ ունես, ո՛չ էլ նախանձ, Ո՛չ էլ փառքի դուռն ենպաշտում /Ն/: 6. Շատ սերեր տեսա անգութ ու անփույթ, բայց հեշտ էր դարձել արդեն և անթով Ե՛վ սեր, և՛ երդում, և՛ կիրք, և՛ համբույր /ԳԷ/: 7. Կանգնած է տրտում կանաչ եղևնին, Այնինչ լույսերը ցնծում են վրաս /Ն/: 8. Մեր հայրենիքի դրոշմը երևում է ոչ միայն մեր լեզվի, այլև մեր սրտի ու մտքի վրա: 9. Դժվար է որոշել՝ մաքուր, անկեղծ և բարեկիրթ արարքը անբասիր ազնվության հետևանք է, թե՞ հաշվենկատության /ՖԼ/:

293. Գետկյալ ստորադասական շաղկապները դասակարգե՛ք ըստ իմաստի:

Թեև, թեպետ, եթե միայն, միայն թե, մինչև, ասես թե, քանի որ, թե որ, հենց, թեկուզ, կարծես թե, հենց որ, թեկուզև, քանիդեռ, նախքան, որպես թե, մանավանդ որ, թեպտև, թե, չնայած, թեչէ, չնայած որ, չէ՞որ, քանի դեռ, ասես, ոնց որ, եթե, որովհետև, չնայելով որ, մինչ, երբոր, ինչ, եթե ... ապա, քանի որ, եթե միայն, թեպետ, ինչպես որ, ոնց, նայելով թե, քան, ինչպես որ, քանզի:

ժամանակի	պայմանի	նպատակի	Պատճառի	և	գիջական	համեմատութ.

			<i>հիմունքի</i>		

294. Դուրս գրե՛ք շաղկապները, առանձնացրե՛ք ստորադասականները և որոշե՛ք նրանց արտահայտած իմաստային հարաբերությունները /բացահայտման, մեկնական, պայմանի, նպատակային, հետևանքի, զիջական, համեմատության, ձևի/:

1. Եվ հավատացե՛ք, հասկացե՛ք ընդմիշտ, Որ աստծուն նույնիսկ հայտոյողները Շատ ավելի են գերադասելի, Վասնզի նրանց բարկացրել է ինքը՝ հավատը /ՊՍ/:

2. Թեկուզ և ձեռքդ գրչից էլ զրկեն, Դու, միևնույնն է, պիտի որ երգես /Ն/:

3. Սի ոտ չունենմ, Ուստի և ձեր երկուսի տեղ երեքն ունենմ /Ն/:

4. Ապակիների լռության վրա Անբուրմունք-անգույն ծաղկունքը ցրտի Լուռ թախծում էին, Ինչպես որ նույնիսկ բենզինն է թախծում Սառած-կանգ առած մեքենաների երակների մեջ /Ն/:

5. Նորից երկնքում հին արշալույսն է սիգալով սիգում, Որպեսզի մեր նոր ու քաղաքակիրթ հիշողության մեջ Միշտ էլ թարմ մնան առասպելները /Ն/:

6. Թե փակել էր պետք, ես դուռը բացի, Թե պահել էր պետք, ասացի «գնա», Թե կանչել էր պետք, լռեցի խոնարհ, Թե արցունք էր պետք, ես ծիծաղեցի /ՍԿ/:

7. Ես այնպես եմ ելնում մեր բակից, Կարծես թե մտնում եմ մեր բակը /ԳԷ/:

8. Քանի դեռ կամ, արի խինդով վայելքով լցնենք սերը /Ն/:

9. Սիրո մահը ծանր է անչափ, Քանզի սերը չի ծերանում /Ն/:

10. Եթե մի անարատ Ընկերոջ հետ ճամփա գնամ, Աղերսում եմ երկնավորին՝ Կյանքիս ճամփան երկար չանի /Ն/:

11. Չայն չեն տալիս, թեպետ հոգիս Երգով է լի, Երգերս՝ շատ, իսկ դու գիտես, լուռ եմ, քանզի Սերս քիչ է, մեղքերս՝ շա՛տ... /ԶԶ/:

295. Լրացնել ստորադասական շաղկապների քերականական-իմաստային խմբերը նոր շաղկապներով՝

ա/ ժամանակի /նախքան .../

բ/ պատճառի և հիմունքի /որովհետև .../

գ/ պայմանի /թե .../

դ/ հառակառ հիմունքի/ կամ զիջական /թեպետև .../

ե/ նպատակի /միայն թե.../

զ/ համեմատության / ձևի և նմանության /ասես թե/

է/ հետևանքի /այնպես որ .../

ը/ բացահայտման /այն է.../

թ/ մեկնական /որ .../:

296. Ա. Կարդացե՛ք և դուրս գրե՛ք հարաբերական դերանունները:

Բ. Բացատրե՛ք շաղկապի և հարաբերական դերանվան ձևաբանական-չարահյուսական տարբերությունները:

1. Ե՛կ, քեզ հովիտն այն տանեմ, ուր տառապանքն է ննջում /ՎԴ/:

2. ... Եվ այն, ինչ դու ես ինձ տվել, Ո՛չ կարոտ է, ո՛չ թախիծ է, Ու ո՛չ էլ սեր /Ն/:

3. Եվ ես ասում եմ. Օրինյալ են նրանք ու երանելի, Ովքեր օրերի թախծության միջով Ընթանալ գիտեն դեպի ակունքը... /Ն/:

4. Շնորհի՛ր նորից այն խոսքը միակ, Որով գնում եմ խոստովանություն /Ն/:

5. Երբ աշխարհ եկավ մայրիկս բարի, Աստված շնջաց՝ ավելորդ եմ ես /ԶԸ/:

6. Ա՛խ, իզուր է, Շատ իզուր է որոնումը այն

ամենի, Ինչ իր անցած ուղիներում Կորցրել է մարդկությունը, Որի բոլոր գրպանները Վաղո՛ւց մաշված-ծակծկված են /ՊՍ/: 7. Ես նա եմ, հենց նա՛, Ով մարդկանց մերժել չի կարողանում /Ն/: 8. Իսկ ամեն անգամ ես իմ ձեռքին նայում եմ այնպես, Ինչպես նոր պեղած իրին է նայում հնէաբանն անփորձ /Ն/:

297. Բացատրե՛ք *ոռ*-ի արտահայտած իմաստային հարաբերությունները. առանձնացրե՛ք այն նախադասությունները, որոնցում *ոռ*-ը կարելի է փոխարինել այլ շաղկապներով:

1. Հանեցե՛ք ձեր դիմակները, Որ գեթ մի քիչ դյուրին շնչել կարողանաք /ՊՍ/: 2. -Բա՛րև,- Ասելի մահի՛ն էլ անգամ, Եվ նա հասկանար, որ քեզ մոտ գալով՝ Ինքը շտապել, Շա՛տ է շտապել /Ն/: 3. Ոնանք գույներից նոր կյանք են ձևում, Որ մարդկանց աչքը ողջ կյանքում հագնի /Ն/: 4. Բայց ես աշխարհ չեկա, որ «գթացե՛ք» նվամ, Ես ծնվել եմ, որ գութ ու բարություն ցրեմ /Ն/: 5. Նրանք ծնվել են, որ ապրեն հարբած, Իսկ դու, որ քեզնով երբևէ հարբեն /Ն/: 6. Ու դալարուկ մեջքը իսկույն կեռ-մեռ անում, Սահ է սահում, Այնպե՛ս սահում, Որ մի վայրկյան ... ամենքի հետ՝ Դուդուկահարն ինքն էլ նույնիսկ շունչ է պահում /Ն/: 7. Ախ, միամի՛տ իմ պապերի Մանկաբարո ուրախություն, Որ տևում էր յո՛թ օր-գիշեր, Որ անցնում էր երգ ու պարով, Կռիվներով գինեհարույց ... /Ն/: 8. ... Ամեն մոլի ուղղափառ, Բողոքական, կաթուղի՛կ, Լուռ զգացին, որ իրենք մարդ են կյանքում ու եղբայր... /Ն/: 9. Նա, որ գալիս էր Եվրոպան հաղթած, Հիմա հաղթության արևը սրտում... Հերոսի նման դառնում է իր տուն /Ն/: 10. Աշխարհն այնքան լցվեց մահով, Որ դողում է հույսն աշխարհի /ՅԸ/: 11. Չեմ ասեսում, որ հնօրյա Կյանքս անցավ աստղերի հետ /ՀՀ/: 12. Ու ես հիմա չեմ զարմանում, Որ քո մի թաս ջրի դիմաց Այսքան անվերջ թույն ես խառնում Իմ մաքուրին ու պայծառին /Ն/: 13. Ես ցանկացա, որ բոլորն էլ Իմ չափ՝ անչափ սեր ունենան, Որ չխանդեն ուրիշներին /Ն/: 14. Առե՛ք սերը ջահելներից, Որ ասում են՝ սերը հին է, Որ կարծում են՝ սերը նույնպես Մայթի նման հանրային է /Ն/: 15. Օղը, որ դու թողել ես ինձ, Քո հարազատ շնչով է լի, ճամփան, որ դու թողել ես ինձ, Մանուշակի փնջով է լի /Ն/: 16. Եվ կգա մի օր... գիտեմ՝ հեռու չէ այդ օրը արդեն, Որ քեզ կկանչեմ, որ դու գաս դողով այս հրաշք պահի, Որ կոպերիս տակ, իբրև սրբազան ու միակ պարզև, Ես այդ սուրբ պահը տանեմ աշխարհից /ՎԴ/:

298. Բացատրե՛ք տրված շաղկապների կազմությունը / պարզ, ածանցավոր, քերականական ձևերից առաջացած, բարդ՝կցական, հարադրական/:

- Ա. Եվ, ու, որ, բայց, այլ, կամ, էլ, իսկ, քան, թե, ապա, եթե, իբր, միայն, մինչ, սակայն, երբեմն, ուրեմն, ևս, ուստի, հենց, ոնց:
- Բ. Այլապես, հետևապես, նմանապես, հետևաբար:
- Գ. որովհետև, այնուամենայնիվ, այսուհանդերձ, համենայնդեպս, չնայած, նայած, ասես, կարծես
- Դ. այնինչ, այսինքն, թեև, թեկուզ, թեպետ, մինչդեռ, մինչև, իբրև, նույնիսկ, այլև, որպեսզի, քանզի, վասնզի, թեպետև, թեկուզ, բայց և այնպես:
- Ե. այնպես որ, երբ որ, ով որ, ինչ որ, որտեղ որ, ուր որ, այնքան որ, այնքանով որ, ինչպես որ, թե որ, մանավանդ որ, հենց որ, քանի որ, մինչև որ, չ նայած որ:
- Զ. բայց և, թեպետև, թեկուզև, և կամ, ինչպես և, նույնպես և, նմանապես և, հետևաբար և, հետևապես և, ուստի և, ուրեմն և:

Է. ինչքան էլ, որքան էլ, այն էլ, կամ էլ, ինչ էլ, ով էլ, ուր էլ, որտեղ էլ, ինչպես էլ, այնքան էլ, այնպես էլ

Ը. ապա թե, իբր թե, իբրև թե, միայն թե, քան թե, կարծես թե, ասես թե, կամ թե

Թ. ապա թե ոչ, եթե ոչ, թե չէ, կամ թե ոչ, ոչ թե, և ոչ թե, քանի դեռ, այն է, ըստ որում, ընդ որում:

Ժ. բայց և այնպես, մինչև իսկ, քանի դեռ, չէ որ

ԺԱ. թեպետև ... սակայն, թեպետև ... բայց և այնպես, չնայած սակայն, չնայած .. այնուամենայնիվ, թեկուզ ... բայց, թեկուզ ... սակայն, եթե ... ապա, եթե ... ուրեմն, քանի որ ... ուրեմն:

ԺԲ. կա՛մ ... կա՛մ, ո՛չ ... ո՛չ, էլ ... էլ, թե՛... թե ՛, մերթ ... մերթ, մեկ ... մեկ:

299. Շաղկապները դասակարգե՛ք ըստ կազմության /պարզ, կցական, հարադրական՝ յուրաքանչյուրից քսանական օրինակ/:

Այլ, ապա, ապա թե, իբրև թե, այսինքն, թեև, միայն թե, կարծես թե, բայց, եթե, թեպետև, մինչև, ոչ թե, այնպես որ, մինչև, մինչդեռ, բայց որ, այսուհանդերձ, և, ևս, ուստի և, և եթե, դեոր, նաև, նախքան, հենց որ, քանի որ, որպեսզի, քանզի, բայցև, թեկուզև, որովհետև, վասնզի, նույնպես և, էլ, թե, իսկ, մինչ, որ, որովհետև, այնուամենայնիվ, ու, թեպետև, քան, սակայն, ուրեմն, ուստի, ընդ որում, քանի, թեպետ, թեկուզ, ինչ, կամ, այլև, այնինչ, այնուհանդերձ, քանի դեռ, ըստ որում, թե չէ:

ՊԱՐԶ	ԲԱՂԱԴՐՅԱԼ	
	ԿՑԱԿԱՆ	ՀԱՐԱԴՐԱԿԱՆ

300. Տրված բառերը գործածե՛ք երկու խոսքի մասի նշանակությամբ՝

Ա. շաղկապ և կապ

Մինչև, չնայած, փոխանակ, նախքան.

Բ. շաղկապ և վերաբերական

Ապա, կարծես, հենց, միայն, բնավ, իբր, մանավանդ, ասես, սակայն.

Գ. շաղկապ և մակբայ

էլ, ապա, միայն.

Դ. շաղկապ և դերանուն

Այլ, այնինչ, ինչ,որ, քանի, երբ:

301. Տրված զուգադրական շաղկապներով կազմե՛ք նախադասություններ:

ա/ Թեպետև /... բայց, թեպետև/...սակայն, թեպետև /և/ ... բայց և այնպես, չնայած ... սակայն, չնայած ... այնուամենայնիվ, թեև ... այնուամենայնիվ

բ/ Թեկուզ ... բայց, թեկուզ ... սակայն, եթե ... ապա, եթե ... ուրեմն, քանի որ ... ուրեմն, որովհետև ... ուստի

գ/ Չնայելով որ ... սակայն, ոչ թե ... այլ, ոչ միայն ... այլև, ճիշտ է ... բայց, ոչ միայն ... այլ նաև, երբ ... ուրեմն:

302. Նախադասությանները կապակցե՞ք համապատասխան շաղկապներով և կետադրե՞ք:

1. Երզը չի հորինվել ցորյանի պես ծլել է՝ ժամանակին, անարատ:
2. Այս երեկո արեգակը երկչոտ կերպով դուրս նայեց հորիզոնից կրկին անհետացավ:
3. Ծիրանի լույսն ամպի տակ հանգավ հեռու վանքից դողանջեց իրիկնային մի զանգակ:
4. Սերը նման է ճշմարտության կես ճշմարտություն կյանքում չի լինում:
5. Չեմ ուզում քո մասին խորհել միշտ մի խոնավ ձնծաղիկ եմ հիշում:
6. Նա գիտեր որտեղ է սիրում բույն դնել ու կանչել միրհավը:
7. Ծերունու խոսքերը ծանր թվացին նրան նրա բերանով արդարությունն էր խոսում:
8. Մի շաբաթվա արև էր պետք բացվեին խնձորենու կարմիր թերթերը:
9. Կակաչները թափեցին իրենց թերթիկները Լալվարի լանջը դեղնեց, անտառը ծիրանագույն զգեստների հագավ:

303. Շարունակե՞ք՝ գործածելով համապատասխան շաղկապներ:

2. Երկնքի երփնավառ պարտեզների միջից դուրս եկավ արեգակը -- - -- :
3. Մեղմ հովիկը օրորում էր բարդիների կատարները -- - -- :
4. Ծերունին ապրում էր այս լեռների գրկում այն պատճառով -- - -- :
5. Կժպտա քեզ բախտը վերուստ -- - -- :
6. Ես այնքան հաճախ եմ նայել նրա տխուր աչքերին -- - -- :
7. Լեռներում դեռ սառույց կար ու ձյուն -- - -
8. Ամենքն ինձ այնպես բարի եմ թվում -- - -- :-:
9. Տուր ինձ մաքրության մի կապույտ կաթիլ -- - -- :-:
10. Թափառիկ մի հով եկավ, փաթաթեց մենավոր բարդուն -- - -- :-:
11. Մի աստղ ընկավ երկնքից -- - -- :-:
12. Ուրիշ է բախտը բանաստեղծների -- - -- :-:

304. *Թե, թե չէ, եթե ... ապա* շաղկապներով երկուական նախադասություններ կազմե՞ք այնպես, որ մի դեպքում դրանք արտահայտեն համադասական հարաբերություն, մյուս դեպքում՝ ստորադասական:

305. Ա. Կարդացե՞ք և կետադրե՞ք:

Բ. Մեկ գծով ընդգծե՞ք շաղկապները և բացատրե՞ք իմաստային, քերականական առանձնահատկությունները, երկու գծով՝ շաղկապի դեր կատարող հարաբերական դերանունները:

Կեսգիշեր:

Գարնանային այն գիշերներից երբ թանձրացյալ իրականությունը և մանիշակագույն երազը խառնվում են իրար որովհետև բույրը որ բարձրանում է նոր ծլած խոտից և խնձորենու վարդագույն ծաղկից նման է երազում այլակ-այլակ ծփացող թափանցիկ քողերի բույրի: Եվ գիշերի ծոցը լցված է մրմունջներով: Նոր բացվող ծաղիկների ձայնն է նաև պատռվող կոկոնների քաղցրաձայն ցավի ճիչը: Կոկոնները ճեղքում են իրենց սրտերը քանզի ստեղծագործության անդիմադրելի անգութ և հեշտաբորբոք ցանկությունը մահ է անխուսափելի և անվախճան:

Եվ աշխարհի կտուրներից մեկի տակ մարմարյա սեղանի վրա կանաչ լուսամփոփի տակ բացված է մեծ մի գիրք: Այդ գրքի վրա հակված է գիտնականի գլուխը որ հոգնած է և որի վրա ընկել է տիեզերքի առաջին ծյունը: Այդ մատյանը հղացող գլուխը ինքը նման էր մայր երկրագնդին:

... Ծանր էր այդ գլուխը զայրույթով ատելությամբ լույսով և սիրով լեցուն այդ մատյանում թափվեցին հանճարեղ մի կյանքի թե արյունը թե ժպիտը և թե նրա մռայլ խոհերի լուսավոր կաթիլները...

Արևն արդեն թեքվել էր սարի ետևը բայց ծառի սաղարթների մեջ ծիրանները վառվեցին իբրև կանթեղները վառվեցին և աստղերը խոր երկնքում: Որո՞նք են աստղերը և որո՞նք են ծիրանները: Նրանք շողում են իբրև արևի փշուրներ:

Վաղուց մթնել են սարերի կատարները, իսկ արևի շողերը դուրս են եկել լեռնային կապույտ լճակի ջրերից: Թեև մթնել է և պայծառ լճակը բայցը կարծես թե դուրս է եկել նրա ալիքներից մի մերկ աղջիկ շուշանաշար լանջով: Միջնամառային իրիկնային հովը շնկշնկում է և տարուբերում աղջկա ծամերը ինչպես բոցը քամու առաջ: Բուրում է և ծամը և խոտը:

Լուսնկա գիշերում վառվում են ծիրանները և շողշողում են աղջկա աչքերը:

Յոտավետ է ամբողջ տիեզերքը:

(Ըստ Վ. Թոթովենցի)

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ

306. Ա. Գտնել վերաբերականները /եղանակավորող բառերը/, բացատրել նրանց իմաստային և խոսքիմասային յուրահատկությունները:

1. Եվ իսկապես էլ մեր թիկունքն է մութ, Անցյալը գիտենք գրքերով միայն: Գուցե առավել մեր ճակատն է մութ, Գրքերն են ճառում գալիքից նաև: 2. Սա էլ գործ է, հարկավ, Սակայն շատ լուրջ մի գործ: 3. Այսպես կծնվի ինքնաբերաբար՝ Ինչպես Յիսուսը միածին կույսից, Մինչև իսկ առանց «Եղիցի լույսի»: 4. Եվ հետամնաց արփին, վերջապես, Ծագում է դրսում: 5. Մի՞թե սլաքներն իմ ժամացույցի ետ-ետ չեն գնա, Որպեսզի «կրկին եղածը լինի»... Մի՞թե այս «մի՞թե»-ն չի ծլարծակում ոչ մի բարությանը: 6. Նա թերևս պարզ տեսնում է Մի ցամաքած հատակ ... ծով: 7. Ես ջանում եմ լոկ ... չլինել՝ Ամբողջովին դառնալ դիմակ: 8. Մինչդեռ մի կարգին չգիտենք նույնիսկ, Թե այդ ինչից է մարդը ծիծաղում: 9. Ես, ինչ խոսք, այսօր պիտի բոց չուտեն Կամ կուլ տամ դաշույն: 10. Գեթ մեկի համար, գոնե մեկի համար մի՛ լինի կյանքում Այս քո անվան պես կամ հորիզոնի ... 11. Դու մի հորինված էակ ես գուցե, Որ հանդիպել ես ինձ մտքումս լոկ: 12. Ուրեմն աշխարհում իրոք չկա... Ու չի լինի իրոք ոչ մի հոգի: 13. Ասում են, իբրև, կապույտի վրա չեն նստում ճանճեր... 14. Աշխարհին մանկան մաքրություն է պետք, Եվ հենց այն մանկան, Որին ամեն օր աշխարհ են բերում Նաև աշխարհի անմաքուրները: 15. Սուտ է, ուրեմն, այո՞, մանկությունից ծանոթ «Սիրտս վկայում է» այն խոսքը, որ գուցե մարդկայինն է բոլոր խոսքերի մեջ մարդկանց: 16. Այսուհանդերձ մի՛ մոռացիր, որ մրրիկը տանիքներ է քշում-տանում: 17. Անկեղծ ասած, նրանց, իրոք, չնախանձել չի՛ կարելի: 18. Մենք հանդիպեցինք.... Եվ - ահավասիկ այսպես – տապալվեց

Բանաստեղծության պարիսպը խարխուլ: 19. Եվ մի՞թե չարժե, Եվ չարժե՞ արդյոք, որ կյանքի հավերժ հաղթության համար Նրանք հավիտյան մեզ տանջեն այսպես:

(Պ. Սևակ)

307. Հետևյալ վերաբերականները խմբավորե՛ք ըստ աղյուսակի:

Երնեկ, ինչ խոսք, կարծեմ, մինչև անգամ, ի դեպ, իրավամբ, կարծես թե, մանավանդ, այո, ասես, նամանավանդ, ինչևէ, երանի թե, հիրավի, արդյոք, միայն, ինչևհցե, հարկավ, իբրև, միմիայն, համենայն դեպս, չլինի թե, վայ թե, չէ որ, բնավ, ոչ մի կերպ, արի, դե, անշուշտ, ահա, լոկ, այնուհանդերձ, գեթ, հենց, դժբախտաբար, ահավասիկ, այսուհանդերձ, իրոք, թերևս, սոսկ, այնուամենայնիվ, եկ, ցավոք, իրավ, գուցե, անգամ, թող, արդարև, իսկ, ապա, ոչ, ցավոք սրտի, միգուցե, նույնիսկ :

Հաստ.	Երկբայ.	Զգաց.	Ժխտակ.	Ցուցակ.	Կամայ.	Ձիջակ.	Սաստ.	Սահմ.

308. Տրված բառերը տարբեր նախադասություններում գործածե՛ք վերաբերականի և մակբայի կամ բայի նշանակությամբ:

Խնդրեմ, բոլորովին, բնավ, տես, բեր, եկ /արի/, ամենևին, երբեք, թող, ասես, կարծես, հավանաբար, անտարակույս, կարծեք, հազիվ թե:

309. Տրված բառացանկից առանձնացրե՛ք վերաբերականները և որպես վերաբերական գործածվող բառաձևերն ու կապակցությունները:

Միթե, այստեղ, որովհետև, արագ, բարեկամաբար, դժբախտաբար, կեցցե, կրկին, այնուհետև, այնուամենայնիվ, դեռևս, իհարկե, մեկ, միայն, նախքան, մասին, ոչ մի խնդիր, հարկավ, մենք, հեռու, գեթ, գրեթե, ըստ, իրավամբ, նայած, զուգահեռ, իսկ, հապա, որևէ, բնավ, ասենք թե, նաև, միասին ,սոսկ, համենայն դեպս, կրկին, նույն, ինչ խոսք, նախօրոք, ահավասիկ, սոսկ, միննույն,երանի, իրար, բնականաբար, չգիտես ինչու, եթե, ըստ երևույթին, միայն, ցավոք, միգուցե, գուցե, իբր թե, միմիայն, որպեսզի, համար, դիցուք թե, ոչ, ահավասիկ, մինչև անգամ, հիրավի, հակառակ, անտարակույս, տարաբախտաբար, բայց, հազվադեպ, գոնե, լոկ, ի հեճուկս:

310. Կազմե՛ք նախադասություններ՝ տրված բառերը գործածելով նշված խոսքիմասային իմաստներով:

ա/ Իբրև վերաբերական և մակբայ՝ անկասկած, անտարակույս, հազիվ թե, համարյա, հավանաբար, բնականաբար, հիրավի, ամենևին, բոլորովին:

բ/ Իբրև վերաբերական և շաղկապ՝ այնուամենայնիվ, թեկուզ, միայն թե, ասես:

գ/ Իբրև վերաբերական, մակբայ և շաղկապ՝ ապա, էլ, էլի, մանավանդ:

311. Տրված վերաբերականները խմբավորե՛ք ըստ կազմության:

ՊԱՐՁ	ԲԱՂԱԴՐՅԱԼ		
	ԱԾԱՆՑԱՎՈՐ	ԿՑԱԿԱՆ	ՀԱՐԱԴՐԱԿԱՆ
ահա	անշուշտ	նույնիսկ	ըստ երևույթին

--	--	--	--

Անշուշտ, ահա, իբր թե, լոկ, այնուհանդերձ, դժբախտաբար, իսկապես, ահավասիկ, իբրև թե, գեթ, այսուհանդերձ, բարեբախտաբար, իհարկե, երևի, միթե, գոնե, այսուամենայնիվ, ախր // ախար, իրոք, թերևս, հենց, սուկ, այնուամենայնիվ, եկ, ցավոք, իրավ, գուցե, անգամ, թող, արդարև, ըստ երևույթին, իսկ, ապա // հապա, ոչ, ցավոք սրտի, անպայման, միգուցե, նույնիսկ, մի, չէ, երանի, հազար երանի, անպատճառ, կարծես, մինչև իսկ, երնեկ, ինչ խոսք, կարծեմ, մինչև անգամ, ի դեպ, իրավամբ, կարծես թե, մանավանդ, ի միջի այլոց, այո, ասես, նամանավանդ, ինչևէ, երանի թե, հիրավի, արդյոք, միայն, ինչևիցե, հարկավ, իբրև, միմիայն, համենայն դեպս, երնեկ թե, չլինի թե, վայ թե, չէ՞ որ, խո // խոն // հո, բնավ, ոչ մի կերպ, արի, դե:

312. Կարդացե՛ք և ընդգծե՛ք երկբայական վերաբերականները:

1. Ասում են՝ իբրև խարույկի վրա Ջահել ըմբոստի մի սիրտ են այրել, Ասում են իբրև մոխիրը նրա խարույկից հանելու մորն են տարել... /ՅԸ/: 2. Մայրս կասեր՝ «Մի՞թե պիտի էլ իմ Կարսը չտեսնեմ, Մի՞թե պիտի իմ հայ սրտի մայր մուրազին չհասնեմ» /Ո/։ 3. Գուցե ճերմակ ճայերն էին, որ, տե՛ս, ափին մոտեցան /Ո/։ 4. Սիրտ իմ, իբր, կյանքը թողած, վանքի մոմաքարը կուզեմ /Ո/։ 5. Ո՞վ ես, արդյոք, չգիտեմ քեզ, Դու՛ անծանոթ, դու՛ հեռավոր /ՍԿ/։ 6. Ամպի մի պատառ արևն է ծածկում, Ակնոց է դնում արևը կարծես /ՊՍ/։ 7. Քեզնից հեռու ես ապրում էի Կարծես թե ինքս էլ ինձնից հեռու /Ո/։ 8. Ա՛յ զարմանք, Յո՛ւ երկինք չի թռել անտերը /ՎԱ/։

313. Գտե՛ք զգացական /կամային/ վերաբերականները, ինչպիսի՞ նրբիմաստներ ունեն դրանք:

1. Իցիվ բախտ գտնեն Մեջնունն ու Լեյլան, Իցիվ աստղանան՝ սեր մուրազվելով Երկինք բարձրանան Մեջնունն ու Լեյլան /ՅԸ/: 2. Վարդերը փուշ են, ու վարդ չեն մարդիկ,- Բայց էլի՛ երնեկ սիրահարներին: Մնացած կյանքս էլ... կտայի նրանց, Միայն թե ետ գար գարունն իմ անգին, Թեկուզ ետ բերեր ցավերն էլ անդարձ,- Յազար երանի սիրահարներին /Ո/։ 3. Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ՝ իմ կյանքի հետ լինեի, Յազար երնեկ՝ դաշտում մենակ՝ երկնքի հետ լինեի ... /ՅԹ/: 4. Ախար, բարեկամ, Ախար ինձ համար ո՛չ մի բան չարժի Փայտին տանք, ասենք, ուղեղի ծալքեր /ՊՍ/։ 5. Իմ վիճակը Ձեր փոխարեն լրջանում է, Որովհետև ինձ է տրված, դժբախտաբար, Յիշեցնելու ձեզ վերստին ու վերջապես, Որ ուշացումը արթնացումի Կննանվի մի պայթյունի /Ո/։ 6. Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ, Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ, Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ /ՅՍ/։ 7. Դժբախտաբար դեռևս տասնյոթերորդ դարում Լեոնարդո դա Վինչիի գերեզմանի տեղը կորցրին, բայց արվեստաբան Արսեն Գուսեն՝ գտնելով մի գանգ ու շիրմաքարի մի կտոր, բարեբախտաբար կարողացավ հասկանալ, որ ժամանակին շիրմաքարի վրա գրված է եղել «Լեոնարդո դա Վինչի»....

314. Գտե՛ք ցուցական, սահմանափակման և ժխտական վերաբերականները:

1. Ո՛չ, այսօր ես պիտի դատեմ իրե՛ր Ու դատապարտեմ առարկաների /ՊՍ/։ 2. Չէ՛, սիրելի՛ս, մենք նորաստեղծ զույգ չենք, բնավ /Ո/։ 3. Չէ՛, շա՛տ եղավ, էլ շատ եղավ այս թթվադեմ փնթփնթոցը /Ո/։ 4. Ու պարապում են ինձ, Դարձնում մի անոթ, Որ լոկ դատարկ չէ, Այլ նակ անօդ: Եվ նոր-նոր աշխարհ են ստեղծում հիմա՝ Առայժմ եթե ոչ ձեզ բոլորիդ, Ապա գոնե ինձ,

միայն ինձ համար /Գ/: 5. Դատավոր եմ ես քեզ կարգում Արարքներին իմ երկրային, Ասա՛ այո, ասա՛ ոչ – Վճիռ է ինձ վերուստ տրված /ՀՀ/: 6. Ասում եմ, որ լոկ գեղեցիկ Աչքեր ունես խաղաղ նայող /ՍԿ/: 7. Ահավասիկ, ո՛վ դուք, իմ առաջին Խորհուրդը, որ գալիս է կյանքից ու դարերից... Երկրորդ Խորհուրդը , որ տալիս եմ ձեզ ահա, Օ՛. անհողդողդ պահեք իբրև պատգամ /ԵԶ/: 8. Վերադարձել ես դու կրկին ահա Անչափ դժվարին քո ճանապարհով /Գ/: 9. Ա՛խ, լոկ մայրն է սուրբ ու վեհ /ՀՇ/: 10. Ա՛խ, հույսերիդ երազներից անհամար Գեթ մի թռած-կորած երան ինձ մոտ գար, Գեթ մի կարապ ընկնի գիրկս, գեթ մի օր՝ Ինձ չթողներ վշտիս հողին գլխիկոր /Գ/:

315. Գտե՛ք սաստկական վերաբերականները, բացատրե՛ք նրանց խոսքիմասային, շարահյուսական և կապակցական առանձնահատկությունները:

1. Քեզ եմ սիրում նույնիսկ այն ժամանակ, Երբ որ իմ դեմ դուռդ բաց չի լինում: 2. Մեղք է զբաղվել որևէ գործով, Մեղք է մինչև իսկ շոյել ու սիրվել: 3. Լույս, լո՛ւյս, զվարթ, Շաղվի՛ր, Մաշվի՛ր, Թաղվիր այնպե՛ս և այնքա՛ն խոր, Որ ... ծածկամիտ ջուրն անգամ դառնա անկեղծ ... հստակ: 4. ... Ու վերջերգվի մինչև անգամ այդ ճաքոցով Ա՛յն եղանակը պարզ ու բարդ: 5. Հանդիպումը բաժանման սկիզբ է հենց: 6. Ուստի մինչև իսկ սիրառատ հոգին Նորից չի սիրում, սիրում է կրկին:

(Պ. Սևակ)

316. Բացատրե՛ք ընդգծված բառերի խոսքիմասային-ձևաբանական առանձնահատկությունները:

1. Տրորում է սիրտս ասես իր ոտքի տակ Լուսամուտիս տակով անցնող ամեն անցորդ /ՊՍ/: 2. ... Սպասել-սպասում եմ, որ լոկ ասես. «Ես հասկացա, որ այլևս մենք չպիտի...» /Գ/: 3. Ու երբ բացում եմ իմ պատուհանը, Ասես բացում եմ Գժված ջերմուկի գազառատ մի շիշ /Գ/: 4. Թող զսպանակված ամենամուտ լռությունը գա. – Թող չղջիկի պես ձայները քնեն /Գ/: 5. Թող ծառերն անգամ հարգանքով Նրա առջև կեռանան, Միայն թե թող նա թողնի հեռանա /Գ/: 6. Իմ քնքո՛ւշ աղջիկ՝ հմայված գրքով, Թո՛ղ գիրքը խոժոռ, այս անգամ վե՛ր կաց, Շրջենք անձրևի օրորի ներքո /ԳԷ/: 7. Տե՛ր ու սե՛ր Աստված, Իրավ չի ասված, Որ մահիճները ե՛րբ հարդարված են, Արդեն չե՛ն ապրում, արդեն մեռած են /Գ/: 8. Իրավ, ես այսօր քեզ չեմ սպասել, ուրիշն է եղել հյուրը իմ հոգու /Գ/: 9. Բայց, ա՛խ, ո՞րն է իրավ, լուսին, Ո՞րն է ոսկյա, ո՞րն է սին /ՀՇ/: 10. Մխալ է, անկասկած, և այսպես դատելը, Ուստի և այս երգը սխալից սխալ է /Գ/: 11. Չե՞ որ հավքերը, գիտե՛ս, իմաստո՛ւն, Սողունների՛ց են երբեմն սերել /Գ/: 12. Հո՛ւյս կա, Որ ... մահից առա՛ջ, վերջապե՛ս, Հասկանամ նաև ... իմա՛ստը կյանքի /Գ/:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

317. Գտե՛ք ձայնարկությունները, նշե՛ք բառական-բառակազմական և խոսքիմասային յուրահատկությունները:

1. – Օ՛, Դանթե,- շշնջաց ողբ Նարեկացին,- էլ ո՞նց հավատամ լուսնի էլ լացին: 2. Դե՛, դե՛ ... ձենդ... դու հայ, նա քուրդ՝ մեկուճարիս մի՛ մաշիր...: 3. Դժոխք ու դրախտ իրար խառնվել, Ա՛խ, կին են դառել, - օ՛, բախտ իմ անբախտ: 4. Յե՛յ, վա՛խ, հայոց Սիփան սարը, դրախտ ասա, էլ ի՛նչ սար: 5. Անգեն թագս զինված թագի տակ է, վա՛խ, Սարիս ճամփեն, յարիս ճամփեն... փակ է, վա՛խ, Ա՛խ, Սիփան ջան, դու էլ բանտված մնացի՛ր, Ինչո՞վ գոռամ, լեզուս թրի տակ է, վա՛խ... : 6. Ա՛յ ծովակ, սարի ծովակ, Ա՛յ Վանա բարի ծովակ, Իմ յարի արցունքն ես դու ...

(Յ. Շիրազ)

1. –Ո՛ւ-ո՛ւո՛ւո՛ւ,- գոռում էր գերեզմանատնից դուրս եկած դեռ: 2. –Սա ընտանիքի հայրն է, դմբո՛: 3. Փայտփորիկները որդեր գտնելու համար «կո՛ւտ-կո՛ւտ» իրենց կտուցներով շարունակ փորում էին ծառի բույնը: 4. – Տո՛ շաշ ճիպո, են հավը, որ հավ է, հենց ճտի կողքով անց է կենում, արծիվ է դառնում: 5. – Փի՛ե՛, էս փսլնքոտի խելքին մտիկ ... Ուրեմն ես խո՞տ եմ ուտում: 6. Կարծես հարցիս որպես պատասխան՝ լսվեց երեխայի ուրախ կանչը. - Բիժո՛, բիժո՛, բիժո՛: 7. Յանկարծ վերև՝ պնդոցում, գոռոցի նման մի խուլ ձայն լսվեց: - Բուո՛ւ, բուո՛ւ: 8. Բրդոտի հետ հատուկ լեզվով էի խոսում, երբ ասում էի՝ «բո՛ւհ», նշանակում էր՝ կրակում եմ, հեռու՛ կանգնիր: Երբ ասում էի՝ «գե՛շ», գնում էր, ասում էի՝ «հոո՛շ» , - կանգնում էր, ասում էի՝ «հա՛յ-հավա՛ր», օգնության էր հասնում: Յանկարծ ներքևից ձայն լսեցի՝ «չը՛խկ-չը՛խկ-չը՛խկ»: 9. ... Ծլունգ-ծլինգ-ծլանգ, ծլանգ-ծլինգ-ծլունգ՝ պարանները ռիթմիկ քաշելուց հետո իրենց բարձր բներում երգում էին պղնձե զանգերը /նտ/: 10. Մազուքը վերջացել է, փայտե սռնին տխուր երգում է. «Ճլվիստ-ճլվիստ-ճլվիստ»: 11... Ես ջիրիդ եմ խաղում, նրանց վրա մահակով հարվածներ տալիս, որ մաքրվի՝ «շը՛րպ, շը՛րպ, շը՛րպ»:

(Վ. Անանյան)

318. Ա. Լրացրե՛ք աղյուսակը՝ բացատրելով ձայնարկությունների կազմությունը:

ՁԳԱՑԱԿԱՆ /ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ/	ԿԱՄԱՅԻՆ /ԿՈՉԱԿԱՆ/	ՆՄԱՆԱՁԱՅՆԱԿԱՆ /ԲՆԱՁԱՅՆԱԿԱՆ/
վա՛շ-վո՛ւշ	քուչի՛-քուչի՛	շրը՛խկ

319. Գրե՛ք բացականչական ձայնարկություններ, որոնք արտահայտում են՝
 2. վիշտ, ցավ, տառապանք.

1. դժգոհություն, անբավականություն, բարկություն.
2. ծաղր, հեզմանք, արհամարհանք.
3. ավստասանք, զղջում, կարեկցություն, ցավակցություն.
4. զզվանք, խորշանք, տհաճություն.
5. զարմանք, անսպասելիություն, անակնկալություն.
6. ուրախություն, հրճվանք, հաճույք, բավականություն, բավարարվածություն.
7. հիացմունք, զմայլանք.
8. սպառնալիք, սաստում, սրտնեղություն.
9. սարսափ, երկյուղ, վախ.
10. անտարբերություն, համակերպում, հուսահատություն.
11. հանդիմանություն, կշտամբանք.
12. երկմտություն, ներքին հարցում.
13. հետաքրքրասիրություն.
14. պարծանք ...

320. Ա. Որո՞նք են հետևյալ կենդանիների, առարկաների, բնության երևույթներին բնորոշ /կամ արծակած/ ձայները: Դրանցից գոյականներ ու բայեր կազմե՛ք:

ա/ Կաքավի, շան, կատվի, ճնճղուկի, աքաղաղի, կռունկի, ագռավի, օձի, կաչաղակի, մեղվի, ճանճի, գայլի, արագիլի:

բ/ Քամու, տերևների, չորացած տերևների, բքի ոռնոցի, կացնի հարվածի, բացվող դռան, փակվող դռան, զանգի, եկեղեցու զանգի:

բ. Նմանաձայնություններն ինչո՞վ են նմանվում ձայնարկության մյուս տեսակներին և ինչո՞վ տարբերվում նրանցից :

321. Տրված ձայնարկություններով կազմե՛ք և՛ գոյականներ, և՛ բայեր, Օր.՝ սը՛վ-սը՛վ – սվսվոց և սվսվալ:

Գը՛վ-գը՛վ, թը՛խկ-թը՛խկ, շը՛խկ, շը՛խկ, չը՛խկ-չը՛խկ, խը՛շշ, խը՛շշ-խը՛շշ, տը՛զզ, տը՛զզ-տը՛զզ, կը՛ռ, կը՛ռ-կը՛ռ, գը՛րնգ, ճը՛ռռ, ճը՛ռռ-ճը՛ռռ, ծի՛վ-ծի՛վ, ծը՛լնգ, թը՛խկ, բը՛զզ:

322. Դուրս գրե՛ք չթեքվող խոսքի մասերը:

Բնությանն ասես ձանձրացրել է սովորական բնավորությունների անվերջությունը: Նրան չէին բավարարում նույնիսկ բացառիկ հզոր ուղեղները: Ինչևիցե, բնությունը կամեցավբուրտաղանդները միավորել սոսկ մեկ մարդու մեջ... Այդպիսին էր Լեոնարդո դա Վինչին: Ծո՞ւյլ է եղել ... Օրերով չի՞ նկարել...

- Օ՛, Ձերո՞ գերազանցություն, ինձ մնացել է նկարել միայն Հուդայի գլուխը,- պատասխանում է Լեոնարդոն Միլանի դուքսին: - Դրա համար էլ ես մինչև անգամ գնում եմ Բուրգենտո, որտեղ ապրում են ձեր քաղաքի բոլոր ստահակները և սրիկաները... Հենց որ գտնեն հենց իմ ուզած դեմքը, մի օրում կավարտեն աշխատանքը: «Ավետիսի»

չտեսնված դիմամիկան, «խորհրդավոր ընթրիքի» զարմանահրաշ ռիթմը և զգացմունքային շռայլությունը, «Մոնա Լիզայի» ժպիտի միստիկական խորհրդավորությունը Լեոնարդո-նկարչին պարզևեցին համաշխարհային հռչակ, որը չմարեց չորս հարյուր տարիների ընթացքում: Բոլորը գիտեն նրա նկարները: Բայց ոչ բոլորը գիտեն, որ մեզ, դժբախտաբար,

հասել են միայն պատառիկներ և ապշահար ժամանակակիցների հիասքանչ վկայությունները:
 Ասում են, որ իբրև թե նա միշտ կախման մեջ է եղել մեծազարմ մեկենասներից:
 Բարեբախտաբար ունեցել է հավատարիմ բարեկամներ: Դժբախտաբար ունեցել է նաև
 ոխերիմ թշնամիներ: Նույնիսկ այստեղ էլ ճակատագիրը մի հազվադեպ բացառություն է թույլ
 տվել. հանճարեղ Լեոնարդոն՝ «միլանցի ջութակահարը»՝ իր ժամանակի նշանավոր
 երաժիշտը, խնջույքների և պարահանդեսների սիրահարը, իրոք, ուներ հանճարեղ
 թշնամիներ՝ Միքելանջելոներ... Նույնիսկ այսօր էլ, երբ հայտնվում ես Կլո Լյուսե դոյակում,
 չես կարող մեկ անգամ ևս չզարմանալ այս հանճարի գերբնական հզորությամբ, միայն մի
 մարդու մկանունքի ուժով... Մի՞թե հենց այստեղ չէ, որ հիշողությամբ ավարտել է «Մոնա
 Լիզան»՝ չպատկերացնելով անգամ իր այս կտավի անմեռ հռչակի մասին, որի առջև անգոր է
 լինելու ժամանակը: Մի՞թե ... և մի՞թե զարմանալի չէր, որ մահվան շեմին նա Աստծուց ու
 մարդկանցից ներում էր աղերսում, որ իր կյանքում այդքան քիչ բան էր արել...

(Ըստ Յա. Գոլովանովի)

Ամփոփում

Ձևաբանորեն վերլուծե՞ք տրված նախադասությունները:

1. Արբշիռ գինարբուքից հետո, ամպիովանու տակ նստած, արքան օշարակ էր ըմբռնում և զնայլվում երփնագույն ծաղիկներով:
2. Ձնհալը հազիվ սկսած՝ բլուրներից աղմուկ -աղաղակով հողում էին ջրերը, և ամբողջ հովիտը, հիրավի, զարթնում ու որոտում էր:
